ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՍՏՐԱՏԵԳ

*Տարեկան ամփոփիչ հանրապետական գիտաժողովի հոդվածների ժողովածու*

1(1)

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2018

**Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի ՀՀԻ գիտական խորհուրդը**

**Խմբագրական խորհրդի կազմ**
**Գլխավոր խմբագիր՝**
**Սիմոնյան Ա. Հ.** (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ)

**Խմբագրակազմ՝**
**Մելքոնյան Ա. Ա.** (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ),
**Քեռյան Գ. Մ.** (քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ),
**Բոչարով Վ. Վ.** (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԴ, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարան)
**Սաֆրաստյան Ռ. Ա.** (պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ),
**Պետրոսյան Դ. Վ.** (բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ),
**Հովսեփյան Մ. Մ.** (բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ),
**Մելքոնյան Ռ. Հ.** (բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ),
**Ջամալյան Դ. Վ.** (հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊԼՀ),
**Հովհաննիսյան Ա. Կ.** (պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ),

**Հիմնադիր և հրատարակիչ՝**
**Երևանի պետական համալսարան**

**Խմբագրության հասցեն՝**
**ՀՀ, 0025, Երևան,**
**Ալեք Մանուկյան 1,**
**ԵՊՀ ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա:**
**Հեռ.՝ 094 84-17-67**

**Էլ. կայք՝ publications.ysu.am**
**publishing.ysu.am**
**armcsr.com**

**Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով հեղինակների տեսակետներին:**

**e-mail: info@armcsr.com,**
**publishing@ysu.am**
**Տպագրական 11.25 մամուլ:**

**Տպաքանակը՝ 150**

**Հանձնված է շարվածքի՝**
**29.03.2018**
**Հանձնված է տպագրության՝**
**20.07.2018**

# «ԽՈՋԱԼՈՒԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ» ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՖԻ ՇՈՒՐՋ

*Անիա Բաբայան*

Թշնամի հայի կերպարն Ադրբեջանում սկսում են սերմանել դեռևս վաղ մանկական հասակից: Ամեն տարի նկարահանվում են բազմաթիվ մուլտֆիլմեր, գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր, հրատարակվում գրքեր ու հոդվածներ, նոր խեղաթյուրումներով վերահրատարակվում են դասագրքերը, որոնք հիմնականում ծառայում են այս նպատակին: Բացի այդ, ադրբեջանական քարոզչամեքենան օգտագործում է հնարավոր և անհնար բոլոր միջոցները՝ նսեմացնելու Արցախյան պատերազմում հայերի հաղթանակը: Մինչ այն ամբողջ ուժգնությամբ աշխատում է հայերի դեմ, հայկական կողմն առաջ է գնում համեմատաբար դանդաղ քայլերով: Դրա վառ ապացույցը շրջանառության մեջ մտած և օրեցօր նոր երանգներ ստացող «Խոջալուի ցեղասպանություն» հորինվածքն է:

Մտահոգիչ է այն, որ ինչպես պարզվեց հետազոտությունն իրականացնելու ընթացքում, կան նաև հայեր, որ հավատում են ադրբեջանցիների հնարած այս միֆին ու անգամ փորձում անհիմն փաստերով ապացուցել, որ զինադադարը կնքվեց հենց այդ «սպանդից» հետո, երբ ադրբեջանական կողմն ահաբեկվեց՝ տեսնելով, որ հայերն էլ ընդունակ են նման դաժան գործողությունների: Անհերքելի է, որ Խոջալուի ազատագրումը բավականին լուրջ դեր ունեցավ պատերազմի հետագա ընթացքի վրա, սակայն դա պայմանավորված էր այդ բնակավայրի ռազմավարական կարևոր դիրքով և ոչ մի առնչություն չուներ տեղի ունեցած մարդկային ողբերգության հետ: Բավական է վերհիշել, որ դեպքերը տեղի են ունեցել 1992 թ. փետրվարին, իսկ զինադադարը կնքվել է 2 տարի անց՝ 1994 թ. մայիսին, ինչն ինքնին խոսում է այն մասին, որ այս վարկածն անհիմն է:

«Խոջալուի դեպքերից» արդեն քսանհինգ տարի է անցել, սակայն թեման օրեցօր ավելի մեծ հնչեղություն է ստանում, հատկապես երբ ամեն տարվա փետրվարին ադրբեջանական մամուլը, հեռուստատեսությունն ու համացանցը ողողվում են սպանված երեխաների ու այլանդակված դիակների նկարներով՝ ներկայացնելով

դրանք որպես Խոջալուում հայերի կողմից «ցեղասպանված» անմեղ զոհեր: Հարկ է նշել, որ հաճախ այդ նկարներում պատկերված սարսափազդու տեսարանները ոչ մի կապ չունեն Խոջալուի կամ դրա բնակիչների հետ: Դրանք հիմնականում աշխարհում տեղի ունեցած տարբեր ողբերգությունների ժամանակ արված նկարներ են, որոնք վերցված են համացանցից՝ պարզապես լսարանի վրա հուզականորեն ազդելու և զոհերի քանակը մի քանի անգամ ավել ցույց տալու նպատակով[1]:

Սույն ուսումնասիրության նպատակն է փաստերի համադրման և համակողմանի վերլուծության շնորհիվ ստանալ «Խոջալուի ցեղասպանություն» անունը ստացած միֆին առնչվող դեպքերի իրական պատկերը: Այս թեմայով շատերն են գրել, բավականին լուրջ աշխատանք է կատարվել «Խոջալի.նետ» (www.xocali.net) կայքի կողմից, որտեղ կարելի է գտնել թեմային առնչվող բազմաթիվ վկայություններ, հոդվածներ ու գրականություն: Սակայն թեմայի ուսումնասիրությունը, նորանոր փաստերի ու վկայությունների որոնումն ու դրանց ներկայացումը հասարակության լայն շերտերին կարող են ավելի մոտեցնել ճշմարտությանը:

Խոջալուն[2], որն այսօր կրում է Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անունը, գտնվում է Արցախի Ասկերանի շրջանում՝ Ստեփանակերտի օդանավակայանից քիչ հեռու: 20-րդ դարի կեսերին այստեղ սկսել են բնակություն հաստատել ադրբեջանցիներ, իսկ 1960-ականներին հայկական Խոջալուի կողքին հայտնվում է ադրբեջանականը: 1977 թ.-ից հայկական Խոջալուն այլևս չի հիշատակվում[3]:

1988 թ. հոկտեմբերին ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում Բաքուն Խոջալուում սկսում է հսկայածավալ շինարարական աշխատանքներ իրականացնել՝ նպատակ ունենալով շատ կարճ ժամանակահատվածում բնակավայրը դարձնել քաղաք, իսկ հետագայում՝ մարզկենտրոն: Ղարաբաղում ժողովր-

---

[1] Տես Զեղծարարություններ և կեղծիքներ, http://xocali.net/ha/falsification01.html, հղվել է 13.10.2017 թ.:

[2] Ներկայումս՝ Իվանյան: Սույն հոդվածի մեջ օգտագործել ենք նախկին՝ ավելի հայտնի անվանումը՝ թյուրիմացությունից խուսափելու համար:

[3] Տես **Հակոբյան Թ.**, Խոջալու. ճշմարտության պահը (Մաս 1), http://hetq.am/arm/print/5915/, հղվել է 13.10.2017 թ.:

դագրական պատկերը փոխելու նպատակով շինարարական աշխատանքներին զուգահեռ գյուղն ակտիվորեն բնակեցվում է միջինասիական Ֆերգանայի հովտից վտարված հարյուրավոր թուրք-մեսխեթցիներով և հայաստանաբնակ, այդ թվում՝ ստեփանակերտցի աղրբեջանցիներով: Այս նպատակաուղղված քաղաքականության արդյունքում Խոջալուի բնակիչների թիվը 1988-1991 թթ. գրեթե եռապատկվում է՝ 2135 մարդուց դառնալով 6300: Նման միտումնավոր աճի հաշվին Խոջալուն քաղաքի կարգավիճակ է ստանում[4]:

Խոջալուում իրականացվող հապճեպ փոփոխությունները նախևառաջ պայմանավորված էին դրա ռազմավարական կարևոր դիրքով: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կենտրոնական մասում գտնվող այս բնակավայրին հատուկ նշանակություն էր տրվում այն պատճառով, որ այստեղից մարզկենտրոն Ստեփանակերտը և շրջակա հայկական բնակավայրերը, մասնավորապես՝ Ասկերանը, հեշտությամբ խոցելի էին: Բացի այդ, այստեղ էր գտնվում ԼՂԻՄ-ի միակ օդանավակայանը, որը պատերազմի սկզբնական շրջանում ՀԽՍՀ-ի հետ կապը պահելու միակ ուղին էր:

Ստեփանակերտի օդանավակայանում ծառայության մեջ գտնվող ՄՀՆՋ-ականները[5] Խոջալուն վերածել էին հանցագործների որջի. կողոպտում էին հարակից հայկական գյուղերը, ճանապարհից գողանում մարդկանց, ծաղր ու ծանակի ենթարկում հայ օդաչուներին, ինչպես նաև առևանգում Ստեփանակերտ-Երևան, Երևան-Ստեփանակերտ չվերթների ուղևորներին: Այս ամենաթողության պատճառով 1991 թ. ամռանը Երևան-Ստեփանակերտ չվերթները դադարեցվեցին, ինչը Լեռնային Ղարաբաղի համար նշանակում էր կատարյալ շրջափակում[6]:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումից հետո իրավիճակը կտրուկ սրվեց, իսկ դեկտեմբերին՝ հանրաքվեից հետո, Շուշիից, Խոջալուից, Կրկժանից, Ջամիլ-

---

[4] Տես Доклад правозащитного центра «Мемориал» о массовых нарушениях прав человека, связанных с занятием населенного пункта Ходжалы в ночь с 25 на 26 февраля 1992 г. вооруженными формированиями, http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/HOJALY/, հղվել է 10.09.2017 թ.:

[5] ՄՀՆՋ – Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ (ռուս.՝ Отряд милиции особого назначения (ОМОН)).

[6] Տես **Сердюков М.**, Еще раз о трагедии Ходжали, *Собеседник,* N18, 1992, http://xocali.net/ru/p02.html, հղվել է 13.09.2017 թ.:

լուից մայրաքաղաք Ստեփանակերտն սկսեց ենթարկվել շուրջօրյա հրթիռակոծության «Ալազան», «Կրիստալ» և ԲՄ-21 «Գրադ» համազարկային ռեակտիվ կայանքներից:

Այդ ժամանակ Ստեփանակերտում էին գտնվում նաև «Օղակ» գործողության հետևանքով հայկական բնակավայրերի՝ փախստական դարձած բնակիչները, ինչպես նաև Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերից փրկվածների մի մասը, որոնց թիվը միասին գերազանցում էր 35000-ը՝ ԼՂՀ բնակչության 25%-ը[7]: Քաղաքի բնակչությունը, շուրջօրյա հրետակոծությունից պաշտպանվելու համար, ստիպված էր օրերով ապաստանել նկուղներում՝ զրկված լինելով բնականոն կենսագործունեության նվազագույն պայմաններից:

1991-1992 թթ. ձմռան ամիսներին ՄՀՆՋ-ականները փակել էին Ստեփանակերտ տանող հիմնական ճանապարհները, ու մայրաքաղաքը գտնվում էր կատարյալ շրջափակման մեջ: Ա. Մութալիբովի հրամանով Աղդամից անջատվել էր էլեկտրականությունը: Իրենց կացարանները տաքացնելու համար մարդիկ կտրում էին քաղաքի ծառերը: Լուրջ էր նաև ջրի հարցը. մի քանի լիտր ջրի համար աղբյուրների մոտ ժամեր տևող հերթեր էին գոյանում: Մշտապես տեղացող թշնամական կրակի պատճառով շարքից դուրս էին եկել կենսապահովման բոլոր օբյեկտները. չէր աշխատում հացի գործարանը, լիովին սպառվել էին ալյուրի ու վառելանյութի պաշարները: Նկուղային պայմաններում էր աշխատում նույնիսկ ծննդատունը[8]:

Ուսումնասիրելով այդ օրերի մամուլը՝ տեսնում ենք, որ Խոջալուից կրակի տակ էին պահվում նաև Ասկերանի շրջանի հայաբնակ գյուղերը: Ստորև ներկայացված են հատվածներ այդ օրերի լրահոսից:

«Աղրբեջանցիների զինված ուժերի համար վերջին օրերի թիրախը Ասկերան ավանն է: Խոջալուից և Աղդամից ավանի վրա են արձակվել տասնյակ հրթիռներ և արկեր»[9]:

«Նորագյուղի մեկ բնակիչ վիրավորվել է Խոջալուի կողմից գյուղի հրթիռակոծման ժամանակ: Խոջալուից 40 «Ալազան» տիպի հր-

---

[7] Տես **Демоян Г.**; **Мелик-Шахназарян Л.**, Ходжалинское дело. Особая папка, Ереван, 2003, էջ 11:

[8] Տես Արցախի տագնապալուր օրերը, *«Ազգ»*, 1991 դեկտեմբերի 18, թիվ 88:

[9] Արցախ. իրադարձությունների կիզակետ, *«Հայաստան»*, 1991 դեկտեմբերի 18, թիվ 187:

թիռ է արձակվել նաև դեպի հայկական Դաշբուլաղ գյուղը, որոնք սակայն բոլորն էլ պայթել են նպատակակետին չհասած»[10]:

«Հունվարի 22-ի երեկոյան Խոջալուից և Մալիբեյլիից սկսել են «Ալազան» հրթիռներ և ականներ արձակել Ստեփանակերտի վրա: Արձակվել է 45 հրթիռ: Քաղաքում մասնակիորեն ավերվել են մանկական հիվանդանոցի շենքը, բնակելի տներ: Ասկերանի շրջանում այդ նույն ժամերին Խոջալուի կողմից ավտոմատ զենքից և գնդացիրներից գնդակոծվել է հայկական Նորագյուղը: Նույն շրջանում հունվարի 23-ին առավոտյան ժամը 6-ից 7-ը հայկական Մեհտիշեն գյուղից ոչ հեռու անհայտ զինված անձինք շրջապատել ու պատանդ են վերցրել գյուղի բնակիչներ Միքայել Վազգենի Այվազյանին և Միքայել Ալիխանի Պետրոսյանին: Նախնական տվյալների համաձայն երկուսին էլ ավտոմեքենայով տարել են Խոջալուի ուղղությամբ»[11]:

«Փետրվարի 18-ին Խոջալու ադրբեջանական բազայից 122 միլիմետրանոց հաուբիցներից, միջազգային համաձայնագրերով արգելված ասեղնացիր արկերով գնդակոծվել է Ասկերանի շրջանի Այգեստան (Բալուջա) գյուղը: Կան վիրավորներ և ավերածություններ»[12]:

Բացի այդ՝ հայկական կողմը տեղեկություններ էր ստանում, որ Աղդամն ու Խոջալուն համալրվում էին զրահատեխնիկական հավելյալ ուժերով, ինչը հուշում էր, որ ադրբեջանական կողմը նախապատրաստվում է ռազմական լայնածավալ գործողությունների: Դրա մասին է խոսում նաև ադրբեջանցի հեղինակ Նասիման Յաղուբլուի «Խոջալուի ջարդը» գրքում տեղ գտած Խոջալուի կամավորական ջոկատի հրամանատար Էլբրուս Ալիևի վկայությունը. «Այդ օրը, այսինքն՝ փետրվարի 25-ին, մենք Աղդամից լուր էինք ստացել, որ ժամը 5-ին մերոնք պիտի գրոհեն: Մենք էլ անհամբերությամբ գրոհի սկսվելուն էինք սպասում, սակայն Աղդամից այդպես էլ լուր չկար»[13]:

---

[10] Իրադրությունն Արցախում, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1992 հունվարի 18, թիվ 11 (356):

[11] Արցախ. Գիշերային հրետակոծություններ, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1992 հունվարի 24, թիվ 15 (360):

[12] Արցախ. Օդային հարձակում, *«Հայաստանի Հանրապետություն»*, 1992 փետրվարի 19, թիվ 33 (378):

[13] **Yaqublu N.**, Xocalı qırğını (Խոջալուի ջարդը - *ադրբեջաներեն*), Bakı, 1992, s. 45.

Ենթադրվում է, որ պլանավորված էր Աղդամից և Խոջալուից միաժամանակ գրոհել հայաբնակ Ասկերան ավանի վրա և ոչնչացնելով այն՝ ամբողջովին գրավել դեպի Ստեփանակերտ տանող ճանապարհը: Ուստի՝ այս պայմաններում հայկական զինված ուժերի առաջնային խնդիրն էր դառնում ազատագրել Խոջալուն, ինչը նախ կկանխարգելեր թշնամու հնարավոր առաջխաղացումը և կապաշրջափակեր Ստեփանակերտի օդանավակայանը՝ վերականգնելով ընդհատված կապը Մայր Հայաստանի հետ, ապա նաև կթուլացներ բոլոր կողմերից հարձակման ենթարկվող մայրաքաղաքի վրա առկա ճնշումը:

Ըստ Արցախյան ազատամարտի առաջին հետախուզադիվերսիոն ջոկատի հրամանատար Վլադիմիր Վարտանովի՝ Խոջալուն ազատագրելու գործողություն մշակվել էր դեռևս 1991 թ. աշնանը, որի համաձայն՝ նրա հրամատարության տակ գտնվող հատուկ նշանակության հետախույզ-դիվերսանտների խումբը պետք է թափանցեր Խոջալու և հենակետերը կրակի տակ վերցնելով՝ ոչնչացներ դրանք և թույլ չտար հակառակորդին պաշտպանություն կազմակերպել: Դրանից հետո գրոհայինների 5 խումբ պետք է ներխուժեր քաղաք տարբեր ուղղություններից[14]: Սակայն այս պլանից հրաժարվում են: Վարտանովը առաջ է քաշում երկու հնարավոր պատճառ: Առաջինը բավարար քանակով մարդկային ռեսուրսներ չունենալն էր, իսկ երկրորդ՝ ավելի լուրջ պատճառը կարող էր լինել բնակչության մեջ մեծ թվով կորուստների հնարավորությունը, քանի որ այդ պլանով մարդասիրական ոչ մի միջանցք չէր նախատեսվում խաղաղ բնակչության համար:

Խոջալուն ազատագրելու վերջնական գործողությունը մշակվեց 15 օրում: Գործողության հրամանատարն էր ինքնապաշտպանական ուժերի ընդհանուր ղեկավար Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը: Իր հարցազրույցներից մեկում հրամանատարը պատմում է. «Նախ՝ անհրաժեշտ էր ճշտել Խոջալուում հակառակորդի ստույգ տեղը: Գործողության նախապատրաստական աշխատանքներում շատ մեծ թվով մարդիկ էին ներգրավված: Շտաբում մշակվել էր Խոջալուի ազատագրման պլանը: Այն ազատագրելու համար քաղաքը բաժանվեց չորս սեկտորների և դրանց ուղղություններով նշանակվեցին պատասխանատուներ՝ Վաչիկ Հայրյան, Վալերի Չիթչյան,

[14] **Բաբայան Ա.,** Հարցազրույց Վլադիմիր Վարտանովի հետ, Երևան, 15.06.2017 թ.:

Սեյրան Օհանյան և Սմբատ Հակոբյան: Յուրաքանչյուր ուղղություն բաժանված էր չորս ջոկատի. ընդհանուր առմամբ գործողությանը մասնակցում էր 487 կամավորական, իսկ ռեզերվում 126-ն էին: Յուրաքանչյուր մարտից հետո այնպես էինք ջլատվում և հոգնում, որ կորցնելով զգոնությունը՝ կարող էինք կորցնել ամեն ինչ: Նման դեպքերում օգնության էր գալիս ռեզերվը՝ թարմ ուժը, որը նման է թարմ օդի հոսքի:

Ռազմական գործողությունները նախատեսված էր սկսել փետրվարի 24-ին, սակայն սպայական կազմի տարաձայնությունների պատճառով սկսվեցին ավելի ուշ՝ [ամսի] 25-ին՝ 23:30-ին, բեռնատար վագոնի պայթյունով: Ինչո՞ւ այդ ժամին, քանի որ սկիզբն ազդարարող պայթյունն ուշանում էր. ժամը 17-ից սպասում էինք, իսկ վագոնը խոնավության պատճառով ոչ մի կերպ չէր պայթում: Հայկական ուժերը հիմնականում ճնշեցին և ոչնչացրին հակառակորդի կրակակետերը, բայց նրա խմբավորումներից մեկը ամրակայվել էր իննհարկանի շենքում և դիմադրություն էր ցույց տալիս: Ռազմական գործողություններն ավարտվեցին փետրվարի 26-ին՝ ժամը 4:00-ին: Հակառակորդն ստիպված էր զիջել դիրքերը և նահանջել: Մենք կորցրինք 13 զինվոր»[15]:

Խաղաղ բնակչության համար ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերն ազատ էին թողել դեպի Աղդամ տանող ճանապարհը, որի մասին գրոհից առաջ ռադիոկապի ու բարձրախոսների միջոցով տեղեկացրել էին թե՛ համապատասխան մարմիններին, թե՛ Խոջալուի բնակչությանը:

Այս միջանցքն սկսվում էր բնակավայրի արևելյան ծայրամասից և հյուսիսարևելյան մասով՝ Կարկառ գետի երկայնքով, ձգվում դեպի Աղդամ: Հարկ է նշել նաև, որ Բաքվի իշխանությունն ու Խոջալուի բնակիչները տեղյակ էին նաև այստեղ սպասվող ռազմական գործողությունների մասին: Հաղորդակցման տարբեր միջոցներ օգտագործելով՝ գրոհից դեռևս 2 ամիս առաջ հայկական կողմն անընդմեջ հորդորում էր բնակչությանը դուրս գալ քաղաքից: Այդ նախազգուշացումների շնորհիվ բնակիչների մեծ մասն արդեն լքել էր բնակավայրը և հաստատվել կրակի գոտուց համեմատաբար ավելի հեռու

---

[15] **Ղարախանյան Մ.**, Իշխանություն՝ սեփական քաղաքացիների կյանքերի գնո՞վ, *«Հայաստանի զրուցակից»* պաշտոնական կայք, http://sobesednik.gdesigngroup.org/politic/2293-2012-03-18-19-05-54, հղվել է 23.11.2017 թ.:

վայրերում, ի մասնավորի՝ Աղդամում: Սա լայնորեն լուսաբանվում էր ադրբեջանական ՁԼՄ-ով, որտեղ քննադատում և որպես դավաճան էին ներկայացվում Խոջալուն լքողները: Ավելին՝ գերի ընկած թուրք-մեսխեթցիների վկայությամբ՝ Աղդամից անգամ խոչընդոտում էին իրենց՝ այնտեղից դուրս գալը: Ու սրանք հիմնականում այն մարդիկ էին, ում խաբեությամբ էին բնակեցրել այդ շրջանում: «Գերի վերցրած ադրբեջանցիներին հարցրեք, թե ինչու են եկել կռվելու: Նրանք պատմեցին, որ Բաքվում միլիցիայի պետը ստիպողաբար իրենցից շինարարական ջոկատ է կազմել և ուղարկել Խոջալու՝ իբր շենքեր կառուցելու: Իսկ Խոջալուում էլ հայտնեցին՝ շինանյութ չկա, զենք վերցրեք և կռվեք հայերի դեմ»[16]:

Բնակչությանը ռազմական գործողությունների վայրից ժամանակին չտարհանելու և նրանց օգնություն չցուցաբերելու հարցում ընդդիմությունն ու իշխանությունն անխնա միմյանց էին մեղադրում: Մութալիբովը պաշտպանվում էր՝ նշելով, որ Աղդամի զինված միավորումներն այդ ժամանակ արդեն իրեն չէին ենթարկվում, գտնվում էին Ադրբեջանի ժողճակատայինների վերահսկողության տակ, հետևաբար՝ ողբերգության համար ինքը պատասխանատու չէր, իսկ ընդդիմությունն իր հերթին առիթը բաց չէր թողնում նախագահին վարկաբեկելու և ամբողջ մեղքը նրա վրա բարդելու համար:

Դեպքերից երկու ամիս անց Ադրբեջանի Ժողովրդական ճակատի անդամ Ռուստամ Հաջիևը ռուսական «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում պատմել է. «Մենք կարող էինք օգնել Խոջալուի բնակիչներին. կար և՛ ուժ, և՛ հնարավորություն: Սակայն երկրի ղեկավարները ուզում էին ցույց տալ ժողովրդին, որ իրենք անզոր են: Այսպիսով, նրանք նպատակ ունեին օգնության կանչել ԱՊՀ բանակը, որի միջոցով կճնշեին նաև ընդդիմությանը»[17]: Իսկ Խոջալուի բնակիչների սպանդն ուսումնասիրող հանձնաժողովի նախագահ Ռամիզ Ֆաթալիևը «Ազադլըգ»-ին տված հարցազրույցում նշում է. «Մինչև Խոջալուի դեպքերը մնացել էր 4 օր: Փետրվարի 22-ին նախագահի, վարչապետի, ՊԱԿ-ի նախագահի և մյուսների մասնակցությամբ գումարվեց ազգային անվտանգության խորհրդի նիստ: Մինչև այսօր ոչ ոք չգիտի, թե որտեղ էր սխալ թույլ տրվել և ում կող-

[16] Ճշմարտությունն ու աղմուկը Խոջալուի շուրջ, *«Ազատամարտ»*, 1992 մարտ, թիվ 12:

[17] Ходжалинские события. свидетельствуют азербайджанцы, 24.02.2000, http://sumgait.info/khojaly/khojaly-witnesses/khojaly-witnesses.htm, հղվել է 13.11.2017 թ.:

մից: Նիստի ժամանակ որոշվեց չտարհանել բնակչությանը»[18]:

Որտեղ էլ որ լիներ «թույլ տրված սխալը», մի բան հաստատ էր. Խոջալուի բնակիչները զոհ գնացին Ադրբեջանի ներքին քաղաքական պայքարին: Հնարավոր է, որ իշխանությունը նրանց օգտագործում էր որպես կենդանի վահան: Նրանք համոզված էին, որ հայերը չեն կոտորի խաղաղ բնակչությանը, իսկ նրանց տարհանելը կնշանակեր ինքնակամ հանձնել ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ունեցող Խոջալուն:

Այս դեպքում հայկական զիված ուժերն ստիպված էին ընտրություն կատարելու՝ կա՛մ ամեն գնով վերցնել Խոջալուն ու օդանավակայանը, կա՛մ արյունաքամ անել սեփական ժողովրդին: Պատասխանը միանշանակ պարզ էր: Փետրվարի 25-ին՝ 22:00-ին, սկսվեց Խոջալուն ազատագրելու գործողությունը: ՄՀՆՋ-ականների վերջին խումբը, որ շարունակում էր դիմադրել, վնասազերծվեց 26-ի առավոտյան ժամը 5-ին: Խաղաղ բնակչության շրջանում այստեղ գրեթե զոհեր չեն եղել, քանի որ նրանց մեծ մասը հասցրել էր դուրս գալ մարդասիրական միջանցքով ու անվնաս հասնել Աղդամ: Ադրբեջանական մի շարք աղբյուրներ պարզապես արհամարհում են այս միջանցքի գոյության փաստը և շարունակում համառել, որ Խոջալուում զոհվել են 1000-ավոր խաղաղ բնակիչներ:

ՊԿ գլխավոր շտաբի 2-րդ՝ հետախուզության բաժնի պետ գնդապետ Իվան Ղուկասովը գրում է. «Խոջալուից խաղաղ բնակչությանը դուրս բերելու միջանցքի կանխամտածված ստեղծումը նպատակ ուներ նախ՝ մարդասիրական վերաբերմունք ցուցաբերել խաղաղ բնակչության հանդեպ, թույլ չտալ, որ զոհեր լինեն, նրանց գրավել դեպի մեր կողմը և ցույց տալ, որ մենք մարտնչում ենք ոչ թե խաղաղ բնակչության, այլ զինված հակառակորդի դեմ, որն իր հրաձգությամբ ստիպում է հայ բնակչությանը զինված դիմադրություն ցուցաբերել: Երկրորդ նպատակը քաղաքի պաշտպանության պաշտպանական պոտենցիալի թուլացումն էր: Քաղաքի պաշտպանների ուղեկցությամբ բնակչության դուրսբերումն այդ միջանցքով պետք է հանգեցներ նրա պաշտպանների թվի կրճատմանն ու նպաստեր «լեգալ» դասալիքների ի հայտ գալուն, որոնք քաղաքից դուրս եկող

[18] «Siyasi uzaqgörənliyin olmaması Xocalı hadisəsinə gətirib çıxırdı» («Քաղաքական անհեռատեսությունը հանգեցրեց Խոջալուի դեպքերին - *ադրբեջաներեն*), 09.09.2009, http://www.azadliq.org/content/article/1818751.html, հղվել է 01.02.2017 թ.:

խաղաղ բնակչությանն ուղեկցելու պատրվակով կլքեին պաշտպանական դիրքերն ու դրանով իսկ կթուլացնեին քաղաքի պաշտպանությունը: Բացի այդ, հակառակորդը կգար այն մտքին, թե՝ «ում պաշտպանի, եթե տեղի բնակիչները խուճապահար թողնում են իրենց տունուտեղը, իրենց հողը»: Տեղի բնակիչները հիմնականում քաղաքի պաշտպանությանը մասնակցող մարտիկների հարազատներն էին, որոնք իրենց հարազատների ու մերձավորների անվտանգ ելքն Աղդամի շրջան (Աղրբեջանի տարածք) ապահովելու համար ստիպված կլինեն լքել իրենց պաշտպանական դիրքերը»[19]:

Այդպես էլ լինում է. մեծ թվով աղրբեջանցի մարտիկներ բնակիչներին ուղեկցելու պատրվակով թողնում են իրենց պաշտպանական դիրքերն ու բնակչության հետ միասին հեռանում միջանցքով: Իսկ Խոջալուում ինչ-ինչ պատճառներով մնացած ու գերի ընկած բնակիչներին (200-300 հոգի՝ ներառյալ թուրք-մեսխեթցի ընտանիքներ) տեղափոխում են Ստեփանակերտ, հետո՝ իրենց կամքի համաձայն՝ առանց որևէ նախապայմանի հանձնում աղրբեջանական կողմին: Համաձայն իրենց իսկ խոսքերի՝ գերիների հետ այստեղ հայերը վարվել են մարդասիրաբար՝ տրամադրելով նրանց հագուստ ու սնունդ՝ չնայած այն բանին, որ Ստեփանակերտի բնակչությունն ինքը սովամահ լինելու վտանգի առաջ էր կանգնած[20]:

Հակառակ այս ամենին՝ Խոջալուի գործողությունից հետո Բաքվում լուրեր տարածվեցին, որ հայերը գրավել են Խոջալուն ու դաժանաբար կոտորել նրա բնակիչներին: Մութալիբովը տեղեկությունը ստանալուց հետո անմիջապես զանգահարում է ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանին՝ լուրերը պարզաբանելու համար: Վերջինս, բնականաբար, հերքում է այն՝ տեղեկացնելով, որ իրենց մոտ կան գերիներ, ում կերակրում են՝ չնայած նրան, որ իրենք էլ սննդի պակաս ունեն, ու պատրաստ են փոխանակել գերի ընկած բնակիչներին աղրբեջանական գերության մեջ գտնվող հայ գերիների հետ[21]:

---

[19] **Ղուկասով Ի.**, Խոջալուից խաղաղ բնակչությանը դուրս բերելու միջանցքը, «Գլոբուս», թիվ 2 (47), 2014, էջք 5-6:

[20] Տես Kodjalu, turks Meskhetines, 26.02.2010, https://www.youtube.com/watch?v=vHhsnCQqrkw, հղվել է 15.09.2017 թ.:

[21] Տես **Мазалова Д.**, Я гумануст. В душе, Интервью с бывшим президентом Азербайджана Аязом Муталибовым, «*Независимая газета»*, № 64 (235), 02 апреля 1992 г.

Կասկածելով Մկրտչյանի խոսքերին ու ստեղծված անորոշությունը պարզաբանելու նպատակով՝ նախագահ Ա. Մութալիբովն ուղղաթիռով լրագրողների խումբ է ուղարկում Խոջալու: Ուղղաթիռից Խոջալուում զանգվածային սպանությունների հետքեր չնկատելով՝ լրագրողների խումբը վերադառնում է Աղդամ: Հետդարձի ճանապարհին հայկական Նախիջևանիկ գյուղի մոտ նրանք նկատում են աղրբեջանցի ՄՀՆՋ-ականների դիակներ, որոնք զոհվել էին անհասկանալի պայմաններում: Սակայն ամեն ինչ է՛լ ավելի է խճճվում, երբ հայտնի է դառնում, որ Աղդամից 3 կմ հեռավորության վրա գտնվող բաց դաշտում մի քանի տասնյակ խաղաղ բնակիչների դիակներ են հայտնաբերվել: Ի՞նչ դիակներ էին սրանք և ինչպե՞ս էին հայտնվել այստեղ: Պատկերը հասկանալի և ամբողջական է դառնում միայն այն ժամանակ, երբ համադրում ենք հայկական և աղրբեջանական կողմերի վկայությունները:

Վ. Վարտանովը, որ Խոջալուի ազատագրման նույն օրն իր 2 հոգանոց փոքր խմբով հետախուզական հատուկ հանձնարարությամբ գտնվում էր դեպքի վայրից քիչ հեռու, պատմում է. «Խոջալուի բնակիչները ՄՀՆՋ-ականների ուղեկցությամբ՝ 60-100 հոգի, Աղդամի ուղիղ ճանապարհից շեղվել ու եկել էին հայկական Նախիջևանիկ գյուղի ուղղությամբ: Էնտեղ մենք երկու պոստ ունեինք: Իրենք հարձակվում ու մի պոստը վերցնում են: Էստեղ մենք ոնց որ երկու զոհ ենք ունենում: Հետո շատ արագ մոտենում են մյուսին ու փորձում են մյուսն էլ վերցնել, բայց արդեն չի ստացվում: Դրանից հետո՝ մոտ կես ժամ անց, մենք արդեն տեսնում ենք, որ Աղդամի թուրքական աջի պոստը սկսում ա կրակել, սրան միանում ա 2-րդը, ու խաչաձև կրակի տակ ոչնչացնում են բոլորին՝ կարծելով, որ սա իրենց դիրքերը գրավելու եկած հայկական խմբավորում էր: Գիշեր էր, ամպամած էր: Էդ մթության մեջ հնարավոր չի տարբերել՝ հայ ես, թե թուրք: Էս ժողովուրդը, որ գալիս էր, փորձում էր չաղմկել, որովհետև իրենց հետևից դեռ կրակոցներ կարող էին հնչել: Մարդիկ կան, որ պնդում են՝ թուրքերը դիտավորյալ են սպանել էդ մարդկանց: Ես դրան չեմ հավատում: Բայց այ ինչի՞ իրենք շեղվեցին ուղիղ ճանապարհից ու եկան էստեղ, դա ինձ համար հանելուկ մնաց. իմա՞ստը: Չէր կարող էստեղի ապրողը չիմանար, որ սա հայկական գյուղ է:

Հետո դիակները տեղափոխվել են այն վայր, որտեղ մենք էինք թաքնված այդ ժամանակ: Պարզ է՝ հայերը էդտեղ ոչ մի գործո-

ղություն չէին կարող իրականացնել, Նախիջևանիկի դիրքերի տղերքն էլ էնպիսի զենք չունեին, որ հեռու կրակեին: Թուրքական պոստը ուներ տենց զենքեր, որ անգամ կարող էր Նախիջևանիկի վրա կրակեր: Իսկ մեր ունեցած բոլոր լուրջ զենքերն այդ ժամանակ Խոջալուն ազատագրելուն էին ծառայում: Էդ գործողությանը մասնակցեց Ղարաբաղի ուժերի 50%-ը[22]. թուլացված էին բոլոր ուղղությունները՝ բացի Ասկերանից»:

Իսկ ահա Խոջալուի բնակիչ Սուլեյման Աբբասովը, որն այդ խմբի մեջ էր, պատասխանում է բոլորին այդքան հուզող հարցին, թե ինչու բնակիչների այս փոքր հատվածը մինչև վերջ չգնաց հայերի տրամադրած մարդասիրական միջանցքով, որ Խոջալուն Աղդամին կապող ամենակարճ ու հարթ ճանապարհն էր. «Մենք բնակիչների մի մասի հետ հասանք Նախիջևանիկ՝ հույս ունենալով, որ այստեղ ապաստան կգտնենք: Մինչ այդ մեզ ռադիոկապով հայտնում էին, որ այս գյուղը հետ է վերցված գրոհայինների ձեռքից: Առաջին կրակոցները հնչեցին... Շատ մարդիկ, չհասցրած ինչ-որ բան հասկանալ, ընկան մահացու խոցված: Կարճատև մարտ տեղի ունեցավ, որի ընթացքում մեզ հաջողվեց դուրս գալ թակարդից և հասնել Աղդամ տանող ճանապարհ...»[23]:

Աբբասովի վկայությունից պարզ է դառնում, որ Խոջալուի բնակիչներին դիտավորյալ շեղել են ճանապարհից ու հրահրել նոր բախում հայկական կողմի հետ: Հարց է առաջանում սակայն, թե ում էր սա ձեռնտու: Ադրբեջանի նախկին նախագահ Մութալիբովը չեխ լրագրողուհի Դանա Մազալովային տված հարցազրույցում ուշագրավ մի հայտարարություն է անում. «Ինչպես նշում են Խոջալուի փրկված բնակիչները, ամեն ինչ կազմակերված է եղել իմ հրաժարականի համար: Ինչ-որ ուժ գործում էր նախագահին վարկաբեկելու ուղղությամբ: Ես չեմ կարծում, որ այսպիսի իրադրությունների ժամանակ շատ խելացի և հստակ կողմնորոշվող հայերը թույլ կտային, որ իրենց ֆաշիստական գործողությունները մերկացնող փաստաթղ-

---

[22] Սույն հոդվածի շրջանակներում ականատեսների՝ մեջբերվող անուղղակի խոսքերի պարագայում մեր առջև խնդիր չենք դրել քննելու և ստուգարկելու դրանց պատմագիտական իսկությունը, փոխարենը նախընտրել ենք հավատարիմ մնալ այլոց կամ մեր կողմից հարցված ականատեսների սկզբնօրինակ վկայություններին՝ վերջիններս օգտագործելով որպես ուսումնասիրության հատուկ աղբյուրատեսակ: **Բաբայան Ա.,** Հարցազրույց Վլադիմիր Վարտանովի հետ, Երևան, 15.06.2017 թ.:

[23] Ходжалы. Хроника геноцида, Баку, 1993, с. 22.

թերը հայտնվեին ադրբեջանցիների ձեռքերում: Կարելի է ենթադրել, որ ինչ-որ մեկին ձեռնտու էր հետագայում ցույց տալ այս կադրերը ՁՈՒ նիստի ժամանակ և կենտրոնացնել ամեն ինչ իմ անձի շուրջ»[24]:

Գաղտնիք չէ, որ Խորհրդային Միության փլուզումից հետո քաղաքական պայքարն Ադրբեջանում կտրուկ սրվեց: Իշխանության համար պայքարում էին երկրի նախագահ Այազ Մութալիբովն ու ընդդիմադիր ազգայնական «Ադրբեջանի ժողովրդական ճակատը», որը ղեկավարում էր թուրքամետ Աբուլֆազ Էլչիբեյը: Այս պայքարում ղարաբաղյան հարցը հաջողության հասնելու ամենակարևոր խաղաթղթերից էր և՛ իշխանության, և՛ ընդդիմության համար[25]: Փաստորեն, քաղաքական այս մրցավազքում հաղթող դուրս գալու մարմաջի արդյունքում գրվեց Ադրբեջանի պատմության տխուր էջերից մեկը:

Լարվածությունն իր գագաթնակետին հասավ փետրվարի 26-ին, երբ Խոջալուի անկման լուրը հասավ Բաքու: Կառավարության մամուլի ծառայությունը, լավ գիտակցելով, որ Խոջալուի կորուստը կնշանակեր Մութալիբովի իշխանության տապալում, նույն օրը երեկոյան հայտարարություն է տարածում, որտեղ ասվում է. «Հայ գրոհայինների և նախկին Սովետական միության 366-րդ գնդի հարձակումը հետ է մղվել, և բնակավայրը կրկին ադրբեջանական ուժերի վերահսկողության տակ է»[26]: Սակայն այս տեղեկությունը հերքվում է Ժողովրդական ճակատի տեղեկատվական կենտրոնից պատասխան հայտարարությամբ. «Խոջալուի բնակիչների դիակներով լի 2 բեռնատար հասել է Աղդամ: Մարտում զոհվել է նաև Խոջալուի օդանավակայանի տնօրենը, դատախազն ու քաղաքապետը»[27]:

Ինչպես տեսնում ենք, երկու հայտարարություններն էլ չէին համապատասխանում իրականությանը: Մինչ իշխանությունը, այդ լուրը թաքցնելով, փորձում էր փրկել իր դեմքը, ընդդիմությունը շտապեց զոհերի մասին հայտնել նախքան դիակների Աղդամ հասնելը: Շտա-

---

[24] Տես **Мазалова Д.**, Я гумануст. В душе, Интервью с бывшим президентом Азербайджана Аязом Муталибовым, «*Независимая газета*», № 64 (235), 02 апреля 1992 г.

[25] Տես **Էլբակյան Է.**, Հայ-ադրբեջանական պատերազմը և մերօրյա հերոսները, Երևան, 2015, էջք 61-62:

[26] Ходжалы. Хроника геноцида, Азербайджанское государственное издательство, Баку, 1993 г., с. 11-12.

[27] Նույն տեղում:

պել էին նաև՝ «սպանված» հռչակելով քաղաքի պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ քաղաքագլուխ Էլման Մամեդովին:

Խոջալուի կորստից հետո Մութալիբովին մեղադրեցին ղարաբաղյան հարցում անվճռականություն ցուցաբերելու ու բազմաթիվ անմեղ զոհերի համար և պահանջեցին նրա հրաժարականը: Ընդդիմության ճնշման տակ Մութալիբովը մարտի 6-ին հրաժարական տվեց, իսկ մի քանի ամիս անց քաղաքական հետապնդումներից խույս տալու և իր ու իր ընտանիքի անվտանգությունը ապահովելու նպատակով, ապաստան գտավ Ռուսաստանում: Հրաժարականից օրեր անց աղրբեջանցի հայտնի լրագրող Չինգիզ Մուսթաֆանը, որ երկու անգամ էր եղել դիակների գտնվելու վայրում (փետրվարի 29-ին և մարտի 2-ին), նախկին նախագահին հայտնում է, որ Խոջալուում ինքը ոչ մի դիակ չի տեսել: Դիակները եղել էին Աղդամի մատույցներում, որն այդ ժամանակ դեռևս գտնվում էր Աղրբեջանի ժողճակատայինների հսկողության տակ: Բայց նրան ավելի շատ զարմացրել էր այն, որ առաջին նկարահանման ժամանակ դիակները պղծված չէին, սակայն երկրորդ նկարահանման ժամանակ արդեն վերջիններիս մարմինների դիրքերը փոխվել էին և զգալիորեն այլանդակվել: Մութալիբովը, կռահելով այս ողբերգության իրական պատճառը, խորհուրդ է տալիս լրագրողին աղմուկ չբարձրացնել: Սակայն Մուսթաֆանն անկախ լրագրողական հետաքննություն է նախաձեռնում: Ակնհայտ է, որ նրա գործունեությունը անհանգստացրել էր այդ ոճրագործության իրական հեղինակներին, քանի որ դրանից 4 ամիս անց նա սպանվում է անհայտ հանգամանքներում այն նույն վայրում, որտեղ նկարահանել էր ողբերգական կադրերը[28]:

Հարկ է նշել, որ զոհվածների թվի մասին Բաքվի տրամադրած տվյալները բավականին տարբեր են և այս 23 տարիների ընթացքում անընդհատ փոփոխության են ենթարկվել: Չնայած որ անգամ Բաքվի պաշտոնական տվյալներում զոհերի թիվը մոտ 600 հոգի է նշվում, այդ ողբերգության մասին խոսելիս շատ պաշտոնյաներ, իրենց ելույթն ավելի ազդեցիկ դարձնելու համար, սգում են 1000-ավոր անմեղ զոհերի մահը: Մինչ այսօր սպանդի ենթարկված խաղաղ բնակչության իրական թիվը մնում է անհայտ: Բաքվի կողմից պաշտոնա-

[28] Տես **Mustafayev V.,** Çingiz və Mübariz. jurnalist və əsgərin şücaəti, "ANSPRESS", 26.02.2011, http://www.anspress.com/siyaset/26-02-2011/vahid-mustafayev-cingiz-ve-mubariz-jurnalist-ve-esgerin-sucaeti, հղվել է 05.03.2017 թ.:

պես հաստատված 617 զոհվածների ցանկում ադրբեջանցիները կարող էին հրապարակել նաև քաղաքի պաշտպանության ժամանակ զոհված ՄՀՆՋ-ականների, ինչպես նաև այն թուրք-մեսխեթցիների անունները, որոնց Խոջալուն քաղաք դարձնելու ժամանակ գրանցել էին, սակայն վերջիններս երբեք մշտական հիմունքներով այդտեղ չէին բնակվել:

Ինչպես նշվում է «Մեմորիալ» մարդու իրավունքի կենտրոնի զեկույցում, խաղաղ բնակիչներից շատերը մահացել էին ցրտահարությունից, ոչ թե հրազենային վերքերից[29]: Սա պայմանավորված էր նրանով, որ գրոհի սկսվելուց անմիջապես հետո բնակիչները խուճապահար փախել են՝ մոռանալով իրենց հետ վերցնել անգամ ամենաանհրաժեշտ իրերը: Սակայն անգամ այս պարագայում վերջիններիս մահը կրկին ծանրանում է ադրբեջանական կողմի վրա, քանի որ համապատասխան մարմինները ժամանակին չէին կազմակերպել նրանց տարհանումը: Սրա մասին բազմաթիվ վկայություններ կան ինչպես հայկական ու ռուսական, այնպես էլ ադրբեջանական բաց աղբյուրներում: Ահա դրանցից մեկը՝ Խոջալուի բնակիչ Սալման Աբբասովի հուշերը, որ տեղ են գտել 1993 թ. Բաքվում հրատարակված «Խոջալու. ցեղասպանության ժամանակագրություն» գրքում. «Ողբերգությունից մի քանի օր առաջ հայերն ամեն օր ռադիոկապով հաղորդում էին մեզ, որ գրավելու են քաղաքը և պահանջում էին լքել այն: Ուղղաթիռները երկար ժամանակ Խոջալու չէին գալիս, և պարզ չէր՝ ինչ-որ մեկն արդյոք մտածում է մեր ճակատագրի մասին: Ոչ մի օգնություն մենք չէինք ստանում: Ավելին, երբ հնարավորություն կար կանանց, երեխաներին ու ծերերին դուրս բերելու, նրանք մեզ համոզում էին սպասել: Խոստանում էին, որ մոտ ժամանակներս Ասկերանի գրավման և շրջափակումից դուրս գալու գործողություն է նախապատրաստվում: Ինչո՞ւ էին մեզ խաբում: Ինչի՞ համար զոհվեցին մեր երեխաները, ո՞վ է տալու դրա պատասխանը»[30]:

Մինչ օրս այս հարցերին պատասխան չի տրվել: Ողբերգության իրական պատճառը բացահայտելու փոխարեն Բաքուն պետական բյուջեից միլիոնավոր դոլարներ է ծախսում անդադար պատերազմի սպառնալիքի տակ ապրելուց հոգնած ադրբեջանցիների մոտ հակա-

[29] Տես Доклад правозащитного центра «Мемориал»…, http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/HOJALY/, հղվել է 10.09.2017 թ.:

[30] Ходжалы…, с. 28-29.

հայ տրամադրություններ արթնացնելու ու բորբոքելու նպատակով: Սրան ակտիվորեն աջակցում է Թուրքիան: Խոջալուի բնակիչների հետ պատահած ողբերգությունը ոգևորության մեծ ալիք էր բարձրացրել նաև այստեղ: 1992 թ. փետրվարի 26-ին թուրքական հեռուստատեսությունը, հենվելով Ադրբեջանի ներքին գործերի նախարարության տվյալների վրա, հաղորդեց, որ «Խոջալուում սպանվել են ավելի քան 100 ազերիներ»: Հետագա հաղորդումներում սպանվածների թիվն ընդհուպ բարձրացավ մինչև 1230-ի: Հետագայում այդ թիվը մասնակիորեն կրճատվեց և հաստատվեց՝ ավելի քան 1000 կին, երեխա և տղամարդ[31]: 1992 թ. մարտի 2-ին վերադառնալով Արցախից՝ Ֆրանսիայի հեռուստատեսության 5-րդ կայանի թղթակցուհի Ֆլորանս Դավիդն իր կայանին հաղորդեց, թե որտեղից էր թուրքական մամուլը վերցրել սպանված հազարավոր ադրբեջանցիների լուսանկարները: Բանն այն է, որ կիրակի՝ մարտի 1-ին, տեղի էր ունեցել իրանական Կարմիր մահիկի նախաձեռնությամբ հայերի և ադրբեջանցիների դիակների՝ նախապես համաձայնեցված փոխանակումը: Այն պահին, երբ բաց դաշտում առկա են եղել բազմաթիվ դիակներ, մոտեցել է ադրբեջանական մի ուղղաթիռ՝ ադրբեջանցի և օտարերկրյա թղթակիցներով լեցուն, որոնք օդից լուսանկարել են փոխանակման գործողությունը: Հաջորդ օրը թուրքական հեռուստատեսությունն ու մամուլը, այդ նկարներն օգտագործելով, ներկայացրին Խոջալուի գործողության ժամանակ «հայերի կողմից սպանված հազարավոր ազերիների սպանդը»[32]:

Մեղադրելով արևմուտքին հայամետ դիրքորոշման համար, որն իբր թե պայմանավորված էր քրիստոնեական համերաշխությամբ, թուրքական «Բարօրություն» կուսակցության նախագահ Նեջմեթին Էրբաքանն իր ելույթներից մեկում դիմեց իսլամական աշխարհի օգնությանը, իսկ ժողովրդավարական ճախակողմյան կուսակցության նախագահ Բյուլենթ Էջեվիթը կոչ արեց դադարեցնել Թուրքիայի տարածքով մարդասիրական օգնության առաքումը Հայաստան, մինչև հայերը չդադարեցնեն իրենց ոճրագործությունները[33]:

---

[31] Տես **Չաքրյան Հ.,** Թուրք-ազերիների քարոզչությունը «ցեղասպան» հայերի դեմ, «*Ազգ*», 1992 մարտի 4, թիվ 16 (108 ):

[32] Ինչպե՞ս են ծնվում Խոջալուի հազարավոր զոհերը, «*Ազգ*», 1992 մարտի 4, թիվ 16 (108 ):

[33] Տես **Չաքրյան Հ.,** Թուրքիան բողոքի ալիք է բարձրացնում, «*Ազգ*», 1992 մարտի

Ակնհայտ էր, որ թուրքական այս հակահայկական քարոզարշավը ծառայում էր ոչ թե «ադրբեջանցի իրենց եղբայրների փրկությանն ու օժանդակությանը», այլ հենց իրենց շահերին. թուրքերը ջանք ու եռանդ չխնայեցին՝ ցեղասպան հայի կերպար ձևավորելու համար[34]:

Խոջալուի բնակիչների հետ պատահած ողբերգությունը թե՛ թուրքական, թե՛ ադրբեջանական կողմը կարողացան հմտորեն օգտագործել հանուն իրենց հեռահար նպատակների: Առաջին հերթին այս ողբերգությունը ծառայեց քաղաքական կեղտոտ շահերին: Ադրբեջանական ընդդիմությունը, կանխատեսելով դեպքերի նման ընթացքը, նախ՝ սառնասրտորեն կազմակերպեց սեփական ժողովրդի սպանդը, ապա, շահարկելով այն, հասավ իշխանության հրաժարականին: Շատ քաղաքագետներ Ժողճակատի մեջքի հետևում տեսնում են Թուրքիային: Անկարային, Ադրբեջանում իր իշխանությունը հաստատելու համար, միանշանակ խանգարում էր ռուսամետ հայացքներ ունեցող Մութալիբովը: Փոխարենը՝ միանգամայն վստահելի էր ժողճակատայինների ղեկավար Ա. Էլչիբեյը, որը չէր էլ թաքցնում իր թուրքամետ դիրքորոշումը: Երկրորդ՝ հայերին ցեղասպանության մեջ մեղադրելը լուրջ հակակշիռ էր տարբեր ժամանակներում հայերին կոտորած թուրքերի և ադրբեջանցիների համար:

Ծավալված ստահոդ քարոզչությունը՝ կեղծված փաստերով ու նկարներով, շարժել է նաև չեխ լրագրողուհի Դանա Մազալովայի զայրույթը: Իր մամուլի ասուլիսներից մեկում նա Ադրբեջանի գործունեությունը որակում է որպես «սև PR» ու խստորեն դատապարտում այն: Մի քանի տարի առաջ լրագրողուհին պատահաբար իմացել էր, որ չեխական Լեդիցե գյուղի՝ նացիզմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը տեղի ադրբեջանական համայնքն օգտագործում է իր քարոզչության համար՝ փետրվար ամսին կազմակերպելով «Խոջալուի ցեղասպանության» մասին պատմող ցուցահանդեսներ ու կինոդիտումներ: Ինչպես նշում է Մազալովան, ինքը մտերիմ էր ադրբեջանցի լրագրող Չինգիզ Մուսթաֆաևի հետ, որն իրեն ցույց էր տվել հայտնի նկարահանումների անմշակ կադրերը, ու ցուցադրության մեջ տեղ գտած դաժան նկարներից միայն մեկն էր, որ իսկապես կապ ուներ այդ ողբերգության հետ[35]:

---

7, թիվ 17 (109):

[34] Տես **Էլբակյան Է.**, Թուրքիայի Հանրապետությունը և Արցախյան հիմնահարցը, *Գիտական հոդվածների ժողովածու,* հ. 3, Երևան, 2012, էջ 135:

[35] Տես Press Conference Dana Mazalova Justice for Khojaly правда о ходжали, 10.03.2010,

Իրականում նմանատիպ հակահայ քարոզարշավներ իրականացվում են աշխարհի տարբեր երկրներում, որտեղ համաշխարհային հանրությունը, հաճախ առանց ճշտելու իրողությունները, ընդունում է դրանք որպես բացարձակ ճշմարտություն: Բացը գալիս է թերևս հայկական կողմից: Եթե ժամանակին համապատասխան միջոցներ ձեռք առնվեին և տեղեկատվական պատերազմին նույնքան կարևորություն տրվեր, որքան ռազմական գործողություններին, ապա այսօր պատկերն ամբողջովին այլ կարող էր լինել:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոհիշյալ փաստերը՝ կարելի է եզրակացնել, որ Խոջալուի բնակիչները պարզապես զոհ գնացին Բաքվի քաղաքական ինտրիգներին: Սպանդի իրական կազմակերպիչները ոչ միայն հասան իշխանության գալու իրենց գլխավոր նպատակին, այլև փորձեցին օգտագործել սա ամբողջ աշխարհում հակահայկական տրամադրություններ տարածելու նպատակով: Թաքցնելով, կեղծելով, խեղաթյուրելով փաստերն ու հաճախ կաշառելով կամ այլ միջոցներով լռեցնելով ականատեսներին՝ ադրբեջանական կողմը շարունակում է կերտել «ցեղասպան» հայի կերպարը:

**Բանալի բառեր** - *Հայաստան, Ադրբեջան, Արցախ, «Խոջալուի դեպքեր»*

**АННА БАБАЯН** - ОБ АЗЕРБАЙДЖАНСКОМ ИСТОРИОГРАФИЧЕСКОМ МИФЕ “ХОДЖАЛИНСКОГО ГЕНОЦИДА”

В статье рассматривается искажение событий, произошедших в Арцахе в феврале 1992 г. в окрестностях азербайджанонаселённого посёлка Ходжалы. Обсуждаются социально-мобилизационные цели данной политики Азербайджана и одновременно приводятся сообщения из азербайджанских и армянских источников, которые проливают свет на данные события. В статье также приводятся ранее неопубликованные сведения очевидцев.

***Ключевые слова:*** *Армения, Азербайджан, Арцах, «События Ходжалы»*

https://www.youtube.com/watch?v=jzFRC2sB1R8, հղվել է 01.02.2017 թ.:

**ANNA BABAYAN** - A MYTH BY THE AZERBAIJANI HISTORIOGRAPHY: "GENOCIDE IN KHOJALY"

The article discusses the falsification of the events that took place in the vicinities of the Azerbaijani-populated Artsakh (Karabakhi) village of Khojaly in February, 1992. Pointing out the social-mobilizational objectives of such a state policy by Azerbaijan, the author grounds her work on Azerbaijani and Armenian sources which shed light on those events. Previously untaped and unpublished memoirs of witnesses have been used in the current article.

***Key words:*** *Armenia, Azerbaijan, Artsakh, «Khojaly events»*

# 22

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 1991 Թ. ՀՈՒՆԻՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1992 Թ. ՄԱՅԻՍ

*Անուշ Ամիրբեկյան*

Ղարաբաղյան շարժման հենց սկզբում ծայրաստիճան լարված հայ-ադրբեջանական հարաբերությունները վտանգավոր էին դարձել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Խորհրդային Հայաստանի բնակչության համար, ուստի՝ անհրաժեշտ էր կազմակերպել պաշտպանություն:

Հայկական սահմանների պաշտպանության համար սկսեցին ստեղծվել ջոկատներ, որոնք ենթարկվում էին ինչպես քաղաքական կուսակցություններին, այնպես էլ անկախ դաշտային հրամանատարներին: Այդ ջոկատներով դրվում էին ռազմական կառուցվածքի հիմքերը: Սրանով հաղթած՝ մեկ միասնական զինվորական համակարգ չկար, ինչի անհրաժեշտությունը տվյալ ժամանակի կարևորագույն խնդիրներից էր:

Հայաստանի Հանրապետությունում այդ խնդիրը պետական մակարդակով որոշվեց՝ չնայած տարբեր հակասություններին: 1991 թ. մայիսի 4-ին ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց կառավարությանը կից պաշտպանության կոմիտե: ՀՀ կառավարության 1991 թ. մայիսի 4-ի թիվ 326 որոշմամբ Վահան Շիրխանյանն ընտրվեց պաշտպանության կոմիտեի նախագահ: Մեկ տարի առաջ՝ 1990 թ. սեպտեմբերի 20-ին, ձևավորվել էր ներքին գործերի նախարարության հատուկ զորքերի 1-ին գունդը, որի հրամանատար էր նշանակվել գնդապետ Սերգեյ Առաքելյանը:

ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ 1991 թ. դեկտեմբերի 4-ի հրամանագրով ստեղծվեց պաշտպանության նախարարություն, իսկ 1991 թ. դեկտեմբերի 5-ի հրամանագրով պաշտպանության նախարար նշանակվեց Վազգեն Սարգսյանը: ՀՀ-ում սկսված էր զինված ուժերի համակարգի ստեղծումը:

Նույն ժամանակահատվածում Ղարաբաղում իրավիճակն այլ էր, քանի որ կային անջատ գործող ջոկատներ, որոնք ուղղակի կամ անուղղակի խողովակներով ենթարկվում էին Հայ Հեղափոխական Դաշնակցությանը, երևանյան կենտրոնական իշխանություններին և

վերջինիս առնչակից ղարաբաղյան վերնախավահատվածին[1]: Չնայած ծագումնաբանական այսօրինակ բազմազանությանը՝ ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությանը հաջողվում էր քիչ թե շատ նշանակալի մարտական գործողություններից առաջ մոբիլիզացնել առկա ուժերը:

Մարտական գործողությունների կոորդինացման համար 1991 թվականի հունիսին Վազգեն Սարգսյանը Ղարաբաղ է ուղարկում ՀՀ Պաշտպանության կոմիտեում ծառայող կադրային զինվորականներ Արկադի Տեր-Թադևոսյանին և Ռաֆայել (Ֆելիքս) Գզողյանին: Ռ. Գզողյանն ուղարկվում է Շահումյանի, Ա. Տեր-Թադևոսյանը՝ Մարտակերտի շրջան:

Ղարաբաղում դրությունը բարդանում էր «Օղակ» գործողության պատճառով, Հադրութի շրջանում արդեն հայաթափվել էր 14 գյուղ[2], հերթը Տողինն ու Սարինշենինն էր, որոնք աղրբեջանական կողմի համար կարևոր հենակետեր կդառնային՝ շրջանն ամբողջությամբ հայաթափելու ճանապարհին: Հոկտեմբերին իրավիճակը լարված էր հատկապես Տողում, որտեղ ՄՀՆՋ-ականներն ամսի 16-ին սպանել էին Դանիելյանների ընտանիքի 5 անդամներին[3] և ժամանակ տվել բնակչությանը՝ գյուղից հեռանալու համար:

Առհասարակ Հադրութը կարևոր հենակետ էր, անհրաժեշտ էր պաշտպանել այն, ուստի՝ շրջանի պաշտպանության համար ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանն Արկադի Տեր-Թադևոսյանին համապատասխան հանձնարարություն է տալիս:

Այդ նույն ժամանակ Դաշնակցության անդամները՝ Արթուր Մկրտչյանի, Լևոն Մելիք-Շահնազարյանի, Վալերի Բալայանի, Արթուր Աղաբեկյանի, Ժաննա Գալստյանի և այլոց գլխավորությամբ, եկել էին Տող՝ գյուղն ազատագրելու առաջարկով:

Այսպիսով, Ղարաբաղում առաջին անգամ տարածքի ազա-

---

[1] ՀՅԴ ջոկատները չէին ենթարկվում պաշտպանության կոմիտեին, 1989 թ.-ից գործում էին նաև երկու անկախ կազմակերպություններ՝ «Ազատագրական բանակը» (հիմնադիր հրամանատար՝ Լեոնիդ Ազգալդյան), և «Հայոց ազգային բանակը» (հրամանատարներ՝ Ռազմիկ Վասիլյան, Վարդան Վարդանյան):

[2] Տես **Жирохов М.**, Меч и огонь Карабаха, Москва, 2012, էջ 74:

[3] Տես **Աբրահամյան Վ.**, Ղարաբաղի ազատագրումը Տողից է սկսվել, *«Հետք»*, 20.11.2006, http://hetq.am/arm/news/11993/xarabaxi-azatagrumy-toxic-e-sksvel.html, հղվել է 23.11.2017 թ.:

տագրման վերաբերյալ հարց է բարձրացվում, և համատեղ ուժերով մեկ հրամանատարության ներքո տեղի է ունենում մարտական գործողություն: Կազմավորվում է միացյալ շտաբ, որտեղ կազմակերպվում է հետախուզության անցկացումը, որն իրականացնում էին հարձակվող ջոկատների հրամանատարները, կազմակերպվում է կապի ապահովումը, բժշկական ծառայությունը, կրակային պատրաստությունը, ճանապարհների ականապատումը, մարտական քարտեզի և գործողության քարտեզի ստեղծումը: Ջոկատներն ստանում են մարտական առաջադրանք և հրաման: Տողի գործողությունից (30.10.1991)[4] 15 օր անց նույն կազմով և գործելաոճով ազատագրվեց Սարինշենը (15.11.1991)[5]: Այս երկու գործողությունների շնորհիվ կանխվեց Տողում և Սարինշենում հենակետ ստեղծելու հակառակորդի ծրագիրը, որտեղ պետք է ուժեր կենտրոնացվեին՝ Հադրութ քաղաքը և շրջանը գրավելու համար:

Տարածքի ազատագրումը սառն ընդունվեց Հայաստանի պաշտպանության կոմիտեի շտաբի կողմից[6]: Պաշտոնական Երևանը փորձում էր բանակցային, խաղաղ ճանապարհով լուծում տալ ղարաբաղյան հարցին, սակայն իրադարձությունների զարգացումն արդեն իսկ հուշում էր, որ այլ ելք չկա, քան զենքի միջոցով պայքարել ադրբեջանական զինված խմբավորումների դեմ:

Երկու գործողություններից հետո ինքնապաշտպանական գործի կազմակերպիչներից Սերժ Սարգսյանն Արցախի պաշտպանության հետագա կազմակերպման համար Ստեփանակերտ է կանչում Արկադի Տեր-Թադևոսյանին: Ստեփանակերտում ստեղծվում է շտաբ[7], որը հաստատվում է հրամանով (հրաման 1):

---

[4] Տես **Ամիրբեկյան Ա.**, Ամեն ինչ այսպես է եղել, մաս 1-ին, Երևան, 2014, էջ 20-26:

[5] Տես **Ամիրբեկյան Ա.**, Ամեն ինչ այսպես է եղել, մաս 2-րդ, Երևան, 2014, էջ 28-36:

[6] Տես **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս.**, Հաղթանակներն՝ ինչպես եղել են, Երևան, 2008, էջ 362, **Сефилян Ж.**, В этом мире не все решают материальные факторы, Информационный журнал Анив, Ереван, 2011, N5, էջ 51:

[7] Փաստաթղթերը վերցված են Արկադի Տեր-Թադևոսյանի անձնական արխիվից:

«Հրաման

Շտաբի ստեղծման վերաբերյալ՝ մարտական ջոկատների համար

N4

16 դեկտեմբերի, 1991 թ.

Ղարաբաղի պաշտպանության համար ջոկատների մարտական գործողությունները բարելավելու նպատակով հրամայում եմ

ստեղծել շտաբ,

շտաբի պետ նշանակել փոխգնդապետ Գեորգի Պետրոսյանին,

հետախուզության պետ և առաջին տեղակալ՝ Աշոտ «ՄԲ»,

կապի պետ՝ Արթուր-17,

բոլորն անցնեն Ղարաբաղի պաշտպանության համար կազմվող սխեմայի աշխատանքներին,

Արթուր-17-ին՝ կազմել ջոկատների գտնվելու վայրը և կապը,

կապի ապահովումը՝ շուրջօրյա»

Արկադի»


ВСЕСОЮЗНОЕ ОБЩЕСТВО ТРЕЗВОСТИ И ЗДОРОВЬЯ

Նագորնո-Կարաբախի Ինքնավար Մարզ

ՄՐՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԽՈՐՀՐԴ

Нагорно-Карабахская Автономная область

ОБЛАСТНОЙ СОВЕТ ОБЩЕСТВА ТРЕЗВОСТИ И ЗДОРОВЬЯ

374430, г. Степанакерт, пр. Ленина, 25. тел.: 4-09-98, 4-32-89.

№ 7 «16» декабря 1991 г.

(Հրաման 1)

Շտաբում աշխատում էին Ստեփանակերտի պաշտպանության կազմակերպմամբ, որը ևս հաստատվեց հրամանով՝ հետևյալ վերնագրով՝ «Ստեփանակերտի պահպանության և պաշտպանության վերաբերյալ» (հրաման 2):

«Հրաման
ք. Ստեփանակերտի անվտանգության և պաշտպանության կազմակերպման վերաբերյալ

N6
20 դեկտեմբերի, 1991 թ.
ք. Ստեփանակերտ

Հակառակորդը քաղաք Ստեփանակերտը ենթարկում է զանգվածային հրթիռահրետանային արկակոծման՝ Շուշիի, Քյոսալարի, Կրկժանի, Ջանհասանի (ձեռագիրն անընթեռնելի է, վերականգնված է ըստ իմաստի – խմբ.), Մալիբեյլիի, Խոջալուի ուղղություններից, փորձում է բարոյալքել Ստեփանակերտի բնակչությանը և ստեղծել հարմար դրություն՝ գրավելու ԼՂՀ մայրաքաղաքը:

Հակառակորդի պլանները ձախողելու և նրան ջախջախիչ հարված հասցնելու համար հրամայում եմ

ստեղծել պաշտպանական ամրություններ՝ համաձայն ավելի վաղ տեղերում արված մշակումների:

Ուժերի և միջոցների հաշվարկը՝ ըստ գրաֆիկ 1-ի:

Ավագ նշանակել Վիկտոր Պետրոսյանին:

Բեկորին՝

ա) առանձնացնել 10 հոգանոց մեկ ջոկատ + 1 նռնակաձիգ՝ պաշտպանական N 2 ամրության համար,

բ) առանձնացնել հետախուզական խումբ՝ Մալիբեյլիի ուղղությամբ հակառակորդի գործողությունների վերաբերյալ տեղեկություններ իմանալու համար,

գ) պատրաստ լինել՝ հակառակորդին Մալիբեյլիում ոչնչացնելու համար:

Մալիբեյլիի ազատագրման գործողությանը և ղեկավարմանն օգնություն ցույց տալու համար Վալերի Բալայանին (ձեռագիրն անընթեռնելի է, վերականգնված է ըստ իմաստի – խմբ.)՝ ձեռնամուխ լի-

նել քարտեզի վրա գծագրելու հակառակորդի տեղակայվածությունը և նրա կրակային կետերը:

«ՄԲ»՝ կատարել հակառակորդի ուժերի և միջոցների վերաբերյալ հաշվարկ:

Արկադի, 20.12.1991 թ.»:



*(Հրաման 2)*

Ամրացնելով պաշտպանությունը՝ շտաբը զբաղվում էր այն հենակետերի ազատագրմամբ, որտեղ հակառակորդն ուներ մեծաքանակ ուժ և ռազմական տեխնիկա, որտեղից հարձակվում էր հայ խաղաղ բնակչության վրա և կրակի տակ պահում հայաբնակ տարածքները՝ պատրաստվելով գրավել դրանք:

1992 թ. հունվարի 7-ին շտաբում պատրաստ էր այն բնակավայրերի ցանկը, որոնք պետք է ազատագրվեին (քարտեզ 1):




*(Քարտեզ 1)*

«Կրկժան և գլխավոր բարձունքների գրավում,
Ջամիլլու, Լեսնոյ, Կարագյավ,
Մալիբեյլի, Ղուշչուլար,
Ղարադաղլու (կապ Մարտունու հետ),
Խոջալու,
Ջանհասան, Քյոսալար,
Շուշի,
Լաչինի միջանցք,
Քյալբաջարի ուղղությամբ ուժերի կենտրոնացում,
Ջանգելան, Ջաբրայիլ Արկաղի 7.01.1992»:

Ողջ փաստաթղթերը, որոնք դուրս էին գալիս շտաբից, համաձայնեցվում էին բոլոր ջոկատների հրամանատարների հետ:

Միացյալ մարտական գործողություններով Կրկժանի ազատագրումից հետո (20-21.01.1992 թ.) Արցախի Գերագույն խորհրդի առա-

ջին նախագահ Արթուր Մկրտչյանն իր մոտ է հրավիրում Արկադի Տեր-Թադևոսյանին, ԼՂՀ ազգային անվտանգության առաջին պետ Աշոտ Խաչատրյանին, Արցախի գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Վալերի Բալայանին, արտաքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ Լևոն Մելիք-Շահնազարյանին: Արթուր Մկրտչյանը նրանց հայտնում է, որ պետությունը գումար ունի[8] և պատրաստ է վճարել ազատամարտիկներին, որի կարիքը նրանք ունեն: Արկադի Տեր-Թադևոսյանը հայտնում է, որ Վալերի Բալայանի գլխավորած հանձնաժողովը պետք է զբաղվի այդ գործով, և նախ՝ բանակի կառուցվածքը պետք է ստեղծվի, որի մեջ կմտնի ֆինանսական ծառայությունը, պետք է գրվեն ջոկատներում ծառայող ազատամարտիկների ցուցակները, քանզի հնարավոր չէ գումարները բաշխել առանց ջոկատների հրամանատարների ստորագրության: Արթուր Մկրտչյանն առարկում է՝ ասելով, որ այդ հանձնաժողովը երկրի սահմանների ամրապնդմամբ է զբաղված, իսկ Տեր-Թադևոսյանի գլխավորած շտաբում գրագետ կադրային սպաներ կան և կարող են միասին որոշել բանակի կառուցվածքը և հիմնվելով եղած ջոկատների և վաշտերի վրա՝ ստեղծել գումարտակներ և գնդեր: Արթուր Մկրտչյանի հետ հանդիպումից հետո պաշտպանության կոմիտեում տեղի ունեցած նիստի ժամանակ Արկադի Տեր-Թադևոսյանն այս մասին զեկուցում է պաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանին: Վերջինս դրական է արձագանքում առաջարկին[9]:

Զինված ուժերի նախնական կառուցվածքը կյանքի կոչելու համար ընտրվեցին ռազմական գործին ծանոթ, կադրային զինվորականներ՝ Ռաֆայել Գզոյանի գլխավորությամբ: Սերժ Սարգսյանի հրամանով կազմավորված առաջին գնդի հրամանատար նշանակվեց նախկին ԽՍՀՄ ստեփանակերտյան 366-րդ մոտոհրաձգային գնդում գումարտակի հրամանատարի պաշտոնում ծառայած Սեյրան Օհանյանը: 1992 թ. հունվարի 24-ին Ս. Օհանյանը ներկայացրեց առանձին գումարտակի կազմակերպումը (նկար 1):

---

[8] Տես **Арутюнян В.**, Флаг над Чинарой, Ереван, 2006, էջք 24-25:

[9] Հուշագրական հարցազրույց 1991-1992 թթ. ԱԻՊՈՒ հրամատար Արկադի Տեր-Թադևոսյանի հետ, 22.11.2015 թ.:




*Նկար 1. Առանձին գումարտակի կազմակերպումը*

Դրա վրա Ա. Տեր-Թադևոսյանը գրեց. «Օհանյան, վստահ և արագ կազմավորիր ԱԻՈ 1-ին գունդը», ստորագրություն, 24.01.92 թ.: Հաջորդ օրը Սեյրան Օհանյանը ներկայացրեց գնդի կազմակերպումը (նկար 2):




*Նկար 2. Գնդի կազմակերպումը*

Ծանոթանալուց հետո Ա. Տեր-Թադևոսյանը գրեց՝ «Համաձայն եմ», ստորագրեց, 25.01.92 թ.:

Գումարտակի և գնդի կառուցվածքը ստեղծելուց հետո՝ փետրվարի 2-ին, Սեյրան Օհանյանը հայտ ներկայացրեց առանձին գումարտակի դրամական միջոցների վերաբերյալ (նկար 3):

"У Т В Е Р Ж Д А Ю"

КОМАНДУЮЩИЙ ОСО ИКР

=ТЕР-ТАТЕВОСЯН=

2.02.92г

З А Я В К А

денежное содержание отдельного батальона

| №№ пп | По воинскому званию | личный состав | должностной оклад | по воинскому званию | всего на месяц | итого сумма |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Подполковник | 1 | | | | |
| 2. | Майор | 5 | | | | |
| 3. | Капитан | 7 | | | | |
| 4. | Лейтенант | 30 | | | | |
| 5. | Прапорщик | 16 | | | | |
| 6. | Сержант | 85 | | | | |
| 7. | Солдат | 551 | | | | |
| | ИТОГО : | 695 | x 400 руб | | | |

КОМАНДИР ПОЛКА =ОГАНЯН С.=

НФО

Выдать денежное содержание из расчета по 400 р. ежемесячно на весь состав

2.02.92.

*Նկար 3. Հայտ առանձին գումարտակի դրամական միջոցների վերաբերյալ*

Փաստաթղթի վրա Ա. Տեր-Թադևոսյանն արձանագրեց. «ՖՀՊ (ֆինանսական հարցերի պետ). յուրաքանչյուրին հատկացնել 400 ռուբլի ամսական գումար», ստորագրեց, 2.02.92 թ.:

Այդ նույն օրը Սեյրան Օհանյանը ներկայացրեց նաև հայտ ԼՂՀ ԻՈՒ սպաների և անձնակազմի ֆինանսական միջոցների վերաբերյալ (նկար 4):



"У Т В Е Р Ж Д А Ю"

КОМАНДУЮЩИЙ ОТДЕЛЬНЫМ

ТЕР-ТАТЕВОСЯН=

2.02.92г

З А Я В К А

денежное содержание офицеров и личного состава СС ЛКР.

| №№ пп | По воинскому званию | личный состав | должностной оклад | по воинскому званию | всего на месяц | итого сумма |
|---|---|---|---|---|---|---|
| I. | Полковник | I | | | | |
| 2. | Подполковник | 6 | | | | |
| 3. | Майор | 7 | | | | |
| 4. | Капитан | 24 | | | | |
| 5. | Ст.лейтенант | 4 | | | | |
| 6. | Лейтенант | 64 | | | | |
| 7. | Прапорщик I разряд | 28 | | | | |
| 8. | Прапорщик 2 разряд | I7 | | | | |
| 9. | Ст.сержант | 72 | | | | |
| I0. | Сержант | I58 | | | | |
| II. | Рядовой | II27 | | | | |
| | И Т О Г О | I508 | | | | |

Нет

1. До принятия положительного решения банк установить денежное содержание на месяц 400 руб.

2. С приложением списка и фамилиями выдать

х 400 руб

2.02.92

КОМАНДИР ПОЛКА /=ОГАНЯН С.=

*Նկար 4. Հայտ ԼՂՀ ԻՈՒ սպաների և անձնակազմի ֆինանսական միջոցների վերաբերյալ*

Դիմումի վրա Ա. Տեր-Թադևոսյանը գրեց.

«ՖՀՊ

Մինչև կառավարության որոշման ընդունումը բոլորին հատկացնել դրամական միջոցներ՝ ամսական 400 ռուբլի»:

2.02.92 թ.

Պահանջվեց 20 օր, որ ստեղծվեն և լրացվեն ազատամարտիկների ցուցակները՝ գումարներն ստանալու համար: Հրամանատարների մեծ մասը ներկայացրեց ցուցակները: Փետրվարի 22-ին Ա. Տեր-Թադևոսյանը ֆինանսական հարցերի պետին ցուցում տվեց (նկար 5):

«1. 03.92 թ.-ից դրամական միջոցները տալ ներկայացված ցուցակին համապատասխան՝ առանց 7-րդ կետի», ստորագրություն՝ Արկաղի, 22.02.92 թ.:


НАГОРНО-КАРАБАХСКИЙ ОБЛАСТНОЙ СОВЕТ НАРОДНЫХ ДЕПУТАТОВ

ПОСТОЯННАЯ КОМИССИЯ

по _____

№ _____ «___» _____ 198 г.

ПОСЛАНО:

*Նկար 5. Ցուցում*

Նույն օրը հերթական անգամ Արթուր Մկրտչյանը եկավ Ստեփանակերտի շտաբ, որտեղ տվյալ օրվա վերաբերյալ շրջանների իրավիճակին ծանոթանալուց հետո Ա. Տեր-Թադևոսյանը նրան ասաց, որ ԼՂՀ պաշտպանության կազմակերպման համար շտաբում աշխատանքը շատ է, և ֆինանսական միջոցները պետք է փոխանցվեն Վալերի Բալայանի գլխավորած հանձնաժողովին: Արթուր Մկրտչյանը համաձայնում է և խնդրում արագ կազմակերպել ստորաբաժանումներ (գումարտակ և գունդ):

Համատեղ գործողություններով ստեղծվեցին մարտական և թիկունքային ապահովման ստորաբաժանումներ: Եղած կառուցվածքին գումարվեցին նորերը.

1. դաշնակցական վաշտի հրամանատարն էր Աշոտ Ղուլյանը,
2. ՀՀՇ-ի վաշտի հրամանատարն էր Կարո Բաբայանը,
3. «Ազգային ճակատ» վաշտը ղեկավարում էր Մուրադ Պետրոսյանը,
4. որևէ կազմակերպության կամ քաղաքական ուժի չենթարկվող ջոկատի հրամանատարն էր Գագիկ Սարգսյանը[10]:

Այնուհետև ստեղծվեցին այլ մասնագիտացված և մարտական միավորներ (այդ թվում՝ ՀՕՊ ստորաբաժանում, փրկարարական, բուժծառայության, վերանորոգող-էվակուացիոն միավորներ): Ստեղծվեց նաև ուսումնական կենտրոն, որտեղ զինվորական պատրաստության դասընթացներ էին անցկացվում: Այն ղեկավարում էր մայոր Վոլոդյա Մկրտչյանը (նկար 7):

«Գնդապետ Ա. Լաչինյանին, մայոր Մելքումյանին, մայոր Մկրտչյանին, ավագ լեյտենանտ Հայրյանին

1. Ուսումնական կենտրոնի ստեղծում, քաղաքացիական բնակչության՝ լեռնային պայմաններում մարտական գործողությունների վարման պատրաստության ուսուցում:

2. Ծրագիրը և դասացուցակը ներկայացնել ինձ՝ հաստատելու համար, պատասխանատու՝ Մկրտչյան:

3. Ուսուցման ժամկետը՝ 30 օր, պարապմունքները՝ ամեն օր՝ 6-8 ժամ:

4. Տեղը որոշել Սերժ Սարգսյանի հետ:

5. Պատասխանատու՝ Մկրտչյան:

2 օրվա ընթացքում» 18.02, Արկադի:

---

[10] Տես **Վարդումյան Հ.**, Շուշիի ազատագրումը, Երևան, 2007, էջ 37:



*Նկար 7.*

Հատկանշական է, որ զինվորական ստորաբաժանումներին զուգընթաց՝ ձևավորվում էր նաև ռազմական բժշկության կառույցը: Մինչ այդ գործող դաշտային հիվանդանոցը բժիշկ Վալերի Մարությանի նախաձեռնությամբ դառնում էր զինվորական կառուցվածքի մի մասը:

Համակարգելով եղած ուժերի հիմնական մասը[11], ստեղծելով նոր ստորաբաժանումներ և գործելով մեկ հրանատարության ներքո՝ հնարավոր եղավ հետագա մարտական գործողություններն անցկացնել ռազմական օրենքին համապատասխան, գործել միասնաբար: Դրա ապացույցը Շուշիի ռազմական գործողությունն է, որը ցույց տվեց, որ ձևավորվող ռազմական կառուցվածքը կենսունակ է, ուստի՝ ոչ պատահականորեն հենց Շուշիի ազատագրման օրն էլ ներկայումս նշվում է միաժամանակ որպես Պաշտպանության բանակի տոն:

[11] Կային ջոկատներ, որոնք այդպես էլ չցանկացան գործել մեկ հրամանատարության ներքո:

**Բանալի բառեր** - *Արցախյան պատերազմ, Պաշտպանության բանակ, Հայաստան, Ադրբեջան*

**АНУШ АМИРБЕКЯН** - ПРОЦЕСС ОБЪЕДИНЕНИЯ ВОЕННЫХ СИЛ НАГОРНОГО КАРАБАХА В ПЕРИОД С ИЮНЯ 1991 Г. ПО МАЙ 1992 Г.

В данной статье анализируется ранний этап становления армии в Арцахе, которая совпадает с военными действиями зимой 1991-1992 гг., нацеленными на прорыв блокады Степанакерта. С помощью ранее неопубликованных документов автор представляет последовательную организационную работу ответственных государственных органов в деле строения армии.

***Ключевые слова:*** *Карабахская война, Армия Обороны Арцаха, Армения, Азербайджан*

**ANUSH AMIRBEKYAN** - THE PROCESS OF UNIFICATION OF THE ARMED FORCES OF NAGORNO-KARABAKH (JUNE, 1991 - MAY, 1992)

The article elucidates the early stages of army-building process in Artsakh (Karabakh). The latter coincides with the military actions in the winter months of 1991-1992, aimed at breaking the siege of Stepanakert by the Azerbaijani forces. By the means of previously unpublished archival documents, the author scrutinizes the positive role of the responsible state bodies in the army-building works.

***Key words:*** *Karabakh war, Artsakh's Defence Army, Armenian, Azerbaijan*

# ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑԱՏՐԵԼՈՎ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

*Էրիկ Դավթյան, ԵՊՀ*

Որպես Հայաստանի ժամանակակից պատմության կարևորագույն իրադարձություններից և արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը՝ արցախյան հակամարտությունը եզակի տեղ է զբաղեցնում հակամարտությունների համեմատական ուսումնասիրության համատեքստում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արցախյան հակամարտությունը դեռևս չլուծված, շարունակվող գործընթաց է և պարբերաբար հանգեցնում է սահմանի երկայնքով լարվածության ուժգնացմանը, հարկ է համեմատական վերլուծության միջոցով վերհանել հիմնախնդրի հիմնական առանձնահատկությունները, որոնք թույլ կտան հասկանալ հակամարտության բնույթը և արդի շրջանի զարգացումները, լույս սփռել խնդրի կարգավորման հավանականության հարցի շուրջ:

Արցախյան հիմնախնդրի ամենակարևոր յուրահատկությունը խնդրո առարկա տարածքի հարաբերական մեծությունն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ողջ տարածքը կազմում է մոտ 12.000 կմ$^2$ (ներառյալ Ադրբեջանի կողմից ԼՂՀ Շահումյանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների օկուպացված հատվածները (մոտ 1041կմ$^2$))[1], ինչը բավական մեծ տարածք է Հայաստանի և Ադրբեջանի պես փոքր պետությունների համար: Այսպես, վերոնշյալ ամբողջ տարածքը կազմում է Ադրբեջանի՝ միջազգայնորեն ճանաչված տարածքի մոտ 13.9%-ը, իսկ ՀՀ-ի և ԼՂՀ-ի տարածքի (միասին հաշված՝ 41.743 կմ$^2$)՝ 28.75%-ը: Բնական է՝ որքան մեծ լինի վիճելի համարվող տարածքը, այնքան կմեծանա հավանականությունը, որ հակամարտող կողմերը միմյանց հանդեպ կդրսևորեն ավելի անտագոնիստական և անզիջում վարքագիծ՝ նպաստելով էքզիստենցիալ սպառնալիքի ընկալման ամրապնդմանը և խիստ նվազեցնելով հա-

[1] Տվյալները ներկայացվում են ԼՂՀ Նախագահի պաշտոնական կայքէջից: Ընդհանուր տեղեկություններ, http://www.president.nkr.am/am/nkr/generalInformation/, հղվել է 15.08.2017 թ.:

կամարտության կարգավորման հավանականությունը:

Ասվածն ավելի պատկերավոր դարձնելու համար՝ վերոնշյալ ցուցանիշները համեմատենք աշխարհում մինչ օրս գործող կամ երբևէ գոյություն ունեցած այլ հակամարտությունների հետ: Այսպես, օրինակ, Էլզաս-Լոթարինգիան, որը որպես վիճելի տարածք ձևավորվեց Ֆրանսիայի Ալզասի շրջանի և Լորենի շրջանի Մոզելի դեպարտամենտի հիմքի վրա, կազմում էր 13.123 կմ² տարածք[2]: Աշխարհի քաղաքական քարտեզի արդի ձևվածքի պայմաններում Էլզաս-Լոթարինգիայի տարածքը կազմում է Ֆրանսիայի տարածքի ընդամենը 2.4%-ը և Գերմանիայի տարածքի 3.7%-ը: Ընդ որում, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այս հիմնախնդիրն այլևս գոյություն չունի և առավել սուր բնույթ ուներ 1870-1871 թթ. ֆրանսպրուսական պատերազմից հետո, ապա Էլզաս-Լոթարինգիան կազմում էր Ֆրանսիայի և Գերմանիայի տարածքի (ներառյալ գաղութները) համապատասխանաբար 0.1%-ը և 0.4%-ը[3], իսկ գերմանական կայսրությանը հաջորդած Վայմարյան Հանրապետության պարագայում՝ 2.8%:

Համանման համեմատություններ կարելի է անել նաև գործող հակամարտությունների հետ: Կուրիլյան կղզիների հարավային հատվածը (Իտուրուպ, Շիկոտան, Կունաշիր կղզիները և Հաբոմայի կղզեխումբը), որոնք վիճելի են համարվում Ռուսաստանի և Ճապոնիայի միջև, կազմում են շուրջ 5.000 կմ² (Ճապոնիայի տարածքի 1.3%-ը և Ռուսաստանի տարածքի 0.02%-ը):

Այս համատեքստում հետաքրքիր է դիտարկել նաև Քաշմիրի հիմնախնդիրը: Քաշմիրը, որը վեճի առարկա է Հնդկաստանի և Պակիստանի (մասամբ նաև Չինաստանի) միջև, զբաղեցնում է ավելի մեծ տարածք, քան ամբողջ Հարավային Կովկասը (շուրջ 223.000 կմ²), սակայն կազմում է Հնդկաստանի տարածքի մոտ 5.7%-ը, իսկ եթե երկու պետությունների միջև վիճարկվող տարածքը դիտարկենք

---

[2] Տես Alsace-Lorraine | Territory, France, Encyclopedia Britannica, http://www.britannica.com/place/Alsace-Lorraine, հղվել է 15.08.2017 թ.:

[3] Ֆրանսիայի տարածքը (ներառյալ գաղութների) հաշվարկվել է 1915 թ. (մոտ 10.5 մլն կմ2) , Գերմանիայինը՝ 1914 թ. դրությամբ (մոտ 3.2 մլն կմ2), տե՛ս Taagepera R., Expansion and Contraction Patterns of Large Polities: Context for Russia, International Studies Quarterly, Vol. 41, No. 3 (Sep., 1997), էջ 502, Germany from 1871 to 1918: The German Empire, 1871-1914, https://www.britannica.com/place/Germany/Germany-from-1871-to-1918, հղվել է 13.09.2017 թ.:

որպես Պակիստանի մաս, ապա այն կազմում է վերջինիս տարածքի մոտ 19%-ը[4]:

Այսպիսով, կարելի է հստակ արձանագրել, որ արցախյան հակամարտությունը զուտ վիճելի տարածքի համամասնության համատեքստում անհամեմատ ավելի լուրջ և բարդ խնդիր է, քան գործող այլ կոնֆլիկտները: Միայն այն փաստը, որ ամբողջ Արցախը կազմում է ՀՀ-ի և ԼՂՀ-ի տարածքի (միասին) ավելի քան մեկ քառորդը, արդեն իսկ հուշում է, որ այն ՀՀ գոյատևման, անվտանգության և կայուն զարգացման համար ունի կենսական-ռազմավարական նշանակություն: Այս տեսանկյունից հաշվի առնելով վերոհիշյալ ցուցանիշները՝ ճիշտ չէ Էլզաս-Լոթարինգիայի խնդիրը (որը հաճախ ներկայացվում է որպես հաջողությամբ լուծված տարածքային հակամարտության օրինակ) համեմատել արցախյան հակամարտության հետ: ԼՂՀ-ն համամասնորեն զբաղեցնում է այնքան տարածք, որքան ներկայիս Ֆրանսիայի համար Օ-դը-Ֆրանս, Գրանդ Էստ և Բուրգունդիա-Ֆրանշ-Կոնտե շրջանները (միասին) կամ Գերմանիայի համար Բավարիա և Բադեն-Վյուրթեմբերգ երկրամասերը (միասին):

Արցախյան հակամարտության ընթացքի վրա մեծապես ազդում է Հայաստանի և Ադրբեջանի միջև տնտեսական փոխկախվածության իսպառ բացակայությունը: Պետությունների միջև տնտեսական կապերի շարունակական ինտենսիվացման պայմաններում տնտեսապես սերտորեն փոխկապված պետությունների միջև պատերազմը դառնում է ավելի ծախսատար՝ նվազեցնելով միմյանց դեմ լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսելու հավանականությունը: Ավելին՝ արդի միջազգային հարաբերություններում պետությունները շատ հաճախ սկսում են այլ պետությունների հետ հարաբերությունների քաղաքական և տնտեսական բաղադրիչները դիտարկել տարբեր հարթություններում, ինչի արդյունքում շատ հաճախ քաղաքական սուր տարաձայնությունների և նույնիսկ հակամարտությունների առկայության դեպքում պետությունները շարունակում են ոչ միայն պահպանել, այլև զարգացնել միմյանց հետ տնտեսական հարաբերությունները:

---

[4] Ելնելով Քաշմիրի հակամարտության, ըստ էության, հնդկա-պակիստանյան բնույթից՝ սույն հաշվարկում ներառվել է ոչ թե ամբողջ Քաշմիրը, այլ դրա պակիստանյան և հնդկական մասերը (ընդհանուր առմամբ մոտ 185.000 կմ$^2$ տարածք):

Ասվածի վառ օրինակ են ռուս-վրացական հարաբերությունները: Չնայած կողմերի միջև 2008 թ. օգոստոսյան պատերազմական գործողություններին և դիվանագիտական հարաբերությունների խզմանը՝ 2010 թ. ռուս-վրացական միջպետական սահմանին վերաբացվեց Վերին Լարս-Ստեփանծմինդա անցակետը, իսկ 2013 թ. Ռուսաստանը հանեց վրացական գինիների ներկրման համար սահմանված էմբարգոն[5]: Ավելին՝ 2008 թ. պատերազմից հետո Ռուսաստանի և Վրաստանի միջև առևտուրը ոչ միայն կտրուկ անկում չապրեց, այլև աստիճանաբար սկսեց աճել, իսկ 2015 թ. Ռուսաստանը դարձավ Վրաստանի երկրորդ առևտրային գործընկերը[6]:

Նույնը կարելի է նկատել նաև հայ-թուրքական հարաբերությունների պարագայում: Չնայած դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը և Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակմանը՝ հայ-թուրքական օդային սահմանը 1995 թ.-ից շարունակում է բաց մնալ, իսկ օրինակ երկկողմ առևտուրը, չնայած երրորդ պետությունների միջոցով իրականացվելուն, 2010-2014 թթ. գերազանցել է 200 միլիոն ԱՄՆ դոլարի շեմը[7]:

Ի տարբերություն այս երկու դեպքերի՝ Հայաստանի և Ադրբեջանի միջև գոյություն չունեն ոչ մի տեսակի տնտեսական հարաբերություններ, և պետությունները տնտեսական որևէ կախվածություն միմյանցից չունեն:

Արցախյան հակամարտության հաջորդ առանձնահատկությունը Հայաստանի և Ադրբեջանի՝ ծով ելք չունենալու փաստն է: Ընդ որում՝ ծով ելք չունենալը հակամարտության վրա թողնում է խիստ միակողմանի ազդեցություն, քանզի Ադրբեջանը սեփական էներ-

---

[5] Տես Georgia and Russia re-open land border crossing, http://www.reuters.com/article/us-georgia-russia-border/georgia-and-russia-re-open-land-border-crossing-idUSTRE6202Z220100301, հղվել է 10.09.2017 թ., Russian Imports Of Georgian Fruit Resume After Seven Years, https://www.rferl.org/a/russia-georgia-fruit-imports/25136096.html, հղվել է 10.09.2017 թ.:

[6] Տես საქართველოს საგარეო ვაჭრობა 2016, საქართველოს სტატისტიკის ეროვნული სამსახური, თბილისი, 2017, გვ. 13 (Վրաստանի արտաքին առևտուրը 2016, Վրաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Թբիլիսի, 2017, էջ 13 - վրացերեն), http://geostat.ge/cms/site_images/_files/georgian/bop/External%20Merchandise%20Trade%202015_publication%202016-18.pdf, հղվել է 10.09.2017 թ.:

[7] Տես Երկկողմ հարաբերություններ. Թուրքիա, http://mfa.am/hy/country-by-country/tr/, հղվել է 10.09.2017 թ.:

գետիկ ռեսուրսների վաճառքի շնորհիվ կարողացավ ոչ միայն չեզոքացնել ծով ելք չունենալու հետ կապված տնտեսական դժվարությունները, այլև ապահովել խոշոր եկամուտներ: Դա իր հերթին հանգեցրեց Հայաստանի և Ադրբեջանի պետական, այդ թվում՝ ռազմական բյուջեների միջև անհամաչափության առաջացմանը: Այս ամենը, զուգակցված Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակմամբ, լուրջ սահմանափակումներ է ստեղծում Հայաստանի տնտեսության զարգացման համար:

Խնդիրը կարելի է դիտարկել ծով ելք ունեցող և տարածքային հակամարտություն ունեցող պետությունների համատեքստում: Այսպես, օրինակ, Կիպրոսի հյուսիսային հատվածը, որը 1974 թ. օկուպացվել է թուրքական զորքերի կողմից, և որտեղ գործում է ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, կազմում է Կիպրոսի միջազգայնորեն ճանաչված տարածքի շուրջ 36%-ը: Թեպետև թուրքական օկուպացիան բավական լարվածություն է առաջացնում հույն-թուրքական և թուրք-կիպրական հարաբերություններում, սակայն Կիպրոսի տարածքի ավելի քան մեկ երրորդի օկուպացիան հակամարտությանը չի հաղորդում այն աստիճան սրված ու թեժ բնույթ, ինչպիսին ունի արցախյան հակամարտությունը: Ծով ելք ունենալու գործոնը հաշվի առնելով՝ տարածքի 36%-ի օկուպացիան Կիպրոսին չի կարող զրկել կայուն զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններից: Լինելով կղզային պետություն՝ Կիպրոսն օկուպացիայի հետևանքները կարող է մեղմել ծովային ուղիներով ինչպես միջերկրածովյան ավազանի, այնպես էլ այլ տարածաշրջանների պետությունների հետ ազատ և անխափան առևտրի շնորհիվ:

Համեմատության համար ուշագրավ է նաև վրաց-աբխազական և վրաց-հարավօսական հակամարտությունների օրինակը: Մասնակի ճանաչում ստացած Աբխազիան և Հարավային Օսիան միասին կազմում են Վրաստանի տարածքի մոտ 18%-ը և զբաղեցնում են ԼՂՀ-ին գրեթե հավասար տարածք (մոտ 12.500 կմ$^2$): Թեպետ Ռուսաստանի հետ քաղաքական, տնտեսական, իսկ հետագայում նաև ռազմական առճակատումը Վրաստանին մի քանի տարով զրկեց ռուսական շուկա մուտք գործելու հնարավորությունից և գործնականում նվազագույնի հասցրեց աբխազական երկաթուղու վերագործարկման հավանականությունը, տնտեսական զարգացման տեսանկյու-

նից Վրաստանը աղետալի վիճակում չհայտնվեց: Ծով ելք ունենալու շնորհիվ Վրաստանը շարունակում է մնալ տարածաշրջանային մակարդակով զբոսաշրջային խոշոր կենտրոն և լինելով Հարավային Կովկասի միակ «ծովային դարպասը»՝ կարողանում է մի կողմից՝ տարանցման փաստի ուժով Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում քաղաքական և տնտեսական դիվիդենդներ շահել, իսկ մյուս կողմից՝ սևծովյան ավազանի պետությունների միջոցով մշտական և անխափան կապ ապահովել ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ:

Արցախյան հակամարտության առանձնահատկությունների շարքում թերևս ամենակարևորներից մեկը դրա՝ սոսկ արցախյան հակամարտություն չլինելու փաստն է, ինչն ուղղակիորեն կապված է հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմության հետ: Որպես այդպիսին՝ հայ-ադրբեջանական առճակատումն ու թշնամանքն սկզբնավորվել են 1905-1918 թթ., այսինքն՝ հենց այն ժամանակահատվածում, երբ կովկասյան թաթարներն, Օսմանյան կայսրության գործուն աջակցությամբ, հեռանալով բացառապես կրոնական ինքնությունից, սկսեցին կոնսոլիդացվել և ձևավորվել որպես քաղաքական ազգ[8]: Որպես մինչ օրս առկա հակամարտության առաջին ցայտուն օրինակ հանդիսացող հայ-թաթարական բախումները (1905-1906 թթ.) տեղի ունեցան ոչ միայն Ղարաբաղում, այլև Զանգեզուրում, Նախիջևանում, Շարուր-Դարալագյազում, Երևանում և Բաքվում, այսինքն՝ ուրվագծվեցին այն տարածքները, որոնց շուրջ հետագայում պետական մակարդակով պետք է տարածքային հավակնություններ ի հայտ գային[9]:

1918-1920 թթ. հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմությունը հստակ ցույց տվեց, որ Ադրբեջանի համար անընդունելի էր Հայաստան պետության և առհասարակ հայկական տարրի գոյությունը Անդրկովկասում, ինչի վառ վկայությունն էին բոլոր սահմանամերձ շրջաններում մշտական բախումների առկայությունը, Ադրբեջանի պետական աջակցությամբ և ֆինանսավորմամբ Բոյուք-Վեդիի, Շարուր-Նախիջևանի, Սուրմալուի, Կարսի, Զանգի-

[8] Տես **Էլբակյան Է.**, Ադրբեջանի ապաֆաշիստականացումը՝ որպես խաղաղության բանալի, *«Հայաստանի Հանրապետություն»*, 2014 հոկտեմբերի 7, թիվ 178 (5987):

[9] Տես **Elbakyan E.**, A New Legal Approach Towards the Nagorno-Karabakh Conflict Peaceful Resolution, International Journal of Social Sciences, III(5), 2014, էջ 44:

բասարի շրջանների թաթարական բնակչության՝ ՀՀ-ի դեմ ուղղված ապստամբությունները[10], Բաքվում, Նուխիում, Ծամախիում, Քյուրդամիրում և այլ վայրերում հայ բնակչության ջարդերը[11]:

Այս զարգացումները ցույց են տալիս, որ Արցախն ընդամենը մեկն էր այն մի շարք շրջաններից, որոնց պատկանելությունն Ադրբեջանը փորձում էր վիճարկել: Նման մոտեցումը պահպանվեց նաև ներկայիս Ադրբեջանում, քանզի այն շարունակում է հավակնություններ դրսևորել ՀՀ-ի տարածքի նկատմամբ, ինչն ակնհայտ կերպով արտացոլվում է ադրբեջանական իշխանությունների կողմից պարբերաբար արվող հայտարարություններում: Օրինակ՝ 2015 թ. մարտի 19-ին Բաքվում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Նովրուզ Բայրամի առթիվ արված ելույթում նշեց, որ «տարածքային ամբողջականության վերականգնումից» հետո «մենք՝ ադրբեջանցիներս, իհարկե, կվերադառնանք մեր հին հողերը՝ և՛ Իրական (Երևան - Է. Դ.), և՛ Գյոյչա (Սևան - Է. Դ.), և՛ Զանգեզուր (Սյունիք - Է. Դ.): Դրանք մեր հին հողերն են: Երիտասարդ սերունդը ևս պետք է իմանա, որ մեր հողերը միայն այսօրվա անկախ Ադրբեջանի հողերը չեն: Մենք պարտավոր ենք վերադառնալ ու կվերադառնանք այդ հողերը»[12]: Այսինքն՝ երկրի նախագահի մակարդակով տարածքային հավակնություններ ներկայացնելը մեկ այլ պետության գրեթե ամբողջ տարածքի նկատմամբ ցույց է տալիս հակամարտության էութենական կողմերը:

Այս տեսանկյունից դիպուկ օրինակներ են ադրբեջանական ռազմական հռետորաբանության այլ դրսևորումները: Ադրբեջանական պաշտոնական լրահոսում Իլհամ Ալիևի, պաշտպանության նախարարներ Սաֆար Աբիևի և Զաքիր Հասանովի կողմից պարբերա-

---

[10] Տես Թուրք-թաթարական խռովությունները, Հայոց պատմության հանրագիտարան, http://www.historyofarmenia.am/am/Encyclopedia_of_armenian_history_Turq_tatarakan-xrovutyunner, հղվել է 04.09.2017 թ.:

[11] Տես **Ստեփանյան Գ.**, Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, № 3, էջք 31, 45:

[12] Президент Азербайджана Ильхам Алиев принял участие во всенародных празднествах по случаю Новруз байрамы, http://azertag.az/ru/xeber/Prezident_Azerbaidzhana_Ilham_Aliev_prinyal_uchastie_vo_vsenarodnyh_prazdnestvah_po_sluchayu_Novruz_bairamy_VIDEO-840677, հղվել է 18.08.2017 թ.:

բար հնչեցվել են Հայաստանի՝ ոչ կենսունակ պետություն լինելու[13], նրան միջազգային և տարածաշրջանային նախագծերից մեկուսացնելու[14], հայերին քաղաքականապես և տնտեսապես ջախջախելու, մարտադաշտում պարտության մատնելու հնարավորությունների[15] մասին հայտարարություններ: Այն, որ Ադրբեջանը չի թաքցնում, որ հայերն ադրբեջանցիների հիմնական թշնամիներն են[16], և որ իշխանությունները կիրառում են «հարձակողական դիվանագիտություն»[17], պարզ կերպով ցույց է տալիս, որ Ադրբեջանը չի կարող հաշտվել արցախյան հակամարտությունում ո՛չ գործող status quo-ի պահպանման, ո՛չ էլ փոխզիջումային լուծման հետ:

Եթե այս տեսանկյունից արցախյան հակամարտությունը համեմատենք Հարավային Կովկասի մյուս երկու հակամարտությունների հետ, ապա վերջիններս բոլորովին այլ բնույթ ունեն: Սկզբնապես ձևավորվելով և երկար ժամանակ գոյություն ունենալով որպես վրաց ու աբխազ և վրաց ու օս ժողովուրդների միջև գոյություն ունեցող ներպետական խնդիր՝ Վրաստանում Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության շրջանում (2004-2013 թթ.) երկու հակամարտություններն էլ վերածվեցին ռուս-վրացական հակամարտության: Այնուամենայնիվ, Ռուսաստանի քաղաքականությունը հակամարտությունների հարցում սահմանափակվում է Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ու սահմանների պաշտպանությամբ. Ռուսաստանի ղեկավարությունը երբևէ հանդես չի եկել անվիճելիորեն վրացական համարվող հողերի պատկանելիության վիճարկման, Վրաստանի

---

[13] Տես Azerbaijan leader unleashes anti-Armenia Twitter tirade, http://www.hurriyetdailynews.com/azerbaijan-leader-unleashes-anti-armenia-twitter-tirade.aspx?pageID=238&nID=35078&NewsCatID=355, հղվել է 25.08.2017 թ.:

[14] Տես Strong Azerbaijan can speak any language with powerless Armenia - Ilham Aliyev, http://www.news.az/articles/official/80740, հղվել է 25.08.2017 թ.:

[15] Տես **Liston E.**, Azerbaijan's president threatens war with Armenia via Twitter, http://www.theguardian.com/world/2014/aug/07/azerbaijan-president-threatens-war-armenia-twitter, հղվել է 25.08.2017 թ.:

[16] Տես Closing Speech by Ilham Aliyev at the conference on the results of the third year into the "State Program on the socioeconomic development of districts for 2009-2013", http://en.president.az/articles/4423, հղվել է 27.08.2017 թ.:

[17] Տես Ilham Aliyev participated in an official reception marking the 20th anniversary of the restoration of state independence of the Republic of Azerbaijan, http://en.president.az/articles/3327, հղվել է 27.08.2017 թ.:

մեկուսացման, ռազմական օկուպացիայի մասին հայտարարություններով: 2012 թ. Վրաստանում «Վրացական երազանք» դաշինքի իշխանության գալուց հետո ռուս-վրացական տնտեսական հարաբերությունների վերականգնումը ցույց տվեց, որ ռուս-վրացական առճակատումը չունի այնքան խորքային թշնամական բնույթ, որքան հայ-ադրբեջանականը:

Արցախյան հակամարտության մյուս առանձնահատկությունն այսպես կոչված «միջազգային վերահսկելիության» բացակայությունն է: Արցախյան հակամարտության թե՛ պատերազմական, թե՛ հետպատերազմյան շրջանում Արցախի տարածքում երբևէ չեն տեղակայվել միջազգային խաղաղապահ ուժեր, ռազմական առաքելություններ կամ հակամարտության վերահսկողության այլ մեխանիզմներ: Միակ գործող կառույցը ԵԱՀԿ Մինսկի խմբի 1997 թ.-ից գործող եռանախագահության ինստիտուտն է, որը կազմակերպում է նախագահների, արտաքին գործերի նախարարների մակարդակով հայ-ադրբեջանական հանդիպումներ և այցելում հակամարտող կողմերի զինված ուժերի շփման գիծ:

Իրադրությունը հարավկովկասյան մյուս հակամարտությունների պարագայում արմատապես տարբեր ընթացք է ստացել: Դեռևս 1993 թ. օգոստոսի 24-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի № 858 բանաձևով ստեղծվել էր ՄԱԿ-ի Դիտորդական առաքելությունը Վրաստանում (UNOMIG), որը, կազմված լինելով 88 ռազմական դիտորդներից և քաղաքացիական անձանցից (կենտրոնակայանը գտնվում էր Սուխումում), հետևում էր 1993 թ. հուլիսի 27-ին հաստատված վրաց-աբխազական զինադադարի պահպանմանը[18]: Այս կառույցը գոյություն ունեցավ մինչև 2009 թ. հունիսի 15-ը, քանի որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Ռուսաստանը, կիրառելով վետոյի իր իրավունքը, դեմ արտահայտվեց դիտորդական առաքելության մանդատի պահպանմանը[19]: Բացի այդ, 1994 թ. հունիսին Աբ-

[18] Տես Историческая справка, http://www.un.org/ru/peacekeeping/missions/past/unomig/unomigbackgr.htm, հղվել է 25.08.2017 թ.:

[19] Տես **Lynch C.**, Russia Vetoes Resolution on U.N. Peacekeepers in Georgia, http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2009/06/15/AR2009061503047.html, հղվել է 25.08.2017 թ.:

խազիայում տեղակայվեց ԱՊՀ խաղաղապահ կոնտինգենտը[20]:

Հարավային Օսիայում, համաձայն 1992 թ. հունիսի 24-ին ՌԴ նախագահ Բորիս Ելցինի և Վրաստանի Պետական խորհրդի նախագահ Էդուարդ Շևարդնաձեի միջև ստորագրված Սոչիի համաձայնագրի, գործի դրվեց ռուս-վրաց-օսական խաղաղապահ ուժերի մեխանիզմը[21]: 1992-2009 թթ. Վրաստանում գործում էր նաև ԵԱՀԿ առաքելությունը, որն ակտիվորեն ներգրավված էր Հարավային Օսիայում ռազմական իրադրության մշտադիտարկման, խաղաղապահ գործունեության աջակցման, զինադադարի խախտումների ուսումնասիրության գործընթացում[22]: 2008 թ. օգոստոսյան պատերազմի ավարտից շուրջ մեկ ամիս անց ձևավորվեց ԵՄ դիտորդական առաքելությունը Վրաստանում (EUMM), որը, կենտրոններ ստեղծելով Թբիլիսիում, Զուգդիդում, Մցխեթում և Գորիում, աշխատանքներ է տանում հակամարտող կողմերի միջև վստահության ամրապնդման, զինված ուժերի շփման գծին հարակից շրջանների բնակչության կենսապայմանների բարելավման ուղղությամբ[23]:

Միջազգային վերահսկողության որոշակի մեխանիզմներ առկա են նաև այլ հակամարտություններում: Այսպես, օրինակ՝ հնդկա-պակիստանյան հակամարտության պարագայում դեռևս 1949 թ.-ից գործում է Հնդկաստանում և Պակիստանում ՄԱԿ-ի ռազմական դիտորդների խումբը (UNMOGIP)[24], Կոսովոյում՝ ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերը (KFOR)[25], իսկ իսրայելա-պաղեստինյան հակամարտությունում որպես միջազգային ներկայացվածության յուրատեսակ օրինակ կարելի է դիտարկել Պաղեստինի անդամակցու-

---

[20] Տես **Lynch D.**, Russian peacekeeping strategies in the CIS: the cases of Moldova, Georgia and Tajikistan, King's College London, University of London, էջ 141:

[21] Տես Соглашение "О принципах урегулирования грузино-осетинского конфликта", http://www.caucasica.org/docs/detail.php?ID=1329, հղվել է 25.08.2017 թ.:

[22] Տես **Stöber S.**, The Failure of the OSCE Mission to Georgia – What Remains?, *OSCE Yearbook 2010*, էջ 205, http://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/10/OSCE-2010-pdf-Gesamt%20mit%20Schrift.pdf, հղվել է 25.08.2017 թ.:

[23] Տես Our Mandate, http://www.eumm.eu/en/about_eumm/mandate, հղվել է 25.08.2017 թ.:

[24] Տես United Nations Military Observer Group in India and Pakistan (UNMOGIP), http://www.un.org/en/peacekeeping/missions/unmogip/index.shtml, հղվել է 25.08.2017 թ.:

[25] Տես ACO - Allied Command Operations | KFOR, http://www.aco.nato.int/kfor.aspx, հղվել է 10.04.2017 թ.:

թյունը միջազգային որոշ կազմակերպություններին՝ Իսլամական համագործակցության կազմակերպությանը, Արաբական լիգային, Միջխորհրդարանական միությանը, ՅՈՒՆԵՍԿՕ-ին, դիտորդի կարգավիճակը Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում, Հեռահաղորդակցության միջազգային միությունում, Համաշխարհային փոստային միությունում և որ ամենակարևորն է՝ ՄԱԿ-ում:

Այսպիսով, պարզ է, որ արցախյան հակամարտությունում միջազգային կառույցների կամ օտարերկրյա պետությունների ռազմական ներկայացվածության (թե՛ խաղաղապահ ուժերի, թե՛ ռազմական դիտորդների մակարդակով) բացակայությունը զգալիորեն սահմանափակում է հակամարտության ընթացքի վրա այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների ազդեցության հնարավորությունը:

Ամփոփելով արցախյան հակամարտության առանձնահատկությունների քննությունը՝ կարող ենք եզրակացնել, որ արցախյան հիմնախնդիրը թե՛ ծագման պատճառներով, թե՛ պատմական զարգացումներով, թե՛ արդի կոնֆիգուրացիայով, թե՛ Հայաստանի ու Ադրբեջանի համար իր ռազմավարական նշանակությամբ էապես տարբերվում է այլ հակամարտություններից: Ուստիև՝ չլինելով բացառապես տարածքային վեճ և հանդես գալով որպես բազմաթիվ փոխկապակցված տարրերից բաղկացած համալիր խնդիր՝ արցախյան հակամարտությունը չի կարող ի սպառ լուծվել ո՛չ գործող status quo-ի պահպանման, ո՛չ փոխադարձ զիջումների միջոցով:

**Բանալի բառեր-** *Հայաստան, Ադրբեջան, Արցախ, աշխարհաքաղաքական, Հարավային Կովկաս, համեմատական վերլուծություն*

**ЭРИК ДАВТЯН** - СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АРЦАХСКОГО ВОПРОСА: ОБЪЯСНЯЯ СУЩНОСТЬ КОНФЛИКТА

В данной статье выявляются особенности нагорно-карабахского конфликта, на основе которых можно объяснить сущностные стороны конфликта. Для достижения этой цели применяется метод сравнительного анализа нагорно-карабахского и других конфликтов мира. В конце делается вывод, что нагорно-карабахский конфликт, содержащий целый комплекс

взаимосвязанных элементов, в значительной степени отличается от других конфликтов мира и, не являясь исключительно территориальном спором, не может разрешиться посредством сохранения статус кво или взаимных уступок.

***Ключевые слова***: *Армения, Азербайджан, Нагорный Карабах, геополитика, Южный Кавказ, сравнительный анализ*

**ERIK DAVTYAN** - THE COMPARATIVE ANALYSIS OF THE ARTSAKH ISSUE: EXPLAINING THE ESSENCE OF THE CONFLICT

The article aims at discovering the main features of the Nagorno-Karabakh conflict that are key to understanding the essence of the conflict. In order to reach this goal, a comparative analysis is applied between this and some other conflicts. At the end, it is concluded that the Nagorno-Karabakh conflict is not solely a territorial dispute, but a complex of several interrelated components that make the conflict quite different from other ones. The paper concludes that neither the current status quo, nor the compromised option is applicable for this conflict.

***Key words:*** *Armenia, Azerbaijan, Nagorno-Karabakh, geopolitics, South Caucasus, comparative analysis*

# ԱԹՍ-ՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ

*Արծրուն Հովհաննիսյան, ՀՀ ՊՆ*

Անօդաչու թռչող սարքը (ԱԹՍ)՝ որպես ապագա պատերազմների լավագույն մեքենաներից մեկը, հետաքրքրում է շատերին: Այսօր այդ միջոցները լայն տարածում են գտնում, ստեղծվում են ԱԹՍ-ների ամենատարբեր տեսակներ և կիրառվում մարտական գործողությունների ժամանակ: Այս առումով անհաժեշտ է նախ հասկանալ դրանց մարտավարատեխնիկական բնութագրերը և կիրառման առանձնահատկությունները մեր տեղանքում, հատկապես որ մեզանում դրանց կիրառման համար մեծ պոտենցիալ կա: Խնդիրն առավելապես կարևոր է այլ զորատեսակների՝ լեռներում վարած մարտական գործողությունների առանձնահատկությունների հետ կապված (վերջին հանգամանքն ավելի մեծ նշանակություն ունի ավիացիայի համար, քանզի ավիացիոն ստորաբաժանումները հիմնականում գործում են համազորային ստորաբաժանումների հետ համատեղ, նպաստում են նրանց խնդիրների բարեհաջող կատարմանը և ինչքան էլ որ հզոր են, հակառակորդին հաղթելու վերջնական խնդիրն ինքնուրույն չեն կարող լուծել):

Մինչ օրս մասնագետների կողմից հստակեցված չեն ԱԹՍ-ների դասակարգումը և դրանց ներկայացվող պահանջները: Ընդհանուր առմամբ դրանք բաժանվում են երեք խմբի՝ ռազմավարական, մարտավարական և հատուկ նշանակության: Յուրաքանչյուր խումբն իր հերթին բաժանվում է ենթախմբերի՝ ըստ քաշի, թռիչքի բարձրության, հեռավորության և ժամանակի:

ԱԹՍ-ների բավականին լայն կիրառությունը հիմնականում հարուստ է հետախուզական կենսագրությամբ, իսկ մարտական կիրառություն ունեցել են սահմանափակ երկրներում[1]: Այսօր որոշ մարտական գործողությունների ժամանակ ԱԹՍ-ների կատարած հետախուզության մասշտաբները նույնիսկ գերազանցում են սովորական ինքնաթիռների և անգամ արբանյակային հետախուզության

[1] Ի դեպ, սովորական թռչող սարքերը ևս առաջին անգամ կիրառվել են որպես հետախույզներ, տես **Андреев И. А.**, Боевые самолеты, Москва, 1992, էջք 19-20:

մասշտաբներին: Վերոնշյալ հետախուզական տեղեկատվության ծավալները ներկայումս այնքան մեծ են, որ խնդիրներ են ի հայտ գալիս անգամ դրանց մշակման ընթացքում:

Հետախուզական նպատակներով ԱԹՍ-ների կիրառումը գնալով ավելի ու ավելի պահանջված է դառնում: Մի քանի տասնամյակների ընթացքում այդ նպատակի համար ԱԹՍ-ների լայնածավալ կիրառման արդյունքում արդեն իսկ հստակ ձևավորվել է ԱԹՍ-ների հետախուզության տեսությունը: Համաձայն դրա՝ ԱԹՍ-ները կարող են կատարել տարատեսակ հետախուզական գործողություններ՝ իրական ժամանակում հակառակորդի մասին օպտիկական, տեսաձայնային և այլ տեղեկությունների հավաքում, փոխանցում համապատասխան մարմիններին, հակառակորդի նշանակետերի վրա սեփական հրետանու, ավիացիայի և խոցման այլ միջոցների կրակի ուղղորդում, նշանառում: Հենց միայն այս խնդիրների հստակ իրականացումը կարող է հսկայական նշանակություն ունենալ մարտական գործողությունների ելքի հարցում: Ինչպես գիտենք, այս ամենն արդեն հաջողությամբ իրականացնում են թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական ԶՈՒ-երը:

Օդային հետախուզությունը պետք է կատարվի ցանկացած կլիմայական պայմաններում, պետք է լինի անընդհատ, բազմատեսակ և ընդգրկի հնարավորինս ավելի մեծ տարածություն ու երկար ժամանակահատված: Հետախուզական տեղեկությունները պետք է ստացվեն իրարից նույնիսկ շատ տարբերվող, փոքր ու մեծ ստորաբաժանումների (սարքերի) կողմից, այնուհետև մշակվեն շատ արագ, ճշգրիտ, կենտրոնացված և օպերատիվ եղանակով:

ԱԹՍ-ների կողմից տրամադրված հետախուզական տվյալների ստացումն ու մշակումը դեռ խնդրի մի մասն են: Համազորային (հատկապես նոր տեսակի) մարտի ժամանակ այդ տեղեկություններն ունեն հսկայական նշանակություն, բայց միայն ժամանակին, նպատակային և ճիշտ կիրառման դեպքում: Եթե Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ համազորային մարտի կազմակերպման համար հրամանատարներն ունեին մոտ կես ամիս ժամանակ, ապա այսօր, չնայած նրան, որ մարտի բազմակողմանի ապահովման միջոցառումներն զգալիորեն ավելացել են, պատերազմը պահանջում է այդ բարդ ու մանրակրկիտ պլանավորումն ավարտել մի քանի ժամվա ընթացքում: Հենց այդտեղ էլ ի հայտ է գալիս օպե-

ռատիվ և ստույգ տվյալների անհրաժեշտությունը:

Թվարկված պահանջները լիովին իրագործելու համար՝ ԱԹՍ-ների կիրառությունը ժամանակի ընթացքում ընդունել է տարատեսակ ձևեր: Կրկին արծարծվում է ԱԹՍ-ների մասնակի և համակարգային կիրառության գաղափարը: Օրինակ՝ ԱԹՍ-ների՝ որպես հետախույզների առաջին լայնածավալ կիրառությունը Վիետնամում մասնակի կիրառության օրինակ էր, քանի որ միաժամանակ կիրառվում էին սահմանափակ քանակությամբ ԱԹՍ-ներ սահմանափակ զորատեսակների համար: Սակայն ԱԹՍ-ների կողմից ստացված տեղեկությունն օգտագործվում էր բոլոր հրամանատարությունների կողմից, քանի որ այն մեծ ծավալներ էր ընդգրկում, հետևաբար՝ կրում էր համակարգային տարրեր:

Իսրայելա-արաբական պատերազմների ժամանակ լայն կիրառում գտան և զարգացան ԱԹՍ-ների մասնակի կիրառությունները: ԱԹՍ-ները կիրառվում էին մեկ զորատեսակի և անգամ կոնկրետ ստորաբաժանումների համար: Օրինակ՝ 1973 թ. պատերազմի ժամանակ առաջին անգամ ԱԹՍ-ները կիրառվեցին հատուկ ցամաքային զորքերի շահերի համար, իսկ հետագայում նույնիսկ մեկ սարքն ապահովում էր այս կամ այն գնդի հետախուզական տեղեկատվաապահովումը: Մասնակի կիրառության օրինակներ եղան նաև իրաքյան առաջին պատերազմի ժամանակ: Դաշնակից պետությունների շատ հրետանային գնդեր ունեին իրենց առանձին ԱԹՍ-ները, որոնք մեծ ճշտությամբ ուղղորդում էին հրետանային կրակը: Նման խնդիր էր լուծում մասնավորապես ֆրանսիական «MART» ԱԹՍ-ն[2]: Իրաքյան 2003 թ. պատերազմի ժամանակ ամերիկյան «Delta» հատուկ ստորաբաժանման զինվորներն իրենց պաշտպանական սաղավարտներին ամրացված էկրաններին անմիջապես տեսնում էին իրենց շրջակայքում տեղի ունեցող ամեն անցուդարձ: Տեղեկությունն ստացվում էր «Dragon Eye» հետախուզական ԱԹՍ-ներից: Հատուկ ստորաբաժանման մարտիկները հետախուզական ԱԹՍ-ների հաղորդած տվյալներով հայտնաբերված թիրախները վերացնելու համար կարող էին դիմել մարտական «MQ-1/RQ-1 Predator» ԱԹՍ-ների կիրառությանը: Վերջինս կիսաավտոմատ ռեժիմում խոցում էր հայտնաբերված թիրախը: Ոչնչացման ենթակա

[2] Տես **Стрелецкий А.**, Беспилотная авиация сухопутных войск Франции, ЗВО, №9, 2000, էջք 24-28:

թիրախները կարող էին լինել մինչև անգամ առանձին դիպուկահարներ: Սա արդեն համակարգային կիրառության փոքրիկ տարբերակ է՝ սահմանափակ տարածքում սահմանափակ խնդիրների լուծման համար:

### Ժամանակակից ԱԹՍ-ների հնարավորությունները

ԱԹՍ-ների մասնակի կիրառությունը սահմանափակ ստորաբաժանումների կամ ստորաբաժանման կողմից սահմանափակ տարածքում և ժամանակում կոնկրետ տեղեկություն ստանալու համար հարավկովկասյան մեր փոքր տարածաշրջանում կարող է զգալիորեն բարձրացնել տվյալ ստորաբաժանման և նույնիսկ ամբողջ զորամիավորման մարտական հնարավորությունները[3]: Օրինակ՝ մեկ համազորային զորամիավորմանը տրված ԱԹՍ-ների ստորաբաժանումը կարող է այդ զորամիավորմանն ապահովել անընդհատ հետախուզական ստույգ տվյալներով՝ ռազմաճակատի ամբողջ երկայնքով և խորությամբ: Ներկայումս գոյություն ունեցող և բազմիցս կիրառված ԱԹՍ-ներն ապացուցել են այդօրինակ հնարավորությունները: Դրանք կարող են օդում մնալ մինչև 6-8 ժամ, կարող են թռչել մինչև 150-200 կմ: ԱԹՍ-ների նման ստորաբաժանման մեջ կան մի քանի թռչող սարքեր, և ստորաբաժանումը կարող է արագ տեղաշարժվել՝ հմտությամբ շարժվելով զորամիավորման ամբողջ ճակատով: ԱԹՍ-ների կիրառման մարտավարությունը ներկայումս կատարելագործվել ու հղկվել է և շարունակում է զարգանալ: Արդյունքում համազորային հրամանատարները կարող են գործել ավելի ճիշտ և համարձակ, քանզի ռազմարվեստի պատմությունը վաղուց փաստել է, որ հետախուզական լավ տվյալները հաճախ կանխորոշում են պատերազմի ելքը: Ավելին՝ մարտական գործողությունների աճող արագությունը, տեխնիկական հագեցվածությունը և բազում այլ հանգամանքներ ավելի են բարձրացնում հետախուզա-

[3] Անտառալեռնային տեղանքում ավիացիոն հետախուզության մարտավարական և օպերատիվ խորությունները դասականից փոքր են: Մարտական շփման համատարած գծերը հաճախ բացակայում են: Մեծ նշանակություն ունեն հատուկ դիվերսիոն ստորաբաժանումները, որոնց գործունեությունն ակտիվանում է նման տեղանքներում: Թվարկված պատճառներով նույնիսկ 5-10 կմ խորության մանրամասն հետախուզությունը կարող է օպերատիվ նշանակություն ունենալ զորամիավորման կամ ուղղության համար:

կան չընդհատվող տվյալների նշանակությունը:

ԱԹՍ-ների կիրառության պատմությունն ավելի հարուստ է մասնակի դեպքերով: Մասնակի կիրառման լավ օրինակ կարող է հանդիսանալ նաև հատուկ ԱԹՍ-ների կիրառումը՝ որպես նշանառու-խոցող միջոց («քիլլեր»): ԱԹՍ-ները կահավորելով մեծ տրամաչափի դիպուկահար զենքերով՝ կարելի է ստանալ ցանկալի արդյունքներ: Նման խնդիրներ կատարելիս հնարավոր է, որ ԱԹՍ-ների մեկ համալիրն անգամ մասնակի կիրառման ժամանակ հասնի մեծ հաջողությունների: Այստեղ կարևորվում են համալիրի և ԱԹՍ-ների տեխնիկական հնարավորությունները: Եթե համալիրում լինեն մեկ-երկու ժամանակակից հետախուզական ԱԹՍ և մի քանի հարվածող ու մեկանգամյա օգտագործման ԱԹՍ, ապա կարելի է առաջինների հաղորդած տվյալների հիման վրա վերջիններով կատարել մարտական հարվածներ: Անհրաժեշտ է, որ հետախուզական ԱԹՍ-ն լինի հակառակորդի ՀՕՊ-ի ազդեցությունից դուրս, և երկու տեսակն էլ լինեն դժվար խոցելի: Մասնակի կիրառման փորձն ամբողջ աշխարհում, չնայած որոշակի բարդություններին, գնահատվում է բավականին բարձր:

Անօդաչուների կիրառության և կորուստների քանակային տվյալներն առաջին հայացքից կարող էին թվալ ոչ գոհացուցիչ՝ հատկապես ավանդական մարտական ավիացիայի տվյալների հետ համեմատած: Օրինակ՝ 1999 թ. Հարավսլավիայի դեմ պատերազմի ժամանակ ՆԱՏՕ-ի դաշնակիցներն ընդհանուր առմամբ կորցրել են 47 ԱԹՍ, որից ամենաշատը բաժին է ընկնում ԱՄՆ-ին՝ 17 ԱԹՍ, Անգլիային՝ 14, Գերմանիային՝ 7, Ֆրանսիային՝ 5 և այլն:

Կորցնելով նշված քանակությամբ ԱԹՍ-ներ՝ միևնույն է, զորքերը գրեթե բոլոր հրամանատարական օղակներում ապահովված էին տեղեկատվության ցանկալի բազայով: Ճիշտ է՝ պատերազմից հետո պարզ դարձավ, որ այդ բազան հարկավոր է մեծացնել: Այնուամենայնիվ, եթե հաշվի առնենք, որ այս սարքերն արժեն մարտական ինքնաթիռների ընդամենը 10-50%-ը, և որ խնայվել է առնվազն 40 օդաչուի կյանք, ապա կարելի է ընդունել, որ այս սարքերն իրոք ապահովում են տևական լուծում:

ԱԹՍ-ների կորուստներն ըստ պատճառների բաժանվում են մի քանի խմբերի: Առաջին տեղում շարժիչի պատճառով տեղի ունեցած կորուստներն են (37%), երկրորդ տեղում՝ ղեկավարման համակար-

գի պատճառով կորուստները (25%), երրորդ տեղում՝ օպերատորական սխալների պատճառով կորուստները (17%), այնուհետև՝ կապի պատճառով եղածները (11%) և այլ պատճառներով տեղի ունեցածները (10%)[4]: Փաստորեն, ԱԹՍ-ների տեխնիկական վիճակը և հուսալիությունը ցանկալի մակարդակի վրա չէին, քանի որ կորուստների հիմնական մասը վերաբերում է տեխնիկական գործոնին: ԱԹՍ-ների զարգացման երկարամյա ծրագրերում այս խնդիրը մասնագետների ուշադրության կենտրոնում է:

Ներկայումս արդեն պատկերն արմատապես փոխվել է: Մարտական կորուստներն այնքան էլ մեծ չեն, և դա լավագույնս ապացուցում են փաստերը: 1982 թ. իսրայելցիների կողմից ԱԹՍ-ների հաջող կիրառությունից հետո ԽՍՀՄ-ում կատարում են մի փորձարկում: «ЗСУ-23-4 Шилка»-ի փորձառու հաշվարկը կրակում է իրական ԱԹՍ-ների վրա և ոչ մի կերպ չի կարողանում խոցել այն: Սերբերը, օրինակ, ԱԹՍ-ների դեմ պայքարի համար լայնորեն կիրառում էին սովորական ուղղաթիռներ, որոնք թռչում, արագությամբ հավասարվում էին վերջիններիս և գնդացրով ոչնչացնում ԱԹՍ-ներին, սակայն արդյունավետությունը նշանակալի չէր:

Նկատի ունենալով այս ամենը՝ փաստենք, որ ԱԹՍ-ների դեմ պայքարն այնքան էլ դյուրին չէ, բայց մասնագետների կարծիքով՝ մարտական պայմաններում ԱԹՍ-ները, այնուամենայնիվ, նպատակահարմար է կիրառել 5000 մետր և ավելի բարձրությունների վրա: Նման բարձրության դեպքում զենիթահրանոթային միջոցները և ուղղաթիռներն այդքան էլ արդյունավետ չեն գործում: Բացի այդ, միջին չափերի ԱԹՍ-ները նման բարձրություններում մարդու զգայարանների համար դառնում են անտեսանելի և անլսելի:

Մասնակի կիրառության աճող ծավալները հիմք են տալիս մասնագետներին ավելի լուրջ վերաբերվելու ԱԹՍ-ների համակարգային և, որ ավելի կարևոր է, մարտական կիրառության հեռանկարին: Ներկայումս ԱԹՍ-ների հեռանկարայնությունն այլևս քննարկման առարկա չէ: Խնդիրը դրանց կիրառության մասշտաբների որոշման, կիրառման մարտավարական և ռազմավարական մոտեցումների, դրանց շնորհիվ մարտն ավելի կազմակերպված դարձնելու մեջ է:

---

[4] Տես **Павлушенко М., Евстафьев Г., Макаренко И.,** Беспилотные летательные аппараты: история, применение, угроза распространения и перспективы развития, Москва, 2005, էջ 497:

Ինչպես նշեցինք, ԱԹՍ-ների հետախուզական մասնակի կիրառության ծավալներն ընթացքում դեռ կաճեն, սակայն ԱԹՍ-ներն ավելի հետաքրքիր են համակարգային կիրառության պարագայում: Այս դեպքում ԱԹՍ-ն ընդհանուր տեղեկատվական ապահովման կարևորագույն գործիքներից մեկն է: Այսինքն՝ մասնակի կիրառության ժամանակ ԱԹՍ-ն հանդես էր գալիս որպես ինքնուրույն միջոց՝ սահմանափակ խնդիրներով և հնարավորություններով, մինչդեռ համակարգային կիրառության դեպքում ԱԹՍ-ն հետախուզական թռիչքը կատարում է միաժամանակ մի քանի օդակների համար: Իր տված տեղեկությունը միաժամանակ ստանում են տարբեր համակարգեր ու գերատեսչություններ: Տեղեկատվության միջոցները կարող են ունենալ տարբեր նպատակներ և խնդիրներ: Դրանք կարող են լինել առանձին սարքեր՝ հանդիսանալով մեկ համակարգի բաղկացուցիչ մասեր, և կարող են համագործակցել: Այդ համագործակցությունը կարող է մեծապես կախված լինել ԱԹՍ-ների հաղորդած տեղեկություններից: Օրինակ՝ ԱԹՍ-ները, հետախուզելով տեղանքը, տվյալները միանգամից հաղորդում են և՛ կենտրոնակայան, և՛ հարվածային թռչող սարքերին, և՛ մոտակա հրետանային դիվիզիոնին:

ԱԹՍ-ները մեծ դեր կարող են խաղալ բազմաշերտ և անվիճելիորեն արդյունավետ օդային և հրետանային հարվածների կազմակերպման ու ճշտության ապահովման համար՝ կառավարելով հրթիռահրետանային կրակը և անհրաժեշտության դեպքում հակառակորդին խոցելով սեփական հարվածներով: Այստեղ հաջողությամբ կարող է կիրառվել ռուսական «Р-90» ԱԹՍ-ն, որը, տվյալներ հաղորդելով իր արձակման կայանին, կուղղորդի «Смерч»-ի (9К58) հեռահար կրակը:

Հետախուզական բազմատեսակ համակարգերի և համալիրների կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ մարտական ԱԹՍ-ները հասցնում են հարվածներ: Մարտական ԱԹՍ-ներն ավելի օպերատիվ գործելու համար կարող են հետախուզման ընթացքում արդեն գտնվել օդում, տվյալ կամ նշված մոտակա շրջանում և նշանակետի մասին հրամանատարական կետի հետ միաժամանակ ստանալ համաժամանակյա տեղեկություն: ԱԹՍ-ների համակարգային կիրառությունը հնարավորություն կտա ստացված հետախուզական տվյալների մշակումը և տարբեր ստորաբաժանումների

համագործակցությանը միտված գործողությունները մանրամասնելու՝ կրճատելով ժամանակը, նվազեցնելով նաև կապից սպասվող արտահոսքի վտանգը: ԱԹՍ-ների մարտական այդպիսի կիրառությունը շահագործման պարզության, տեղափոխելու հարմարավետության և արագության հաշվին մարտական գործողությունների ժամանակ կարող է անհրաժեշտ տեղամասում ապահովել քանակական առավելություն հակառակորդի ավիացիայի նկատմամբ: Նման խելամիտ կիրառությունը և տեխնիկական հնարավորությունները կարող են ապահովել հաղթանակ նույնիսկ դասական ինքնաթիռների և ուղղաթիռների նկատմամբ: Այսինքն՝ համազորային զորամիավորման հրամանատարը, ունենալով մարտական ԱԹՍ-ների 3-4 համալիր, կարող է նշված վայրում և նշված պահին ապահովել հարվածներ մինչև 40-50 ԱԹՍ-ներով: Հարվածները կարող են լինել մարտավարական և անգամ օպերատիվ մարտավարական խորությամբ, կիրառման զանազան խաբուսիկ, շեղող և օգնող հնարքներով, դասական ավիացիայի և հրթիռահրետանային հարվածների հետ համատեղ: 3-4 համալիրները ընդհանուր պետք է կազմեն մինչև 20 մեքենա, որոնք կարող են տեղաշարժվել նույնիսկ տարբեր խմբերով, ոչ միասին և գործել ոչ մեկ դիրքից:

Լեռնային շրջաններում կարևոր է նաև օդային դեսանտավորումը: Հաճախ մեկ-երկու տասնյակ անակնկալ դեսանտավորված մարտիկները, հայտնվելով թևերում կամ թիկունքում, կարող են խուճապի մատնել մեծ զորամիավորումներին: Սակայն օդային դեսանտավորումը լեռնային տեղանքում ևս դյուրին խնդիրներից չէ: Դեսանտավորման ժամանակ հսկայական նշանակություն ունի դեսանտավորման շրջանի հստակ պատկերի ստացումը: Անտառալեռնային խիտ և կտրտված տեղանքում մարտական գործողությունների վարման ժամանակ բարդանում է ավիացիայի կիրառումը՝ հատկապես պարտիզանական խմբերի դեմ պայքարում: Այստեղ պետք է ունենալ բարձրորակ հետախուզահարվածային հուսալիր համալիր: Անօդաչուների կիրառման լայն ոլորտ ՀՀ ԶՈՒ-ի համար կարող է հանդիսանալ այլ թռչող սարքերի՝ հատկապես ուղղաթիռների դեմ պայքարն օդում:

ՀՕՊ-ի համար լինելով թե իրական և թե կեղծ թիրախ՝ անօդաչուները կարող են ստեղծել տասնյակ ու հարյուրավոր նշանակետերի տպավորություն, այսինքն՝ մարտական ԱԹՍ-ները միաժամանակ

կարող են կիրառվել և՛ որպես հարվածող, և՛ որպես խանգարող միջոցներ: Օրինակ՝ տվյալ ուղղության վրա ավիացիայի հիմնական հարվածներից առաջ կիրառելով ԱԹՍ-ների խիտ մասսաներ՝ հնարավոր է հակառակորդին ստիպել բացահայտել իրեն, անիմաստ ծախսել հրթիռային ու հրանոթային զինամթերքի պաշարներ: Հիմնական հարվածն իրականացնող օդային հարձակման միջոցներն ավելի հանգիստ և անվնաս կկատարեն մարտական առաջադրանքը: Նման համալիրների գործունեությունն այդպիսի լավ ապահովված ՀՕՊ-ի շրջաններում հնարավոր է՝ հաշվի առնելով դրանց դժվար հայտնաբերվելը և ոչնչացվելը:

Ներկայումս համազորային մարտն առանց արդյունավետ էլեկտրոնային կառավարման հնարավոր չէ պատկերացնել: Բազմաշերտ կառավարումն ապահովող տարրերից է հետախուզահարվածային ԱԹՍ-ն: Հետախուզահարվածային ԱԹՍ-ների կիրառության համար նշանակետեր կարող են հանդիսանալ հրետանային հզոր համալիրներն ու հրթիռային արձակման կայանները, որոնց հարվածային հզորությունը բավականին մեծ է և կարող է քայքայիչ ու կործանարար ազդեցություն ունենալ ինքնապաշտպանական ուժերի և խաղաղ բնակչության վրա: Նման համակարգերը դեռ բացազատման բնագծից հեռու ավելի դյուրին է հայտնաբերել ու ոչնչացնել փոքր ԱԹՍ-ներով, որոնք կարող են հաղթահարել հակառակորդի պաշտպանական բնագծերի զգալի խորությունները: Հրետանային և հրթիռային համալիրների նկատմամբ կարելի է կազմակերպել իսկական որս: Նշվածներից են նաև ինքնագնաց հրետանային կայանները, որոնք օժտված են կրակային դիրքը զբաղեցնելու և թողնելու մեծ արագությամբ, ինչի արդյունքում շատ դեպքերում դրանց հայտնաբերումից հետո ժամանակը չի բավականացնում կրակային այլ միջոցներով ոչնչացնելու համար: Հրետանային հզոր համալիրները, հրթիռային արձակման կայանները և ինքնագնաց հրետանային համալիրները ոչնչացնելու համար կարևոր նախապայման է հաղորդակցության հիմնական ուղիները (ճանապարհներ, երկաթգծեր, օդանավակայաններ) հսկողության տակ պահելը. չէ՞ որ այդ միջոցները, ըստ իրենց չափերի և շարժունակության, չեն կարող շարժվել ցանկացած տեղանքով: Հետախուզահարվածային համալիրներն արդյունավետորեն կարող են ոչնչացնել նաև հակառակորդի ավիացիան վերգետնյա տեղակայման ժամանակ: Այդպի-

սի ստորաբաժանումների դեմ պայքարելիս ԱԹՍ-ները կարող են կիրառել նաև հրկիզող մարտական մասեր, որոնք բավականին արդյունավետ են վերգետնյա բազավորված թռչող սարքերը և կենդանի ուժը ոչնչացնելիս:

Նոր սերնդի ամերիկյան հետախուզահարվածային ԱԹՀ-ները հանդիսանալու են ընդհանուր գլոբալ համակարգի մի մասը (արբանյակներ, AWACS-ներ, ԱԹՍ-ներ, ռադիոպայքարի միջոցներ և այլն): Այդ համակարգը միջոցների ընդհանուր համատեղ կիրառության ժամանակ ապահովելու է մեծ հուսալիություն և ճշտություն: Կարևոր է, որ նման համակարգի բաղկացուցիչ մասեր կազմող առանձին ԱԹՍ-ները ևս կարողանան ինքնուրույն կատարել մարտական խնդիրներ: Համակարգի ամբողջովին կամ մասնակի խափանման ժամանակ նման հնարավորությունը շատ կարևոր է: Կիրառման ձևերը և տեսակները շատ են: Հեռանկարում նույնիսկ քննարկվում է այն տարբերակը, երբ հարվածային ու խոցող տարատեսակ բոլոր միջոցները (հրետանային արկեր, հրթիռներ և այլն) հագեցած լինեն հետախուզական սարքավորումներով և կարողանան թռչելու ընթացքում տվյալներ հաղորդել մինչև թիրախին հասնելը (ինչպես հեռուստատեսային կառավարմամբ հրթիռները): Մարտավարական կործանիչն իրենից կարող է արձակել տասնյակ ԱԹՍ-ներ: Արձակված սարքերը կատարելու են միաժամանակ և՛ հետախույզի, և՛ խանգարողի, և՛ հարվածողի դեր՝ դրանով իսկ մաքրելով մարտավարական կործանիչի ճանապարհը օդային, վերգետնյա թշնամիներից:

Այս ամենը ցանցակենտրոն պատերազմների կամ նախորդող վիճակի արտահայտումներից է: Մեզ հարկավոր է ստեղծել մեր սեփական ցանցը, որը կախված չլինի ոչ մեկից, չնայած կարող է և ինտեգրվել ցանկացածի հետ: Նման ցանցը կարող է կառուցվել ինչպես թռչող սարքերի միջոցով, այնպես էլ առանձին, օրինակ՝ համապատասխան բարձունքների վրա տեղադրված տարատեսակ հնարավորությունների ակտիվ և պասիվ սարքերով: Հատկապես հետաքրքիր է այդ ամենի համակցությունը, այսինքն՝ ցանցը աշխատում է բոլոր հնարավոր միջոցների ընդհանրացմամբ, փոխլրացմամբ: Սեփական թռչող սարքերի, ցամաքային շարժական ու անշարժ, ակտիվ և պասիվ հետախուզական միջոցների շնորհիվ ստացված տվյալների ամբողջությամբ կարող ենք ունենալ մեր՝ սեփական ու կենսունակ

ցանցը, որից կարող են օգտվել գրեթե բոլոր զորատեսակները: Սակայն լավագույն ցանցը կարող են ապահովել թռչող սարքերը:

Արդեն նշեցինք, որ օդային ամբողջ տարածությունը հարկավոր է վերահսկել վերևից, ինչի համար կիրառվում են աերոստատները, օդապարիկները և դիրիժաբլները: Օդից թեթև միացությունների օգնությամբ թռչող սարքերը, ի տարբերություն ինքնաթիռների, արբանյակների և այլ ԱԹՍ-ների, ունեն երկու լուրջ առավելություն. դրանք բավականին էժան են, և դրանց օգտագործման ժամանակը մեծ է: Ներկայումս կիրառվող օդապարիկները, աերոստատները և դիրիժաբլները հիմնականում միջին չափերի են, այսինքն՝ ունեն մի քանի տասնյակ մետր երկարություն, մինչև 5-6 կմ բարձրանալու հնարավորություն և կարող են կրել մինչև 1 տոննա օգտակար բեռնվածություն: Նման աերոստատները հիմնականում կապված են լինում վերգետնյա սարքերի հետ երկար պարաններով: Թեկուզ այսպիսի համեստ հնարավորություններով՝ աերոստատները կարող են հետախուզել մինչև 300-400 կմ հեռավորություն: Այսինքն՝ դրանց վրա տեղադրված են ռադիո- և այլ հետախուզության սարքեր, որոնց հայտնաբերած տեղեկությունը հաղորդվում է համապատասխան մարմիններին:

Օդից թեթև միացությունների հիման վրա ԹՍ-ների միջոցով հակառակորդի տարածքի հետախուզությունն ունի մի քանի առավելություններ: Նախ՝ մեծանում են ՀՕՊ-ի հնարավորությունները, քանի որ օդային տարածքում թաքնված տեղեր քիչ են մնում, որոնք կարող էին օգտագործել ցածրաթռիչք ինքնաթիռները և ուղղաթիռները: Հետախուզող աերոստատը, կառուցված լինելով ոչ մետաղական նյութերից, գրեթե անկնատ է հակառակորդի ՀՕՊ-ի համար կամ առնվազն դժվար հայտնաբերվող, և այն օդ է բարձրացվում սեփական տարածքում՝ չվտանգելով իրեն: Վերջին կարևոր առավելությունն այն է, որ նման սարքերը չեն վախենում նաև օդային հոսանքներից, տուրբուլենտությունից և քամիներից, որոնք բնորոշ են լեռնային տեղանքին և կարող են ինչ-որ չափով ազդել ԱԹՍ-ների որոշ տեսակների վրա: Արտասահմանում լայնածավալ աշխատանքներ են ընթանում մեծ դիրիժաբլների ստեղծման ուղղությամբ, որոնք կարող են բարձրանալ մինչև 20 և ավելի կիլոմետր, օդում մնալ մի քանի ամիս, հետախուզել մինչև 1000 և ավելի կիլոմետր տարածություններ և ունենալ ինքնուրույն սնուցման աղբյուրներ՝ հիմնա-

կանում արևային մարտկոցների տեսքով[5]: Հայտնի են նման դիրիժաբլների մի քանի նախագծեր, որոնք կոչվում են «SPA», «Berkut», «HAA», «LEMV» և այլն[6]: Այսքան մեծ դիրիժաբլները ղեկավարման որոշ մարմինների օգնությամբ ավելի կայուն են օդային տատանումների հանդեպ: Մեծաչափ դիրիժաբլները կարող են լինել հետախուզահարվածային հզոր հարթակներ (դրանցից կարող են արձակվել հրթիռներ) և միաժամանակ օդային ղեկավարման կետեր:

ԱԹՍ-ները, ըստ կառուցվածքի, լինում են շատ բազմազան. դրանք կառուցվում են ինքնաթիռային կամ ուղղաթիռային ամենաբազմազան սխեմաներով: ԱԹՍ-ների ստեղծման գործում գրեթե չի կիրառվել այնպիսի տեխնիկական լուծում կամ աերոդինամիկ մոտեցում, որը չի կիրառվել դասական ԹՍ-ների մոտ: Ըստ էության՝ ԱԹՍ-ները հասարակ կառուցվածք ունեն: Ղեկավարման մարմինները և այլ առանցքային բաղադրամասերն աշխատում են ինչպես սովորական ինքնաթիռների և ուղղաթիռների մոտ: ԱԹՍ-ների ստեղծման համար պահանջվում են ավելի քիչ տեխնիկական ծավալուն համակարգեր ու նյութական միջոցներ: Դրանով է պայմանավորված մինի-ավիացիա ստեղծող պետությունների ակումբի մեծացումը: Ոչ մեծ և հզոր տվյալներ ունեցող ԱԹՍ-ների ստեղծման գործում լայնորեն կիրառվում են փայտե մասերը: Դրանց վրա տեղադրվող տարատեսակ հետախուզական սարքավորումները հիմնականում լինում են բլոկներով և շատ արագ փոխարինվում են: Առհասարակ ԱԹՍ-ները, ըստ բաղադրիչների, կառուցվում են բլոկներով, որպեսզի անհրաժեշտության դեպքում այս կամ այն բլոկն ամբողջովին ու հեշտությամբ փոխվի: Տվյալ դեպքում կրճատվում է վերանորոգման ժամանակը՝ միաժամանակ ավելացնելով վերանորոգելու հնարավորությունը: Ցանկացած չափերի (անգամ ամենահասարակ) ԱԹՍ-ների ստեղծման գործում ամենաբարդ խնդիրը համարվում է ղեկավարման համակարգի ստեղծումը: Էլեկտրոնային այն սարքավորումները, որոնց միջոցով ԱԹՍ-ն կատարում է իր բոլոր ֆունկցիաները, հաճախ լինում են չափերով մեծ, ծանր, անհուսալի, երկար տարածության վրա չեն գործում, հիմնական գործողություններն ավտոմատ չեն և այլն: Ոչ բոլոր պետություններին է

---

[5] Տես **Бычков А.**, Применение аэростатных комплексов РЛР для охраны границы, *ЗВО*, №10, 2001, էջք 32-35:

[6] Տես **Беляев В.**, Дирижабли плывут через XXI век, *Вестник Воздушного Флота*, январь-февраль, 2005, էջք 24-27:

հաջողվում ստեղծել նման լավ և հուսալի համակարգեր, որոնց գործողությունների զգալի մասն ավտոմատացված է: Պատճառն այն է, որ այս սարքերի հիմքում ընկած են տեղեկատվական տեխնոլոգիաները և միկրոէլեկտրոնիկան, որոնք բարձր գիտատեխնիկական արդյունաբերության հայելին են: Շատ կարևոր է, որ ԱԹՍ-ները ղեկավարող օպերատորը՝ անհրաժեշտ բոլոր սարքավորումներով հանդերձ, տեղակայվի արագաշարժ ու ամենագնաց, հնարավորինս փոքր մեքենայի մեջ: Մարտական պայմաններում և անտառալեռնային տեղանքում նման հնարավորությունը շատ կարևոր է:

Թեթև ու հատկապես մարտական ԱԹՍ-ների ստեղծման գործում որպես շարժիչ կարելի է լայնորեն կիրառել էլեկտրոնային և գազային պտուտակավոր շարժիչները, որոնք անհրաժեշտ են միայն մեկ թռիչքի համար: Այդպիսի շարժիչները կզբաղեցնեն փոքր տեղ և կունենան փոքր քաշ: Նման ԱԹՍ-ներով զինված մեկ համալիրը, որում կա մինչև 10 միավոր ԱԹՍ, կարող է արժենալ մինչև 5-10 մլն դոլար: Փոքր, սակայն լավ տվյալներ ունեցող ԱԹՍ-ների ստեղծման գործում առավել մեծ դժվարություն է ներկայացնում փոքրաչափ և հզոր տուրբոռեակտիվ շարժիչի ստեղծումը:

ՀՀ ԶՈՒ-ում նույնպես զգում են նման սարքերի կարիքը. մեր սահմանների վերահսկողության խնդիրն արդյունավետորեն կարելի է լուծել հենց այս սարքերի միջոցով[7]: ՕՀՄ-ների և ՀՕՊ-ի միավորված զորատեսակը մեծապես կարող է օգտվել զգալիորեն ավելի էժան ԱԹՍ-ների տրամադրած ծառայություններից: Ըստ որում, նկատառելով պետության ռազմատեխնիկական անկախությունը՝ նպատակահարմար է ԱԹՍ-ները, ինչպես և ցանկացած այլ սպառազինություն, ստեղծել սեփական միջոցներով և ոչ թե ներկրել արտասահմանից:

---

[7] Մեր տարածաշրջանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն ԱԹՍ-ների որոշակի բնութագրեր. հարկավոր է, որ ԱԹՍ-ն ունենա ոչ պակաս քան 6 կմ թռիչքային բարձրություն, լինի ինքնաանետիչ արձակմամբ, անկարգելով կամ հատուկ հարմարանքով վայրէջք կատարող, որպեսզի կախված չլինի թռիչքուղու պարտադիր առկայությունից:

## ԱԹՍ-ների զարգացման ուղղությունները և մարտահրավերները

1969 թ. մի քանի հրեա զինվորականներ և ինժեներներ ռադիոհեռակառավարվող ավիամոդելների վրա տեղադրեցին նկարահանող սարք և փորձարկեցին: Արդյունքները գոհացուցիչ էին: Որոշ ժամանակ անց բանակը հետաքրքրվեց դրանցով և մի քանի ինժեներների գումար տրամադրեց նման սարք ստեղծելու նպատակով: Չնայած որ ամեն ինչ այնքան էլ հարթ չէր ընթանում, պետությունը մի կողմից՝ ամենագործուն կերպով խրախուսում էր նման սարքերի ստեղծման փորձերը (նույնիսկ այդպիսիք արտադրող ընկերությունների հիմնումը), մյուս կողմից՝ ԱՄՆ-ից գնում արդեն կիրառված ու փորձված սարքեր: Մի քանի տարի հետո, իհարկե, ամերիկյան փորձի և համապատասխան աշխատանքի համադրման արդյունքում իսրայելական նորաստեղծ ընկերությունները դարձան առաջատարն այս ոլորտում[8]:

Վրացական ՁՈՒ-ն վաղուց Իսրայելից գնել է մի քանի ԱԹՍ-ներ: Ըստ մամուլի հաղորդումների՝ 2008 թ. ընթացքում վրացական ՁՈՒ-ն կորցրել է նման մի քանի սարք: 2008 թ. մարտի 18-ին վրացական «Hermes-450» հետախուզական ԱԹՍ-ներն օդում ոչնչացվեցին աբխազական ՀՕՊ ուժերի կողմից: Մեկ ամիս անց՝ ապրիլի 20-ին, նորից ոչնչացվեց վրացական կողմին պատկանող «Hermes-450» հետախուզական ԱԹՍ-ն, սակայն ի տարբերություն նախորդ անգամվա՝ այս անգամ հեռուստատեսությամբ ցուցադրեցին՝ ինչպես է հետախուզական սարքը կատարում տեսանկարահանում և անգամ նկարում իրենից քիչ հեռու և ներքև թռչող կործանիչը (հավանական է ռուսական «МиГ-29» կամ «Су-27»), որը, արձակելով «օդ-օդ» դասի հրթիռ, խոցեց նկարահանող ԱԹՍ-ին: Տեղի ունեցածը մեծ արձագանք ունեցավ: Մի քանի օր անց աբխազական ՁՈՒ-ն դարձյալ հայտարարեց, որ խոցել են ևս մեկ ԱԹՍ, որը զինված է եղել «օդ-օդ» դասի հրթիռով:

Ադրբեջանը նախկինում Իսրայելից ձեռք էր բերել «Aeronautics Defense Systems Ltd.» ընկերության «Orbiter» և «Aerostar» ԱԹՍ-ները, որոնք բազմիցս կիրառվել են հայ-ադրբեջանական զինված ուժերի շփման գոտում: Այսօր արդեն կան այս ԱԹՍ-ների մարտական տարատեսակները: Ադրբեջանն իսրայելական ընկերությունների

[8] Կարծում ենք՝ վաղուց արդեն հրամայական է, որ այս փորձից օգտվի նաև Հայաստանը:

հետ համատեղ արտադրում է սովորական և նույնիսկ մարտական ԱԹՍ-ներ[9]: Մենք դրանում համոզվեցինք ապրիլյան պատերազմի ժամանակ: Բացի այդ, ադրբեջանական բանակը համալրվում է նաև մարտական ԱԹՍ-ներով[10]: Մարտական ԱԹՍ ստեղծելը դյուրին գործերից չէ: Արդեն նշել ենք, որ աշխարհում մոտավորապես 100 պետություն զբաղվում է ԱԹՍ-ների ստեղծման աշխատանքով, սակայն լիարժեք մարտական ԱԹՍ-ներ ներկայումս արտադրում են միայն ԱՄՆ-ն և Իսրայելը:

Ադրբեջանը նման սարքերի ձեռքբերման համար պայմանագիր է կնքել նաև թուրքական TAI (Turkish Aerospace Industries, Inc) ընկերության հետ, որն ստեղծում է «Turna» ԱԹՍ-ները: Ավելին՝ ադրբեջանցի սպաները Թուրքիայում մասնագիտական պատրաստություն են անցնում՝ ղեկավարելու «Turna» սարքերը: Իհարկե, թուրքական արտադրության ԱԹՍ-ները որակական չափանիշներով չեն կարող համեմատվել իսրայելականների հետ, բայց դրանք ևս հարկ եղած դեպքում կարող են օգտագործվել որպես մարտական-հարվածային միջոցներ:

Ադրբեջանական հետախուզական ԱԹՍ-ները հայկական տարածքներում թռիչքներ կատարել են[11]: Իհարկե, եղան այս փաստերը հավաստող և հերքող բազում տեղեկություններ, սակայն մեր զինվորականները սեպտեմբերի 12-ի խոցումից հետո նույնպես խոստովանեցին այդ փաստը: Աշխարհում վաղուց են կիրառվում ԱԹՍ-ներ, և բազում անգամ ապացուցվել է, որ ավանդական, հին զենիթային միջոցներով դրանց դեմ պայքարելն անարդյունավետ է: 1960-ական թվականներից շատ փորձեր են կատարվել այդ ուղղությամբ, և արդյունքները գաղտնիք չեն[12]: Նույնիսկ վերջին դեպքերն Օսիայում և Աբխազիայում ապացուցեցին, որ դրանց դեմ պայքարը պահանջում է լուրջ վերաբերմունք: Որոշ փոքր զենիթային համալիրներ երբեմն

---

[9] Տես Крупнейшая военная компания Израиля открыла представительство в Азербайджане, 06.10.2009, http://www.aze.az/news_krupneyshaya_voennaya_kompan_26137.html, հղվել է 19.11.2017 թ.:

[10] Տես В инвентарь ВС Азербайджана будут включены вооруженные тактические беспилотные летательные аппараты, http://ru.apa.az/news.php?id=202577, հղվել է 19.11.2017 թ.:

[11] Տես Над Арменией и Карабахом летают азербайджанские беспилотники?, 09.09.2010, http://www.regnum.ru/news/polit/1323621.html, հղվել է 19.11.2017 թ.:

[12] Տես **Հովհաննիսյան Ա. Կ.** , Մի քանի հարցեր Ավիացիայից, Երևան, 2009:

անզոր են, մեծերն էլ կարող են խոցել, բայց թանկարժեք են[13]:

Փաստորեն, ադրբեջանական ղեկավարությունը, յուրացնելով սովորական ԱԹՍ-ների հնարավորությունները, առանց ժամանակ կորցնելու անցում կատարեց դեպի մարտական ԱԹՍ-ներ, որոնց հնարավորություններն անհամեմատ ավելի մեծ են: Մենք, իհարկե, չգիտենք՝ արդյոք նախկին ԱԹՍ-ներն ունեն այն բոլոր հնարավորությունները, որոնք ունեն պատերազմներում լայնորեն կիրառվող համանման ամերիկյան, իսրայելական սարքերը: Խոսքը, իհարկե, հետախուզության տարբեր ձևերի, այլ համակարգերի հետ համագործակցության հնարավորությունների (տարատեսակ ինքնաթիռներ, հրետանային համակարգեր և այլն) մասին է: Դժվար թե ադրբեջանական ԱԹՍ-ներն այդքան հստակ ինտեգրված լինեն այդ համակարգերի հետ, սակայն տվյալ դեպքում դա մեծ բան չի փոխում: Այդ ամենն ընդամենը ժամանակի հարց է, մարտական պատրաստության մակարդակի և մոտեցման խնդիր: Այս գործընթացն աշխարհում ունեցել է ավանդական զարգացում: ԱԹՍ-ները նախ կատարել են սովորական հետախուզություն, հետո հետախուզություն են կատարել որոշակի համակարգի մեջ, այսինքն՝ միաժամանակ օգնել են այլ միջոցների: Դրանք կարող են լինել հարվածային որոշակի համալիրներ, կապի, ռադիոպայքարի և այլն: Հետո դրանք անցել են հաջորդ փուլ, հանդիսացել են հարվածային միջոցների մի մասնիկը կամ հենց միջոցը, այսինքն՝ հետախուզահարվածային միջոցը, իսկ ավելի առաջ գնալու համար Ադրբեջանին դեռ շատ վաղ է:

Մարտական ԱԹՍ-ների դեպքում Ադրբեջանը կստանա բավականին հզոր միջոցներ, որոնց դեմ պայքարելը լուրջ խնդիր է: Նույնիսկ թուրքական «Turna» ԱԹՍ-ները բավականին լուրջ միջոցներ են հարվածներ հասցնելու համար: Փորձը ցույց է տալիս, որ այս ԱԹՍ-ներն իրենց հնարավորություններով և տեխնիկական հատկանիշներով շատ նման են թևավոր հրթիռներին (այսուհետև՝ ԹՀ), որոնց դեմ պայքարելը ցանկացած ՀՕՊ-ի համար ամենաբարդ խնդիրներից մեկն է: Վերջին տեղային պատերազմների փորձը ցույց է տվել, որ ԹՀ-ները շատ հզոր հարվածային միջոցներ են, իսկ դրանց դեմ պայքարը շատ բարդ է[14]:

---

[13] Տես **Лунёв А., Ращепкин К.**, «Красная звезда», 02.12.2008, http://www.redstar.ru/2008/12/02_12/1_03.html, հղվել է 19.11.2017 թ.:

[14] Տես **Հովհաննիսյան Ա. Կ.,** Մի քանի հարցեր Ավիացիայից, Երևան, 2009, **Հովհաննիսյան Ա. Կ.** , Օդային գերակայություն, Երևան, 2010:

## Վերջաբան

Ադրբեջանական մարտական ԱԹՍ-ների գործողություններն անմիջապես առաջնագծում մեզ արդեն ծանոթ են. դրանք բավականին վտանգավոր են և դժվար խոցվող թիրախներ: Ադրբեջանն այսօր արդեն կարող է ունենալ 100 և ավելի միավոր մարտական ԱԹՍ-ներ, որոնք իրականում կլինեն օպերատիվ-մարտավարական խորության վրա գործող ԹՀ-ներ: Նույնիսկ թուրքական վերը նշված ԱԹՍ-ները կարող են հարվածներ հասցնել մինչև 50-100 կմ խորության վրա: Կարծում ենք՝ դժվար չէ հաշվել, թե Նախիջևանից կամ Ղազախից 100 կմ-ի դեպքում որտեղ կարելի է հարվածներ հասցնել: Սովորական թռչող հարվածային սարքերին խոցելու համար՝ ԶՀՀ-ները ծախսում են 3-5 հրթիռ, այն էլ հարաբերական բարենպաստ պայմաններում: Նման սարքերին, որոնք թռչում են բավականին ցածր բարձրության վրա և օդային իրադրության բարդացված պայմաններում, խոցելու համար վերգետնյա զենիթային միջոցներին հարկավոր կլինեն առնվազն 5-7 հրթիռ՝ չհաշված այն հանգամանքը, որ սովորաբար նման թռչող սարքերի դեմ պայքարում են միայն նոր սերնդի ՀՕՊ միջոցները, որոնք ունեն ոչ ավելի, քան 8-10 վայրկյան հակազդեցության ժամանակ: Նման միջոցների առկայությունն այսօր չափազանց կարևոր է, մինչդեռ ՀՀ ԶՈւ-ն այդ միջոցներից չունի:

Նկատի ունենալով վերոնշյալը՝ անհապաղ պետք է զարկ տալ համապատասխան մարտական ԱԹՍ-ների զարգացմանը: Ճիշտ կլինի այս փուլում սեփական նախագծերի հետ ձեռք բերել նաև արտասահմանյան մոդելներ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է մտածել բազմաֆունկցիոնալ, համատեղված լեռնային պայմանների համար ավելի հարմար ՀՕՊ-ի մասին: ՀՀ ՀՕՊ համակարգը բավականին զարգացած է տարածաշրջանի մակարդակի համար, սակայն ապագա մարտահրավերների համար հարկավոր է մտածել հիմնականում փոքր և շարժական, հակազդեցության նվազագույն ժամանակ ունեցող համալիրների մասին, առաջին հերթին՝ կործանիչ ինքնաթիռների, արագ արձագանքող ՀՕՊ և ՌԷՊ միջոցների մեկտեղման մասին: Բոլոր այս միջոցառումները պահանջում են խնդրի համակողմանի և խորը վերլուծություն:

Մենք 2010-2012 թթ. բազմիցս անդրադարձել ենք ԱԹՍ-ների

կարևոր դերակատարությանը[15], իսկ 2016 թ. հունվարին նշել էինք, որ Ադրբեջանն անցում է կատարում մարտական ԱԹՍ-ներին, ինչը կարող է լուրջ առավելություն տալ նրան[16]: Այժմ էլ նշում ենք, որ հետագա քայլերը կարող են բերել համակարգային կիրառության, ինչը հրետանու և օդուժի հետ ինտեգրման բարձր մակարդակի շնորհիվ կարող է մեծ առավելություն տալ ադրբեջանական բանակին:

ԱԹՍ-ները շատ հեռանկարային թռչող սարքեր են: ԱԹՍ-ները, ի սկզբանե լինելով թռչող սարքերի մի հասարակ տեսակ, վերաճել են ռազմավարական խնդիրներ կատարող համալիր միջոցների: Ուշադրության արժանի է այն, որ դրանք, շնորհիվ իրենց ոչ մեծ արագության, մարտական մասի փոքր չափերի և այլ բնութագրերի, տեղավորվում են ավանդական մարտավարական օդակի սպառազինությունների չափանիշների մեջ՝ ելնելով տեղեկատվական այն հզոր բազայից, որը տրամադրում են առանց ժամանակային ձգձգման: Շնորհիվ տրամադրված տեղեկատվության, օպերատիվ և ռազմավարական համակարգերի հետ համագործակցության անհրաժեշտության, ինչն ապահովում է մարտի ղեկավարման ճկունություն, անօդաչուները վերաճել են ռազմավարական միջոցների: Ասել է թե՝ այս հասարակ ու պարզ մեքենաները լուծում են բարդ և կարևորագույն խնդիրներ: Առաջիկայում ամերիկյան ավիակիրների ամենահեռահար հետախուզական միջոցները կարող են դառնալ ԱԹՍ-ները, որոնք կգործեն մինչև 1000-1500 կմ հեռավորության վրա:

Ժամանակակից ՕՀՄ-ների զանգվածային կիրառմամբ հենց մարտական գործողությունների սկզբից հնարավոր է հաղթանակ ունենալ: Կիրառության մասսայականությունն աննախադեպ է[17]: Առաջին էշելոնի զորքերն այնքան արագ են շարքից դուրս գալիս, որ երկրորդ էշելոնը կամ պահեստային ուժերը չեն հասցնում միջամտել[18]: Խրամատային ամուր, պասիվ պաշտպանությունը, որը

---

[15] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** Անօդաչու թռչող սարքերի կիրառության հեռանկարները մեր տարածաշրջանում. 24.06.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4892, հղվել է 19.11.2017 թ.:

[16] Տե՛ս Ռազմարվեստ, Հ1. Օդային գերակայություն /**Հովհաննիսյան Ա.,** Երևան, հեղինա-կային հրատարակություն, 2016. էջ 508:

[17] Տես **Захаров** А. Н., Операция “Лис пустыни”: развитие стратегии и оперативного искусства, Военная мысль, 1999, N5, էջ 70:

[18] Տես **Вахрушев В. А.,** Локальные войны и вооруженные конфликты: характер и

կարծրատիպ է դարձել, արդեն չի կարող ապահովել հուսալի պաշտպանություն[19]: Հարձակողական դատողությունը հակամարտության ժամանակ դառնում է գերակայող[20]: Ամբողջ աշխարհն անցնում է հիմնական ստորաբաժանումների փոփոխման: ՕՀՄ-ների, ԹՍ-ների և այլ համակարգերի հագեցվածության արդյունքում հիմնական դարձող բրիգադներն ավելի մեծ հարվածային ու շարժունակության հնարավորություններ ունեն, քան նախկին դիվիզիաները: **Մարտական գործողությունների ծանրության կենտրոնը վաղուց գետնից շարժվում է դեպի երկինք:** Այս պարզ ճշմարտության ընկալումը կարող է հաղթանակներ ու գերակայություն ապահովել ապագայում և հակառակը՝ կորուստներ պատճառել այն չընդունելու դեպքում:

Մենք, որպես կանոն, ուշադրություն ենք դարձնում ցամաքային զինատեսակների և զորատեսակների զարգացմանը, իսկ ԹՍ-ների, ՕՀՄ-ների զարգացումը թերի է կամ լավագույն դեպքում լիովին արտացոլում է ռուսական ՁՈՒ-ի ընդհանուր մոտեցումը: Այսպիսի ուշադրությունն ՕՀՄ-ների նկատմամբ չի կարող լինել բավարար, քանզի այս զինատեսակները կարևոր են, և օրեցօր դրանց դերն ու նշանակությունն ավելի են մեծանում:

Հասկանալու համար նման սարքերի դերն ապագա պատերազմներում՝ անհրաժեշտ է պատկերացնել ապագայի պատերազմների մոդելը: Միգուցե երբեք պատերազմները չվերածվեն ֆանտաստիկ ֆիլմերի: Ամենակատարյալ ռոբոտն անգամ չի կարող փոխարինել մարդուն, քանի որ ոչ մի ռոբոտ ստեղծագործաբար չի կարող մտածել, իսկ դա մարդուն շահեկանորեն տարբերում է ցանկացած մեքենայից: Սակայն հուսալի և արագագործ համակարգերը կարող են մարդուն բավականին օգնել մարտի դաշտում: 5-րդ սերնդի պատերազմները միգուցե չափորոշիչ չդառնան մեզ համար, սակայն դրանց թելադրած կանոններն անտեսելը հանցավոր է: Յուրաքանչյուր դարաշրջանում գերակայող մի զորատեսակ իր նշանակությամբ թելադրում է մարտավարության ձևաչափը: Փոփոխվում է պատերազմի վարման ավանդական պատկերացումը, գալիս են նոր

---

влияние на военное искусство, Военная мысль, 1999, № 4, էջ 28:

[19] Տես **Воробьев И. Н**., Какие войны грозят нам в будущем веке?, Военная мысль, 1997, № 2, էջք 18–24:

[20] Տես **Печуров С. Л.,** Революция в военном деле взгляд с Запада, Военная мысль, 1997, № 4, էջք 73-80:

գաղափարներ ու մոտեցումներ: Ապագա պատերազմները «ցանցահարթակակենտրոն» են լինելու, որտեղ ԱԹՍ-ներն արդեն իսկ չափազանց կարևոր դեր են ստացել: Հարկավոր է ճիշտ հասկանալ դրանց շունչը, սեփական լուծումներ ունենալ և ոչ թե սպասել այդ փոփոխություններին: ԱԹՍ-ները միայն նոր տեսակի ԹՍ-ներ չեն. դրանք գալիք պատերազմներում նոր տեսակի ավիացիա են: Աղրբեջանական բանակի սպառազինության մեջ եղած մեծաթիվ ու տարատեսակ ԹՍ-ներին եթե ավելանան մեծ քանակի ԱԹՍ-ներ, ապա մարտական գործողությունների ժամանակ կարող են ապահովել օդային գերակայություն, ինչն էլ իր հերթին հաղթանակի գրավական է:

ԱԹՍ-ների դեմ պայքարի լավագույն ճանապարհը միասնական ու համակարգային աշխատող ՀՕՊ-ն է, որի գլխավոր դերակատարը կործանիչ ինքնաթիռներն են, իսկ այդ բոլորին լայնորեն ինտեգրված են ՌԷՊ համակարգերը: Մեզ համար այստեղ էական են ՀՕՊ-ՌՕՈ-ների միասնական զորատեսակ դառնալը և կործանիչ ինքնաթիռների ձեռքբերումը, այնուհետև այդ ամենի ինտեգրումը ՌԷՊ համակարգերի և թվային կառավարման համակարգի հետ:

**Բանալի բառեր** - *ԱԹՍ, ԹՍ, ՕՀ, ՀՕՊ, ՌԷՊ, ՁՈ, օդուժ, ինքնաթիռ, կործանիչ, օդապարիկ, պատերազմ, հաղթանակ, հարձակում, պաշտպանություն, բանակ, հրաման*

**АРЦРУН ОВАННИСЯН** - РОЛЬ И ПРИМЕНЕНИЕ БПЛА В СОВРЕМЕННЫХ ВОЙНАХ

Беспилотные летательные аппараты очень перспективны. Являясь изначально обычным видом летательных аппаратов, сегодня БПЛА переросли в комплексные средства решения стратегических задач. Победа становится возможной благодаря массовому применению современных СВН с самого начала боевых действий. Массовость применения беспрецедентна. Центр тяжести боевых действий уже давно переместился с земли в воздух. Сегодня войны 5-ого поколения уже утверждены. Меняется традиционное представление о ведении войн, привносятся новые идеи и подходы. Будущие войны будут сетеплатформоцентричными, где БПЛА будут играть крайне важную роль. Необходимо понимать их природу и иметь собственные решения, вместо того чтобы просто ждать этих пере-

мен. БПЛА не являются сугубо новым видом летательных аппаратов: это новый вид авиации в будущих войнах. На вооружении азербайджанской армии есть большое количество летательных аппаратов. Если к ним прибавиться еще и большое количество БПЛА, то во время военных действий, это может обеспечить воздушное превосходство, что в свою очередь является гарантией победы. Самым эффективным средством борьбы против БПЛА является единая и систематизированная ПВО (ударной силой которой являются самолеты-истребители) с широкой интеграцией РЭБ систем. В этом ключе существенным для нас являются трансформация ПВО-ВВС в единый род войск и приобретение самолетов-истребителей, после чего интеграция всего этого с системами РЭБ и цифрового командования.

***Ключевые слова:*** *БПЛА, ЛА, ПВО, РЭБ, ВС, военная авиация, самолет, истребитель, воздушная атака, дирижабль, война, победа, наступление, оборона, армия, приказ*

**ARTSRUN HOVHANNISYAN** - THE ROLE OF UAVS IN MODERN WARFARE

UAVs are very prospective AVs. Initially being just an ordinary type of AVs, UAVs have grown up to complex weapons for performing strategic tasks. Due to massive implementation of modern MAAs it has become possible to gain a victory right from the beginning of combat operations. The massiveness of performance is unprecedented. The gravity center of the combat operations has been transferred from ground to air long time ago. Today the wars of 5th generation have already been insured. The traditional notions of running a war are being replaced by new ideas and approaches. Future wars are going to be network platform-centric with a very important role given to UAVs. It is vital to properly understand their nature and to have own solutions instead of waiting for changes. UAVs are not just new type of AVs, they are new type of aviation in upcoming wars. In case of increase in numbers of UAVs in Azerbaijani army's large and diverse armament, there can arise air superiority during combat operations, which can lead to a victory. The most effective way for fighting against UAVs is the united and systematic operating AAD, where the main role is given to fighter jets with the wide integration of RES systems. Here the essential part for us is the creation of joint unit of AAD-MAF, acquisition of fighter jets and afterwards integration of all of this with RES and digital management systems.

***Key words:*** *UAV, AV, anti-aircraft warfare, armed forces, military aircraft, fighter aircraft, air attack, airship, war, victory, offensive, defense, army, command*

# ՉԺՈՒԳԵ ԼՅԱՆԻ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ

*Սերոբ Բազիկյան, ՀՀ ՊՆ*

Մարդկության պատմությունն անքակտելիորեն կապված է ռազմական հակամարտությունների հետ: Միմյանց դեմ առանձին հանրույթների պայքարը հանուն ռեսուրսների և իշխանության էապես ազդել է հասարակության զարգացման վրա: Եվ միանգամայն օրինաչափ է, որ ռազմական գիտությունը դեռ մարդկության ձևավորման արշալույսին սկսել է զարգանալ իր ամենատարբեր դրսևորումներով և ուղղություններով. դա և՛ տեխնիկական ոլորտն էր, և՛ համաստոդասության կառուցվածքի ձևավորումը, և՛ բանակի արդյունավետ մատակարարման և համալրման մշակումը, և՛ ռազմական փիլիսոփայությունը:

Ռազմական փիլիսոփայության հիշատակումն ամենից առաջ ասոցացվում է հեռավորարևելյան մտածողների և նրանց աշխատությունների հետ: Առաջին հերթին դրանք չինական դասական յոթ աշխատություններն են՝ «Պատերազմի արվեստը» (մ.թ.ա. 4-րդ դար, հեղինակ՝ Սուն-Ցզի), «Պատվարժան Ուի պատերազմի կանոնները» կամ պարզապես «Ու Ցզի» (մ.թ.ա. 4-րդ դար), «Վեց գաղտնի ուսմունք» (մ.թ.ա. 11-րդ դար), «Սիմի մեթոդները» (մ.թ.ա. 4-րդ դար), «Վեյ Լյաոցզի» (մոտ մ.թ.ա. 4-3-րդ դարեր), «Հուան Շի-Գունի երեք ռազմավարությունները» և «Տայ Ցզունի հարցերը և Լի Վեյ Գունի պատասխանները» (մ.թ.ա. 9-10-րդ դարեր):

Հին աշխարհի ռազմական գիտության չին մտածողների շարքում իր ուրույն տեղն ունի Եռաթագավորության ժամանակաշրջանի[1] (մ.թ. 3-րդ դար) Շու պետության վարչապետ, զորավար Չժուգե Լյանը: Նա, որպես կանոն, համարվում է իր ժամանակի ամենամեծ և հմուտ զորավարը, ինչպես և գիտնականն ու գյուտարարը: Չինական մշակույթում այս զորավարի և քաղաքական գործչի անունն արդեն վաղուց դարձել է եզակի մտածողության, իմաստության և պետական խորամանկության խորհրդանիշ: Ի դեմս նրա՝ չին ժողո-

[1] Եռաթագավորության ժամանակաշրջանն ընդգրկում է 220-280 թթ., երբ Չինաստանը Հան հարստության անկումից հետո բաժանվում է միմյան դեմ պայքարող երեք թագավորությունների՝ Վեյ, Ու և Շու:

վուրդն ամբողջացրել է կատարյալ զորավարի կերպարը. մարդ, որ ոչ միայն հմուտ է ու քաջ, այլ նաև ընդունակ է ենթարկել ռազմական գործը չինական մշակույթին բնորոշ բարոյական սկզբունքներին և հոգևոր նրբինությանը:

Չժուգե Լյանը ծնվել է 181 թ. հուլիսի 23-ին Լանյա շրջանի Յանդու բնակավայրում պետական պաշտոնյայի ընտանիքում: Ազգությամբ հան է: Նրա երկրորդ անունն է եղել Կուն Մին, որ նշանակել է «խելացի, լուսավորյալ», իսկ մականունները՝ Ուլուն՝ «քնած վիշապ», և Ֆուլուն՝ «սպասող իմաստուն, ճգնավոր»[2]:

Չժուգե Լյանն ընտանիքում երեք եղբայրներից երկրորդն էր: Երեք տարեկան հասակում մահանում է նրա մայրը, ութ տարեկանում՝ հայրը: Նրա և փոքր եղբոր խնամակալությունն ստանձնում է հորեղբայրը՝ Չժուգե Սյուանը: Ինը տարեկանում Չժուգե Լյանը դեռ չէր կարողանում խոսել: Ընտանիքը կարիքի մեջ էր, այդ իսկ պատճառով նա ստիպված էր հովվություն անել հարևան բլրի վրա: Բլրի հարևանությամբ դաոսական տաճար կար: Տաճարի վանականներից մեկը նկատում է տղային, ժեստերով խոսքի բռնվում հետը և հասկանում, որ Չժուգե Լյանը խելամիտ է և ուշիմ, և որոշում է զբաղվել վերջինիս համրության խնդրով: Շուտով Չժուգե Լյանը սկսում է խոսել և ընտանիքի համաձայնությամբ դառնում է վանականի աշակերտը՝ վերջինիս մոտ ուսանելով աստղագիտություն, աշխարհագրություն և ռազմական կարգապահություն[3]:

195 թ., երբ զորավար Ցաո Ցաոն գրավում է Շանդունը, Չժուգե Լյանի ընտանիքը փախչում և ապաստան է գտնում հարավում, որտեղ և շուտով մահանում է նրա հորեղբայրը: Չժուգե Լյանը կրտսեր եղբոր հետ բնակություն է հաստատում Լունչժուն լեռան վրա: Չժուգե Լյանի կենսագիրների վկայությամբ՝ 197 թ.-ից նրա հեղինակությունն սկսում է մեծանալ, և ժամանակի ընթացքում նա ստանում է «քնած վիշապ» մականունը: Նա ձեռք է բերում ազդեցիկ ընկերներ, շուտով ամուսնանում նրանցից մեկի դստեր հետ՝ այդ կերպ բարեկամական կապ հաստատելով Ցզին նահանգի նահանգապետ, զորավար Լյու Բյաոյի հետ[4]:

---

[2] Տես **Шульга Д., Мерзликин А.,** «Вертоград полководца» Чжугэ Ляна на стыке дисциплин, Новосибирск, Омега-принт, 2016, էջ 15:

[3] Տես նույն տեղում, էջք 15-16:

[4] Տես նույն տեղում, էջ 16:

207 թվականին անվանի զորավար Լյու Բեյը դիմում է Չժուգե Լյանի ընկերներին՝ խնդրելով հանդիպում կազմակերպել վերջինիս հետ: Լյու Բեյը երեք անգամ անձամբ գնում է Չժուգե Լյանի հետ հանդիպման, որից առաջին երկու անգամը Չժուգե Լյանը պարզապես դուրս չի գալիս զորավարի հետ հանդիպելու և միայն երրորդ անգամ է միանում նրան: Նրանց հանդիպման արդյունքը լինում է այն, որ շուտով Չժուգե Լյանը ձեռնամուխ է լինում գործողությունների նոր ծրագրի կազմմանը (Լունչժունյան ծրագիր)՝ կապված նախկին Հան կայսրության տարածքում ձևավորված պետությունների միջև ծայր առած տարաձայնությունների կտրուկ սրացման հետ: Չժուգե Լյանը հասկանում էր, որ հյուսիսային Վեյ թագավորության հետ պատերազմն անխուսափելի է, և շատ քիչ ժամանակ է մնացել պատրաստվելու համար, ինչը պետք էր օգտագործել խելամտորեն: Ժողովրդի սերը Լյու Բեյի հանդեպ հեշտացնում է կազմակերպված զորահավաքը:

208 թ. Չժուգե Լյանը մեկնում է Ու թագավորություն և դաշինք կնքում վերջինիս արքա Սուն Ցյունի հետ: Չժուգե Լյանը վերադառնում է Ու թագավորության դեսպանորդ Լու Սուի հետ՝ կազմակերպելու գալիք պատերազմը: 208-209 թթ. տեղի ունեցած Չիբիի (Կարմիր պատերի) ճակատամարտում տարած հաղթանակից հետո Չժուգե Լյանին սկսում են անվանել «կառավարչի գլխավոր ռազմական խորհրդական», նրան են վստահում Լինլին, Գուիյան և Չանշա շրջանների կառավարումը և պաշտպանությունը, ինչպես նաև ռազմական կարիքների համար հարկերի հավաքումը, բանակի ապահովումը զինվորներով, հանդերձանքով և պարենով[5]:

221 թվականին, այն բանից հետո, երբ Ցաո Ցաոյի որդի Ցաո Պեյը բռնազավթում է Հան թագավորության կայսերական գահը, Լյու Բեյը հռչակում է իրեն կայսր և հիմնում Ծու (Հան) թագավորությունը: Չժուգե Լյանը նշանակվում է թագավորության կանցլեր-վարչապետ, ինչպես նաև ստանձնում կայսերական քարտուղարությունը:

222 թ. Լյու Բեյը պարտություն է կրում Սյատինի ճակատամարտում և արդեն մահվան մահճում նշանակում Չժուգե Լյանին իր որդու՝ Լյու Ծանի խնամակալ-գահապահը և պատվիրում որդուն իր մահից հետո լսել Չժուգե Լյանին ինչպես սեփական հորը: Հոր մահից հետո (223 թ.) գահ բարձրանալով՝ Լյու Ծանը Չժուգե Լյանին

[5] Տես նույն տեղում, էջք 16-17:

շնորհում է «Ջինվորական սյանհոու» (բառացի՝ «գավառի, մարզի տիրակալ») տիտղոսը, նշանակում Ի նահանգի նահանգապետ և փաստացի նրան հանձնում բոլոր պետական գործերը:

Շու թագավորությունում իր գահապահման ժամանակաշրջանում Չժուգե Լյանը որպես գերագույն նպատակ է հռչակում Հան հարստության վերականգնումը. Շու թագավորությունում համարում էին, որ Հան հարստությունը բռնազավթվել էր Ցաո Ցաոյի կողմից: Չժուգե Լյանը հասկանում էր, որ Վեյ թագավորության վրա հարձակում գործելու համար նախ պետք էր ուժեղացնել իշխանությունը Շուում: Նա անհանգստանում էր, որ հարավային ցեղերը կարող էին ապստամբել այն պահին, երբ նա իր բանակը կշարժեր դեպի հյուսիս՝ Վեյ թագավորության դեմ: Այդ իսկ պատճառով նա վճռում է նախ հնազանդեցնել հարավային ցեղերը: 225 թ. Չժուգե Լյանը վերակնքում է դաշինքը Շու և Ու թագավորությունների միջև և կարողանում միավորել հարավային նանմանյան ցեղերը Շու թագավորությանը՝ այդ կերպ երաշխավորելով հյուսիսային արշավանքն արտաքին միջամտություններից[6]: Նա նաև հարավից ռեսուրսներ է ստանում և սկսում պատրաստվել Վեյ թագավորության դեմ ռազմական հարձակվողական արշավանքներին:

Չժուգե Լյանը 228-234 թթ. Վեյ թագավորության դեմ կազմակերպում է 5 արշավանք, որոնցից չորսն ավարտվում են անհաջողությամբ: Առաջին արշավանքի ժամանակ Չժուգե Լյանը կարողանում է Վեյ թագավորության երիտասարդ զորավար Ցզյան Վեյին համոզել՝ անցնել իր կողմը: 234 թ.-ին՝ Վեյ թագավորության դեմ հերթական արշավանքի ժամանակ, Չժուգե Լյանը հիվանդանում է և շուտով մահանում 54 տարեկան հասակում:

Չժուգե Լյանի իրական կենսագրությունը, ռազմական ուղին և ժողովրդական ասքերը նրա մասին սերտորեն միահյուսված են: Այդ ասքերի մի մասը տեղ է գտել 14-րդ դարի չինացի հայտնի գրող Լո Գուանչժունի «Եռաթագավորություն» վեպում, որտեղ հանրահռչակվել են Չժուգե Լյանի իմաստությունը և խորամանկությունը: Վեպում նկարագրված են ռազմական դժվարին իրավիճակից դուրս գալու՝ Չժուգե Լյանի կողմից մտածված բազմաթիվ մոդելներ, որոնք բազմիցս ընդօրինակվել են հետագա սերունդների կողմից: Ստորև կներկայացնենք դրանցից ուշագրավները:

[6] Տես նույն տեղում, էջ 18:

***Ծղոտով նավակների կիրառումը՝ նետերի ֆեռքբերման համար:*** Կարմիր պատերի ճակատամարտից առաջ Չժուգե Լյանն այցելում է Ուի ռազմական ճամբար՝ օգնելու Չժոու Յույին նախապատրաստական աշխատանքներում: Չժոու Յույն ի դեմս Չժուգե Լյանի վտանգ է տեսնում Ուի համար, ինչպես նաև նախանձում նրա տաղանդին: Այդ իսկ պատճառով հանձնարարում է վերջինիս տասնօրյա ժամկետում 100000 նետ հայթայթել, այլապես նրան մահապատժի կենթարկեն: Ի պատասխան՝ Չժուգե Լյանը հանձն է առնում կատարել առաջին հայացքից անիրականանալի թվացող այդ առաջադրանքն ընդամենը երեք օրում: Նա խնդրում է իրեն տրամադրել 20 նավակ՝ յուրաքանչյուրում մի քանի զինվոր և բազմաթիվ ծղոտե խրտվիլակներ: Լուսադեմին, օգտվելով այն հանգամանքից, որ մառախլապատ է լինում, Չժուգե Լյանն ուղղում է իր նավակները թշնամու՝ վեյական ռազմաճամբարի կողմը՝ հրամայելով իր զինվորներին թմբկահարել և բարձրագոչ հրամաններ արձակել՝ ստեղծելով թվացյալ հարձակման պատկեր: Վեյի զինվորները, լսելով այդ ձայները, սկսում են նետահարել Չժուգե Լյանի նավակները: Մշուշի պատճառով նավակները տեսանելի չէին, և զինվորները նետերը պարզապես արձակում էին թմբուկների ձայնի ուղղությամբ: Երբ ծղոտե խրտվիլակներն արդեն լի էին վեյական նետերով, Չժուգե Լյանը հրաման է տալիս նավարկել հետ: Խրտվիլակների մեջ մխրճված նետերի քանակը մոտ 100000 էր, ինչպես և պահանջվել էր[7]: Հետդարձի ճանապարհին Չժուգե Լյանի և զորական Լու Սուի միջև տեղի է ունենում հետևյալ երկխոսությունը.

«-Հիմա դուք հասկացա՞ք: Մի՞թե վատ է ձեռք բերել հարյուր հազար նետ՝ առանց նվազագույն ջանք անգամ գործադրելու: Վաղը մենք կարող ենք այս նետերով խփել մեր թշնամուն:

-Դուք իմաստուն եք, - բացականչեց Լու Սուն: - Բայց ես չեմ հասկանում՝ դուք որտեղի՞ց իմացաք, որ այսօր մշուշ կլինի:

-Լինել զորահրամանատար և չհասկանալ երկնային նախանշանները, չհասկանալ ցամաքի օրենքները, ոչինչ չգիտենալ բնության մութ և լուսավոր ուժերի մասին, ընդունակ չլինել ռազմական նախագծեր կազմել, չիմանալ՝ երբ ու ինչ եղանակներով մարտ վարել, չկարողանալ գնահատել զորքի ուժը, նշանակում է լինել ապա-

---

[7] Տես **Ло Гуаньчжун**, Троецарствие, М., 1954, т. 1, էջք 569-575:

շնորհ,- պատասխանեց Չժուգե Լյանը…»[8]:

***Բաց դարպասներ:*** Հյուսիսային առաջին արշավանքի ժամանակ Ցզետին կոչվող փոքրիկ բնակավայրի կորստի պատճառով ձախողվել էր Չանան քաղաքը գրավելու Չժուգե Լյանի փորձը: Չժուգե Լյանը փոքրաթիվ զորքով տեղակայվել էր Սիչեն քաղաքում, իսկ նրա հիմնական ուժերն այդ ժամանակ գտնվում էին մեկ այլ վայրում: Շուտով լուր է ստացվում, որ վեյական զորավար Սիմա Ին իր 150000-անոց զորքով շարժվում է դեպի Սիչեն[9]: Չժուգե Լյանի՝ քաղաքում տեղաբաշխված ռազմական ճամբարը վտանգված էր: Նրա ենթակայության տակ այդ պահին գրեթե զորք չկար, ընդամենը 5000 զինվոր, որոնցից կեսը հիվանդ էր, մյուս կեսը զբաղված էր պարենի տեղափոխմամբ: Զորավարը որոշում է փոքրաթիվ կայազորի ուժերով միանգամայն յուրօրինակ կերպով պաշտպանել քաղաքը թշնամական զորքից:

Չժուգե Լյանն անմիջապես հրամայում է հավաքել բոլոր դրոշները, իսկ զինվորներին՝ թաքնվել և պահպանել քար լռություն. հրամանը խախտողներն անմիջապես դատապարտվելու էին մահվան: Այնուհետև նա կարգադրում է բացել ամրոցի դարպասները, դարպասների երկու կողմում կանգնեցնում է սովորական բնակիչների հագուստի տակ ծպտված երկու տասնյակ զինվոր, որոնց հրամայում է ավլել փողոցները և վեյական զորքի հայտնվելու ժամանակ որևէ տեղ չհեռանալ: Չժուգե Լյանն ինքը «հագնում է կարապի բմբուլից կարված իր թիկնոցը, գլուխը կապում է սպիտակ մետաքսով, ձեռքն է վերցնում ցիտրան[10] և երկու ծառաների ուղեկցությամբ բարձրանում է աշտարակի վրա: Նստելով բազրիքների մոտ՝ սկսում է անուշաբույր խունկ ծխել և ցին նվագել»[11]: Երբ Վեյ թագավորության զորավար Սիմա Ին իր զորքով մոտենում է քաղաքին, տեսնում է Չժուգե Լյանին, որ «խնկարկելով անհոգ ծիծաղում էր և նվագում: Նրա ձախ կողմում մի տղա էր կանգնած՝ ձեռքին թանկարժեք թուրը, աջ կողմում՝ մեկ այլ տղա՝ եղնիկի պոչից պատրաստված ճանճասպանով: Ամրոցի դարպասների մոտ երկու տասնյակ բնակիչներ

---

[8] Նույն տեղում, էջք 574-575:

[9] Տես **Ло Гуаньчжун**, Троецарствие, М., 1954, т. 2, էջք 447-448:

[10] Երաժշտական գործիք Չինաստանում:

[11] **Ло Гуаньчжун**, Троецарствие, М., 1954, т. 2, с. 448.

ջրում և ավլում էին փողոցները: Շրջակայքում այլևս ոչ ոք չկար»[12]: Այս տեսնելով՝ Սիմա Ին մտածում է, որ խորամանկ զորավար Չժուգե Լյանը ծուղակ է լարել իր զորքի դեմ, և հրամայում է նահանջել: Ավելի ուշ Չժուգե Լյանը բացատրում է իր զինվորականներին, որ իր այս խորամանկ մարտավարությունը գործեց միայն շնորհիվ Սիմա Ի բնածին կասկածամտության, որն անձամբ բազմիցս ականատես էր եղել, թե ինչպես է կարողանում ինքը հաջող ծուղակներ լարել սեփական թշնամիների դեմ: Բացի այդ, իրեն ճանաչում էին որպես մի զորավարի, որ չափազանց զգույշ է և հազվադեպ է դիմում ռիսկի: Փաստորեն, Չժուգե Լյանի հնարամտությունն ու բծախնդրությունը և Սիմա Ի կասկածամտությունը տպավորություն էին ստեղծել, որ Սիչեն քաղաք-ամրոցում ծուղակ է լարված, և այդ կերպ պաշտպանել էին այն թշնամական զորքերից:

Անկասկած, սա թշնամու դատողությունների ռացիոնալ մոդելավորման ամենանշանավոր օրինակներից մեկն է, երբ բացառապես համեստ, խորհրդանշական գործողությունների միջոցով գրանցվել է հաղթանակ:

Հարկ է նշել, որ ռազմական գիտությունը պետությունների, պետությունների դաշինքների կամ սոցիալական խմբերի կողմից պատերազմների նախապատրաստման և վարման գիտելիքների համակարգ է: Ռազմական գիտությունը ուսումնասիրում է պատերազմի օրենքները և այն վարելու միջոցները: Ռազմական գիտությունը, մեկտեղված իրական փորձի հետ, որոշում է զինված պայքար վարելու գոյություն ունեցող և ստեղծվելիք միջոցների և մեթոդների կատարելագործման ուղիները[13]: Չժուգե Լյանի՝ որպես զորահրամանատարի և ռազմական գործի տեսաբանի նորարարության մասին վկայում են այն մարտերն ու ճակատամարտերը, որոնց մշակմանը նա մասնակցել է:

Նշվածների շարքում առանձնանում է 208-209 թթ. տեղի ունեցած Կարմիր քարաժայռի ճակատամարտը, որում Ու և Շու թագավորությունների միացյալ զորքերը հաղթանակ են տանում Վեյ թագավորության կայսերական զորքերի նկատմամբ: Ցաո Ցաոյի կողմից թույլ տված մի շարք ռազմավարական սխալները, ինչպես նաև Ու և Շու թագավորությունների զորահրամանատարների խորամանկ

[12] Նույն տեղում:

[13] Տես Большая советская энциклопедия, т. 3, М., 1970, էջ 92:

հնարքների արդյունավետությունը դաշնակից զորքերի հաղթանակի պատճառ դարձան: Ցաո Ցաոյի՝ առավելապես հյուսիսաբնակներից կազմված զորքերը՝ ինչպես զորավարները, այնպես էլ զինվորները, ծովային մարտերի փորձ չունեին, ավելին՝ տառապում էին ծովային հիվանդությամբ: Արևադարձային հիվանդությունները, որոնց հանդեպ հարավաբնակներն արդեն իմունիտետ ունեին, հյուծում և թուլացնում էին հյուսիսաբնակներին: Բացի այդ, Ցաո Ցաոյի զորքերը հոգնել էին իրենց համար անսովոր շրջակա միջավայրից և արշավանքի երկարատևությունից[14]: Ցաո Ցաոն մտադիր էր հաղթանակ տանել թշնամու հանդեպ իր զորքերի քանակական զգալի գերակշռության շնորհիվ: Նրա առաջին մարտավարական սխալը եղավ այն, որ նա հետևակի և հեծելազորի մեծ մասը տեղակայեց նավերի վրա, որոնք դաշնակիցների կողմից իր բանակ ներդրված գործակալների խորհրդով միմյանց հետ շղթայված էին՝ իբրև թե նավերի ճոճը նվազեցնելու համար: Հենց այդ հանգամանքից օգտվելով էլ՝ դաշնակիցները դեպի թշնամու ռազմանավերն են ուղղում վառելիքով բեռնված իրենց նավերը և այրում դրանք՝ հրի մատնելով Ցաո Ցաոյի նավատորմը: Միաժամանակ դաշնակից զորքերը ցամաքային հարձակում են իրականացնում Ցաո Ցաոյի մերձափնյա ռազմական ճամբարների վրա՝ ստիպելով թշնամու զորքերին բռնել նահանջի ճանապարհը, որտեղ նրանք ընկնում են իրենց դեմ լարված բազմաթիվ ծուղակների մեջ:

Պարտվելով այս մարտում՝ Ցաո Ցաոն կորցրեց հնարավորությունն իր իշխանությունը տարածելու ողջ երկրով մեկ և պատմության մեջ մնալու որպես Ցին Շիհուանդիից հետո երկրորդ մարդը, որ միավորել էր ողջ երկիրը մեկ պետության մեջ:

Ուշագրավ են նաև Չժուգե Լյանի ձեռնարկած հյուսիսային հինգ արշավանքները, թեև դրանցից միայն մեկը հաջողությամբ ավարտվեց: Շու թագավորությունն իր տարածքով և ռեսուրսներով ամենափոքրն էր երեք թագավորությունների մեջ, սակայն չնայած այդ հանգամանքին՝ վարում էր ագրեսիվ արտաքին քաղաքականություն: Ինչ վերաբերում է Վեյ թագավորությանը, վերջինիս ռեսուրսային բազան թույլ էր տալիս ձևավորել առավել մեծաթիվ զորքեր: Վեյ թագավորության բանակը գրեթե մշտապես քանակական գերազանցու-

[14] Տես **Шульга Д., Мерзликин А.,** «Вертоград полководца» Чжугэ Ляна на стыке дисциплин, Новосибирск, Омега-принт, 2016, էջ 36:

թյուն ուներ հակառակորդ բանակների նկատմամբ: Եվ միայն Չժուգե Լյանի հնարամտության շնորհիվ Վեյ թագավորությունը, չնայած իր զորքերի քանական գերազանցությանը, գրեթե միշտ ստիպված էր լինում պաշտպանվել: Սիմա Ին՝ Վեյ թագավորության լավագույն զորահրամանատարներից մեկը, անգամ Չժուգե Լյանին պարտության մատնելուց հետո երբևէ չէր կարողանում զարգացնել իր հաջողությունը: Փոխարենը նա աշխատում էր ստեղծել պատային իրավիճակ և սպասել այն պահին, երբ Չժուգե Լյանի մոտ կավարտվեին զենքի և պարենի պաշարները, և նա կնահանջեր առանց մարտի:

Չժուգե Լյանի հյուսիսային արշավանքները սովորաբար անհաջողությամբ էին ավարտվում հենց պարենամթերքի անբավարարության և ոչ թե մարտական պարտությունների պատճառով: Նշյալ հինգ արշավանքների ընթացքում Չժուգե Լյանի միակ ձեռքբերումը եղան Ուդու և Ինպին շրջանները, ինչպես նաև Ծուում ապաստան գտած Վեյ թագավորության հպատակները: Սակայն հարկ է նշել, որ չնայած ռազմական ձախողումներին՝ Չժուգե Լյանի զորքի կորուստները երբեք չեն գերազանցել զորքի ընդհանուր թվաքանակի (առավելագույնը եղել է 200000 մարդ) 5 տոկոսը, իսկ ռազմական կարիքների համար կատարված ծախսերը եղել են խիստ չափավոր[15]:

Չժուգե Լյանի կենսագրության և նրա կամ նրա մասնակցությամբ պլանավորած մարտերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ ոչ ստանդարտ իրավիճակներում նա ի վիճակի էր ընդունել արտասովոր որոշումներ: Մարտի դաշտում հակառակորդները, քանակապես նրան մի քանի անգամ գերազանցելով հանդերձ, շատ հաճախ անհաջողություն էին կրում, իսկ եթե անգամ հաղթանակ էին տանում, վախենում էին շարունակել և զարգացնել իրենց հաջողությունը:

Հաղթանակներ տանելիս Չժուգե Լյանը մշտապես աննշան կորուստներ էր ունենում: Նրա կողմից ռազմական տնտեսության հմուտ պլանավորումը նվազագույնի էր հասցնում բանակի ծախսերը, ինչը բարենպաստ տնտեսական իրավիճակ էր ստեղծում խաղաղ բնակչության շրջանում և մեծացնում էր այլ թագավորություններից մարդկանց ներհոսքը դեպի Ծու: Չժուգե Լյանը հոգեբանական պատերազմների մեթոդների կիրառման կողմնակից էր: Ահռելի ուշադրություն էր դարձնում կաղրային խնդրին, շրջապատում էր իրեն

[15] Տես **Шульга Д., Мерзликин А.,** նշվ. աշխ., էջ 37:

տաղանդավոր անձանցով, որոնք նրա մահից հետո անգամ շարունակում էին առաջնորդվել իր խորհուրդներով: Խաղաղ ժամանակ Չժուգե Լյանը պատրաստվում էր նոր պատերազմներին, պարտաճանաչորեն կատարում իր վրա դրված վարչական գործառույթները:

Հարկ է նշել, որ Չժուգե Լյանը հրաշալի ռազմավար էր: Նա չափազանց մեծ կարևորություն էր տալիս զորահրամանատարի անձնական որակներին և կարծում էր, որ զորապետերը սխալվելու իրավունք չունեն: Չժուգե Լյանը համակողմանիորեն քննության է առնում զորապետի կերպարը, հատկանիշները և գործունեությունն իր «Զորապետի գանձարանը» աշխատությունում[16]: Այն բաղկացած է 50 գլուխներից, որոնք ընդգրկում են յոթ ոլորտ՝ զորապետի բարոյաէթիկական պատրաստության հարցեր, զորապետի և միապետի փոխհարաբերություններ, կադրերի ընտրության և պատրաստման հարցեր, զորապետի համար անհրաժեշտ հատկանիշներ, զինվորական կարգապահության հարցեր, ռազմական ռազմավարության վերաբերյալ գործնական խորհուրդներ և շրջապատող ժողովուրդների համառոտ բնութագրեր:

Աշխատության կեսից ավելին նվիրված է զորապետի պատրաստման հարցերին և նրան անհրաժեշտ հատկանիշների նկարագրմանը, քառորդ հատվածը՝ բանակի պատրաստման հարցերին, մյուս քառորդը՝ պատերազմելուն առնչվող մնացյալ հարցերին: Ի տարբերություն իր նախորդների՝ Չժուգե Լյանն իր աշխատության մեջ կենտրոնանում է ռազմական գիտության, մասնավորապես՝ զորապետի պատրաստման և նրան անհրաժեշտ համալիր գիտելիքների վրա: Այդ աշխատության հիման վրա ներկայացնենք Չժուգե Լյանի վերաբերմունքը պատերազմին, պետության մեջ զորապետի դերակատարությանը, զորապետին ներկայացվող պահանջները և այլն:

***Վերաբերմունքը պատերազմին***: Չժուգե Լյանը չափազանց զգուշավորությամբ էր վերաբերվում պատերազմին: Նրա կարծիքով՝ ուժեղ բանակը և հմուտ զորապետն անհրաժեշտ են որպես զսպող գործոն, իսկ զինված ընդհարումը ներկայացվում է որպես անցանկալի միջոց. պետք է կարողանալ հաղթել կամ չպարտվել առանց պատերազմի: Չժուգե Լյանն իրեն նախորդած ռազմական տեսա-

[16] Տես **Чжугэ Лян,** Чжугэ Лян биншу [诸葛亮。诸葛亮宾书。北京: 北京 燕山出版社; Военная книга Чжугэ Ляна]. Пекин. Яньшань чубаньшэ, 2008:

բանների նման կարծում էր, որ պատերազմը պետք է լինի սրընթաց և երկար չտևի. «Հենց որ պատերազմը սկսում էր ձգվել, պարենի մատակարարումները դադարում էին, սովորական ժողովուրդը հայտնվում էր չքավորության մեջ և չարանում էր իր տիրակալի դեմ» (գլուխ 38)[17]:

***Զորապետի դերը պետության մեջ:*** Չժուգե Լյանի հայացքները զորապետի և տիրակալի փոխհարաբերությունների վերաբերյալ նման են Սուն Ցզիի մոտեցումներին, այն է՝ իր նշանակումից հետո զորապետը չպետք է կատարի տիրակալի հրամանները: Չժուգե Լյանը համեմատում է բանակը, որտեղ զորապետը լիակատար իշխանություն ունի, թևավոր վագրի հետ, և հակառակը՝ այն զորապետին, որ իշխանություն չունի, նույնացնում է ջրային վիշապի հետ, որը հայտնվել է գետում և երազում է օվկիանոսներ նվաճել[18]:

***Պահանջներ զորապետին:*** Չժուգե Լյանը, հիմք ընդունելով այն փաստը, որ մարդիկ տարբեր են և զանազան տաղանդների տեր, զորապետերին դասակարգում է ըստ նրանց հատկանիշների: Ըստ նրա՝ կա զորապետերի ինը հիմնական տեսակ՝ մարդասեր կամ մարդկային, արդար, պատշաճավոր, իմաստուն, վստահություն ներշնչող, հետևակի գեներալ, հեծելազորի հրամանատար, քաջարի և մեծ, որոնցից յուրաքանչյուրն իր տեղն ու կիրառությունն ունի պատերազմի ժամանակ: Նման մոտեցումը տարբերում է Չժուգե Լյանին իր նախորդներից, որոնք բավականին «սեղմ» բնութագիր էին տալիս «կատարյալ զորապետի» համար և ըստ անձնային հատկանիշների չէին տարբերակում: Չժուգե Լյանը կարծում էր, որ կատարյալ է այն զորապետը, որն իր մեջ համախմբում է մարդկային ամենատարբեր հոգեբանական տեսակների լավագույն հատկանիշները՝ անհրաժեշտ ռազմական գործին: «Մեծ զորապետ է նա, որ աշխատում է վերցնել այլ տաղանդավոր անձանց լավագույն հատկանիշները, հաշվի է նստում այլոց կարծիքի հետ, մեծահոգի է, բայց միևնույն ժամանակ՝ աներկբա իր որոշումներում, գործում է սրընթաց, բայց միևնույն ժամանակ՝ մտածված»[19] (գլուխ 4):

Չժուգե Լյանը ռազմարվեստում «հոգեբանական մոտեցման»

---

[17] Նույն տեղում, էջ 26: Տես նաև **Шульга Д., Мерзликин А.,** «Вертоград полководца» Чжугэ Ляна на стыке дисциплин, Новосибирск, Омега-принт, 2016, էջ 113:

[18] Տես **Шульга Д., Мерзликин А.,** նշվ. աշխ., էջ 93:

[19] Նույն տեղում, էջ 95:

կողմնակից էր: Նա կարծում էր, որ զորապետը պետք է լավ հոգեբան լինի: Նրա աշխատության մեջ նկարագրված են ինչպես այն իդեալները, որոնց պետք է ձգտի զորապետը, այնպես էլ այն տիպիկ սխալները, որ նա կարող է թույլ տալ խաղաղ ժամանակ: Չժուգե Լյանին նախորդած ռազմական տեսաբանները մարդկային բնույթին առնչվող այսօրինակ հարցերին չէին անդրադարձել, ուշադրություն չէին դարձրել այնպիսի հատկանիշների վրա, ինչպիսիք են հպարտությունը և ժլատությունը: Մինչդեռ Չժուգե Լյանը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր մարդու մեջ և՛ բարին կա, և՛ չարը, և կախված իրավիճակից՝ կարող է երևան գալ կա՛մ մեկը, կա՛մ մյուսը:

Չժուգե Լյանի աշխատության մեջ, ի տարբերություն ռազմարվեստին նվիրված չինական ավելի վաղ աշխատությունների, ներկայացվում են կատարյալ զորապետին անհրաժեշտ հատկանիշները, որոնք հնարավոր է զարգացնել ուսուցման արդյունքում: Դրանք են **հինգ տաղանդները**[20] (թշնամական զորքերի զորաշարժերի վերլուծության հնարավորություն, ճիշտ հարձակվելու և նահանջելու կարողություն, պետության բոլոր ուժեղ և թույլ կողմերի իմացություն, տարվա եղանակների փոփոխությանը զուգահեռ մարտական գործողությունների վարման կարողություն՝ ուշադրություն դարձնելով մարդկային գործոնի վրա, գետերի, լճերի և լեռնանցքների անցման դժվարությունների իմացություն), **չորս պահանջները**[21] (կարողությամբ և խորամանկությամբ հաղթելու ընդունակություն, հեռատեսություն-խորաթափանցություն, դժվարին իրավիճակներում հանգստության պահպանման կարողություն, մարտիկներին համախմբելու ընդունակություն) և **հինգ առաքինությունները**[22] («բարոյական մաքրությունն ընդունակ է ոգեշնչել սովորական ժողովրդին», «որդիական ակնածանքը և հարգանքն ավագների նկատմամբ ընդունակ են դարերով փառավորել մարդուն», «հավատարմությունը երդմանը կօգնի ձեռք բերել բազմաթիվ ընկերներ», «ապագան տեսնելու կարողությունը թույլ կտա հաշվի նստել մարդկանց հետ», «քո հետևից տանելու կարողությունը կօգնի հասնել նշանավոր արդյունքների»):

---

[20] Տես **Чжугэ Лян**, Чжугэ Лян биншу [诸葛亮。诸葛亮宾书。北京: 北京 燕山出版社; Военная книга Чжугэ Ляна]. Пекин. Яньшань чубаньшэ, 2008. էջ 109: Տես նաև **Шульга Д., Мерзликин А.,** նշվ. աշխ., էջ 97:

[21] Տես նույն տեղում:

[22] Տես նույն տեղում, էջ 114: Տես նաև **Шульга Д., Мерзликин А.,** նշվ. աշխ., էջ 98:

Չժուգե Լյանն իր աշխատությունում առաջ է քաշում 15 կանոն[23], որոնց հետևելու դեպքում զորապետը պարտություն չի կրի:

1. Նախքան ծրագրեր կազմելն անհրաժեշտ է իմանալ հակառակորդի մտադրությունների մասին:
2. Պետք է մանրակրկտորեն ուսումնասիրել թշնամուն և ամեն ճանապարհով փորձել տեղեկություններ ձեռք բերել նրա մասին:
3. Միշտ լինել արի և չհանձնվել անգամ թշնամու քանակական գերազանցության պարագայում:
4. Լինել անկաշառ և արդարամիտ:
5. Պատժել արդարորեն:
6. Աննկուն տանել պարտությունը:
7. Անհրաժեշտ է լինել մեծահոգի և հանդուրժող ենթակաների հանդեպ:
8. Միշտ պահել խոստումները և ավարտին հասցնել խոստացված գործերը:
9. Հարգալից վերաբերվել և պահպանել վարվեցողության բոլոր կանոնները իմաստուն մարդկանց հետ շփվելիս:
10. Հստակ տարբերել բարին և չարը, չհավատալ ստոր մարդկանց խաբեություններին:
11. Հետևել ինքդ քեզ և չկատարել գործեր, որոնք հակասում են բարոյական նորմերին:
12. Լինել մարդկային, լավ վերաբերվել ենթակաների հետ:
13. Կատարել ծառայողական բոլոր պարտականությունները և պատրաստ լինել զոհաբերել սեփական կյանքը հանուն պետության:
14. Խիստ հետևել սեփական պարտականություններին, իմանալ չափը և չգերազանցել լիազորությունները:
15. Մշտապես վերանայել ծրագրերը, ճգտել իմանալ թշնամական իրադրության մասին:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ կասկածից վեր է, որ Չժուգե Լյանի այս աշխատությունն իր ժամանակաշրջանի հռչակավոր փաստաթղթերից մեկն է թե՛ իր փաստացի, թե՛ խորքային հայեցակարգային բովանդակությամբ: Մեծ ռազմավարի անունն իր

[23] Տես *Чжугэ Лян.* նշվ. աշխ., էջ 74: Տես նաև **Шульга Д., Мерзликин А.,** նշվ. աշխ., էջ 105:

նշանակալի տեղն ունի չինական հասարակական գիտակցության, մշակույթի և պատմության, իսկ նրա «Զորապետի գանձարան» աշխատությունը՝ ռազմարվեստի տեսության մեջ: Եվ չնայած անցած տասնութ դարերի ընթացքում պատերազմները փոխել են իրենց բնույթը, իսկ ռազմական գիտությունը՝ շեշտակի զարգացում ապրել, չինացի մեծանուն զորավարի ռազմարվեստն առ այսօր շարունակում է ուսանելի լինել և ոգեշնչման աղբյուր մնալ մերօրյա զորականների համար:

**Բանալի բառեր** - *Չժուգե Լյան, չինական ռազմարվեստ, պատերազմ, ռազմավար, ռազմական գիտություն*

**СЕРОБ БАЗИКЯН -** ВОЕННОЕ ИСКУССТВО ЧЖУГЭ ЛЯНА

В статье представлены жизнь и деятельность великого китайского полководца, государственного деятеля, военного теоретика и стратега Чжугэ Ляна (3-ий век н.э.). Путем анализа боевого пути Чжугэ Ляна, показано новаторство боев, проведенных или спланированных полководцем. На основе военно-философского трактата «Вертоград полководца» представлены основные положения военного искусства и военной теории Чжугэ Ляна.

***Ключевые слова:*** *Чжугэ Лян, военное искусство Древнего Китая, война, стратег, военная наука*

**SEROB BAZIKYAN -** MILITARY ART OF ZHUGE LIANG

The current article reflects on the life and deeds of one of the greatest Chinese commanders, statesmen and strategist Zhuge Liang (III century). Analyzing the military career of Zhuge Liang, the author shows the novelty in battles organized or accompanied by the commander. Based on the military-philosophical tractatus “Jiang Yuan” (“The Vineyard of General”), the author presents the main points of Zhuge Liang’s military art and warfare theory.

***Key words:*** *Zhuge Liang, Ancient Chinese Military Art, strategist, Military science*

# ՊԲ 23524 ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2016 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

*Էդգար Էլբակյան, ԵՊՀ*

2016 թ. ապրիլի 2-ի լուսաբացին՝ ժամը 02:30-03:00-ից սկսած, Ադրբեջանը բացահայտ լայնածավալ հարձակում ձեռնարկեց Արցախի ուղղությամբ՝ մեծաքանակ ուժերով հարձակվելով հատկապես 6-րդ պաշտպանական շրջանի (Մատաղիս) և 9-րդ պաշտպանական շրջանի (Զաբրայիլ) առանձին մարտական դիրքերի ուղղությամբ: Առավոտյան արդեն թշնամին կարողացել էր մխրճվել նշված պաշտպանական շրջանների մի քանի բարձրադիր մարտական դիրքեր: Ճակատի առանձին հատվածներում Ադրբեջանը կիրառեց նաև օդուժ: Ապրիլի 2-ի առավոտյան թշնամու կողմից հրետակոծության ենթարկվեցին Պաշտպանության բանակի մերձճակատային զորամասերից որոշների մշտական տեղակայման վայրերը: Հայկական ուժերի խնդիրն էր նախ՝ կանխել թշնամու հետագա առաջխաղացման փորձերը, ապա՝ հետ բերել կորցրած տեղամասերը:

9-րդ ՊՇ ուղղությամբ թշնամու առաջխաղացումը կասեցնելու և գիշերը հակառակորդի մխրճված մարտական դիրքերը վերականգնելու համար վերադաս հրամանատարության կարգադրությամբ մարտական կիրառման շրջան են դուրս բերվում նաև Վարանդայում (Ֆիզուլի) տեղակայված ՊԲ 23524 զորամասի զրահատանկային գումարտակի ուժերը՝ 2 տանկային և 1 մոտոհրաձգային վաշտի ուժերով[1]: Այդ զորամասում տագնապի ազդանշանը ստացվում է ապրիլի 2-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում: Ազդանշան ստանալուն պես անձնակազմը բերվում է բարձր մարտական պատրաստականության աստիճանի՝ դուրս գալով համապատասխան նախորոշված շրջաններ[2]: Զորամասի հրամանատար փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանին և վերջինիս՝ նյութատեխնիկական ապահովման գծով տեղակալ մայոր Արթուր Հովսեփյանին հաջողվում է թշնամու կողմից զորամասի տարածքի հրետակոծության ներքո անձնա-

[1] Տես **Աղաբաբյան Ա.,** Հարցազրույց ՊԲ 23524 զորամասի հրամանատար փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանի հետ, Վարանդա, 2016 թ, հոկտեմբերի 8:

[2] Տես նույն տեղում:

կազմն անկորուստ դուրս հանել հավաքականից և ստորաբաժանումների կազմով երթ կատարել դեպի 9-րդ ՊԾ համապատասխան հատված: ՊԲ 23524 զորամասի՝ ջաբրայիլյան հատված ուղարկվող անձնակազմի մարտական խնդիրն էր կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը: Առաջնագծի այս հատվածի պաշտպանությունը ղեկավարում էին ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Միքայել Արզումանյանը և 18-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Արարատ Մելքումյանը: Հասնելով մարտական գործողությունների շրջան՝ Մ. Ջհանգիրյանի ղեկավարած 2-րդ տանկային վաշտը զբաղեցնում է կրակային բնագծեր հակառակորդի կողմից մխրճված 112-118 մարտական դիրքերի թիկունքային մասում՝ խնդիր ունենալով կասեցնել հակառակորդի հետագա առաջխաղացումը: Մարտական նույն խնդիրն ուներ նաև 2-րդ տանկային վաշտին քիչ ավելի ուշ միացած 1-ին տանկային վաշտը՝ Ա. Հովսեփյանի գլխավորությամբ[3]:

Մխրճված լինելով նշված մարտական դիրքեր՝ թշնամին, ըստ երևույթին, նպատակ ուներ տեղում ամրանալուց զատ զարգացնել հարձակումը դեպի հայկական ուժերի պաշտպանության խորք: Հայկական տանկային ստորաբաժանումների անձնակազմը հավաստանշում է հակառակորդի ինժեներական տեխնիկան, որով հաղթահարում էին արգելափակոցների համակարգերը, հակատանկային փոսեր[4], ինչպես նաև կենդանի ուժի շարժը մխրճված դիրքերի տարածքում[5]: Մայոր Ա. Հովսեփյանին, վերջինիս անմիջական ղեկավարությամբ նաև 1-ին տանկային վաշտի հրամանատար կապիտան Արման Ադամյանին, 2-րդ տանկային վաշտի 3-րդ տանկային դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Ռոման Ադամյանին հաջողվում է իրականացնել թշնամու կենդանի ուժի չեզոքացում, իսկ այնուհետև՝ մեր ուժերի տեսադաշտում հայտնված աղրբեջանական

---

[3] Տես 2016 թ. ապրիլի 2-5-ը ընկած ժամանակահատվածում հայրենիքի սահմանների պաշտպանության գործում դրսևորած բացառիկ խիզախության և անձնական արիության, կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը կատարելիս ցուցաբերած անձնվիրության համար ՀՀ պետական պարգևներով պարգևատրման արժանի զինծառայողների անվանացուցակ, 2016 թ. մայիսի 10, https://www.facebook.com/arcrun/posts/1036756516359956, հղվել է 04.04.2017 թ.:

[4] Տես **Աղաբաբյան Ա.**, Հարցազրույց փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանի հետ...:

[5] Տես **Գևորգյան Մ.**, Հարցազրույց ՊԲ 23524 զորամասի հրամանատարի տեղակալ մայոր Արթուր Հովսեփյանի հետ, Վարանդա, 2016 թ, հոկտեմբերի 8:

զինտեխնիկայի խոցում:

Մայոր Ա. Հովսեփյանը վկայում է. «Սկզբից բոլոր դիրքերում անընդհատ հետևակի շարժեր կային: Մենք միանգամից սկսեցինք իրանց ուղղությամբ կրակել: Որոշ ժամանակ այլևս չէին էրևում, մի մասը նահանջել էր, մի մասը երևի ոչնչացել էր: Հետո հայտնվեցին իրանց տանկերը. միանգամից 5 հատ տանկ: Էդ հատվածում մենք դեռևս 1 տանկ էինք (անձնակազմը՝ Ա. Հովսեփյան, Ա. Ադամյան, Ռ. Ադամյան – Է. Է.): Էդ հինգ տանկից մեկին մեր կրակած արկը կպավ: Հենց կպավ, ես հետ քաշվեցի: Տանկի շարժիչն անջատեցի ու իջա, սկսեցի խրամատից դիտարկել դրանց գործողությունները: Տեսա, որ կրակում էին մեր ուղղությամբ, բայց իրանց կրակած արկերը թռչում էին մեր գլխավերևով, նպատակակետին չէին հասնում: Դասակի հրամանատար Ադամյանին ասեցի՝ «Շուտ շարժիչը գործարկի, դուրս արի բաց տարածք»՝ հուշելով, որ գերաթռիչքի ժամանակ հնարավոր չի հաջորդ արկը դիպուկ կպնի: Երկու հատ տանկ թողեցին մարտի դաշտում, երեքը հետ քաշվեցին, թաքնվեցին»[6]: Մարտական գործողություններից շուրջ երկու շաբաթ անց[7] նշված անձնակազմի բոլոր երեք անդամները պարգևատրվեցին ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով՝ հակառակորդի 2 միավոր տանկ վնասազերծելու և ոչնչացելու, ինչպես նաև կենդանի ուժի զգալի կորուստներ պատճառելու համար[8]:

Նույն օրվա կեսօրին զրահատանկային գումարտակը ստանում է նոր խնդիր՝ կասեցնել գրավված դիրքերից ձախ թևանցման միջոցով դեպի հայկական 119 մարտական դիրք թշնամու նոր առաջխաղացման փորձը[9]: Հրամանատարության կողմից թշնամու՝ խորքում առաջխաղացող ստորաբաժանումների վիճակը և քանակությունը գնահատելուց, ստեղծված մարտավարական իրադրությունը վերլուծելուց հետո որոշում է կայացվում ժամը 14:00-ի սահմաններում իրականացնել հակագրոհ և վերականգնել առաջնագիծը: Հակա-

---

[6] Նույն տեղում:

[7] Տես Նախագահ Սերժ Սարգսյանը Արցախում պետական բարձր պարգևներով պարգևատրել է հայրենիքի զինվորներին, 2016 թ. ապրիլի 19, http://www.president.am/hy/press-release/item/2016/04/19/President-Serzh-Sargsyan-working-visit-to-Artsakh/, հղվել է 10.04.2017 թ.:

[8] Տես 2016 թ. ապրիլի 2-5-ը ընկած ժամանակահատվածում..., նույն տեղում:

[9] Տես **Աղաբաբյան Ա.,** Հարցազրույց փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանի հետ...:

գրոհը ենթադրում էր «300» կոչվող բազայի դիտակետի ուղղությամբ առաջանալով՝ վերականգնել Վարազաթմբից[10] 800 մ հյուսիս-արևմուտք ընկած 117 և 115 մարտական դիրքերը՝ այդպիսով թևերից օղակի մեջ առնելով բարձունքը՝ ստիպելով հակառակորդին նահանջել առավոտյան գրաված հայկական դիրքերից[11]:

Մարտական խնդրի կատարման համար մայոր Ա. Հովսեփյանին տրամադրված 4 տանկերի թվում էր նաև 321 կողային համարով Տ-72 տանկը՝ հրամանատար՝ ավագ լեյտենանտ Բենիամին Եղոյան, նշանառու-օպերատոր՝ շարքային Վլադիմիր Ալիխանյան, մեխանիկ-վարորդ՝ շարքային Տիգրան Աբգարյան: Զորամասի լավագույններից մեկը համարվող[12] տանկային այս անձնակազմն առանձնակի նախանձախնդրություն ու պատրաստակամություն էր դրսևորում առաջադրված խնդրի կատարման գործում մասնակցություն ունենալու համար: Հենց նրանց է Ա. Հովսեփյանը խնդիր առաջադրում հակագրոհելու և վերականգնելու 117 մարտական դիրքը[13]: Հաշվի առնելով գրավված դիրքում ադրբեջանական հետևակի հնարավոր դիմադրությունը՝ Ա. Հովսեփյանը հրահանգում է մարտական գործողությունը կատարելիս դիրք չմտնել: Մոտենալով մարտական դիրքին մինչև 50 մ՝ տանկի անձնակազմը փայլուն կատարում է մարտական խնդիրը, ավելին՝ ներխուժում մարտական դիրքի տարածք, տանկով տապալում առավոտյան այդտեղ ամրացված ադրբեջանական դրոշը և հրամանատարությանը զեկուցում խնդրի կատարման մասին: Մ. Ջհանգիրյանն այսպես է նկարագրում մարտի այդ դրվագը. «Կորցրած էդ դիրքը մտնելու ժամանակ իրենց անձնակազմը միանգամից թռավ կարծես մի ակնթարթում, մտավ մարտական դիրք՝ անմիջա-

---

[10] Վարազաթումբը գտնվում է ծովից 271.1 մ բարձրության վրա: Խորհրդային Գլխավոր շտաբի տեղագրական քարտեզում նշված է «Ляля-Иляги» անվամբ, որը տառադարձված է ադրբեջաներեն «Lalə İlahi» տեղանունից: Հայտնի է նաև «Լալաթափա» անվամբ: Տեղադիրքը քարտեզի վրա տե՛ս https://goo.gl/3oGNJQ:

[11] Այստեղ տեղին է նշել, որ 1990-ական թվականների պատերազմի ժամանակ բարձունքն ազատագրվել էր նույն եղանակով ու տրամաբանությամբ՝ խուսափելով հետևակի դիմահար գրոհից:

[12] Տես **Աղաբաբյան Ա.,** Հարցազրույց փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանի հետ..., տե՛ս նաև Նվիրյալները. Բենիամին Եղոյան, Տիգրան Աբգարյան, Վլադիմիր Ալիխանյան, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», 2017, https://www.youtube.com/watch?v=20cJi0fhImw, հղվել է 26.04.2017 թ.:

[13] Տես **Գևորգյան Մ.**, Հարցազրույց մայոր Արթուր Հովսեփյանի հետ...:

պես էդ կորցրած դիրքը, որտեղ ադրբեջանցիները դրել էին իրենց դրոշը: Միանգամից բարձրացան, իրենց թրթուրների տակ գցին էդ դրոշը, և [տանկը] շրջապտույտ կատարեց, ու էդտեղից արձակեց ևս մեկ արկ, և կապի դուրս եկավ, որ «հրամանատա՛ր, խնդիրը կատարել եմ»»[14]: Վերադառնալով ելման դիրք՝ տանկի անձնակազմն արժանանում է հրամանատարության գովեստի և խրախուսանքի խոսքերին: Միևնույն ժամանակ Ա. Հովսեփյանը տանկի անձնակազմին՝ հրամանատար Բ. Եղոյանի գլխավորությամբ, բացատրում է, որ հակահետևակային ռռնակի նետման հեռավորության տիրույթում հայտնվելով խրամատին մոտենալը վտանգավոր էր և կարող էր անդառնալի հետևանքների հանգեցնել, եթե խրամատում հայկական տանկը դիմադրության հանդիպեր[15]:

Զրահատանկային զորամասի անձնակազմերի կողմից մարտական խնդիրների հաջող կատարումից հետո հրամանատար Մ. Ջհանգիրյանի կողմից խնդիր է բարձրացվում փաստացիորեն թշնամուց ազատված դիրքերը զբաղեցնելու համար հարձակումն իրականացնել հետևակի հետ համատեղ, որպեսզի հնարավոր լինի ապահովել դրանք թշնամական նոր ոտնձգությունից[16]: Ցավոք, նշված մարտական դիրքերի պաշտպանության համար պատասխանատու ՊԲ 59703 զորամասի (Զաբրայիլ) կողմից նշված գործողությունը չի իրականացվում: Կարելի է ենթադրել, որ այս հարցում որոշակի բացասական դեր է խաղացել նաև լուսաբացին Վարազաթմբի վրա տվյալ զորամասի հինգ բարձրաստիճան սպաների, այդ թվում՝ զորամասի հրամանատարի՝ մարտական հերթապահության գծով տեղակալ փոխգնդապետ Ալեքսան Առաքելյանի զոհվելու պարագան, ինչի պատճառով էական վնաս հասցվեց զորամասի գործունեության կազմակերպմանը: Ապրիլի 2-ի երեկոյան՝ ժամը 22:00 սահմաններում, հաշվի առնելով, որ զինտեխնիկան գիշերային պայմաններում առաջնագծում պահելը վտանգավոր է, այն հետ քաշվեց երկրորդ գծի խրամատներ[17]:

Հաջորդ օրը՝ ապրիլի 3-ին, մարտերը շարունակվում են նույն տրամաբանությամբ: Թշնամին կրկին փորձում է ամրանալ մխրճ-

---

[14] Նվիրյալները...:

[15] Տե՛ս նույն տեղում:

[16] Տես **Աղաբաբյան Ա.,** Հարցազրույց փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանի հետ...:

[17] Տես նույն տեղում:

ված դիրքերում և հնարավորության դեպքում հարձակումը զարգացնել դեպի մեր պաշտպանության խորքը: Մեր զրահատանկային անձնակազմերը զբաղեցրած բնագծերում հարմարեցված տեղերից պարբերաբար կրակային խոցման են ենթարկում թշնամուն, հետ քաշվում, 50-100 մ խուսավարում, շարունակում խոցել[18]: Օբյեկտիվ դժվարություն էր հարուցում այն հանգամանքը, որ տվյալ զրահատանկային անձնակազմերը մարտական գործողություն էին իրականացնում անձանոթ, ինչպես նաև ինժեներական առումով բացարձակապես չկահավորված տեղամասում՝ ստիպված լինելով գիշերային ինժեներական աշխատանքների միջոցով ինչ-որ չափով հարմարեցնել տեղանքը տանկերի գործողությունների համար[19]:

Ցավոք, ապրիլի 3-ին՝ մոտավորապես ժամը 16:00 հատվածում[20], մարտական խնդրի կատարման ժամանակ թշնամու կողմից հայտնաբերվեց և խոցվեց վերոնշյալ 321 տանկը: Խոցման պահից վայրկյաններ առաջ «Բարս մեդիա» վավերագրական կինոստուդիայի կողմից կատարված տեսաձայնագրության[21] մեջ երևում է, թե ինչպես է տանկը բարձրանում նախօրոք կահավորված բարենպաստ հողաթմբի վրա, իրականացնում թշնամու զինտեխնիկայի խոցում և հետ շարժվում դեպի պահեստային կրակային դիրք: Այդ ընթացքում թշնամու հակատանկային ուժերին հաջողվում է «Սպայկ» տեսակի հակատանկային կառավարվող հրթիռով խոցել հայկական տանկը[22]: Կյանքին սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը կատարելիս հերոսաբար ընկան ավագ լեյտենանտ

[18] Տես նույն տեղում:

[19] Տես նույն տեղում:

[20] Տես Նվիրյալները...:

[21] Տե՛ս Bars Media Documentary Film Studio, Tanks reportage, 2016 թ. ապրիլի 4, https://www.youtube.com/watch?v=5ieaO3aqTQk, հղվել է 19.04.2017 թ., ինչպես նաև Bars Media Documentary Film Studio, War 2016 Compilation, 01:14-01:27, 2016 թ. ապրիլի 21, https://www.youtube.com/watch?v=dgOMUQ0dMq0, հղվել է 19.04.2017 թ.:

[22] Հայկական տանկի դեմ կիրառված հրթիռի տվյալ մոդելը թույլ է տալիս կրակոցն արձակելուց հետո տեսողական սարքի միջոցով հետևել վերջինիս ընթացքին և ըստ անհրաժեշտության՝ (վերա)ուղղորդել այն (տե՛ս Electro-Optically Guided Weapons, Defense Update issue 2-07 (May-June 2007), http://defense-update.com/features/du-2-07/helicopters_EO_missiles.htm, հղվել է 19.04.2017 թ.): Ըստ ամենայնի՝ ադրբեջանցի զինծառայողին հաջողվել է հավաստանշել հայկական տանկը հողաթմբի վրա եղած ժամանակ, արձակել հրթիռը, որից հետո արդեն հընթացս այն կառավարելով՝ հողաթմբի վրայով «իջեցնել» հետ շարժվող տանկի վրա:

Բենիամին Եղոյանը, շարքային Վլադիմիր Ալիխանյանը, շարքային Տիգրան Աբգարյանը…

Ռուսաստանյան «Դաշնային լրատվական գործակալության» լրագրող Կիրիլ Ռոմանովսկին (Օտտեր), որ 2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին գործուղվել է Արցախ, եղել մարտական գործողությունների շրջանում, այսպես է նկարագրում կատարվածը. «Տանկը խոցվեց ապրիլի 3-ին… Կանխելով առաջնագծում՝ Հաղրութից հարավ, հարձակումը … տանկիստները հայկական պաշտպանության երկրորդ գծում թմբի վրայից «լացացնում էին» ադրբեջանցիներին: Հակառակորդը պատասխանեց ՀՏԿՀ-ով (հակատանկային կառավարվող հրթիռ – Է. Է.): Ըստ երևույթին՝ նկատելով կրակոցը՝ անձնակազմը փորձեց սահել և թաքնվել թմբից ներքև… Չհասցրեց: Տանկը ցիրուցան եղավ դաշտով մեկ… Սև մետաղի մի քանի տոննա մխրճվեց հանդիպակաց լանջի մեջ՝ հրանոթի փողը դարձնելով հակառակորդի ուղղությամբ՝ ասես չհաշտվելով տեղի ունեցածի հետ… Տանկը չէր ցանկանում հանձնվել նաև անձնակազմի կորստից հետո… Տանկիստները խիզախաբար էին կռվել: Դա նկատելի է տանկի զբաղեցրած վերջին դիրքից, բազմաթիվ պարկուճներից և թմբի վրա մնացած հետքերից: Դիրքը պարբերաբար փոփոխվում էր, տանկը ելնում էր թմբի վրա, կրակում, սահում հետ: Բազմաթիվ են թրթուռի հետքերը, որոնք բոլորը հանգում են մի տեղում, որ դարձավ այդ մեքենայի համար վերջինը… Իսկ տանկիստներից չմնաց ֆիզիկական ոչ մի հետք, ասես անէացել էին օդում՝ հառնելով բլուրների, դաշտերի, իրան-արցախյան սահմանի և Արաքսի դեղնաջրերի վրա… Հավերժ փա՛ռք տղաներին»[23]:

Ամփոփելով 2016 թ. ապրիլյան պատերազմում ՊԲ 23524 զորամասի դերակատարությունը՝ պետք է նշել, որ ընդհանուր առմամբ զորամասի՝ մարտական կիրառման շրջան դուրս բերված ստորա-

[23] Լրագրողի խոսքերը հատվածավար քաղված և թարգմանված են ապրիլի 8-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում նրա կատարած գրառումից (**Kirill Romanovskiy,** “Башня армянского танка…”, 8.04.2016, https://www.facebook.com/photo.php?fbid=1303655129649617&set=a.492809640734174.129317.100000154284713&type=3&permPage=1, հղվել է 19.04.2017 թ.), ինչպես նաև ապրիլի 9-ին «Դաշնային լրատվական գործակալությունում» տպված հոդվածից (**Оттер К.,** Время собирать танки. Нагорный Карабах – что это было, 09.04.2016, https://riafan.ru/515358-vremya-sobirat-tanki-nagornyi-karabah-chto-eto-bylo, հղվել է 19.04.2017 թ.):

բաժանումներին հաջողվել է կատարել իր առջև դրված մարտական խնդիրները՝ կանխել թշնամու կենդանի ուժի և զինտեխնիկայի հետագա բացազատումն ու առաջխաղացումը դեպի 9-րդ ՊԾ պաշտպանության խորք: Մարտական գործողությունների ընթացքում զորամասն ունեցավ 1 միավոր տեխնիկայի և երեք զինծառայողի կորուստ: Թշնամու կողմից ևս մեկ տանկ խոցվել էր[24] դեռ Վարանդայից երթ կատարելու ժամանակ, վիրավորվել էին տանկի հրամանատար Ռազմիկ Զաքարյանը և նշանառու-օպերատոր Անդրանիկ Աթալյանը: Հետագայում Ռազմիկը շարունակեց ծառայությունը, իսկ Անդրանիկն ստացած վիրավորման հետևանքով զորացրվեց: Ըստ զորամասի հրամանատարի բանավոր վկայության՝ ապրիլի 2-3-ը զրահատանկային անձնակազմերն ընդհանուր հաշվարկով ոչնչացրել են թշնամու 8 միավոր զրահատեխնիկա և ինժեներասակրավորական տեխնիկա[25]: Ըստ ականատեսների, այդ թվում՝ Մ. Ջհանգիրյանի, մայոր Միքայել Մովսիսյանի հուշերի՝ 321 տանկն ապրիլի 2-3-ին գումարային հաշվով խոցել է թշնամու 4 միավոր զրահատեխնիկա՝ ենթադրաբար 3 տանկ և 1 ՀՄՄ[26]: Հիշեցնենք, որ ըստ պաշտոնական պարգևատրագրի՝ ապրիլի 2-ին թշնամու ևս 2 միավոր տանկ էր խոցել Ա. Հովսեփյանի գլխավորած անձնակազմը:

ՊԲ 23524 զորամասի զոհված 3 զինծառայողները հետմահու պարգևատրվել են ՀՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, զորամասի ևս 4 զինծառայող՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

**Բանալի բառեր** - *Ապրիլյան պատերազմ, Պաշտպանության բանակ*

**ЭДГАР ЭЛБАКЯН** - УЧАСТИЕ ВОЙСКОВОЙ ЧАСТИ 23524 АО В АПРЕЛЬСКОЙ ВОЙНЕ 2016 Г.

В статье впервые изучается вовлечение одной из армянских войсковых частей в армяно-азербайджанской апрельской эскалации 2016 г. Посредством полевых работ и глубинных интервью автор представляет участие дан-

[24] Տանկը հետագայում վերանորոգվել և վերադարձվել է զորամաս:

[25] Տես **Աղաբաբյան Ա.,** Հարցազրույց փոխգնդապետ Մարտին Ջհանգիրյանի հետ...:

[26] Տես նույն տեղում, տե՛ս նաև Նվիրյալները...:

ной войсковой части как в макро-уровне (в контексте общей организации оборонительного района), так и в мезо- и микроуровнях (внутренняя самоорганизации войсковой части и частный вклад экипажей в боевых действиях).

***Ключевые слова:*** *Апрельская война, Армия Обороны Арцаха*

**EDGAR ELBAKYAN** - COMBAT ROLE OF DEFENSE ARMY'S MILITARY UNIT 23524 IN APRIL 2016 WAR

The article analyzes involvement of one of the Armenian military units in the Armenian-Azerbaijani military engagements in April, 2016. Through fieldwork and in-depth interviews the author elucidates the macro- and meso-levels of the military unit's engagement in the April war.

***Key words:*** *April War, Artsakh's Defence Army*

# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՉՈՐՐՈՐԴ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԻՆ

*Վլադիմիր Պողոսյան, ԵՊՀ*

2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը՝ ժ. 03:00-ի սահմաններում, սկսվեց հայ-ադրբեջանական պատերազմի նոր փուլը՝ ապրիլյան պատերազմը: Հայրենիքի մերօրյա պաշտպանները սառնասրտորեն դիմակայեցին մինչև ատամները զինված հակառակորդին: Ժամկետային զինծառայողներն իրենց հմտավարժ սպաների հրամանատարությամբ արիաբար կանգնեցին մինչև վերջ և հանդես բերեցին հերոսության անկրկնելի օրինակներ: Մարտական գործողություններն առավել թեժ էին ռազմաճակատի վերածված սահմանագծի հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններում: Ամենայն հավանականությամբ հակառակորդը նաև մտադրված էր հրադադարի գծի հյուսիսային և հարավային ուղղություններում ակտիվ մարտական գործողությունների արդյունքում տարրալուծել կենտրոնական պաշտպանական ուղղության ռազմական ուժերը, ինչը, սակայն, չհաջողվեց:

Ապրիլյան մարտական գործողությունների ոչ պակաս կարևոր, սակայն այդքան էլ չլուսաբանված գործողությունները տեղի ունեցան հենց Ակնայի (Աղդամի) ուղղությամբ[1]: Հատկապես մեծ վտանգ էր ներկայացնում կենտրոնական հատվածում կուտակված թշնամական զորախումբը, որն ըստ մարտական պլանի՝ պետք է աշխատեր մարտական գործողությունների միայն երկրորդ օրվանից հետո[2]: Այս ամենն ապացուցվեց նաև ապրիլի 2-ի առավոտյան 9-րդ ՊԾ N մարտական դիրքի մատույցներում խոցված թշնամական

[1] Տես Ադրբեջանական բլից-կրիգի տապալումը. քառօրյա պատերազմն՝ ինֆոգրաֆիկաներով, «Երկիր Մեդիա», 18.04.2016, https://www.youtube.com/watch?v=100fLnys_X4, հղվել է 01.02.2017 թ.:

[2] Տես **Հովհաննիսյան Ա.**, Ապրիլյան պատերազմ. համառոտ ակնարկ, *«ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության հեռանկարումներն ու արդի մարտահրավերները», միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու*, Երևան, 2016, էջ 243:

մարտական ուղղաթիռի օդաչուների մոտ առկա փաստաթղթերով[3]:




Ենթադրվում է, որ հակառակորդը որպես առաջնային նպատակ խնդիր է ունեցել դիրքային առավելության հասնելու և իր հիմնական ուժերով անցնելու պաշտպանության բնագիծը, հասնելու և գրավելու Ակնան ու նրա մոտակա կարևոր նշանակության բարձունքները (մասնավորապես՝ Ուխտասարը): Կարծում ենք, որ այս խնդրի հաջող իրականացումից հետո միայն հակառակորդը կարող էր զարգացնել հարձակում Ասկերան-Ստեփանակերտ ուղղությամբ:

Հակառակորդի կողմից ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը՝ ժամը 03:00-ի սահմաններում, սկսվեցին հրետակոծվել ՊԲ չորրորդ պաշտպանական շրջանի պաշտպանական բնագծի մարտակարգերը: Պաշտպանական շրջանի ստորաբաժանումների ղեկավարումը պատշաճ

[3] Տես նույն տեղում: Տե՛ս նաև ՊԲ հակաօդայինների կողմից խոցված աղրբեջանական ՍԽ-24 ուղղաթիռը (Տեսանյութ, ֆոտո), ԼՂՀ ՊԲ պաշտոնական կայք, 02.04.2016, http://nkrmil.am/news/view/192, հղվել է 03.11.2017 թ.:

մակարդակով կազմակերպելու, հակառակորդի կողմից սպասվող հարձակողական գործողություններին պատրաստ լինելու, նրան համարժեք պատասխան տալու նպատակով ղեկավարման մարմիններն անցան մարտական աշխատանքային ռեժիմի: Պաշտպանական շրջանի ուժերը, բերվելով լրիվ մարտական պատրաստականության աստիճանի, ապրիլի 2-ի երկրորդ կեսին անցան պաշտպանության: Պետք է նշել, որ նշված ժամանակահատվածում պաշտպանական ուժերը մարտակարգեր են զբաղեցրել հակառակորդի ինտենսիվ, չդադարող հրետակոծության պայմաններում: Ըստ էության, Պաշտպանության բանակի կենտրոնական և արևելյան պաշտպանական բնագծի ուղղությամբ հակառակորդն ապրիլի 2-4-ի երկրորդ կեսն ընկած ժամանակահատվածում իրականացրեց հարձակողական գործողությունների նախապատրաստման աշխատանքներ: Անօդաչու թռչող սարքերի միջոցով հակառակորդն իրականացրեց առաջնագծի, պաշտպանության մարտակարգի մյուս տարրերի անընդհատ, ինտենսիվ հետախուզում:

Հատկապես ուշագրավ է, որ ապրիլի 2-ից սկսած՝ ադրբեջանական զինված ուժերի զորամիավորումներն սկսում են նոր կուտակումներ ու վերախմբավորումներ իրականացնել և ըստ որոշ տվյալների՝ մարտադաշտ են բերվում հրետանային երեք բրիգադներ և այլ հրետանային ու համազորային ուժեր[4]: Չորրորդ պաշտպանական շրջանի պաշտպանության բնագծի ուղղությամբ նկատվում է նաև տանկային ստորաբաժանումների կայուն շարժ, որոնք ամբողջ օրը խուսավարում և նոր կրակային դիրքեր էին զբաղեցնում, որը մարտավարական հնարամտության մաս էր կազմում և նպատակ ուներ խուճապ առաջացնել հայկական առաջնագծի պաշտպանության ուժերի մոտ: Կարելի է փաստել, որ ճակատի կենտրոնական ուղղությամբ կուտակումներն իրենց գագաթնակետին հասան ապրիլի 4-ին: Այդ ընթացքում հակառակորդն անընդհատ համալրում էր իրականացնում՝ ճակատ մոտեցնելով լրացուցիչ ուժեր:

Ապրիլի 4-ի երեկոյան՝ ժամը 17:30-ի սահմաններում, չորրորդ պաշտպանական շրջանի հրետանային ստորաբաժանման հետախույզների կողմից ավտոշարասյուներ, հրետանային մարտկոցներ են հայտնաբերվում Ակնայի առաջնագծի երկայնքով՝ Ադրբեջանի Բալլար-Սարիջալու-Չամանլու գյուղերի ուղղությամբ, առանձնաց-

[4] Տես **Հովհաննիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 246:

ված տանկային շարասյուներ՝ Ղարադաղլու, Էվօղլու և Աֆաթլու գյուղերի ուղղությամբ, ինչպես նաև հրետանային մարտկոցների կրակային դիրքեր՝ Աֆաթլու, Էվօղլու, Ղարադաղլու, Մահրիզլու, Սարիջալու բնակավայրերի ծայրամասերում: Ժամը 18:00-ի սահմաններում ՊԲ կենտրոնական ենթակայության հրետանային զորամասի և չորրորդ պաշտպանական շրջանի դիվիզիոնների համատեղ ուժերով համազարկային կրակ են բացել հակառակորդի այդ կուտակումների դեմ[5]: Ընդհանուր, համատեղված համազարկով ՊԲ կենտրոնական ենթակայության հրետանային ստորաբաժանումներին հաջողվեց ճնշել վերը նշված կուտակված բրիգադների ուժերը և ոչնչացնել բրիգադի հրամանատարական կետը[6]:

ՊԲ ստորաբաժանումները, շնորհիվ բարձր կարգապահության և ռազմական գործի փայլուն տիրապետման, կարողացան հրետանու գործադրմամբ կանգնեցնել հակառակորդին: Ըստ առկա տեղեկության՝ միայն Ղարադաղլուի ուղղությամբ հայկական կողմի հասցրած հրետանային հարվածից ադրբեջանական կողմն առնվազն երեք տանկի կորուստ է ունեցել և մոտ 200 զոհ տվել[7]:

Չորրորդ պաշտպանական շրջանի հրետանային ստորաբաժանումները երկրորդ անգամ կիրառվեցին ապրիլի 27-28-ի գիշերը՝ հրետանային փոխհրաձգության ժամանակ՝ գերճշգրիտ իրականացնելով իրենց առջև դրված մարտական խնդիրը: Հակառակորդը, անտեսելով սեփական ժողովրդի անվտանգությունը, հրետանային մարտկոցները տեղակայել էր գյուղերի մերձակայքում՝ բնակելի տներից մինչև 100 մետր հեռավորության վրա[8]: Պետք է նշել, որ ռազմական օբյեկտները, համաձայն միջազգային մարդասիրական իրավունքի սկզբունքների (Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թ. օգոստոսի 12-ի Ժենևի կոնվենցիայի առաջին արձանագրություն, հոդված 52), հանդիսանում են լեգիտիմ թիրախներ և Ադրբեջանի զինված ուժերը, ի խախտումն

---

[5] Տես նույն տեղում, էջ 247:

[6] Տես նույն տեղում:

[7] Տես **Փաշինյան Ն.**, «Արաքսից մինչև Թալիշ. նոր առաջնագիծ», 18.05.2016, http://armtimes.com/hy/article/91781, հղվել է 04.11.2017 թ.:

[8] Ադրբեջանի զինված ուժերը թիրախավորում են սեփական բնակչությանը, ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, 28.042016, http://www.mil.am/hy/news/4030, հղվել է 08.11.2017 թ.:

նույն արձանագրության հոդված 58-ի, չեն խուսափել բնակեցված շրջաններում կամ դրանց մերձակա վայրերում ռազմական օբյեկտներ տեղակայելուց[9]:

[9] Տես նույն տեղում:

Պաշտպանության բանակի կենտրոնական և արևելյան պաշտպանական բնագծի պաշտպանության կազմակերպման, ճիշտ ուղղորդման առումով անգնահատելի է Արցախի հերոս, Արցախյան առաջին պատերազմի տարիներին Ասկերանի պաշտպանական շրջանի հրամանատար Վիտալի Բալասանյանի, ՊԲ 19916 զորամասի հրետանու պետ-բաժնի պետ, գնդապետ Գենադի Ռենիկի Բաղդասարյանի, ՊԲ կենտրոնական ենթակայության հրետանային զորամասի հրամանատար գնդապետ Գրիգորի Ռաշիդի Սահակյանի և այլ հրետանավորների դերակատարումը: Գնդապետ Գ. Բաղդասարյանը 2016 թ. ապրիլի 2-5-ը ՊԲ պաշտպանության կենտրոնական գոտում հմտորեն ղեկավարել է հրետանու կրակը, որի արդյունքում հասցվել է կրակային խոցում հակառակորդի ռեակտիվ հրետանային, ականանետային ստորաբաժանումներին, հարձակման անցած մոտոհրաձգային և տանկային ստորաբաժանումներին, առաջխաղացման երթուղիներում, ծավալման բնագծերում, կենտրոնացման շրջաններում, ելման դիրքերում, հրամանատարական և հրամանատարաղիտարկման կետերին, դրանով իսկ կազմալուծել հակառակորդի ղեկավարման համակարգը, նվաճել կրակային առավելություն և ձախողել հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումը[10]:

Վստահաբար կարելի է ասել, որ «պատերազմի աստված» հրետանու նշանակությունն այս գործողությունների ընթացքում անառարկելի էր: Պաշտպանության բանակի հրետանավորները՝ շարքայինից մինչև գնդապետ, վստահորեն իրականացրին իրենց առջև դրված մարտական խնդիրը և հաջողությամբ վնասազերծեցին հակառակորդի նախապատրաստվող գործողությունները: Ապրիլյան պատերազմի քառօրյա սրացման մարտական գործողությունները մեզ ապացուցեցին, որ ունենք լավագույնս պատրաստված սպա ու զինվոր, և, անկասկած, ճշմարիտ են 4-րդ ՊԾ հրետանու շտաբի պետ

[10] Տես **Բաղդասարյան Է.**, ՊԲ հրետանու պետ. «Հրետանին կրակային խոցմամբ հակառակորդին ստիպեց հրաժարվել հետագա մարտական գործողություններից», «Հետք», 11.05.2016, http://hetq.am/arm/news/67907/pb-hretanu-pet-hretanin-krakayin-khocmamb-hakarakordin-stipec-hrazharvel-hetaga-martakan-gortsoxutyunneric.html, հղվել է 05.11.2017: Տես նաև ՀՀ պետական պարգևներով պարգևատրման արժանի զինծառայողների անվանացուցակ, Արծրուն Հովհաննիսյանի ֆեյսբուքյան էջ, 10.05.2016, https://www.facebook.com/arcrun/posts/1036756516359956, հղվել է 01.02.2017 թ.:

մայոր Ա. Հակոբյանի խոսքերը. «Մեր հրետանին ծավալվեց և մարտակարգեր զբաղեցրեց հակառակորդի ակտիվ հրետակոծության պայմաններում, և միայն ու միայն մեր հրամանատարական կազմի ճիշտ և ուղղորդված հրամանատարման արդյունքում մենք չունեցանք կորուստներ: Ապրիլի 4-ին մեր հրետանու ուժերով մենք կարողացանք հակառակորդին խոցել հենց իր տարածքում՝ չթողնելով, որ նրա հրետանային ստորաբաժանումները ծավալվեն բնագծում. արդյունքում հակառակորդն ունեցավ հսկայական մարդկային ու նյութական կորուստներ: Մեր ինտենսիվ, փոխհամագործակցված հրետակոծման արդյունքում հակառակորդն ունեցավ տեխնիկական և սպառազինության մեծ կորուստներ, նույնիսկ շարքից դուրս եկան հակառակորդի հրետանային մի քանի ստորաբաժանումներ: Այս մարտական գործողությունների ընթացքում պատահական ոչինչ չկար, մենք կարողացանք ճիշտ գնահատել մարտական իրադրությունը, որի արդյունքում փայլուն իրականացրինք պաշտպանողական մարտի համար մեկ խնդիրը՝ հրետանային կանխարգելումը: Ըստ անհրաժեշտության՝ մենք կարողացել ենք դրսևորվել մեր հնարավորությունների շրջանակներում և եթե մարտական գործողությունները շարունակվեին, միանշանակ է, որ մենք ունենալու էինք ծանրակշիռ հաջողություններ հենց հակառակորդի սահմաներում»[11]:

**Բանալի բառեր** - *Ապրիլյան պատերազմ, Պաշտպանության բանակ*

**ВЛАДИМИР ПООСЯН -** ЧЕТВЁРТЫЙ ОБОРОНИТЕЛЬНЫЙ РАЙОН АРМИИ ОБОРОНЫ РА ВО ВРЕМЯ АПРЕЛЬСКИХ ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ

В статье впервые изучаются боевые действия в центральном участке карабахского фронта во время армяно-азербайджанской апрельской эскалации 2016 г. Посредством полевых работ и глубинных интервью автор представляет хронологию событий, предполагаемые цели противника, а также активные оборонительные и превентивные меры армянской стороны.

***Ключевые слова:*** *Апрельская война, Армия Обороны Арцаха*

[11] «Ասպետ» (N զորամասի ամսաթերթ), N 6, 2016:

**VLADIMIR POGHOSYAN -** THE 4TH DEFENSE REGION OF THE DEFENSE ARMY DURING THE APRIL WAR

The article analyzes the military engagements in the central direction of the Karabakh front during the Armenian-Azerbaijani military engagements in April, 2016. Through fieldwork and in-depth interviews the author in a systematic way elucidates the chronology of the events, the apparent goals of Azerbaijan, as well as the active defence countermeasures by the Armenian side.

***Key words:*** *April War, Artsakh's Defence Army*

# «ՆՈՐ ՌԵԻՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ». Ռ. Թ. ԷՐԴՈՂԱՆԻ ԱՆՁԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

*Վարուժան Գեղամյան, ԵՊՀ*

Թուրքիայի Հանրապետության պատմության վերջին հնգամյակը (2012-2017 թթ.) ակադեմիական և փորձագիտական շրջանակների կողմից լայնորեն բնորոշվում է որպես երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ նոր ավտորիտար (հաճախ նաև բռնապետական) իշխանության հաղթարշավի ժամանակաշրջան: Այս համատեքստում բավական խոսուն է նաև նշված փուլը նկարագրող «հետժողովրդավարական Թուրքիա» (post-democracy Turkey) արտահայտությունը, որը հաճախ կարելի է հանդիպել հատկապես ամերիկյան հեղինակների աշխատանքներում[1]: Միևնույն ժամանակ Էրդողանի և նրա ղեկավարած Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) իշխանության նախորդ տասնամյակը (2002-2011 թթ.) ներկայացվում է որպես ժողովրդավարական Թուրքիայի զարգացման կենսափուլ: Փաստացի, ԱԶԿ ղեկավարած երկու փուլերը տարանջատվում են և դրվում միմյանց հանդեպ հակադրության մեջ: Ընդ որում՝ 2011 թվականից այս կողմ ստեղծված իրադրությունը բնորոշվում է որպես «արտառոց» և «աննախադեպ»:

Ավտորիտար իշխանության մասին պնդումներն ուղեկցվում են նախագահ Էրդողանի անձի շուրջ ստեղծվող պաշտամունքի դրսևորումների ցուցադրմամբ: Ընդ որում՝ անձի պաշտամունքի ձևավորումը որակվում է գերազանցապես որպես մի գործընթաց, որը կախված է Էրդողանի անձնական, մարդկային հատկանիշներից և անհրաժեշտ կերպով չի խնդրայնացվում: Մինչդեռ վերջին տարիներին Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական գործընթացները և հատկապես Էրդողանի և նրա ղեկավարած կուսակցության կողմից ավտորիտար վարչակարգի հիմնումն ավելի լայն գիտական հիմնա-

[1] Տես **Barkey H.,** How to Manage Post-Democracy Turkey: https://www.the-american-interest.com/2017/09/18/manage-post-democracy-turkey/, հղվել է 10.11.2017 թ., **Filkins D.,** The End of Democaracy in Turkey: https://www.newyorker.com/news/news-desk/the-end-of-democracy-in-turkey, հղվել է 10.11.2017 թ.:

հարցի՝ ոչ արևմտյան (արևելյան) հասարակությունների արդիականացման խնդիրների համատեքստում դիտարկելը հնարավորություն է տալիս գնահատել Էրդողանի անձի շուրջ ստեղծվող պաշտամունքի նշանակությունը հասարակական և քաղաքական գործընթացներում: Սույն հոդվածում մենք նախ հակիրճ կանդրադառնանք Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում քաղաքական առաջնորդի անձի շուրջ պաշտամունքի ձևավորման նշանակությանը, ապա դրա միջոցով կներկայացնենք նախագահ Էրդողանի պաշտամունքի դրսևորումները, ինչպես նաև այդ պաշտամունքի հանրայնացման որոշ մեխանիզմները:

2017 թ. մարտից Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանն իր հեռուստահարզացրույցները հաճախ տալիս է Անկարայի Բեշքեվե թաղամասի իր նորակառույց նստավայրում՝ Աքսարայում: Դրանք երբեմն ընթանում են սենյակի խորքում՝ բացված դռների հետևում երևացող և սուլթանական գահ հիշեցնող աթոռի ֆոնին: Հաղորդման ընթացքում մինչ լրագրողները և նախագահը զրուցում են, տեսախցիկը հաճախ պահվում է այդ աթոռի վրա: Նույն թվականի ապրիլի 16-ին անցկացված սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի[2] հաջորդ օրը նախագահ Էրդողանը, ի հակադրություն ընդունված արարողակարգի, այցելություն կատարեց Ստամբուլում գտնվող օսմանյան և հանրապետական շրջանի մի շարք թուրք գործիչների գերեզմաններ[3]: Դրանցից ամենահիշարժանը կարելի է համարել նախագահի այցելությունը Էյուփ Սուլթան մզկիթ, որը Ստամբուլի ժողովրդական գլխավոր սրբավայրերից է և դարեր ի վեր ծառայել է որպես օսմանյան կարևորագույն քաղաքական հուշարձան: Այստեղ օսմանյան թագաժառանգներին շնորհվել է Օսմանի թուրը, որով նրանք պաշտոնապես հռչակվում էին սուլթաններ[4]: Այցելու-

[2] 2017 թ. ապրիլի 16-ին անցկացված սահմանադրական փոփոխությունների մասին հանրաքվեն ապահովեց Թուրքիայի անցումը կառավարման խորհրդարանական համակարգից դեպի նախագահական: Չնայած արձանագրված ընտրախախտումներին՝ ընդունվեցին հանրաքվեի այն արդյունքները, համաձայն որոնց ընտրողների 51%-ը կողմ է քվեարկել սահմանադրական փոփոխություններին:

[3] Թուրքիայում ընդունված արարողակարգը ենթադրում է երկրի բարձրագույն ղեկավարության այցելություն Անկարայի Անըթքաբիր (Anıtkabir) համալիր, որտեղ ներկաները հարգանքի տուրք ենք մատուցում Մ.Ք. Աթաթուրքի գերեզմանին:

[4] Տես Osmanlının Siyasi Üssü, Eyüp Sultan Camii. https://dogruhaber.com.tr/haber/135569-osmanlinin-siyasi-ussu-eyup-sultan-camii/, հղվել է 10.11.2017 թ.:

թյունն ուղիղ եթերով հեռարձակվում էր հանրապետական նշանակության բոլոր հեռուստաալիքներով: Իսկ հանրաքվեից ավելի վաղ՝ մարտ ամսին, երկրի կինոթատրոնների էկրաններին ցուցադրվում էր մի քանի մասից բաղկացած «Ռեիս» գեղարվեստական ֆիլմը, որը, ըստ էության, Էրդողանի քաղաքական կենսագրության գեղարվեստական ներկայացումն էր:

Էրդողանի անձի պաշտամունքի կառուցարկման գործընթացի դիտանկյունից հետաքրքրություն ներկայացնող այս և նմանատիպ իրադարձությունները խնդրայնացնելու դեպքում պետք է անպայման անդրադառնալ քաղաքականության մեջ խարիզմատիկ առաջնորդության դերի և իշխանության հիմնախնդիրներին:

«Խարիզմատիկ առաջնորդություն» և «խարիզմատիկ առաջնորդ» հասկացությունները գիտական գործածության մեջ են մտել շնորհիվ սոցիոլոգ Մաքս Վեբերի: Նա լեգիտիմ իշխանության երեք մաքուր տեսակների վերաբերյալ իր հայտնի բնորոշման մեջ առանձնացնում է խարիզմատիկ բնույթի իշխանությունը, որը «հիմնվում է անձի սրբության ու հերոսական ուժի արտասովոր դրսևորումների կամ յուրահատկության և այդ դրսևորումների ստեղծած կարգի վրա»[5]: Իսկ «խարիզման» Մ. Վեբերը բնորոշում է որպես «անհատի այնպիսի հատկանիշ, որը ճանաչվում է որպես արտասովոր, որի շնորհիվ էլ անհատն ընկալվում է որպես գերբնական, վերմարդկային կամ առնվազն այլ մարդկանց ոչ հասու հատուկ ուժերով ու հատկություններով օժտված անձ»[6]: Խարիզմատիկ առաջնորդությունը որպես իշխանության տեսակ տարածված էր ավանդական հասարակություններում:

Ավանդական հասարակությունը, ինչպես ցույց են տվել մարդաբանները, ձևավորվում է «ավանդույթի իշխանության» միջոցով, որն ապահովում է հասարակության հասարակական համերաշխումը (solidarization)՝ արդյունավետ կերպով կարգավորելով ավանդական սոցիումի անդամների վարքը[7]: Ավանդական հասարակության

---

[5] **Вебер М.**, Типы господства, Библиотека Гумер http://www.gumer.info/bibliotek_Buks/Sociolog/veber/tip_gosp.php, հղվել է 10.11.2017 թ.:

[6] Նույն տեղում:

[7] Տես **Бочаров В.В.,** Традиционализм Востока как «принудительная солидарность» (антропологический подход) // Власть и насилие в незападных обществах. Проблемы теоретического осмысления и опыт практического изучения. М.: Издательство

պարտադրված կամ արագացված արդիականացումը, ինչպես ցույց է տալիս ոչ արևմտյան (արևելյան) հանրույթների հասարակական-քաղաքական պատմությունը, անխուսափելիորեն հանգեցնում է ավանդական հասարակության քայքայմանը: Արդյունքում այդ հանրույթների քաղաքական վերնախավերը դիմում են հասարակության «ստիպողական համերաշխման»: Սա ենթադրում է «ավանդույթի իշխանության» մեխանիզմների գիտակցական կիրառություն՝ հասարակական համերաշխում (social solidarity) ապահովելու համար: Այլ խոսքով՝ քաղաքական վերնախավերն այդ նոր սոցիալ-մշակութային և քաղաքական պայմաններում կիրառում են այն մեխանիզմների սիմուլյակրները, որոնք ապահովում էին հասարակության համերաշխումը մինչև արդիականացումը: Այդ սիմուլյակրներից ամենագլխավորը խարիզմատիկ առաջնորդությունն է, որի վրա են հիմնվում մնացյալ մեխանիզմները[8]: Ժամանակակից աշխարհի այն պետական կազմավորումները, որոնք չեն կարողացել ամբողջությամբ անցնել արդիականացման գործընթացի միջոցով, դեռևս պահպանում են ավանդական հասարակության սոցիալ-մշակութային կապերը: Այս պայմաններում ուժեղանում է խարիզմատիկ առաջնորդության նշանակությունը, և իշխանական վերնախավը գիտակցաբար սկսում է կառուցարկել կամ զարգացնել խարիզմատիկ առաջնորդի կերպար: Դա կատարվում է գաղափարախոսության, ԶԼՄ-ների, գրականության, արվեստի և այլ միջոցներով[9]:

Օսմանյան կայսրության վերջին փուլի, ապա Թուրքիայի Հանրապետության պատմաքաղաքական զարգացման կարևորագույն գործոններից մեկը ավտորիտար իշխանության և խարիզմատիկ առաջնորդության առկայությունն է[10]: Այս գործոնների առաջացման և զարգացման պատճառներն ուղղակիորեն կապված են Թուրքիայի սոցիալ-մշակութային դինամիկայի հետ. ավտորիտար իշխանու-

---

ГБПОУ МГОК, 2016, էջք 738-749, 744:

[8] Այլ կարևոր մեխանիզմներն են իշխանական ուղղահայաց կառավարման համակարգը, պետական գաղափարախոսության առկայությունն ու հանրայնացումը, պատմական միֆի ստեղծումը, նոր էթնիկության կամ «ավանդական» կառույցների կառուցարկումը: Տե՛ս **Бочаров В.В.,** նշվ. աշխ., էջ 745:

[9] Տես **Бочаров В.В.,** նշվ. աշխ., էջ 746:

[10] Տես **Гегамян В.Г.**, Характеристика модернизации в Турции в период кемалистской власти: попытка переоценки, Genesis: исторические исследования, № 6, Москва, 2017, էջք 44-55:

թյունը և խարիզմատիկ առաջնորդությունը հանրապետության արդիականացման պայմաններում նպաստում էին թուրքական ավանդական հասարակության համերաշխմանը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հանրապետական Թուրքիան ձևավորվել էր ավտորիտար արդիականացման արդյունքում, որի ընթացքում ժամանակակից պետություն ստեղծելու համար փոխառվել էր բարեփոխումների արևմտյան մոդելը[11]: Քեմալական ռազմական-բյուրոկրատական վերնախավի՝ այս մոդելով իրականացրած լայնածավալ փոփոխությունների արդյունքում Թուրքիայի հասարակությունը զրկվեց համերաշխման հիմնական ձևերից, որոնք հիմնված էին «ավանդույթի իշխանության վրա»: Այդ պատճառով քեմալական քաղաքական վերնախավը գիտակցաբար կիրառում էր հասարակության համախմբման այնպիսի մեխանիզմներ, որոնք «ավանդույթի իշխանության» սիմուլյակրներ էին: Ստեղծված սոցիալ-մշակութային և հատկապես քաղաքական համակարգի պահպանման և զարգացման համար կարևորագույն նշանակություն ուներ «խարիզմատիկ առաջնորդության» սիմուլյակրը, որը երբեմն ձևավորում էր քաղաքական առաջնորդի անձի պաշտամունք: Այս սիմուլյակրի կիրառումը Թուրքիայի իշխող վերնախավի կողմից հանրապետության ստեղծման առաջին օրերից հանգեցրեց հիմնադիր նախագահ Մ. Ք. Աթաթուրքի (1923-1938 թթ.) և երկրորդ նախագահ Ի. Ինոնյուի (1938-1950 թթ.) անձի պաշտամունքների ձևավորմանը[12]:

Թուրքիայի ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդողանը ևս օգտագործում է խարիզմատիկ առաջնորդության կառուցարկման մեխանիզմը՝ հասարակական մոբիլիզացիայի և իր հիմնադրած վարչակարգի պահպանման համար: Հզոր առաջնորդի անձի շուրջ սոցիալական համախմբումը հույժ կարևոր է Էրդողանի իշխանության ամրապնդման համար:

---

[11] Տես նույն տեղում:

[12] Մինչդեռ ժամանակակից պատմագիտության մեջ Թուրքիայում խարիզմատիկ առաջնորդության ու անձի պաշտամունքի առաջացման պատճառները կապվում են քաղաքական գործիչների անձնային հատկանիշների և տիրապետող գաղափարախոսությունների հետ: Սակայն թուրքական օրինակի պատմահամեմատական դիտարկումն արևելյան այլ քաղաքական համակարգերի համատեքստում ցույց է տալիս, որ «խարիզմատիկ առաջնորդությունը» մշտապես առկա է թուրքական քաղաքական համակարգում՝ հանդիսանալով սոցիալ-մշակութային դինամիկայի կարևորագույն բաղադրիչ:

Էրդողանի կերպարը, որի հիմքում ընկած է նրա «գավառական» ծագումը, ինչպես և այլ առաջնորդների դեպքում ստացել է իր ոչ պաշտոնական մականունը՝ ռեիս (reis - արաբերեն՝ ղեկավար): Թուրքական հասարակության մի զգալի հատվածը և մասնավորապես նրանք, որոնք գյուղական բնակավայրերից տեղափոխվել են քաղաքներ և ակտիվորեն մասնակցում են հասարակական-քաղաքական կյանքին, Էրդողանի մեջ տեսնում են յուրայինի: Սունnի դավանական կողմնորոշում ունեցող այս զանգվածն ականատես է դառնում, թե ինչպես է Էրդողանը գավառական պահպանողականությունը դարձնում նոր գերակա մշակութային նորմա: Սրա միջոցով նշված զանգվածները հնարավորություն են ստանում զգալ իրենց առավել սոցիալականացված և վայելել ուժեղ մեծամասնություն լինելու հաճույքը (նախկինում այդ գերակա դիրքը պատկանում էր քեմալական աշխարհիկ զանգվածին)[13]: Սրա արդյունքում Էրդողանի պաշտամունքը «սնվում է» ներքևից. նրա համակիրները սրբացնում են վերջինիս և վերագրում նրան արտասովոր մետաֆիզիկական հզորություն:[14] Այս առումով անհրաժեշտ է առանձնացնել 2014 թ. օգոստոսին տեղի ունեցած հետևյալ դեպքը: Ստամբուլում ընթացող ցույցի ժամանակ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Էրդողանը, ելույթն ընդհատելով, իր մոտ բերել տվեց ամբոխի առաջին շարքերում կանգնած մի կնոջ, ում ինքնազգացողությունը վատացել էր: Կինը երկու ձեռքով բռնեց բեմի վրա կանգնած Էրդողանի աջ ձեռքը և սկսեց ոգևորված բացականչել՝ «Աստված մեծ է»: Նույն օրը համացանցը ողողվեց այս դրվագը ներկայացնող հոլովակներով, որոնք վերնագրված էին «Կինը, որն առողջացավ Էրդողանի ձեռքը բռնելուց հետո»[15]:

Նմանատիպ դեպքեր պարբերաբար կրկնվում են՝ ներկայացնելով Էրդողանին մե՛րթ որպես մարգարե, մե՛րթ որպես գարնան

---

[13] Մանրամասն տե՛ս **White J.,** Islamist Mobilization in Turkey: A Study in Vernacular Politics, University of Washington Press, 2002:

[14] Մանրամասն տե՛ս **Akyol M.,** Erdoganism [noun]. From “national will” to “man of the nation,” an abridged dictionary for the post-secular Turkish state, http://foreignpolicy.com/2016/06/21/erdoganism-noun-erdogan-turkey-islam-akp/, հղվել է 10.11.2017 թ.:

[15] Տես Erdoğan’ın Önüne Bayılan Kadını Sedye İle Getirdiler - İstanbul Maltepe Mitingi, https://www.youtube.com/watch?v=sGL09v4ipmY, հղվել է 10.11.2017 թ.:

խորհրդանիշ և այլն[16]: Էրդողանի մասին նկարահանվում են գեղարվեստական և փաստագրական ֆիլմեր[17], գրվում են գրքեր[18], ստեղծվում են նրան փառաբանող արվեստի զանազան գործեր: Թուրքիայում և աշխարհի խոշորագույն թուրքական համայնքներում գրեթե ամենաուր կարելի է հանդիպել Էրդողանին պատկերող նկարներ, շարֆեր, դրոշներ: Թուրքիայում տեղադրվել են վերջինիս արձանները[19], նրա անունով անվանակոչվել են կրթական[20] ու մարզական[21] և մի շարք այլ հաստատություններ[22]:

Էրդողանի պաշտամունքն արտահայտվում և տարածվում է ոչ միայն մշակութային դրսևորումների միջոցով, այլև այն առանցքն է, որի շուրջ կառուցվում է նոր թուրքական գաղափարախոսությունը՝ այդպիսով մեծացնելով Էրդողանի սրբազնությունը: Թուրքական հանրապետության հիմնադրման առաջին շրջանից ի վեր գերակա գաղափարախոսություն էր Աթաթուրքի հիմնադրած քեմալիզմը, որը, սակայն, աստիճանաբար անկում ապրեց և արդեն 1990-ականներին ձևավորեց վակուում: Առաջացած վակուումը լցնելու փորձ է կատարում Էրդողանի գլխավորած իշխող վերնախավը՝ իր կերտած նոր գաղափարախոսությամբ, որը հավակնում է տալ Թուրքիայի անցյալի, ներկայի և ապագայի նոր մեկնաբանությունը: Այդ գաղափարախոսության հիմքում ընկած է սուննի իսլամական ազգայնականությունը՝ համեմված օսմանյան ժառանգության վերարժևորմամբ. այն համադրում է քեմալականության բերած թուրք ազգայնականությու-

[16] Տես **Gürsel K.,** The cult of Erdogan, https://www.al-monitor.com/pulse/originals/2014/08/gursel-turkey-social-peace-erdogan-cult-polarization-akp.html, հղվել է 10.11.2017 թ.:

[17] Տես The Chief: feature film to trace early life of Turkish president, https://www.theguardian.com/world/2016/jan/15/the-chief-feature-film-trace-early-life-turkish-president-erdogan, հղվել է 10.11.2017 թ.:

[18] Տես Cumhurbaşkanı Erdoğan'ın hayatı kitap oluyor, https://www.ahaber.com.tr/galeri/turkiye/cumhurbaskani-erdoganin-hayati-kitap-oluyor, հղվել է 10.11.2017 թ.:

[19] Տես Cumhurbaşkanı Erdoğan'ın 4 metrelik heykelini yaptı, http://www.hurriyet.com.tr/cumhurbaskani-erdoganin-4-metrelik-heykelini-yapti-40217413, հղվել է 10.11.2017 թ.:

[20] Տես Recep Tayyip Erdoğan University: https://en.wikipedia.org/wiki/Recep_Tayyip_Erdo%C4%9Fan_University, հղվել է 10.11.2017 թ.:

[21] Տես Recep Tayyip Erdoğan Stadium. https://en.wikipedia.org/wiki/Recep_Tayyip_Erdo%C4%9Fan_Stadium, հղվել է 10.11.2017 թ.:

[22] Տես Erdoğan, kendi adını taşıyan 45 milyon liralık imam hatip lisesini açtı, https://www.aydinlik.com.tr/erdogan-kendi-adini-tasiyan-45-milyon-liralik-imam-hatip-lisesini-acti-politika-eylul-2017, հղվել է 10.11.2017 թ.:

նը և ավանդական սուննիական իսլամը՝ վերածվելով քաղաքական մոբիլիզացիայի հիմնական գործիքի[23]: Իշխանություններն իրենց ագրեսիվ հռետորաբանության և սահմանած նոր դիսկուրսի միջոցով լայնորեն տարածում են այն: Համաձայն այս գաղափարախոսության՝ թուրք ժողովուրդը երկրորդ անգամ մեծ պատերազմ է մղում ներքին և արտաքին թշնամիների դեմ, որոնք փորձում են մասնատել և ոչնչացնել Թուրքիան: Առաջին նմանատիպ «ազգային ազատագրական պատերազմը», ըստ սահմանված դիսկուրսի, նրանք մղել են Առաջին աշխարհամարտի ավարտից հետո (1919-1923 թթ.) Աթաթուրքի գլխավորությամբ: Այսօր այդպիսի երկրորդ պատերազմ է մղում Էրդողանը և «տանում իր ժողովրդին դեպի հաղթանակ»: Որպես այդ հաղթանակի գլխավոր ձեռքերում ներկայացվում է 2016 թ. հուլիսյան զինվորական հեղաշրջման տապալումը, որն ամբողջությամբ վերագրվում է Էրդողանին և վերջինիս համար փողոց դուրս եկած ժողովրդական զանգվածներին[24]: Այս առումով հետաքրքրական է, որ պարբերաբար կոչեր են հնչում Էրդողանին շնորհել «գազի/ղազի»-ի կոչում[25], իսկ փողոցներում կարելի է հանդիպել Էրդողանին գազի անվանող պաստառներ[26]:

Էրդողանը չի բավարարվում հանրության լայն զանգվածների հետ աշխատանքով, և տևական ժամանակ է՝ փոխում է իր քաղաքական հենարանի կազմը, ինչպես դա ժամանակին արել էր Աթաթուրքը: Հենարանների դերում հանդես են գալիս իշխանական բյուրոկրատիան և ԱԶԿ-ն: Իշխող կուսակցությունն իր ստեղծման սկզբնական փուլում ուներ մի քանի առաջնորդ (Աբդուլահ Գյուլ, Բյու-

---

[23] Տե՛ս մանրամասն՝ **White J.,** Muslim Nationalism and the New Turks, Princeton University Press, 2014:

[24] Տես **Gingeras R**., Is There a “Greater Turkey” On the Rise?, https://muftah.org/greater-turkey-rise/, հղվել է 10.11.2017 թ.:

[25] «Գազի/Ղազի» (غازى) կոչում են իսլամի համար պայքարող մարտիկներին: Թուրքիայում ղազի են կոչվում նաև հայրենիքի համար պատերազմած հերոսներին: Օրինակ՝ ղազիի կոչում ունի Մուսթաֆա Քեմալը: Ղազի են համարվում նաև հերոսական պայքար ցույց տված բնակավայրերը (օրինակ՝ Այնթեփն այսօր կոչվում է ԳազիԱնթեփ՝ ի պատիվ հայերի և ֆրանսիացիների դեմ թուրքերի տարած հաղթանակի:

[26] Տես Keçiören Belediyesi’nin ‘Gazi Cumhurbaşkanımız’ Afişi Sosyal Medyanın Gündeminde, https://onedio.com/haber/kecioren-belediyesi-nin-gazi-cumhurbaskanimiz-afisi-sosyal-medyanin-gundeminde-750028, հղվել է 10.11.2017 թ.:

լենք Արինչ, Ահմեթ Դավութողլու), մինչդեռ այսօր այն վերածվել է Էրդողանի կուսակցության, որտեղ բոլոր կադրերը, կուսակցություն մտնելով, իրենց հավատարմությունն են հայտնում նախագահին և չեն կարող մարտահրավեր նետել վերջինիս: Հենց այս կադրերն էլ աստիճանաբար լցնում են իշխանական ապարատը՝ այդպիսով ընդլայնելով Էրդողանի հենարանը: Առաջին հայացքից կարող է թվալ, որ սա բնական գործընթաց է բոլոր ավտորիտար պետությունների համար, սակայն Թուրքիայում քեմալական միակուսակցական վարչակարգի վերացումից հետո (1945 թ.) ոչ մի քաղաքական ուժի չէր հաջողվել այս մասշտաբով վերահսկել ամբողջ պետական ապարատը:

Վերոբերյալ երեք գործընթացները նպաստում են քաղաքականության անձնավորմանը (personalization of politics), որը, ինչպես ցույց է տալիս Թուրքիայի հանրապետական պատմության փորձը, բավական պրակտիկ և ազդեցիկ միջոց է իշխանության ամրապնդման ճանապարհին:

Էրդողանակենտրոն գերակա գաղափարախոսությունը հանգեցնում է այլակարծության սահմանափակմանը, ինչն ուղեկցվում է հասարակական լարվածության և բևեռացվածության աճով: Բացի դրանից՝ մեծանում է հասարակության ներսում ագրեսիան և այլատյացությունը ոչ յուրայինների նկատմամբ[27]: Էրդողանի կողմից արտաքին քաղաքական որոշումների միանձնյա կայացումը նույնպես բերում է անկանխատեսելիության, որը Մերձավոր Արևելքում առաջացնում է նոր ռիսկեր՝ հաշվի առնելով Թուրքիայի ունեցած դերն այս տարածաշրջանում[28]:

2019 թ. Թուրքիայում տեղի կունենան նախագահական ընտրություններ, որոնց արդյունքում ընտրված անձը, համաձայն նոր սահմանադրության, դե յուրե իր ձեռքում կկենտրոնացնի երկրի ողջ իշխանությունը: Ընտրվելու պարագայում Էրդողանը կկարողանա ապահովել իր բացարձակ իշխանությունը մինչև 2029 թ.: Սակայն 2017 թ. ապրիլյան հանրաքվեի արդյունքները ցույց տվեցին, որ

---

[27] Տես օրինակ՝ **Գեղամյան Վ.,** «Ինտերակտիվ քարտեզ. ազգայնամոլականության դրսևորումներ քրդերի դեմ», https://turkiyebilgi.wordpress.com/2016/12/18/mobsagainstkurds/, հղվել է 10.11.2017 թ.:

[28] Տես **Գեղամյան Վ.,** «Աթաթուրքի իսկական հետևորդը», https://allturkey.am/13892/geghamyan-ataturk/, հղվել է 10.11.2017 թ.:

Թուրքիայի բնակչության առնվազն կեսը կողմ չէ Էրդողանի ավտորիտար իշխանության խորացմանը: Եվ այժմ նախընտրական պայքարի շրջանակներում Էրդողանը փորձելու է «նոր Աթաթուրքի» կերպարով մեծացնել իրեն սատարողների թիվը՝ գալիք ընտրություններում վստահ հաղթանակ տանելու համար:

Այսպիսով, ավանդական հասարակության արդիականացման խնդիրներով ու պահանջներով կերտվող Էրդողանի անձի պաշտամունքը Թուրքիայում շարունակում է զարգանալ և վերածվել ինքնուրույն քաղաքական գործոնի: Այն էական նշանակություն ունի ոչ միայն սոցիալ-քաղաքական հարթությունում, այլև նորագույն իմաստավորում է ստանում թուրքական ժամանակակից մշակույթում: Ուստի՝ «ռեիսի» գործոնի ուսումնասիրությունը կրում է արդիական նշանակություն և կարող է օգտակար լինել նաև համեմատական ուսումնասիրություններում (comparative studies):

**Բանալի բառեր** - *Թուրքիա, Էրդողան, արդիականացում, անձի պաշտամունք*

**ВАРУЖАН ГЕГАМЯН -** “ВРЕМЯ НОВОГО РЕИСА”: КУЛЬТ ЛИЧНОСТИ Р. Т. ЭРДОГАНА В СОВРЕМЕННОЙ ТУРЦИИ

В результате авторитарного сдвига в турецкой политике возросла роль культа личности Эрдогана, который создается в течении последних нескольких лет. Однако вопрос конструкции культа преимущественно связывается с персональной характеристикой президента Турции Реджепа Таипа Эрдогана и не проблематизируется. В данной статье мы предпринимаем попытку рассмотрения образования культа личности в более широком контексте модернизации незападных обществ. Кроме того, представлены основные формы созданного культа и их значение в турецкой политической и социокультурной жизни.

***Ключевые слова:*** *Турция, Эрдоган, модернизация, культ личности*

**VARUZHAN GEGHAMYAN** - "AGE OF THE NEW REIS": PERSONALITY CULT OF R.T. ERDOGAN IN MODERN TURKEY

As a consequence of the recent authoritarian turn in Turkish politics the influence of personality cult of the president R.T. Erdogan gained more importance. "Liberal enemies" of Erdogan tend to discuss the construction of the "Reis cult" mainly from the perspective of his personal characteristics and generally don't problematize this issue. Meanwhile, personality cult is a part of the broader problem of modernization of non-Western societies. From this perspective we discuss non-personalistic roots of the personality cult of Erdogan and summarize its role in modern Turkey.

***Key words:*** *Turkey, modernization, cult of personality*

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

(Վ.Գ. Գեղամյանի «Սոցիալ-մշակութային դինամիկան Թուրքիայում Ի. Ինոնյուի նախագահության օրոք (1938-1950 թթ.)» ատենախոսության վերաբերյալ)

*Վիկտոր Բոչարով, ՍՊՊՀ*

Ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացներում շարունակում են էական դեր խաղալ այն քաղաքական գործիչները, որոնք աչքի են ընկնում իրենց խարիզմատիկ իշխանությամբ, և որոնցով բնորոշվում է տվյալ պետական կազմավորման ամբողջ քաղաքական մշակույթը: Այդպիսի գործիչներ հանդիպում են հատկապես Արևելքի (կամ «ոչ Արևմուտքի»/Non West) պետություններում, որտեղ պետության առաջնորդի խարիզմատիկ կերպարն անհրաժեշտ պայման է իշխանության լեգիտիմության համար: Ի շարս այլ գործոնների՝ ղեկավարի խարիզմատիկ իշխանության վրա են հիմնված այնպիսի վարչակարգեր, ինչպիսիք գործում են Մերձավոր Արևելքի երկրներից շատերում (Հորդանան, Պարսից ծոցի երկրներ, Թուրքիա), Միջին և Արևելյան Ասիաների երկրներում:

Քաղաքական գիտության տեսաբանները խարիզմատիկ առաջնորդությունը բացատրում են որոշակի ժամանակահատվածում տվյալ պետական կազմավորման մեջ քաղաքական գործընթացի յուրահատկություններով[1]: Սակայն այս մոտեցումը բավարար չէ՝ բացատրելու համար, օրինակ, թե ինչու է արդիականացման բարդ ու համեմատաբար երկար ճանապարհ անցած Թուրքիայի Հանրապետությունում ժողովրդավարական ճանապարհով ընտրված առաջնորդն աստիճանաբար վերածվում ավտորիտար նկրտումներ ունեցող քաղաքական գործչի, որը քայլ առ քայլ իր շուրջ կառուցում է «սրբազնային միջավայր» (sacrality)[2]:

---

[1] Տես **Pye L., Pye M.,** Asian Power and Politics: The Cultural Dimension of Politics. Cambridge: Cambridge University Press, 1985. էջք 16-30:

[2] Տես **Akyol M.,** Coming soon: Erdogan 'The Chief', *Al-Monitor*, 13.02.2017, https://www.al-monitor.com/pulse/originals/2017/02/turkey-erdogan-movie-boost-cult-personality.html, հղվել է 10.10.2017 թ.:

Այս և նման իրողությունները բացատրելու համար՝ անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ հասարակության սոցիալ-պատմական զարգացման առանձնահատկություններին, որոնց վրա էլ հենվում է խարիզմատիկ առաջնորդը: Ոչ արևմտյան հասարակություններում, չնայած արդիականացման փորձերին, էական դեր է խաղում, այսպես կոչված, ավանդականության ֆենոմենը (traditionalism), որն էականորեն տարբերում է Արևելքն Արևմուտքից: Սա էլ իր հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ Արևելքն ու Արևմուտքն ունեն պատմական զարգացման սկզբունքորեն տարբեր ընթացք, ինչը հիմնված է զարգացման գործընթացում «հասարակության» և «մշակույթի» դերով: Արևմուտքում ավանդական հասարակության փլուզումն արդիականացման ժամանակ ընթանում էր ներքին խնդիրների արդյունքում, ինչը պայմանավորված էր սոցիալական անհատականությամբ (social individualization), որը ծնում էր իրեն համապատասխան «մշակույթ» (տնտեսական, իրավական, քաղաքական): Ի տարբերություն Արևմուտքի՝ Արևելքի արդիականացումն ընթանում էր ոչ թե սեփական հանրույթի ներքին «պահանջով», այլ փոխառված էր (կա՛մ կամավոր, կա՛մ պարտադրված (գաղութատերերի կողմից)) Արևմուտքից: Փոխառված արևմտյան «մշակույթը», ինչպես ցույց է տալիս Արևելքի երկրների վերջին հարյուրամյակի պատմությունը, համապատասխան ձևով չի ձևափոխել հասարակական հարաբերություններն ու հասարակությունը՝ չնայած ամենատարբեր բնույթի «բարեփոխիչների» և «արդիականացնողների»՝ հաճախ անկեղծ ցանկությունների: Մասնավորապես, ինչպես ցույց է տալիս Արևելքի պետությունների հասարակական-քաղաքական փորձը, արևմտյան արժեքների ներդրումն արևելյան սոցիումի մեջ ամենուր հանգեցնում է «քաոսի», ինչն իր հերթին կարող է հանգեցնել պետականության քայքայման: Սա է պատճառը, որ տվյալ պետությունների քաղաքական էլիտաները վաղ թե ուշ բռնում են «ավանդականացման» (traditionalization) ուղին, ինչը, սակայն, չի նշանակում «արխաիզացում», այլ ավելի շատ ենթադրում է «ավանդույթի ուժի» մեխանիզմների կիրառում հասարակական համերաշխության (solidarization) նպատակով՝ որպես հասարակության աստիճանական զարգացման անհրաժեշտ նախապայման[3]:

3 Խմբային համերաշխության նախկին ձևերի փլուզումը չի առաջացնում նոր

«Ավանդականացման» համար կարևորագույն հանգամանք է «ավանդույթի ուժի» գլխավոր դրսևորումներից մեկը՝ խարիզմատիկ առաջնորդի առկայությունը, որն ապահովում է ամբողջ պետական կառույցի կայունությունը: Քաղաքական գործչի խարիզմատիկ բնույթը ներկայացված է նաև Արևմուտքում, որտեղ առաջնորդի խարիզմատիկ գործելաոճն ապահովում է որոշակի զանգվածային աջակցություն (ամենաթարմ օրինակներից մեկը ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփն է): Սակայն ի տարբերություն Արևելքի՝ այստեղ ռացիոնալ քաղաքական մշակույթը դերակատարների գիտակության մեջ առաջացնում է «իմաստային խոչընդոտ», ինչը հնարավորություն չի տալիս, որ հաջորդող քաղաքական քայլերը հիմնված լինեն խարիզմատիկ առաջնորդից ստացվող ոչ ռացիոնալ ազդակների վրա:

Աչքի առջև ունենալով առկա այս հարցադրումները՝ թյուրքագետ Վարուժան Գեղամյանն իր թեկնածուական ատենախոսության մեջ փորձ է կատարել մեկ հետազոտական խնդրի (case study) միջոցով վերհանել խարիզմայի կառուցարկման մեխանիզմներն ու դերը Թուրքիայում: Ընդ որում՝ հեղինակը համարում է, որ խարիզմատիկ առաջնորդությունը հաճախ հանգեցնում է մեկ այլ երևույթի՝ անձի պաշտամունքի ձևավորման, ինչի օրինակները շատ էին ինչպես 20-րդ դարում, այնպես էլ մեր օրերում:

Հեղինակն ուսումնասիրել է Թուրքիայի երկրորդ նախագահ, «Ազգային շեֆ» տիտղոսը կրող Իսմեթ Ինոնյուի նախագահության ընթացքում (1938-1950 թթ.) վերջինիս շուրջ կառուցարկվող խարիզման և անհատի պաշտամունքը: Աշխատանքում հիմնական ուշադրությունը դարձվել է նշյալ իրողությունների ձևավորման մեխանիզմների վրա, ասել է թե՝ առանցքային հետազոտական հարցը ոչ այն-

---

մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտային Արևելքին ստանալու նոր սոցիալականացում, ինչն իր հերթին Արևմուտքի օրինակով կապահովեր պետության զարգացումը: Այդ պատճառով հասարակության կայունացման համար գործի է դրվում «հարկադրական համերաշխացումը», ինչը ենթադրում է քաղաքական էլիտայի կողմից նախկինում առկա որոշ մեխանիզմների կիրառություն: Այս դեպքում դրանք «ավանդույթի ուժի» սոցիալական կառուցարկումներն են: Ավելի մանրամասն տե՛ս՝ **Бочаров В.В.,** Традиционализм Востока как «принудительная солидарность» (антропологический подход) // Власть и насилие в незападных обществах. Проблемы теоретического осмысления и опыт практического изучения. М.: Издательство ГБПОУ МГОК, 2016, էջք 738-749:

քան «ինչո՞ւ»-ն է, որքան «ինչպե՞ս»-ը:

Այս հարցի պատասխանները տալու համար Վ. Գեղամյանն ուսումնասիրել է «պաշտամունքի արտադրանքները» (հեղ.)՝ արվեստի գործեր (արձաններ, կիսանդրիներ, պաստառներ, նկարներ, ծաղրանկարներ և այլն), գեղարվեստական գրականություն, տոներ և մարզական միջոցառումներ: Ներկայացված նյութը հստակ ցուցադրում է թե՛ այդ «արտադրանքի» հեղինակների և թե՛ հանրույթի (որին ուղղված էին այս արտադրանքները) հասարակական գիտակցությունը, ինչպես նաև նշված խմբերի պահանջները իշխանության որոշակի տեսակի հանդեպ: Վեր են հանված նաև նշված ժամանակահատվածում իշխանություն-հասարակություն հարաբերությունների կառուցարկման ընթացքում թե՛ իշխանության և թե՛ «առտսայդերների» կողմից կիրառված գիտակցության շերտերը: Մասնավորապես՝ ներկայացված են թուրք գործիչների գաղափարական մտածողության այն դրվագները (քաղաքական առաջնորդի դերի ու կատարելիք գործառույթների մասին), որոնք վկայում են ժամանակի թուրք մտավորականության մտածողության մեջ որոշակի «կախարդական» շերտի գոյության մասին, որոնք ժամանակին վերհանել են իրենց պատմահոգեբանական ուսումնասիրությունների ժամանակ մարդու հոգեբանության այնպիսի հայտնի գիտնականներ, ինչպիսիք են Լ.Ս. Վիգոտսկին, Ա.Ռ. Լուրիեն: Այս «կախարդական շերտն» ապահովում է հասարակության կողմից խարիզմատիկ առաջնորդի ընկալումը[4]:

Միով բանիվ, պատասխանելով «ինչպե՞ս» հարցին՝ հեղինակը, այնուամենայնիվ, եզրակացություններ է անում «ինչո՞ւ» հարցի վերաբերյալ: Մասնավորապես՝ համոզիչ կերպով ցույց է տրված, որ Ի. Ինոնյուի նախագահության օրոք Թուրքիայում հաստատված քաղաքական վարչակարգն օրինաչափ էր զանգվածների հասարակական գիտակցության զարգացման աստիճանի հետ, ինչպես նաև իշխանության կազմակերպման միջոցի հանդեպ հասարակական այն պահանջի հետ, որը զանգվածները դիտարկում էին որպես լեգիտիմ:

Աշխատանքում հեղինակը կիրառում է պատմական մարդաբա-

[4] Տես **Бочаров В.В.,** Восток: харизматическое лидерство и общественная солидарность (антропологический аспект), Власть и насилие в незападных обществах: актуальные проблемы исследований. Москва, 28-27.05.2016, Московский государственный образовательный комплекс, 2016, էջ 17-19:

նության մի քանի մոտեցումներ: Մասնավորապես՝ հետաքրքրական էր միկրոպատմության (microhistory) և սոցիալ-մշակութային մարդաբանության և դիսկուրս վերլուծության հետազոտական գործիքակազմի կիրառությունը: Այս առումով պետք է առանձնացնել քեմալական շրջանի գաղափարախոսների պատկերացումները երկրի նախագահի դերի ու գործառույթների մասին: Հետաքրքրական է, որ այդ պատկերացումների որոշ դրսևորումներ կարելի է նկատել նաև մեր օրերում Թուրքիայի նախագահի լիազորությունների ընդլայնման քննարկումների համատեքստում: Դրանց համեմատությունը կարող է հնարավորություն ընձեռել հասկանալու գերակա գաղափարական դիսկուրսի լեզվի զարգացման տրամաբանությունը: Նորամուծություն է այս շրջանի մասին վերաբերող վավերագրերի կողքին տեսնել նաև մշակույթի օբյեկտների կիրառությունը որպես կարևոր աղբյուր: Այս առումով առավել հաջող օրինակ է Ստամբուլի կենտրոնական Թաքսիմ հրապարակի՝ որպես իշխանության կերտման և տարածման տարածքի ուսումնասիրությունը, քանի որ այստեղ մենք տեսնում ենք, թե ինչպես է ձևավորվել մեր օրերում Թաքսիմի քաղաքական նշանակությունը որպես իշխանություն-հասարակություն հարաբերությունների կարևոր հանգրվան[5]:

Նշված համատեքստում պետք է առանձնացնել հեղինակի կողմից պարբերաբար կիրառվող հնարքը, որով նա աշխատանքի տարբեր հատվածներում գործի է դնում ժամանակակից պատմագրության ևս մեկ կարևոր մոտեցում՝ համեմատական պատմությունը (comparative history), ինչի շնորհիվ ավելի ակներև են դառնում համեմատությունները և օրինաչափությունները Թուրքիայի պատմության վաղ և ավելի ժամանակակից փուլերի, ինչպես նաև այլ երկրների և տարածաշրջանների հետ: Մեր կողմից հավելենք, որ այս ուղղությամբ համեմատական աշխատանքի հարուստ դաշտ են ներկայացնում հատկապես Միջին Ասիայի երկրները:

Սակայն հեղինակի աշխատանքն արդիական է առաջին հերթին նրանով, որ, ինչպես վերը նշեցինք, հնարավորություն է ընձեռնված պատմական մարդաբանության միջոցով վերհանել մի նյութ, որը կօգնի ավելի խորը հասկանալու ժամանակակից հասարակագիտության կարևորագույն գիտական խնդիրներից մեկը: Այդ խնդիրը կա-

[5] Այստեղ բավական է հիշել 2013 թ. Թաքսիմում գնտվող Գեզի այգու շուրջ սկսված և հետագայում ծավալված իրադարձությունները:

ռաջարկեինք ձևակերպել հետևյալ կերպ. «ո՞ւր է գնում Արևելքը/ոչ Արևմուտքը» կամ ընդհանրապես՝ աշխարհը: Մենք տեսնում ենք, որ գործնականում գրեթե բոլոր մակրոսոցիոլոգիական տեսությունները «պարտադրում են դեռ երկար ապրել». ակնհայտ է, որ հետաձգվում է «պատմության ավարտը», տապալվեց կոմունիստական նախագիծը և այլն: Արևելքում (ոչ Արևմուտքում) ամենուր յուրօրինակ վերադարձ է դեպի «ավանդականությունը», ինչը դրսևորվում է նույնիսկ Արևմուտքում (օրինակ՝ ԱՄՆ 2016 թ. ընտրությունները, աջ կուսակցությունների դերակատարության մեծացումը ԵՄ երկրներում և այլն): Մասնավորապես՝ «խարիզմատիկ առաջնորդությունը», որը քաղաքագետները համարում էին արևելյան/ոչարևմտյան քաղաքականության յուրահատկություն, դարձյալ վերածվում է կարևոր գործոնի նաև Արևմուտքում:

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՀԱՄԱՇԱՐՈՒՄ

*Էդգար Էլբակյան, ԵՊՀ*

***Ներածություն. Եգիպտոսի նշանակությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ***

«Արաբական գարնան» հեղաշրջումից հետո առաջին անգամ Եգիպտոսում պաշտոնական այցով գտնվող (12 սեպտեմբերի 2011 թ.) Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Էրդողանին ցուցարարների բազմությունը ողջունում էր «*Բարի՜ գալուստ քո երկրորդ հայրենիք Եգիպտոս*», «*Եգիպտոսը և Թուրքիան մեկ բռունցք են*» բնույթի վանկարկումներով[1]: Էրդողանը, իր հերթին անդրադառնալով այդ հյուրընկալ դիմավորությանը, նշեց, որ իրեն զգում է ոչ թե օտար երկրում, այլ սեփական տանը՝ հավելելով՝ «*... մենք մի ընտանիք ենք*»[2]: Այս հայտարարություններն արվել են Եգիպտոսում հեղաշրջումից հետո «Մահմեդական եղբայրների» շուրջ երկուսուկեսամյա իշխանակալության ընթացքում, երբ Թուրքիայի և Եգիպտոսի միջև հարաբերություններն առանձնանում էին ռազմավարական գործակցությանը բնորոշ տարրերով: Պատմական այս կարճատև շրջանը և դրա ուսումնասիրությունն առանցքային նշանակություն ունեն՝ Եգիպտոսի հետ հարաբերությունների միջոցով վերհանելու տվյալ ժամանակահատվածում Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականության էությունն ու հիմնական գծերը:

Առհասարակ Եգիպտոսի ռազմավարական դերակատարությունը թուրքական արտաքին քաղաքականության համաշարում բազմատարր է՝ ընդհանուր պատմամշակութային ժառանգությունից մինչև տնտեսական և անվտանգային բաղադրիչ: Նախ՝ պայմանավորված իր աշխարհագրական դիրքով՝ Եգիպտոսն առանց-

---

[1] Տես **Watson I., Fahmy M. F.**, Turkish prime minister arrives for visit to Egypt as role widens, 14.09.2011, http://edition.cnn.com/2011/WORLD/meast/09/12/turkey.diplomacy/, հղվել է 11.02.2017 թ.:

[2] Erdoğan'ın Ortadoğu hesabı, 15.09.2011, http://gundem.bugun.com.tr/erdoganin-ortadogu-hesabi-haberi/169217, հղվել է 11.02.2017 թ.:

քային նշանակություն ունի Թուրքիայի համար դեպի Պարսից ծոցի երկրներ և աֆրիկյան շուկաներ հասնելու հարցում: Մյուս կողմից՝ Թուրքիան և Եգիպտոսը սահմանակից են Միջերկրական ծովում, ինչը լրացուցիչ անվտանգային և տնտեսական բաղադրիչ է հաղորդում երկկողմ հարաբերություններին: Բացի այդ, Եգիպտոսը վճռորոշ ազդեցություն ունի նեղոսյան երկրաքաղաքականության և այդ ենթատարածաշրջանի երկրների զարգացման վրա: Այս առումով ուշագրավ են վարչապետ Էրդողանի խոսքերը Թուրքիա-Եգիպտոս տնտեսական խորհրդի հանդիպման ժամանակ (սեպտեմբեր 2011 թ.). «*Մեր եղբայր Եգիպտոսը Արևելյան Աֆրիկայի բարօրությունը Նեղոսի միջոցով Միջերկրական է տեղափոխում: Թուրքիան նեղուցների միջոցով Եվրասիայի էներգիան և դինամիզմը, իսկ Սեյհան և Ջեյհան գետերի միջոցով Անատոլիայի բարօրությունն է հասցնում Միջերկրական*»[3]:

Թուրքիայի համար Եգիպտոսի երրորդ՝ ոչ պակաս կարևոր նշանակությունը պայմանավորված է Իսրայելի և իսրայելա-պաղեստինյան (արաբա-իսրայելական) հակամարտության հարցում վերջինիս ունեցած դիրքորոշմամբ: Իսրայելական գործոնը մշտապես վճռորոշ, երբեմն էլ հավասարակշռող դեր է ունեցել թուրք-եգիպտական հարաբերություններում: 1958 թ. Եգիպտոսի և Սիրիայի կողմից Միացյալ Արաբական Հանրապետության ստեղծումից հետո Թուրքիան, ձգտելով թույլ չտալ տարածաշրջանային մեզոհավասարակշռության խախտումն ի վնաս իրեն, անմիջապես դիմեց Իսրայելի հետ հարաբերությունների սերտացմանը[4]: Ինչ վերաբերում է քննարկվող շրջանին, ապա ինչպես Եգիպտոսի բազմամյա նախագահ Հոսնի Մուբարաքն էր բնորոշել, Եգիպտոսը «*պահպանում է քեմփդևիդյան համակարգը*»[5]: Թուրքիայի իսրայելական քաղաքականության փո-

---

[3] Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի ելույթը Թուրքիա-Եգիպտոս Աշխատանքային խորհրդի հավաքին, *«Գիպտական ալիք»-ի բաժնում* (“YouTube”), 15.09.2011, https://www.youtube.com/watch?v=xIUzu6y1QKA, արխիվացվել և հղվել է 12.02.2017թ.:

[4] Տես **Huber D.**, Turkish-Israeli Relations in a Changing Strategic Environment, https://drive.google.com/open?id=1Hby4ijO4oYQG5XCfsVAR1S94R9pmKRgQ, հղվել է 22.02.2017 թ.:

[5] **Yilmaz N., Ustun K.**, The Erdoğan Effect. Turkey, Egypt and the Future of the Middle East, *The Cairo Review of Global Affairs*, Issue 3, Cairo, Fall 2011, pp. 88-89, https://www.academia.edu/2376499/The_Erdo%C4%9Fan_Effect_Turkey_Egypt_and_the_

փոխման պայմաններում՝ վերջինս սկսեց աստիճանաբար հավանության չարժանացնել Պաղեստինի հանդեպ Եգիպտոսի քաղաքականությունը, մասնավորապես՝ Ռաֆահի անցակետը փակ պահելու հարցում[6]:

***Թուրք-եգիպտական հարաբերությունները Եգիպտոսում «Մահմեդական եղբայրների» իշխանության օրոք***

Թուրքիան առաջիններից էր, որ սատարեց եգիպտացի հեղափոխականներին՝ կոչ անելով Մուբարաքին «*ընդառաջ գնալու ժողովրդի աղաղակաչայն պահանջին*»: Խոսքը 2011 թ. Եգիպտոսում հակակառավարական շարժման սկզբնավորումից ընդամենը վեց օր անց՝ փետրվարի 1-ին, Թուրքիայի ազգային մեծ ժողովում Արդարություն և զարգացում կուսակցության խմբակցության նիստի ժամանակ Էրդողանի հայտնի ելույթի մասին է, որտեղ պարզորեն ներկայացված էր Թուրքիայի մերձավորարևելյան տեսլականը Թունիսի և Եգիպտոսի իրադարձությունների հետևապատկերին[7]:

Անդրադառնալով տարածաշրջանային վերջին հրատապ զարգացումներին՝ Էրդողանը նշեց. «*ԱԶԿ-ն միշտ իրավունքի և ազատությունների կողմնակիցն է եղել... ԱԶԿ-ն միշտ առաջադիմական ժողովրդավարության կողմնակիցն է եղել*»: Տարածաշրջանային իրադարձությունների մասով այս խոսքերը որպես նախաբան օգտագործելով՝ Էրդողանն իր հետագա ասելիքը ծանրացրեց ներքոբերյալ թեզերի վրա.

• ԱԶԿ-ն իր կառավարման սկզբունքներով մարմնավորում է ժո-

---

Future_of_the_Middle_East_Nuh_Yilmaz_and_Kadir_%C3%9Cst%C3%BCn, հղվել է 12.02.2017 թ.:

[6] Տես նույն տեղում, էջ 89:

[7] Տես ելույթի ամբողջական տեքստը՝ քաղված ԱԶԿ պաշտոնական կայքից, Recep Tayyip Erdoğan'ın 1 Şubat 2011 tarihli AK Parti grup toplantısı konuşması, https://tr.wikisource.org/wiki/Recep_Tayyip_Erdo%C4%9Fan%27%C4%B1n_1_%C5%9Eubat_2011_tarihli_AK_Parti_grup_toplant%C4%B1s%C4%B1_konu%C5%9Fmas%C4%B1, հղվել է 15.02.2017 թ.: Ելույթի ամբողջական տեսագրությունը՝ բացառյալ առաջին երկու նախադասությունը, տե՛ս Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի ելույթը ԹԱՄԺ-ում ԱԶԿ խմբակցության նիստին, *«Գիպտական ալիք»-ի քաժնում* (“YouTube”), 01.02.2011, https://www.youtube.com/watch?v=pdyd4IH-Csw, արխիվացվել և հղվել է 15.02.2017 թ.:

ղովրդավարությունը, ըստ որում՝ այն ոչ միայն Թուրքիայում, այլև ամբողջ աշխարհում «*առանց վարանելու ... զրկվածի և անիրավվածի կողքին է եղել՝ մշտապես ճակատ կազմելով ստատուս-քվոյի* (ընդգծումն իմն է – Է.Է.), *ճնշումների և անարդարության դեմ*»,

• ճիշտ ինչպես իրենց համար, այնպես էլ «եղբայր ժողովուրդների» համար Թուրքիան/ԱԶԿ-ն ցանկանում է բարգավաճում, կայունություն, անվտանգություն, զարգացում, միասնություն: ԱԶԿ-ի սկզբունքն է՝ «*ապրեցրո՛ւ մարդուն, որ ապրի պետությունը*»:

Իրավունքների և ազատությունների համար պայքարելը յուրաքանչյուրի բնական իրավունքն է, սակայն առանց բռնության դիմելու, առանց այդ պայքարին ահաբեկչություն խառնելու[8]:

Այս տրամաբանությամբ էլ շարադրված էր Եգիպտոսի նախագահին և ընդդիմադիր ժողովրդին ուղղված կոչի հատվածը. «*Առանց վարանելու ընդունե՛ք ժողովրդի պահանջն առ փոփոխություններ...*»: Ապա, դառնալով արդեն «եգիպտացի եղբայրներին»՝ Էրդողանն ասաց. «*... այս դիմադրության ընթացքում հեռո՛ւ մնացեք զենքից... Պայքարը մղե՛ք միայն հայրենի ազատություններին տիրանալու համար... Թուրքիայում կսկծալի վշտով կընդունեն անգամ մեկ եգիպտացու կորուստը՝ լինի նա զինվոր, ոստիկան, թե քաղաքացիական անձ*»[9]: Այս խոսքերը հստակորեն ցույց են տալիս, որ ստեղծված իրավիճակում Թուրքիայի համար շահավետ տարբերակը Մուբարաքի իշխանության անցնցում դադարեցումն էր:

Առհասարակ Թուրքիայի եգիպտական քաղաքականության շրջադարձը 2011 թ. «արաբական գարնան» համաշարում տարբեր կերպ է մեկնաբանվել համաշխարհային քաղաքագիտական մտքի կողմից: Մշտապես նկատելի, երբեմն էլ տիրապետող է եղել թուրքական նոր մերձավորարևելյան, այդ թվում՝ եգիպտական քաղաքականությունը դավանաբանական հիմքով Մերձավոր Արևելքում չափավոր իսլամի հիման վրա «սուննիական ճակատ» կազմելուն վերագրելը[10]: Հաշվի առնելով, որ Եգիպտոսում ընդդիմադիր շարժման առաջամարտիկը սուննի «Մահմեդական եղբայրներ» շարժումն էր,

---

[8] Տես նույն տեղերում:

[9] Նույն տեղերում:

[10] Տես **Korutürk O.**, Arab Revolution: Should we still call it “Spring”?, “Turkish Policy Quarterly”, 10(4), 2012, էջ 68, http://turkishpolicy.com/pdf/vol_10-no_4-koruturk.pdf, հղվել է 15.02.2017 թ.:

վերլուծության այս կերպը տարածվեց նաև Եգիպտոսի պարագայի վրա[11]: Բնականաբար, զուտ նեոռեալիստական դիրքերից շրջանառվեց նաև տարածաշրջանային առաջնորդող դառնալու թուրքական մղման տարբերակը[12]: Կարծում ենք՝ Եգիպտոսի հանդեպ թուրքական քաղաքականության փոփոխության հարուցիչները կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի:

Ա. Թուրք-եգիպտական հարաբերությունների ընդհանուր ճգնաժամը. չնայած տնտեսական ասպարեզում գործակցության սերտացմանը, ինչպես վերը նկատեցինք, կողմերի միջև առկա էր անհամաձայնություն՝ կապված պաղեստինյան հարցի հետ: Հայ հետազոտողներից Եղիգ Թաշճյանը «թուրք-մուբարաքյան» խզման հիմնական պատճառ է համարում հենց պաղեստինյան հարցի լուծման և «Համասի» հետ համագործակցության կերպերի հարցում տարաձայնությունները[13]: Մյուս կողմից՝ հարաբերությունների բարդացման հարցում իրենց դերն ունեին թուրք-եգիպտական մշտական մրցակցությունն ու փոխադարձ անվստահությունը, ինչը թեպետև 2000-ականների հռետորաբանության մեջ հերքվում էր, այնուամենայնիվ, չէր կարող իրապես ու ամբողջությամբ մարել: Ինչպես վկայում է Անկարայում Եգիպտոսի դեսպանության կցորդ Մուհամեդ Մուսան, Մուբարաքը մշտապես անվստահությամբ է վերաբերվել Իսրայելի հետ մերձեցման թուրքական քաղաքականությանը և վերջինիս ակտիվ արտաքին քաղաքականությունը համարել է մարտահրավեր Եգիպտոսի տարածաշրջանային առաջնորդությանը[14]: Երկկողմ հարաբերություններում ինքնագո խնդրականներից մեկն էլ հենց «Եգիպտոսի տարածաշրջանային առաջնորդություն» կոչվածն էր, որը, ըստ էության, վաղուց արդեն սկսել էր զիջել դիրքերը:

---

[11] Տես **Cornell S.,** Changes in Turkey: What Drives Turkish Foreign Policy?, *"Middle East Quarterly"*, 2012, էջ 21:

[12] Տես **Almuedo A.**, New Turkish Foreign Policy towards the Middle East: Neither so New, Nor so Turkish, 2011, էջ 8:

[13] Տես **Թաշճյան Ե.**, Թուրքիայի «Ռազմավարական խորությունը» մերձավորարևելյան և հյուսիսաֆրիկյան տարածաշրջանում, *«Տարածաշրջանային խնդիրներ»*, 1 (հունվար), 2013, էջ 56 - https://regionalaffairs.files.wordpress.com/2013/08/ra1_pp-48-73-yeghig-tashjian-davutoglu.pdf, հղվել է 14.02.2017 թ.:

[14] Տես **Taha Yossra M.**, Egyptian Insights. Highlights on the Turkish role in the region, *"Pavia University Press"*, 01.05.2012, էջ 7 https://www.academia.edu/2100621/Egyptian_Insights_highlights_on_the_Turkish_Role_in_the_Region, հղվել է 14.02.2017 թ.:

Պատճառը Եգիպտոսի ներքաղաքական բարդություններն ու կառավարման համակարգի ճգնաժամն էին, որոնք էլ, ըստ ամենայնի, նպաստեցին, որ սասանվեն Մուբարաքի դիրքերը[15]: Մի կողմից՝ մուբարաքյան թուլացող Եգիպտոսը կարող էր դառնալ անբարեհույս գործընկեր Թուրքիայի համար, մյուս կողմից էլ՝ արաբական այդ երկրի թուլացմամբ առաջ եկած ուժային վակուումը կարող էր լցվել Արևմուտքի կամ Սաուդյան Արաբիայի կողմից: Այդ իսկ պատճառով՝ Թուրքիան չհապաղեց և առաջինը դեմ դուրս եկավ մուբարաքյան վարչակարգին:

Բ. Հետգաղութատիրական-քեմփդեվիդյան մերձավորարևելյան հավասարակշռությունը, որի հիմնասյուներից մեկը ավտորիտար (ժառանգական) իշխանություններն էին, առաջին հարվածը ստացավ 2003 թ. ԱՄՆ կողմից Իրաքյան ներխուժմամբ, որ վերջնականապես ամրագրեց Իրաքում քրդական ինքնավարության գոյությունը և մեծացրեց տարածաշրջանում ԱՄՆ ներկայությունը: Հավասարակշռության փոփոխության այս երկրորդ ալիքը, որ սկզբնավորվել էր «արաբական գարունով», նույնպես կարող էր իր անբարենպաստ հետևանքներն ունենալ Թուրքիայի համար, եթե վերջինս չփորձեր հանդես բերել նախաձեռնողական արտաքին քաղաքականություն և ուժեղացնել սեփական ազդեցությունը տարածաշրջանում: Այս մասով եգիպտական «Մահմեդական եղբայրների» աճը, որոնք համագաղափարակից էին ԱԶԿ-ին և շատ հաճախ վերջինիս կայացումը համարում էին իրենց համար ընդօրինակելի տեսակերպ, մի հաջող *միջոց* էր Թուրքիայի համար՝ ձգտելու հասնել ընտրված *նպատակին*:

Մուբարաքն իշխանությունից հեռացավ 2011 թ. փետրվարի 11-ին[16]: Չանցած 20 օր՝ մարտի 3-ին, Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլահ Գյուլն աշխատանքային այցով[17] մեկնեց

[15] Տես նույն տեղում, էջ 8:

[16] Տես Turkey's stance on the revolutions in Egypt, *"Al Arabiya News"*, 17.09.2013, http://english.alarabiya.net/en/perspective/alarabiya-studies/2013/09/17/Turkey-s-stance-on-the-revolutions-in-Egypt.html, հղվել է 15.02.2017 թ.:

[17] Այցի մասին Թուրքիայի նախագահականի պաշտոնական կայքում (http://www.tccb.gov.tr/) տարածված առաջին և հիմնական ծանուցողական նյութի մեջ բացակայում էր այցատեսակի անվանումը: Փոխարենը լուրն ուներ բավականին բազմանշանակ և «գեղարվեստական» գլխագիր՝ «Հունվարի 25-ի հեղափոխությունից հետո Եգիպտոս գնացող առաջին պետական ղեկավարը» (տե՛ս 25 Ocak Devrimi'nden Sonra Mısır'a

Եգիպտոս: Թուրքիայի նախագահականի պաշտոնական կայքում տարածված հաղորդագրության համաձայն՝ այցը կազմակերպվել էր Եգիպտոսի զինված ուժերի գլխավոր խորհրդի (ԶՈՒԳԽ) ղեկավար ֆելդմարշալ Մուհամեդ Հուսեյն Թանթավիի հրավերով[18]: Նախքան Եգիպտոս մեկնելը՝ օդակայանում լրագրողներին տված հարցազրույցի ժամանակ, Գյուլն այսպես էր բնորոշել այցի նպատակը. «*Այս այցը կայարում ենք, որ մեր աջակցությունը հայտնենք Եգիպտոսի ժողովրդին և վերջինիս ցանկությունների և իղձերի ուղղությամբ բացվող նոր դարաշրջանին, ինչպես նաև որ մեր երկրի փորձը փոխանցենք իրենց: Հույս ունենք ու սպասում ենք, որ այս գործընթացից Եգիպտոսի պետությունը ուժեղ դուրս կգա...*»[19]: Ի շարս տարածաշրջանի ժողովրդավարացման ցանկության, Եգիպտոսի և Թուրքիայի՝ կարևոր ռազմավարական երկրներ լինելու և ընդհանուր պատմական անցյալի և մշակույթի մասին ավանդական թեզերի՝ արդեն իսկ Եգիպտոսում Գյուլի արած հայտարարություններում աչքի է զարնվում մեկ կարևոր թեզ, որ լույս է սփռում Թուրքիայի մերձավորարևելյան մոտեցումների վրա: Խոսքը Մուբարաքի տապալումից հետո ժամանակավոր իշխանությունը ստանձնած զինվորականության մասին է: Շեշտելով անցումային շրջանում ԶՈՒԳԽ կարևոր դերը երկրի առաջանցիկ զարգացման հարցում՝ Գյուլն ընդգծեց, որ «*... ի մոտո նկատում եմ, որ պարոն մարշալ Թանթավին և գործա-*

---

Giden İlk Devlet Başkanı, *"Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı Resmî Sitesi"*, 03.03.2011, http://www.tccb.gov.tr/haberler/170/79093/25-ocak-devriminden-sonra-misira-giden-ilk-devlet-baskani.html, հղվել է 15.02.2017 թ.): Այդ այցի վերաբերյալ նույն օրվա մեջ հրապարակված երկրորդ լուրի տողամեջում միայն հնարավոր եղավ գտնել "Çalışma ziyareti için Kahire'de bulunan Cumhurbaşkanı Abdullah Gül..." արտահայտությունը («Աշխատանքային այցով Կահիրեում գտնվող նախագահ Աբդուլահ Գյուլը...») (տե՛ս Cumhurbaşkanı Gül, Mısır'da Kanaat Önderleriyle Görüştü, *"Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı Resmî Sitesi"*, 03.03.2011, http://www.tccb.gov.tr/haberler/170/79102/cumhurbaskani-gul-misirda-kanaat-onderleriyle-gorustu.html, հղվել է 15.02.2017 թ.): Կարելի է ենթադրել, որ պայմանավորված եգիպտոսյան ներքաղաքական-սահմանադրական ճգնաժամի հետևապատկերին Գյուլի հապճեպ այցով՝ արարողակարգային որոշ դրույթներ անտեսվել էին, և սկզբնական ժամերին Թուրքիայում չգիտեին, ինչպես բնորոշել նախագահի այցը:

[18] Տես 25 Ocak Devrimi'nden Sonra Mısır'a Giden İlk Devlet Başkanı..., նույն տեղում:

[19] Cumhurbaşkanı Gül Mısır'a gitti, "Milliyet", 03.03.2011, http://www.milliyet.com.tr/cumhurbaskani-gul-misir-a-gitti/siyaset/siyasetdetay/03.03.2011/1359409/default.htm, հղվել է 15.02.2017 թ.:

*կիցները ընկալում են Եգիպտոսի ժողովրդի և երիտասարդության ցանկությունները և սպասումները*»[20]: Նույն ելույթում[21] Գյուլը շեշտել էր, որ Եգիպտոսը պետք է անցնի սահմանադրական-խորհրդարանական կառավարմանը, և որ այդ գործընթացի հետևանքով վերածվելու է տարածաշրջանի ամենազորեղ պետությանը և երջանիկ ժողովրդին: Իր հերթին Մուհամեդ Թանթավին գոհունակությամբ նշեց, որ «... *թուրքական փորձը ամենահարազատն է Եգիպտոսի ժողովրդին: Թուրքական մոդելից կարելի է շատ բան քաղել*»[22]:

2012 թ. հունիսի 24-ին Եգիպտոսի ընտրական հանձնաժողովը հայտարարեց, որ կայացած նախագահական ընտրություններում հաղթել է «Մահմեդական եղբայրների» թեկնածու Մուհամեդ Մուրսին[23]: Ուշագրավ է, որ ընտրություններն անցել էին երկու փուլով, առաջինը՝ մայիսի 23-24-ին, երկրորդը՝ հունիսի 16-17-ին: Առաջին փուլի արդյունքներով՝ Մուրսիի և մուբարաքյան շրջանի վերջին վարչապետ Ահմեդ Շաֆիկի միջև տոկոսային տարբերությունը շատ քիչ էր՝ համապատասխանաբար 25% և 23%[24]: Երկրորդ փուլում ձայները բաշխվեցին 51,7% և 48,3% մասերի[25]: Խիստ նկարագրական է, որ կանխատեսելով Եգիպտոսում սուր ներքաղաքական պայքարը ապագա թեկնածուների միջև՝ Թուրքիան մեկամյա այդ շրջանի ընթացքում ջանում էր կապեր պահպանել ապագայում նախագա-

---

[20] Mısır Demokratik, Parlamenter, Anayasal Bir Sisteme Geçmeli, "Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı Resmî Sitesi", 03.03.2011, http://www.tccb.gov.tr/haberler/170/79103/misir-demokratik-parlamenter-anayasal-bir-sisteme-gecmeli.html, հղվել է 15.02.2017 թ.:

[21] Խոսքը մարտի 3-ին Կահիրեում Թուրքիայի դեսպանության նստավայրում լրագրողների հետ կազմակերպված ասուլիսի մասին է: Ուշագրավ է ասուլիսի ընտրության վայրը՝ որպես ժամանակակից Եգիպտոսում թուրքական ներկայության և ազդեցության ընդգծում:

[22] **Ülgen Sinan**, From Inspiration To Aspiration: Turkey in the New Middle East, *"The Carnegie Papers"*, December 2011, էջ 3 - http://carnegieendowment.org/files/turkey_mid_east.pdf, հղվել է 15.02.2017 թ.:

[23] Տես Muslim Brotherhood-backed candidate Morsi wins Egyptian presidential election, *"Fox News"*, 24.06.2012, http://www.foxnews.com/world/2012/06/24/egypt-braces-for-announcement-president/, հղվել է 16.02.2017 թ.:

[24] Տես Brotherhood, Mubarak's last PM set for Egypt run-off: source, *"Reuters"*, 25.05.2012, http://www.reuters.com/article/2012/05/25/us-egypt-election-brotherhood-idUSBRE84O09R20120525, հղվել է 16.02.2017 թ.:

[25] Տես Muslim Brotherhood-backed candidate Morsi wins Egyptian presidential election..., նույն տեղում:

հի հավանական թեկնածուներից և քիչ թե շատ ազդեցիկ և երևելի առաջնորդներից բոլորի հետ: Դիցուք՝ նախագահ Գյուլն իր այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ ոչ միայն ՁՈՒԳԽ ղեկավարության, այլև առանձին-առանձին երկրի ազդեցիկ առաջնորդների ու կուսակցապետերի հետ[26]: Կարող ենք պնդել, որ Թուրքիայի համար առաջնակարգը եգիպտական նոր իշխանությունների հետ ռազմավարական կապերի պահպանումն էր, ի մասնավորի՝ տնտեսական հարցերում և Սիրիայի ու Պաղեստինի խնդիրներում: Բնականաբար, նման գործակցությունն առավել հնարավոր կլիներ «Մահմեդական եղբայրների» հաղթանակի դեպքում, որը Թուրքիայի և ԱՁԿ-ի հետ ուներ արժեքաբանական ընդհանրություններ, այդ իսկ պատճառով էլ Թուրքիան հիմնական խաղադրույքը կատարում էր վերջիններիս վրա՝ միևնույն ժամանակ տուրք չտալով «դասակարգային համերաշխության» նմանվող գործելակերպին և կապեր պահպանելով ներեգիպտական ուժային բոլոր կենտրոնների հետ: Համանման կերպով վարվեց նաև վարչապետ Էրդողանը 2011 թ. սեպտեմբերին Եգիպտոսում պատմական այցի ժամանակ՝ իր հանդիպաշարքից չբացառելով անգամ Եգիպտոսի ազատական քաղաքական շրջանակներին, որոնք ակնկալում էին, որ «Մահմեդական եղբայրների» նկատմամբ Էրդողանի ունեցած ազդեցության շնորհիվ հնարավոր կլինի կանխել «աֆղանական մոդելի» կենսագործումը Եգիպտոսում[27]:

Հուլիսի 11-ին կայացավ Մուրսիի առաջին արտասահմանյան այցը դեպի Սաուդյան Արաբիա, որտեղ քննության առնվեցին ինչպես երկկողմ, այնպես էլ տարածաշրջանային հետաքրքրության հարցեր, հիմնականում՝ սիրիական խնդիրը[28]: Մեկնաբաններն այդ օրերին նշում էին, որ սրանով նոր Եգիպտոսը փորձում էր Սաուդյան Արաբիայի հետ գործակցության միջոցով տեղորոշել իր երկրաքաղաքական դերն այդ երկրին հարազատ ռազմավարական միջավայրում՝ արաբական աշխարհում: Մյուս կողմից՝ «Մահմեդական

---

[26] Տես Cumhurbaşkanı Gül, Mısır'da Kanaat Önderleriyle Görüştü..., նույն տեղում:

[27] Տես The Lost Promise of Turkey-Egypt Relations, *"Al-Monitor"*, 24.11.2014, http://goo.gl/Ocrn9w *կամ* http://bit.ly/1JpdJtf, արխիվացվել և հղվել է 18.02.2017 թ.:

[28] Տես Egypt's Mursi visits Saudi Arabia to mend ties, *"Reuters"*, 12.07.2012, http://www.reuters.com/article/2012/07/12/us-saudi-egypt-idUSBRE86B0RX20120712, հղվել է 16.02.2017 թ.:

եղբայրների» տեսական անդամ Մուրսին խնդիր ուներ հավաստելու արաբական աշխարհի առաջատարին, որ իր քաղաքականությունը զերծ է լինելու գաղափարախոսական կաշկանդումներից[29], իսկ պաշտոնական Էր-Ռիյադը՝ միապետի գլխավորությամբ, կողմնակից էր հավաստելուն, որ պատրաստ են շարունակելու հարաբերությունները նոր Եգիպտոսի հետ[30]: Այցի ընթացքում Մուրսին շեշտեց, որ նպատակ չունի «արտահանելու» եգիպտական հեղափոխությունը և որ հավատարիմ է այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքին[31]: Հետագայում նույն սկզբունքը Մուրսիի կողմից առաջ էր քաշվելու նաև Անկարայում առաջին այցի ժամանակ, իսկ Ծոցի երկրում նման հայտարարությունն առանձնակի կարևորություն ուներ՝ հաշվառմամբ այդ երկրների բնակչության լուրջ մտավախության, որ «Մահմեդական եղբայրները»/Եգիպտոսը սատարում են իրենց երկրներում իշխանափոխական շարժումներին[32]:

Մուրսիի առաջին այցը Թուրքիա տեղի ունեցավ միայն սեպտեմբերի վերջին: Թուրքիայի արտգործնախարարության պաշտոնական կայքում այցի ակունքները բնորոշվում են որպես «ԱԶԿ 4-րդ արտահերթ համագումարի կապակցությամբ այց Թուրքիա»[33]: Իրոք, այդ օրերին աշխարհի, հատկապես մերձավորարևելյան երկրների և Իրաքյան Քրդստանի բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնատար անձինք ժամանել էին Թուրքիա՝ ներկա գտնվելու համագումարին[34]: Այդքանով իսկ՝ անտեղի կամ շահարկումների դաշտում արված հայտարարություններ էին այն գնահատականները, որ Մուրսին «անանախադեպ քայլի» է գնացել՝ արտասահմանյան երկրում ներկա գտնվելով կուսակցական ժողովի[35]:

---

[29] Տես Destination Riyadh, *"Al-Ahram Weekly On-Line"*, Issue No. 1106, Egypt - http://weekly.ahram.org.eg/2012/1106/eg1.htm, հղվել է 16.02.2017 թ.:

[30] Տես Egypt's Mursi visits Saudi Arabia to mend ties..., նույն տեղում:

[31] Տես Mursi visits Saudi Arabia on first foreign trip, *"Gulf News"*, 12.07.2012, http://gulfnews.com/news/region/egypt/mursi-visits-saudi-arabia-on-first-foreign-trip-1.1047437, հղվել է 16.02.2017 թ.:

[32] Տես նույն տեղում:

[33] Dış Politika Kronolojisi – 2012 Eylül, *"Türkiye Cumhuriyeti Dışişleri Bakanlığı – resmi sitesi"* - http://www.mfa.gov.tr/eylul___.tr.mfa, հղվել է 16.02.2017 թ.:

[34] Տես Ak Parti Kongresi'nde ağır konuklar, 30.09.2012, http://www.hurriyet.com.tr/gundem/21588818.asp, հղվել է 16.02.2017 թ.:

[35] Տես Turkey's stance on the revolutions in Egypt, *"Al Arabiya News"*..., նույն տեղում:

Համագումարին Մուրսիի ունեցած ելույթը հիմնականում հագեցած էր թուրք-եգիպտական մերձեցման տրամադրությունների ոգով: Ինչպես և Էր-Ռիյադում, այստեղ ևս կոչ հնչեցվեց միջազգային հանրությանը՝ չմիջամտելու Եգիպտոսի ներքին գործերին, որն իր հերթին համանման վարք կդրսևորի մյուս պետությունների հանդեպ: Ուշագրավ է, սակայն, որ Անկարայում Մուրսին հստակորեն հնչեցրեց և այն միտքը, որ իրենք պատրաստակամ են Թուրքիայի հետ «... *աջակցել իշխանությունների և ռեժիմների դեմ ըմբոստացող* (թարգմանություն թուրքերենից՝ "ayaklanan"[36] – Է.Է.) *մյուս ժողովուրդներին, [այդ թվում] Պաղեստինի և Սիրիայի ժողովրդի այսօրինակ ջանքերին*»[37]: Կարելի է ենթադրել, որ Մուրսիի վարչախումբը հստակորեն փորձում էր երկրի տնտեսական կայունությունն ու անվտանգային միջավայրն ապահովել անմիջական հարևան Սաուդյան Արաբիայի հետ գործակցությամբ, որի հետ պարզապես չէր կարող հարաբերությունների մեջ չմտնել, իսկ տարածաշրջային դերակատարության, միջազգային վարկի և «դեպի աշխարհ պատուհանի բացման» հարցում կողմնորոշվում էր դեպի Թուրքիա, որն իրապես երկրաքաղաքական բավականաչափ փորձ էր կուտակել այդ հարցում: Եվ Մուրսիի այս խոսքերը, որ մերձավորարևելյան տարածաշրջանային հարցերում ԱՁԿ-ական Թուրքիայի հռետորաբանության նմանօրինակն էին[38], կարելի է բացատրել հենց այս վարկածի շրջանակներում:

Վերևում նշեցինք, որ Եգիպտոսը փորձում էր արտաքին քաղաքական գործընկերների և կողմնորոշումների հարցում որոշակի

---

[36] "Ayaklanmak" բայը թուրքերենում սկզբնական իմաստով նշանակում է «քայլել, ոտքի կանգնել, արթնանալ»: Ըստ Թուրքերենի ընկերակցության հրատարակած բացատրական բառարանի՝ փոխաբերական իմաստով նշանակում է «հավաքական կերպով, ուժ և բռնություն կիրառելով, պետական ուժերի դեմ դուրս գալ ..., ապստամբել» (Türkçe Sözlük / haz.: Şükrü Halûk Akalın... [ve başk.]. – 11. bsk. – Ankara. *Türk Dil Kurumu*, 2011, էջ 198):

[37] Mısır Cumhurbaşkanı Mursi AKP Kongresinde Konuştu, 30.09.2012, *"Haberler.com"* - www.haberler.com/misir-cumhurbaskani-mursi-akp-kongresinde-konustu-3978113-haberi/, հղվել է 16.02.2017 թ.:

[38] Նույն ելույթի ժամանակ Մուրսիի արտասանած այս խոսքերն առհասարակ թուրքական պետականության հիմնաքարային բանաձևումների և պետական կարգախոսի պատճենն էին՝ «*Մենք ցանկանում ենք ապրել խաղաղության մեջ ամբողջ աշխարհի հետ*» (տե՛ս նույն տեղում; հմմտ. Քեմալի ստեղծած վերոհիշյալ կարգախոսի հետ՝ «Խաղաղություն՝ հայրենիքում, խաղաղություն՝ աշխարհում»):

դերաբաժանք իրականացնել Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի միջև, և, այդուամենայնիվ, հիմնվելով այս կարճ ժամանակահատվածի եգիպտական արտաքին քաղաքականության, հռետորաբանության, ինչպես նաև երկկողմ բազմաշերտ հարաբերությունների վերլուծության վրա՝ հստակորեն կարող ենք արձանագրել, որ Թուրքիային վերապահվում էր նկատելիորեն ավելի մեծ դեր, ինչը պայմանավորված էր բացառապես օգտապաշտական մղումներով. Թուրքիան ձգտում էր Մերձավոր Արևելքի «հնաբնակի» միջոցով մեծացնել իր ազդեցությունն արաբական աշխարհում, իսկ Մուրսիի ղեկավարած Եգիպտոսը՝ օգուտ քաղել Թուրքիայի հետ մերձեցումից, մասնավորապես՝ խթանելով տնտեսության զարգացումը և երկրաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում: Ուշադրության է արժանի, որ ԱԶԿ համագումարին ելույթ ունենալիս Մուրսին հստակորեն ճանաչել էր Թուրքիայի բացառիկ քաղաքական մենաշնորհը՝ ստանձնելու առաջնորդող դերակատարում Մերձավոր Արևելքում, առնվազն՝ արաբական աշխարհում. «*Անհրաժեշտ է [Թուրքիայի] օգնությունը՝ վերահսկելու համար տարածաշրջանային գործընթացները «արաբական գարունից» հետո*»[39]:

### *«Թուրքիայի օգնությունը». երկկողմ գործակցության հիմնական ուղղությունները (2012-2013 թթ.)*

ԱԶԿ համագումարի և ըստ այդմ՝ Մուրսիի այցի նախօրեին արդեն վերլուծական շրջանակներում քննարկվում էր, որ այցի ընթացքում կողմերն աշխատանքներ կտանեն Թուրքիայի կողմից Եգիպտոսին հատկացվելիք 2 մլրդ դոլար վարկի համաձայնագրերի ստորագրման ուղղությամբ: Սեպտեմբերի 30-ին և՛ թուրքական պաշտոնական օղակները[40], և՛ եգիպտական լրատվադաշտը[41] հաղորդեցին

[39] We need Turkey in post-revolution Arab world, Morsi says at AK Party congress, *"Today's Zaman"*, 30.09.2012, http://www.todayszaman.com/diplomacy_we-need-turkey-in-post-revolution-arab-world-morsi-says-at-ak-party-congress_293897.html, հղվել է 17.02.2017 թ.:

[40] Տես Türkiye'den Mısır'a 1 milyar dolar kredi, 30.09.2012, https://www.akparti.org.tr/site/haberler/turkiyeden-misira-1-milyar-dolar-kredi/31826#1, հղվել է 17.02.2017 թ.:

[41] Տես Egypt signs $1 billion Turkish loan deal, 30.09.2012, http://www.reuters.com/article/2012/09/30/us-egypt-turkey-loan-idUSBRE88T0G920120930, հղվել է 17.02.2017 թ.:

այն մասին, որ համաձայնություն է ձեռք բերվել Թուրքիայի կողմից 1 մլրդ դոլար վարկի տրամադրման հարցում: Դա ամսվա սկզբում խոստացված 2 մլրդ դոլար ընդհանուր վարկի առաջին տրանշն էր: Տակավին սեպտեմբերի 14-ին Անկարայում կայացած հանդիպման ժամանակ երկու երկրների տնտեսական պատասխանատուները համաձայնության էին եկել հենց 2 մլրդ վարկի հարցում, որ պետք է ուղղվեր Եգիպտոսում արտարժույթի կայունացմանը, ֆինանսական ենթակառուցվածքների բարելավմանը, ինչպես նաև դեպի Եգիպտոս թուրքական ներդրումների և դեպի Թուրքիա եգիպտական արտահանման ավելացմանը[42]:

Թեպետ երկու կողմերի լիազոր պաշտոնյաները խուսափում էին սրանից ավել մանրամասներ հայտնել, այնուամենայնիվ, շրջանառվում էին լուրեր, որ վարկերը տրամադրվելու են փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար և ըստ ամենայնի՝ ծառայելու են թուրքական ընկերությունների ներհոսքին դեպի Եգիպտոս[43]: Եգիպտա-թուրքական տնտեսական խմբի հանձնակատար Հասան Աքյուզը վստահեցնում էր, որ թուրքական ներդրումների շնորհիվ Եգիպտոսում կբացվի 50000 նոր աշխատատեղ[44]: Բացի այդ, դեռևս առաջին տրանշի մասին ԱԶԿ պաշտոնական կայքում տեղադրված լուրի մեջ հստակորեն գրված էր, որ «*շարունակվում են աշխատանքները Թուրքիայի Eximbank-ի կողմից Թուրքիայից Եգիպտոս արտահանվելիք ապրանքների և ծառայությունների ֆինանսավորման նպատակով 1 մլրդ դոլար ծավալով ֆինանսական հնարավորություն ապահովելու ուղղությամբ*»[45]: Կասկածից դուրս է, որ Եգիպտոսին տրամադրվելիք ֆինանսական աջակցությունը (ոչ բնավ օգնությունը) հումանիտար լիցք չպարունակող և դասական պրագմատիկ քայլ էր՝ ուղղված այդ երկրում Թուրքիայի տնտեսական դիրքերի

---

[42] Տես وزير المالية . حزمة مساعدات تركية بقيمة مليار دولار لمساندة الاقتصاد المصري, "Mubasher", 15.09.2012, http://www.mubasher.info/mobile/EGX/news/2156686/وزير-المالية-حزمة-مساعدات-تركية-بقيمة-مليار-دولار-لمساندة-الاقتصاد-المصري, հղվել է 18.02.2017 թ.:

[43] Տես Turkey seeks new alliance with visit to Egypt, *"The National"*, 17.11.2012, http://www.thenational.ae/news/world/middle-east/turkey-seeks-new-alliance-with-visit-to-egypt, հղվել է 16.02.2017 թ.:

[44] Տես With loans, a flood of Turkish business, *"Egypt Independent"*, 08.10.2014, http://www.egyptindependent.com/news/loans-flood-turkish-business, հղվել է 17.02.2017 թ.:

[45] Türkiye'den Mısır'a 1 milyar dolar kredi..., նույն տեղում:

պահպանմանը: Պատահական չէ, որ Մուրսիի այցի նույն օրերին՝ հոկտեմբերի 1-ին, Թուրքիա-Եգիպտոս Աշխատանքային խորհրդի հավաքի ժամանակ Թուրքիայի տնտեսության նախարար Զաֆեր Չաղլայանը շնորհակալություն էր հայտնել հեղափոխության շրջանում Եգիպտոսը չթողած թուրք գործարարներին՝ կոչելով, որ անհրաժեշտ է երկկողմ առևտրի ծավալն ավելացնել մինչև 3 անգամ՝ հասցնելով 15 մլրդ դոլարի[46]:

Տնտեսական համագործակցության ասպարեզում կարևոր էր 2012 թ. ապրիլի վերջից Մերսին-Ալեքսանդրիա, Մերսին-Պորտ-Սայիդ ծովային բեռնափոխադրումների (Roll-on/Roll-off) մեկնարկը[47]: Սիրիական ճգնաժամում Թուրքիայի դիրքորոշմամբ պայմանավորված՝ Արաբական Հանրապետությունը 2011 թ. դեկտեմբերի մեկին կասեցրել էր երկկողմ ազատ առևտրի մասին համաձայնագրի շրջանակներում իրականացվող աշխատանքները[48]. սպասվում էր, որ որոշ ապրանքների համար թուրք արտահանողները ստիպված էին լինելու վճարել մոտ 30% հարկ[49]: Այս համաշարում Եգիպտոսի միջոցով Ծոցի և Մերձավոր Արևելքի շուկաներ հասնելը դառնում էր օրախնդիր: Թուրքական նավերը ուղևորվելու էին մինչև վերոնշյալ նավահանգիստներ, որտեղից բեռները ցամաքային ճանապարհով տեղափոխվելու էին դեպի Եգիպտոսի սուեզյան Աղաբիյա կամ կարմիրծովյան Սաֆագա նավահանգիստ, այնտեղից էլ նույն ծովային բեռնափոխադրման եղանակով՝ Հորդանան և Սաուդյան Արաբիա: Ամբողջ տեղեկությունը կազմելու էր 3,5 օր[50]: Եվ չնայած պետական մարմինների հավաստիացումներին, որ Մերսին-Ալեքսանդրիա գիծը

---

[46] Տես Mursi: Türkiye'yi ikinci vatanım olarak görüyorum, *"Yeni Şafak"*, 01.10.2012, http://www.yenisafak.com.tr/dunya/mursi-turkiyeyi-ikinci-vatanim-olarak-goruyorum-412478, հղվել է 17.02.2017 թ.:

[47] Տես **Taha Y.M.**, Egyptian Insights..., էջ 10:

[48] Տես Ekonomide 2011 yılı (Ekim, Kasım, Aralık), "Zaman", 22.12.2011, http://www.zaman.com.tr/ekonomi_ekonomide-2011-yili-ekim-kasim-aralik_1218298.html, հղվել է 22.02.2017 թ.:

[49] Տես Bypassing Syria for Gulf destinations example of Turkey's peaceful diplomacy, **"Today's Zaman"**, 24.04.2012, http://www.todayszaman.com/news-278474-bypassing-syria-for-gulf-destinations-example-of-Turkeys-peaceful-diplomacy.html, հղվել է 22.02.2017 թ.:

[50] Տես Denizaşırı Ortadoğu!, "Habertürk Ekonomi", 23.04.2012, http://ekonomi.haberturk.com/makro-ekonomi/haber/736472-denizasiri-ortadogu, հղվել է 22.02.2017 թ.:

իդեալական կերպով կփոխարինի սիրիական ուղիներին[51], այնուամենայնիվ, Թուրքիայում անվստահություն կար, որ սա միայն ժամանակավոր և միջանկյալ նշանակություն կարող է ունենալ և չի կարող կատարելապես փոխարինել սիրիական սահմանին հարող Հաթայի և Գազիանթեփի (պատմական Այնթապ)[52] բնակչության լոգիստիկ զբաղմունքը[53]:

Տնտեսական համագործակցությունից բացի, թուրք-եգիպտական երկուսուկեսամյա մերձեցման շրջանը նշանավորվեց նաև ռազմական ծրագրերի անցկացմամբ: Չնայած Եգիպտոսում ընդհանուր իշխանական ճգնաժամին՝ 2011 թ. դեկտեմբերի 17-23-ը Թուրքիայի հովանու ներքո անցկացվեց «Բարեկամության ծով» ծովային զորավարժության հերթական փուլը: Զորավարժության հռչակված նպատակը «երկու երկրների ռազմածովային ուժերի ստորաբաժանումների միջև փոխգործակցության և համատեղ օպերատիվ գործելու կարողությունների զարգացումն» էին[54]: Երկու կողմերն էլ հատուկ ընդգծում էին, որ զորավարժություններն ուղղված չեն որևէ կոնկրետ երկրի դեմ[55], թեպետ ակնհայտ է, որ Թուրքիայի համար Եգիպտոսի հետ ռազմական համագործակցության կարևորությունը պայմանավորված էր մի կողմից՝ «Մավի Մարմարայի» դեպքից հետո Իսրայելի հետ լարված հարաբերություններով, մյուս կողմից էլ իհարկե՝ Սիրիայում շարունակվող ներքին պատերազմով[56]:

Չնայած վերոբերյալ համագործակցային միջավայրին և մի-

---

[51] Տես նույն տեղում:

[52] Գազիանթեփում նկատվում էր գործազուրկների թվի աճ մինչև 3000 մարդ՝ պայմանավորված սիրիական ճգնաժամով (Bypassing Syria for Gulf destinations example of Turkey's peaceful diplomacy, *"Today's Zaman"*, 24.04.2012, http://www.todayszaman.com/news-278474-bypassing-syria-for-gulf-destinations-example-of-Turkeys-peaceful-diplomacy.html, հղվել է 22.02.2017 թ.):

[53] Տես նույն տեղում:

[54] Տես Mısır'la 'Dostluk' tatbikatı, *"Sabah"*, 18.12.2011, http://www.sabah.com.tr/gundem/2011/12/18/misirla-dostluk-tatbikati, հղվել է 18.02.2017 թ.:

[55] Տես Mısır: Dostluk Denizi tatbikatı hiçbir ülkeyi hedef almıyor, *"Yeni Şafak"*, 15.12.2011, http://www.yenisafak.com.tr/dunya/misir-dostluk-denizi-tatbikati-hicbir-ulkeyi-hedef-almiyor-356903, հղվել է 18.02.2017 թ.:

[56] Տես Mısır Savunma Bakanı El Sisi Türkiye'de, **"Haberler.com"**, 05.05.2013, http://www.haberler.com/misir-savunma-bakani-el-sisi-turkiye-de-4592233-haberi/, հղվել է 18.02.2017 թ.:

տումներին, այնուամենայնիվ, անգամ «Մահմեդական եղբայրների» վարչակարգի օրերին թուրք-եգիպտական մրցակցության որոշակի աստիճան պահպանվեց, թեպետ հայտարարությունների մակարդակով կողմերը ջանում էին հակառակը պնդել: Այսպես, 2012 թ. հոկտեմբերի 1-ին Թուրքիա-Եգիպտոս Աշխատանքային խորհրդի հավաքի ժամանակ, առաջարկելով երկուստեք վերացնել մաքսատուրքերն ու վիզային ռեժիմը, Մուրսին պարզաբանել էր՝ «*Թուրքիայի հետ նույն նպատակներն ու մարտավարությունն ունենք, և մեր երկու եղբայրական երկրների միջև շատ նմանություններ կան, ուստի՝ պետք է մրցակցության փոխարեն համագործակցությունը տիրող լինի*»[57]:

Միևնույն ժամանակ, սակայն, Եգիպտոսում հասկանում էին, որ երկրի թուլացման հետևանքով Թուրքիայի տնտեսական դիրքերի է՛լ ավելի ուժեղացումն անկասելի է, այդ իսկ պատճառով փորձ էր արվում համագործակցության արդյունքում ոչ թե խորացնել այդ երևույթը, այլ փորձել մեղմել ու հակառակին հասնել: Այս առումով խիստ նկարագրական է նույն ելույթի ժամանակ Մուրսիի կոչը եգիպտացի գործարարներին՝ գալու և իրենց հերթին ներդրումներ իրականացնելու Թուրքիայում՝ «*եկե՛ք, դուք էլ Թուրքիայում ներդրումնե՛ր արեք*»[58]: Կարող ենք ենթադրել, որ նման ձեռնարկումով Մուրսին փորձում էր ոչ միայն արտաքին խնդիրներ լուծել, այլև տնտեսապես թուլացած երկրի ներսում Թուրքիայի հետ տնտեսական համագործակցության միջոցով կերտել տնտեսվարողների նոր դաս, որ զգալապես հենարան կծառայեր իր իշխանության համար՝ հակակշռելով զինվորականությանը և բանակին[59]:

---

[57] Mursi: Vize ve gümrük vergilerini kaldıralım, **"İhracat Haber"**, 02.10.2012, http://www.ihracathaber.com/dunya/mursi-vize-ve-gumruk-vergilerini-kaldiralim-h1998.html, հղվել է 22.02.2017 թ.:

[58] Mursi: Türkiye'yi ikinci vatanım olarak görüyorum..., նույն տեղում:

[59] Առհասարակ «Մահմեդական եղբայրների» իշխանակալության շրջանն աչքի ընկավ Եգիպտոսի համար հիմնականում բացասական դրսևորումներով: Երկար տարիներ արգելված գործունեության պայմաններում ընդհատակում գործած և այժմ հեղափոխության ալիքով իշխանության եկած «Մահմեդական եղբայրները» շատ թույլ սոցիալ-տնտեսական հենարան ունեին երկրի ներսում, ուստի՝ սեղմ ժամկետներում իշխանության կազմավորման համար կիրառում էին հիմնականում ավտորիտար մեթոդներ: Մի կողմից՝ «կադրային ջարդի», մյուս կողմից՝ զինվորականության դերի կրճատման միջոցով փորձ էր արվում միատարրացնել

Եթե տնտեսական ասպարեզում մրցակցությունը հազիվ նշմարելի էր, քանզի Եգիպտոսը տակավին բավականին հետ էր այդ առումով Թուրքիայից, ապա քաղաքական ոլորտում տարաձայնություններն ավելի ակնառու էին: Այդ տարաձայնություններն այս կամ այն կերպ պտտվում էին Եգիպտոսի հանդեպ Թուրքիայի կողմից քաղաքական ազդեցություն բանեցնելու և այսպես կոչված՝ «թուրքական մոդելի» արտահանման շուրջ: Առաջին սաղմերը նկատվեցին Էրդողանի՝ 2011 թ. սեպտեմբերտասներկուսյան պատմական այցի ժամանակ, երբ վերջինս հանրային ելույթի ժամանակ հորդորեց եգիպտացիներին՝ որդեգրելու աշխարհիկ պետական կարգեր և սահմանադրություն[60]: Եվ չնայած այն դրականորեն բուռն ընդունելությանը, որ Էրդողանը ստացավ այցի ժամանակ, այս հայտարարությունը միանշանակորեն չընդունվեց եգիպտական հասարակական-քաղաքական շրջանակների կողմից: Ավելին, «Մահմեդական եղբայրների» խոսնակ Մահմուդ Ղեզլանը նշեց, որ Էրդողանը հարգի գործիչ է կազմակերպության համար, սակայն նրա ասածները չեն կարող անքննելիորեն ընդունվել Եգիպտոսի համար, որին աշխարհիկ կարգերը խորթ են, և ըստ այդմ էլ՝ Էրդողանի խոսքերը համարվեցին միջամտություն Եգիպտոսի ներքին գործերին[61]:

Դրանից հետո Եգիպտոսում սկսեցին ավելի ու ավելի շատ խոսել այն մասին, որ երկիրն ունի տարածաշրջանային գերիշխանության

---

երկրի քաղաքական կառուցվածքն ու իշխանական համակարգը: Այսպես, օգոստոսի 14-ին լուր ստացվեց, որ Մուրսին պաշտոնից ազատել է պաշտպանության նախարար Թանթավիին, ինչպես նաև գեներալ-լեյտենանտ Սամի Անանին: Արդեն այն ժամանակ ոմանք սա դիտարկում էին որպես «թավշյա» հեղափոխության փորձ՝ մտահոգություն հայտնելով, որ երկրի իշխանական համակարգն ընթանում է բեռացման ուղով՝ «... *առաջ կար պետություն, որի դեմ կարելի էր ապստամբել, հիմա պետություն չկա, միայն Մուրսին է և «Մուսուլման եղբայրները»* (տե՛ս **Եղիազարյան Դ.**, Եգիպտոսում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության տապալման պատճառների շուրջ, ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու 2(2), Հասարակական գիտություններ (Արևելագիտություն, պատմություն), Երևան, 2014, էջ 40 - http://ysu.am/files/Hator%202.%20pp.%2039-46.pdf, հղվել է 22.02.2017 թ., ինչպես նաև Եգիպտոսում փոխել են պաշտպանության նախարարին, *«Ռազմ.info»*, 14.08.2012, http://razm.info/7627, հղվել է 22.02.2017 թ.):

[60] Տես Laiklik ateizm değil, korkmayın!, *"Gazete Vatan"*, 14.09.2011, http://www.gazetevatan.com/laiklik-ateizm-degil--korkmayin--399589-gundem/, հղվել է 22.02.2017 թ.:

[61] Տես **Taha Y.M.**, Egyptian Insights..., էջք 15-16:

իր փորձն ու տեսլականը, այդ թվում՝ պետականաշինության մոդելը, և թուրքական ԱԶԿ-ի փորձը չի կարող ուղղակիորեն պատճենվել[62]: Ավելին՝ հետագայում «Մահմեդական եղբայրության» քաղաքական օրգանը՝ իշխող «Ազատություն և արդարություն» կուսակցությունը, էլ ավելի էր բացել խաղաքարտերը՝ կապված Թուրքիայի հետ մերձեցման շարժառիթների հետ: 2012 թ. ապրիլի 5-ին՝ Կահիրեի համալսարանի Տնտեսական և քաղաքական գիտությունների ֆակուլտետի ասիստենտ Յոսրա Թահայի հետ հարցազրույցի ժամանակ, ԱԱԿ քարտուղար Ամր Դարագը նշել էր. «*Աշխարհիկ պետության մասին Էրդողանի հայտարարությունը մանրուք է, և ԱԱԿ հեռաքրքրությունն առ Թուրքիա պայմանավորված չէ զուտ նրանով, որ այն իսլամական պետություն է: Պատճառը, անշուշտ, համագործակցության բազում առկա հեռանկարներն են*»[63]: Այսպիսով, ինչպես դիպուկ է նկատում շվեդ հայտնի մասնագետ Սվանտե Կորնելը՝ վերլուծելով Էրդողանի այդ հայտարարությունը, «*2011 [թվականի] իրադարձությունները ցույց տվեցին, որ առնվազն այդժամ Թուրքիայի հռետորաբանությունը* (նկատի ունի Մերձավոր Արևելքում գաղափարաքաղաքական առաջնորդություն ստանձնելու – Է.Է.) *չէր համապատասխանում վերջինիս ունեցած ազդեցության իրական մակարդակին*»[64]:

### *Երկկողմ հարաբերություններում ռազմավարական լճացման շրջանը*

2013 թ. հուլիսի 3-ին բարձրաստիճան զինվորականների դաշինքը՝ Աբդել Ֆաթահ ալ-Սիսիի գլխավորությամբ, քառօրյա ժողովրդական բազմամարդ ցույցերից հետո իշխանությունից հեռացրեց նախագահ Մուրսիին՝ ներկալելով վերջինիս տնային կալանքի և

---

[62] Տես **Tziarras Zenonas**, Turkey-Egypt: Turkish Model, Political Culture and Regional Power Struggle, *Strategy International* / SI Research Paper No. 4/2013, էջ 4, 11, https://www.academia.edu/4926354/Turkey-Egypt_Turkish_Model_Political_Culture_and_Regional_Power_Struggle, հղվել է 15.02.2017 թ.:

[63] Հարցազրույցն իրականացվել է արաբերենով, ձայնագրվել, բայց հետագայում չի հրապարակվել: Տե՛ս հեղինակի նշված հոդվածը՝ **Taha Y.M.**, Egyptian Insights..., էջ 16:

[64] **Cornell S.**, Changes in Turkey..., p. 23:

կասեցնելով սահմանադրության գործողությունը[65]: Եգիպտոսի սահմանադրական դատարանի ղեկավար Ադլի Մանսուրը հեղափոխականների կողմից նշանակվեց երկրի ժամանակավոր նախագահ[66]: Հաջորդ օրը Դոլմաբահչեի նստավայրում վարչապետ Էրդողանը հրավիրեց արտահերթ հանդիպում՝ մասնակցությամբ վարչապետի օգնական Բյուլենթ Արընչի, մշակույթի նախարար Օմեր Չելիկի, ԱԶԿ Գլխավոր քարտուղարի օգնական Հուսեյն Չելիկի, Մեվլութ Չավուշօղլուի և արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուի[67], որն այդ նպատակի համար առկախեց դեպի Ասիա ձեռնարկվող շրջագայությունը[68]: Էրդողանն էլ իր հերթին կիսատ էր թողել արձակուրդը, որպեսզի հրավիրի արտահերթ հանդիպում[69]: Այս հապճեպ գործընթացը հերթական ցայտուն վկայությունն է այն բանի, թե որքան կարևոր էին Թուրքիայի համար եգիպտական գործոնը և այդ հարցով արագ վճռահատությունը:

Արդեն հաջորդող օրերին թե՛ Էրդողանը, թե՛ Դավութօղլուն հանդես եկան Մուրսիի տապալման սուր քննադատություններով: Երկուսի մոտ էլ հիմնական շեշտադրումը «ժողովրդավարական ճանապարհով ընտրված ղեկավարության բռնի տապալման անթույլատրելիության» մասին թեզն էր[70]: Ըստ որում՝ Էրդողանը համեմատական եզրեր էր անցկացնում նաև Թուրքիայի ապրած ռազմական հեղաշրջումների հետ՝ պնդելով, որ դրանք «... *բոլորը կաթվածահար են արել Թուրքիայի տնտեսությունը՝ ստիպելով պետությանը, ազգին*

---

[65] Տես Coup topples Egypt's Morsy: deposed president under «house arrest», *"CNN"*, 04.07.2013, http://edition.cnn.com/2013/07/03/world/meast/egypt-protests, հղվել է 22.02.2017 թ.:

[66] Տես **Եղիազարյան Դ.**, Եգիպտոսում..., էջ 39:

[67] Տես Erdoğan'dan flaş Mısır toplantısı, *"Sözcü Gazetesi"*, 04.07.2013, http://www.sozcu.com.tr/2013/gundem/erdogandan-flas-misir-toplantisi-328574/, հղվել է 22.02.2017 թ.:

[68] Տես Turkey Calls Military Overthrow Of Egypt's Mohammed Morsi 'Unacceptable', *"The Huffington Post"*, 04.07.2013, http://www.huffingtonpost.com/2013/07/04/turkey-egypt_n_3545765.html, հղվել է 22.02.2017 թ.:

[69] Տես Mısır'daki darbe, AKP için stratejik kayıp, *"Al-Monitor"*, 05.07.2013, http://www.al-monitor.com/pulse/tr/originals/2013/07/egypt-coup-is-erdogan-loss.html, հղվել է 22.02.2017 թ.:

[70] Տես ա) Turkey PM blasts Egypt 'coup' as enemy of democracy, *"France 24"*, 05.07.2013, http://www.france24.com/en/20130705-turkey-pm-blasts-egypt-coup-enemy-democracy, հղվել է 06.07.2017 թ.,

բ) Turkey Calls Military Overthrow..., նույն տեղում:

*և երիտասարդ սերնդին շատ բանկ գին վճարելու դրա համար*»[71]: Հուլիսի 6-ի երեկոյան Էրդողանը նաև հեռախոսազրույց ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բան Կի-Մունի հետ՝ հայտնելով իր անհանգստությունը՝ «*կապված Եգիպտոսում իշխանության բռնի տապալման և քաղաքացիական կարգերի դադարեցման հետ*»[72]: Ի վերջո, նկատելով համաշխարհային ուժային բևեռների ոչ միանշանակ վերաբերմունքն այս հարցում՝ էրդողանյան հռետորաբանությունը դարձավ ավելի ագրեսիվ. սկսվեցին ընդգծվել նաև Արևմուտքին ուղղված քննադատական կոչերն առ այն, որ վերջինս կիրառում է երկակի ստանդարտների քաղաքականություն՝ չդատապարտելով Մուրսիի տապալումը՝ որպես հեղաշրջում[73]:

Տեղին է, սակայն, հիշատակելը, որ չնայած նախահեղափոխական շրջանի դրական հարաբերությունների շեշտակի անկմանը և դեսպանների փոխադարձ հետկանչմանը, ապա և վտարմանը, այդուամենայնիվ, կողմերը չէին դիմում հարաբերությունների առարկայական և բացահայտ խզման: Այսպես, հուլիսի 30-ին թուրքական մամուլում ակտիվորեն սկսեցին շրջանառվել լուրեր առ այն, որ Թուրքիան կասեցնելու է Եգիպտոսի հետ կնքած շուրջ 27 պայմանագրերի գործողությունը, հիմնականում՝ տնտեսական բնույթի[74]: Նույն օրը, սակայն, արտաքին գործերի նախարարության խոսնակը պարզաբանեց, որ այդ լուրերն անհիմն են, և ուժի մեջ մտած պայմանագրերը շարունակում են գործել[75]: Եգիպտոսի հետ հարաբերությունները շարունակելու մասին 2014 թ. հունվարի վերջին հայտարարել էր նաև նախագահ Գյուլը իտալական "Corriere della Sera" և "Il Sole 24 Ore" թերթերին տված հարցազրույցում՝ «*Թեկուզև ցածր*

---

[71] Turkey PM blasts Egypt 'coup'..., նույն տեղում:

[72] Erdoğan BM Genel Sekreteri Ban Ki-Mun ile görüştü, *"Hürriyet"*, 07.07.2013, http://www.hurriyet.com.tr/gundem/23673035.asp, հղվել է 15.03.2017 թ.:

[73] Տես նույն տեղում:

[74] Տես Anlaşmalar askıya alınmaya başladı, *"Sabah"*, 30.07.2013, http://www.sabah.com.tr/dunya/2013/07/30/anlasmalar-askiya-alinmaya-basladi, հղվել է 22.02.2017 թ.: Նկատենք, որ լուրը հրապարկվել է նաև իշխանական «Սաբահ» լրատվակայքում:

[75] Տես SC-22, 30 Temmuz 2013, Dışişleri Bakanlığı Sözcüsünün Ülkemiz ile Mısır Arasındaki Anlaşmaların Tarafımızdan Askıya Alındığı İddiası Hakkındaki Bir Soruya Cevabı, *"Türkiye Cumhuriyeti Dışişleri Bakanlığı – resmi sitesi"*, 30.07.2013, http://www.mfa.gov.tr/sc-22_-30-temmuz-2013_-disisleri-bakanligi-sozcusunun-ulkemiz-ile-misir-arasindaki-anlasmalarin-tarafimizdan-askiya-alindigi_.tr.mfa, հղվել է 22.02.2017 թ.:

*մակարդակի վրա, բայց մեր հարաբերությունները շարունակվում են»*[76]:

***Եզրակացություն***

Հանրագումարի բերելով 2009-2013 թթ. Թուրքիայի եգիպտական քաղաքականությունը՝ կարող ենք արձանագրել, որ սկզբունքային առումով այն օրգանական շարունակությունն էր նախկինի, այդ թվում՝ օզալյան շրջանի քաղաքականության, որտեղ կարևորվում էին Եգիպտոսի ունեցած ռազմավարական նշանակությունը Թուրքիայի ազգային շահերի համաշարում: Մյուս կողմից՝ մերձավորարևելյան նոր իրողությունը՝ «արաբական գարունը», անկրկնելի հնարավորություն էր ընձեռում Թուրքիային, հավատարիմ իր արտաքին քաղաքականության գաղափարաբանությանը, փորձելու մեծացնել սեփական տնտեսաքաղաքական ազդեցությունը Եգիպտոսում և առհասարակ տարածաշրջանում: Այս նպատակի համար որպես հարմար միջոց էր ընտրված Մերձավոր Արևելքում տասնամյակների լուսանցքայնացումից հետո բարձրացող «Մահմեդական եղբայրներին» սատարելը՝ փորձելով դրանցում մարմնավորել չափավոր իսլամի սեփական պատկերացումները: Վերջիններիս տապալումը Եգիպտոսում հանգեցրեց երկկողմ հարաբերությունների սրմանը:

Այնուամենայնիվ, սխալ կլինի թուրք-եգիպտական միջպետական հարաբերությունների բովանդակությունը պայմանավորել դավանական-«դասակարգային» հակամարտով: Այսպես, 2013 թ. խզումը բացատրող տեսակետների շարքում տիրապետողներից է այն, որ Եգիպտոսում 2013 թ. հուլիսի 3-ին իշխանությունը ստանձնեցին զինվորականները, ինչը Թուրքիայի ընդդիմադիր վարքը պայմանավորող հիմնական գործոնն էր[77]: Փաստորեն, զանց է առնվում այն պարագան, որ 2011 թ. հունվարքսանհինգյան հեղաշրջումից

---

[76] "2013'te Olumsuz Olaylar Yaşadık; 2014'te Yeniden Parlamak İçin Her Şey Yapılacaktır", *"Türkiye Cumhuriyeti Cumhurbaşkanlığı"*, 2801.2014, http://www.tccb.gov.tr/haberler/170/88379/2013te-olumsuz-olaylar-yasadik-2014te-yeniden-parlamak-icin-her-sey-yapilacaktir.html, հղվել է 23.02.2017 թ.:

[77] Տե՛ս օրինակ՝ The Biggest Loser of Cairo's Coup: Turkey, "U.S. News & World Report", 18.07.2013, http://www.usnews.com/opinion/blogs/world-report/2013/07/18/turkeys-erdogan-is-in-a-bad-position-due-to-egypts-coup-against-morsi, հղվել է 22.02.2017 թ.:

հետո ևս իշխանությունը ստանձնել էին զինվորականները, և Գյուլի մարտյան այցը հենց Եգիպտոսի բարձրաստիճան զինվորականության հրավերով էր կազմակերպված: Մեր կարծիքով՝ 2013 թ. Թուրքիայի անտագոնիստական հռետորաբանությունն ավելի շատ պայմանավորված էր այդ երկրի ներսում համանման իրադարձությունների անցկացումով (Գեզիի դեպքեր), ինչպես նաև Եգիպտոսում «Մահմեդական եղբայրների» տապալման հետևանքով ամբողջ մերձավորարևելյան պրոյեկտի անկմամբ: Հարկ է հիշել, որ արդեն 2013 թ. դեկտեմբերի 25-ին «Մահմեդական եղբայրները» Եգիպտոսում ճանաչվեց ահաբեկչական կազմակերպություն[78]: Մերձավոր Արևելքում սեփական ուժային կենտրոն ստեղծելու նպատակ ունեցող երկիրը, որ որդեգրել է նախաձեռնողական քաղաքականություն, չէր կարող զուգահեռաբար որդեգրել կոմֆորմիստական վարքականոն, ինչքան էլ որ հակառակի պարագայում վտանգ կար՝ հայտնվելու դիվանագիտական մեկուսացման մեջ: Այդ պատճառով էլ, եթե տարածաշրջանի մյուս երկրների, այդ թվում՝ Թուրքիայի դաշնակից Քաթարի համար բարդություն չեղավ վերստին հարաբերությունների մեջ մտնելը Եգիպտոսի հետ[79], ապա Թուրքիայի պարագայում այդ սկզբունքային անհամաձայնությունը շարունակեց պահպանվել:

**Բանալի բառեր** - *Թուրքիա, Եգիպտոս, Միրիա, «արաբական գարուն», Թուրքիայի արտաքին քաղաքականություն*

**ЭДГАР ЭЛБАКЯН** – ОТНОШЕНИЯ ТУРЦИИ С ЕГИПТОМ В КОНТЕКСТЕ “АРАБСКОЙ ВЕСНЫ”

В статье рассматриваются двусторонние отношения Турции и Египта накануне и во время египетской революции (2011 г.). Анализируются роль Египта в контексте ближневосточной политики Турции, причины отличных друг от друга подходов турецкой элиты по отношению к революционным и антиреволюционным правителям в Египте. Сделана попытка показать, что на примере египетской политики Турции можно охарактеризовать общую

[78] Stu Kahire ile normalleşme kriterleri, *“Al Jazeera Turk”*, 09.01.2015, http://www.aljazeera.com.tr/al-jazeera-ozel/kahire-ile-normallesme-kriterleri, 23.02.2017 թ.:

[79] Stu **Bekdil Burak**, Erdogan’s Egyptian Nightmare, “Gatestone Institute”, 30.01.2014, http://www.gatestoneinstitute.org/4984/erdogan-egypt, հղվել է 30.12.2017 թ.:

ближневосточную политику Турции в данном периоде.

***Ключевые слова:*** *Турция, Египет, Сирия, «арабская весна», внешняя политика Турции*

**EDGAR ELBAKYAN** – TURKEY-EGYPT RELATIONS IN THE CONTEXT OF THE "ARAB SPRING"

The current article investigates the Turkey-Egypt relations in the eve and during the revolution in Egypt (2011). The role of Egypt in the context of Turkey's overall Middle Eastern policy, the reasons stipulating the differences between Turkey's policy towards Egypt's revolutionary and anti-revolutionary authorities are analyzed in the article. An attempt is made to show that it is possible to understand Turkey's Middle Eastern policy through Turkey's policy towards Egypt.

***Key words:*** *Turkey, Egypt, Syria, "Arab Spring", Foreign Policy of Turkey*

# ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

*Ալվինա Աղաբաբյան, ԵՊՀ*

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց՝ միջնորդելու Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդների առջև ԼՂԻՄ-ն ԱդրԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու համար. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետին և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետին՝ խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն սովետի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»[1]: Սա, ըստ էության, ԼՂԻՄ բնակչության տասնյակ տարիների իղձերի ու ձգտումների իրավական ձևակերպումն էր:

Սկսած 1921 հուլիսի 5-ից, երբ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար մարզ բռնակցվեց ԱդրԽՍՀ-ին, Արցախի հայ բնակչության ձգտում-պահանջը՝ կրկին միավորվել մայր հայրենիքի հետ, մշտապես հնչեցվել է ամենատարբեր մակարդակներում: Տասնամյակների ընթացքում ԼՂԻՄ-ում Ադրբեջանի վարած խտրական քաղաքականությունը, մարզի սոցիալ-տնտեսական, գիտամշակութային զարգացման հետնողական և կանխամտածված խոչընդոտումը, մարզի ժողովրդագրական պատկերը փոխելու նպատակով ԼՂԻՄ-ի հայաթափումը և դրան զուգահեռ մարզում ադրբեջանցիների թվի ավելացումը, ինչպես նաև Հայաստանի հետ բազմոլորտ ու ամենատարբեր ձևաչափերի շփումների և կապերի հաստատման արգելակումը[2] հանգեց-

[1] «Սովետական Ղարաբաղ», 1988 փետրվարի 21, թիվ 43:

[2] Այս մասին առավել մանրամասն տես **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջք 252-272, **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան

ին մարզի՝ միութենական այդ հանրապետության կազմից դուրս բերման անհրաժեշտությանը: Արցախը Հայաստանին վերամիավորելու փորձեր արվել էին 1930-ական թթ., 1945, 1965, 1967, 1977 թվականներին[3], սակայն ամեն անգամ հայկական կողմի արդարացի պահանջը մերժվել էր թե՛ մոսկովյան և թե՛ ադրբեջանական իշխանությունների կողմից: 1980-ականներին արդեն ԼՂԻՄ-ում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ակնհայտ էր, որ իրադարձությունների այդօրինակ ընթացքի պարագայում Ղարաբաղն անխուսափելիորեն արժանանալու էր Նախիջևանի ճակատագրին և ամբողջությամբ հայաթափվելու էր:

1985 թվականին, երբ ԽՄԿԿ գլխավոր քարտուղար ընտրվեց Միխայիլ Գորբաչովը՝ հրապարակ բերելով վերակառուցման, հրապարակայնության և ժողովրդավարության կարգախոսները, ԼՂԻՄ բնակչությունը կրկին բարձրացրեց իրեն հուզող հարցը: Երկրում հռչակված վերակառուցման քաղաքականությունը հայերին հույս էր ներշնչել, որ ղարաբաղյան խնդին ի վերջո արդարացի լուծում կստանա:

1988 թ. փետրվարի 13-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ առաջին հանրահավաքը, որի ընթացքում քաղաքի կենտրոնական հրապարակ դուրս եկած հազարավոր արցախցիներ հանդես եկան ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ի հետ վերամիավորելու պահանջով[4]: Ստեփանակերտում և շրջաններում գրեթե մեկ շաբաթ անդադար շարունակվող խաղաղ ցույցերից ու հանրահավաքներից հետո ԼՂԻՄ մարզխորհուրդն ընդունեց իր պատմական որոշումը, որը ցնծությամբ ընդունվեց ինչպես մարզում, այնպես էլ Հայկական ԽՍՀ-ում: Ըստ էության,

---

գոյապայքարը, Երևան, 1994, **Սարումյան Ն.,** Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1960-1988 թվականներին, Երևան, 2008, Нагорный Карабах, историческая справка, Ереван, 1988, էջ 45-58, **Մկրտչյան Շ.,** Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի (1920-1988 թթ.) իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003, **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը. 1917-2000, գիրք Բ, 1923-1985, Երևան, 2005:

[3] Տես **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը. 1917-2000, գիրք Բ, 1923-1985, Երևան, 2005, էջ 206-230, **Мелик-Шахназаров А.,** Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, Москва, 2009, էջ 38-45:

[4] Տես **Арутюнян В.,** События в Нагорном Карабахе: хроника, ч. 1, Ереван, 1990, էջ 34:

կարող ենք ասել, որ սա թերևս առաջին անգամ էր ԽՍՀՄ պատմության ամբողջ ընթացքում, երբ շրջանային մարմինը, իրացնելով իր օրինական իրավունքը, ընդունում էր քաղաքական որոշում, որը ոչ թե իջեցված կամ պարտադրված էր վերևից՝ կենտրոնից, այլ ճիշտ հակառակը՝ տվյալ շրջանի բնակչության ճնշող մեծամասնության կամարտահայտությունն էր:

Ի սկզբանե և՛ ԼՂԻՄ-ում, և՛ ՀԽՍՀ-ում մեծ էր հավատը Խորհրդային Միությունում հռչակված վերակառուցման քաղաքականության հանդեպ: Հայ ժողովուրդն անկեղծորեն հավատում էր, որ վերակառուցման ուղին բռնած երկրում իր պահանջն ի վերջո արդարացի լուծում է ստանալու: Այդ են վկայում անգամ այն կարգախոսները[5], որոնցով տասնյակ հազարավոր ցուցարարներ հրապարակ էին դուրս եկել թե՛ Ստեփանակերտում և թե՛ Երևանում:

Սակայն հենց շարժման սկզբից հայ ժողովրդին մեծ հիասթափություն էր սպասում:

Խորհրդային իշխանություններն արցախյան շարժման առաջին իսկ օրերից, հակառակ իրենց իսկ հռչակած վերակառուցման, ժողովրդավարության և հրապարակայնության քաղաքականության և չնայած հայկական կողմի բացարձակ հավատարմությանը կենտրոնին, բացասական դիրքորոշում են որդեգրում արցախյան խնդրի հանդեպ: Ղարաբաղյան շարժման ԽՍՀՄ իշխանությունների առաջին արձագանքները, ըստ էության, անկյունաքարային են դառնում իրադարձությունների ողջ հետագա ընթացքի ու զարգացման համար:

Ի պատասխան ԼՂԻՄ մարզխորհրդի ընդունած որոշման՝ 1988 թ. փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարն «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշում է ընդունում՝ սկիզբ առած ղարաբաղյան շարժումը որակելով որպես ծայրահեղական և լենինյան ազգային քաղաքականությանը հակասող. «Վերջին օրերին Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի են ունեցել հայկական բնակչության մի մասի ելույթներ՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ կազմում ընդգրկելու պահանջով: Ծայրահեղականորեն տրամադրված առանձին անձանց անպատասխանատու կոչերի հետևանքով հրահրվել են հասարա-

[5] Տես Нагорный Карабах, историческая справка, Ереван, 1988, էջ 60:

կական կարգի խախտումներ»[6]: Իր որոշման մեջ քաղբյուրոն գտնում էր, որ. «գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողությունները և պահանջները հակասում են Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ների աշխատավորների շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին»[7] և դիմում էր հայկական և ադրբեջանական բնակչության հայրենասիրական և ինտերնացիոնալիստական զգացմունքներին կոչով՝ «չտրվել ազգայնական տարրերի սադրանքներին»:

Պատմական այդ անցքերի որոշ ուսումնասիրողներ կարծում են՝ խորհրդային իշխանությունների՝ Ղարաբաղի հարցում նման բացասական դիրքորոշման պատճառն այն էր, որ Մոսկվան ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման մեջ լուրջ և իրական սպառնալիք էր տեսնում խորհրդային կայսրության համապարփակ տիրապետության համար[8]: Մասնագիտական շրջանակներում հնչում է նաև այն տեսակետը, որ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների այդօրինակ դիրքորոշումը ԼՂԻՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ սկզբնապես ոչ պատշաճ կամ թե սխալ տեղեկացված լինելու հետևանք էր[9] և կամ թելադրված էր Ադրբեջանի ղեկավարության պահանջով[10]:

Կարծում ենք՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների նման բացասական դիրքորոշման հիմնական պատճառը ոչ այնքան հայե-

---

[6] К событиям в Нагорном Карабахе, ТАСС, “*Известия*”, 24 февраля 1988 г., N55, К событиям в Нагорном Карабахе , ТАСС, “*Правда*”, 25 февраля 1988 г., N56.

[7] Նույն տեղում:

[8] Տես **Ազիզբեկյան Ռ.,** Արցախյան շարժման սկզբնավորումն ու ծավալումը, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 2, Երևան, 2005, էջ 46:

[9] Տես **Թովմասյան Վ., Աթաջանյան Վ., Ներսիսյան Յու.,** Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 11, **Арутюнян В.,** События в Нагорном Карабахе: хроника, ч. 1, Ереван, 1990, էջ 38: Այս առումով կա նաև արմատապես հակառակ տեսակետը: Արցախյան խնդրի հետազոտողներ Ի. Բաբանովը և Կ. Վոևոդսկին կարծում են, որ իրականում իշխանության բարձրագույն էշելոններն ի սկզբանե մանրամասն տեղեկացված են եղել մարզում կատարվող բոլոր իրադարձությունների մասին, այնպես որ ինֆորմացիայի պակասի մասին խոսք լինել չի կարող (**Бабанов И., Воеводский К.**, Карабахский кризис. СПб.,1992, http://nashasreda.ru/i-babanov-k-voevodskij-karabaxskij-krizis/, հղվել է 28.07.2017 թ.):

[10] Տես **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 279, **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 17:

րի կողմից բարձրացված ինքնին ազգային պահանջն էր՝ ԼՂԻՄ-ի միացումը ՀԽՍՀ-ին, որքան, ըստ էության, այդ պահանջի իրագործման գործիքակազմը՝ ա) լեգալությունը, բ) ժողովրդական խաղաղ ցույցերն ու ինքնակազմակերպումը: ԽՍՀՄ-ում իրավականորեն գերագույն իշխանությունը պատկանում էր խորհուրդներին, մինչդեռ դե ֆակտո իշխանությունը կուսակցական մարմինների ձեռքում էր. կենտրոնից կոմկուսը հրահանգում էր, խորհուրդները՝ տեղերում վավերացնում: Երբ ԼՂԻՄ բնակչությունը մի կողմից՝ միանգամայն օրինական ճանապարհով՝ իր իսկ ընտրած Մարզային խորհրդի միջոցով, ընդունեց քաղաքական որոշում, որը համաձայնեցված և կամ իջեցված չէր կոմկուսի համապատասխան մարմնի կողմից, մյուս կողմից՝ հանրահավաքներով ու ցույցերով սկսեց ինքնակազմակերպվել որպես ժողովուրդ և որպես ուժ, դրանով իսկ նա չգիտակցելով անգամ, ակամայից քաղաքական հարթություն մտնելու, քաղաքական կողմ դառնալու հայտ ներկայացրեց, ասել է թե՝ դուրս եկավ մի ողջ խորհրդային համակարգի դեմ, համակարգային մարտահրավեր նետեց ԽՍՀՄ-ին, որտեղ քաղաքականն ու քաղաքականությունը չգրված օրենքով բացառապես կենտրոնի մենաշնորհն էին: Իսկ քաղաքական հայտ ներկայացնել նշանակում էր սուբյեկտության, ինքնուրույնության հայտ ներկայացնել և ուրեմն՝ վիճարկել, խախտել Կենտրոնի քաղաքական մենաշնորհը, խարխլել խորհրդային հասարակարգի հիմքերը, ապստամբել, անջատվել և թեկուզ չգիտակցված, բայց, ըստ էության, անկախության պահանջ ներկայացնել: Այդ ամենը շատ ավելի վտանգավոր էր, քան ցանկացած զինված գործողություն կամ ապստամբություն կամ թե որևէ ինքնավար կազմավորման վերահպատակեցում խորհրդային մի սուբյեկտից մյուսին (նման նախադեպերը, ի դեպ, ԽՍՀՄ-ում բազմաթիվ էին[11]): Եվ կարծում ենք՝ այդ էր պատճառը, որ հենց ի սկզբանե

ա) ղարաբաղյան շարժումը, հայերն ու իրենց արդարացի, օրինական պահանջը կենտրոնի կողմից բնորոշվեցին, որակվեցին որպես ծայրահեղականություն (էքստրեմիզմ), ազգայնականություն (նացիոնալիզմ) և անջատողականություն (սեպարատիզմ) (հանցանքներ, որոնք խորհրդային հասարակարգում թերևս ամենավտանգավորն ու ամենադատապարտելին էին համարվում), ինչն ըստ էության անուղղակի զգուշացում էր հայկական կողմին առ այն,

[11] Տես Правда о Нагорном Карабахе, Степанакерт, 1989, էջք 100-104:

որ մարզխորհրդի որոշումից հետ չկանգնելու պարագայում վերջիններս դիտարկվելու են որպես խորհրդային կարգի թշնամիներ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով,

բ) հակազդեցությունը խորհրդային հանրապետության ինչ-որ մի ինքնավար մարզի մարզային խորհրդի ընդունած որոշմանն ու հայերին միանգամից դրսևորվեց հնարավոր բարձրագույն աստիճանի վրա՝ ԽՄԿԿ ԿԿ մակարդակով (ի դեպ նշվածի մասին է վկայում նաև այն, որ մարզի ակտիվին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի՝ փետրվարի 21-ին ընդունած որոշման հետ ծանոթացնելու և այն ընդունել տալու համար հաջորդ իսկ օրը՝ փետրվարի 22-ին, Ստեփանակերտ էին ժամանել կենտրոնի ներկայացուցիչներն ամենաբարձր մակարդակով՝ ԽՄԿԿ Կենտկոմի անդամության թեկնածուներ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին և ԽՍՀՄ ԳԽ նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Դեմիչևը):

Եվ որքան էլ թե՛ Ստեփանակերտը, թե՛ Երևանը ցույց տային իրենց հավատարմությունը կենտրոնին և փաստեին հավաքների ու ցույցերի բացառապես խաղաղ բնույթը, վերջինս, միևնույն է, գործելու էր հայկական կողմի դեմ և աշխատելու էր անել հնարավորինը՝ հայերին իրենց ընդունած որոշումից հետ պահելու համար, քանզի, ինչպես վերը նշվեց, խնդիրը ոչ այնքան խորհրդային մի հանրապետության ինքնավար կազմավորման վերահպատակեցումն էր մեկ այլ խորհրդային հանրապետությանը, որքան խորհրդային ողջ հասարակարգի դեմ ուղղված այն վտանգը, որ կենտրոնական իշխանությունները տեսել էին ղարաբաղյան շարժման և մարզխորհրդի միանգամայն լեգալ որոշման մեջ:

ԼՂԻՄ-ի անջատումը ԱդրԽՍՀ-ից և վերամիավորումը ՀԽՍՀ-ի հետ ոչ մի կերպ չէին կարող թույլ տալ նաև Բաքվում: Եվ ինչպես ցույց տվեցին իրադարձությունների հետագա զարգացումները, Ադրբեջանի իշխանությունները մարզը հանրապետության կազմում պահելու համար պատրաստ էին ամեն գնով ճնշել ղարաբաղյան շարժումը: Փաստացի, այդ հարցում Բաքվի և Մոսկվայի շահերը նույնական էին: Եվ այդ էր պատճառը, որ մի կողմից՝ արցախյան խնդրի շուրջ կենտրոնական իշխանությունների որդեգրած դիրքորոշումը ոգևորությամբ ընդունվեց Ադրբեջանի իշխանությունների կողմից և ընկալվեց որպես ղարաբաղյան շարժումը լռեցնելու հարցում ազատ գործելու հնարավորություն և աջակցություն, մյուս կողմից՝ Մոսկվան

չխորշեց Ադրբեջանի ձեռամբ կրակից շագանակներ հանելու քաղաքականությունից և իր թողտվությամբ ու լռությամբ դրդեց, չդատապարտելով խրախուսեց և քողարկելով քաջալերեց Ադրբեջանի հետագա բոլոր այն գործողությունները, որոնք ուղղված էին ղարաբաղյան շարժման դեմ: Դա ակնհայտ էր ի սկզբանե և պարզ երևաց արդեն փետրվարի 22-ին:

Այդ օրը, երբ ԼՂԻՄ ժամանած Գ. Ռազումովսկու և Պ. Դեմիչևի մասնակցությամբ հանդիպում էր անցկացվում Ստեփանակերտում՝ մարզային ակտիվին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարի փետրվարի 21-ի որոշման հետ ծանոթացնելու և այն ընդունել տալու համար, մարզում «կարգուկանոն հաստատելու» և հայերին՝ մարզխորհրդի որոշումից հետ չկանգնելու պարագայում հնարավոր հետևանքների մասին պատկերավոր «դաս տալու» նպատակով[12] Աղդամից դեպի ԼՂԻՄ Ասկերանի շրջան է շարժվում ադրբեջանցիների բազմահազարանոց մի ամբոխ[13]: Շարժվելով Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ երկաթգծով և ավտոճանապարհով՝ կատաղած և որսորդական հրացաններով, կացիններով, երկաթե ամրաններով, քարերով զինված ամբոխը ներխուժում է մարզի տարածք՝ իր ճանապարհին ավերելով ամեն ինչ և բռնության ենթարկելով ճանապարհին հանդիպած հայերին: Մոլեգնած ամբոխին հաջողվում է կանգնեցնել միայն Ասկերանի մատույցներում, որտեղ ավանի և մոտակա գյուղերի բնակչությունը տեղի կայազորի միջամտությամբ փակում է աղ-

[12] Փորձագիտական շրջանում կարծիք կա նաև, որ այդ «միջոցառումը» մեկ այլ նպատակ էլ ուներ. «Այդ առավոտյան Ստեփանակերտ էին ժամանել ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկին ու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահի տեղակալ Պ. Դեմիչևը: Հարձակումն ու խժդժությունը դաս կլինեին նաև նրանց համար. կգնան, Գորբաչովին կպատմեն, թե ինչպես Ղարաբաղի որոշումը համադրբեջանական ցասում է առաջացրել, և թե սա ինչ հետևանքներով է հղի, եթե չկանխվի հետագա զարգացումը» (**Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջք 281-282):

[13] Իդեպ, փետրվարի 13-ին Ստեփանակերտում տեղի ունեցած առաջին զանգվածային հանրահավաքից անմիջապես հետո՝ լույս 14-ի գիշերը, իրադարձությունների նման ելքի մասին շրջխորհրդի բյուրոյի նիստին հայերին «զգուշացրել էր» Աղրբեջանի Կոմկուսի կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Ասադովը՝ հայտարարելով, թե «հարյուր հազար ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած ժամանակ ներխուժել Ղարաբաղ և կազմակերպել սպանդ» (**Василевский А.,** Туча в горах, “Аврора”, 1988, N 10): Ըստ էության, փետրվարի 22-ին Ասադովի սպառնալիքի մի մասը կյանքի կոչվեց:

դամցիների ճանապարհը: Անկարգությունների արդյունքում վիրավորվում և հիվանդանոց է տեղափոխվում մարզի շուրջ 50 բնակիչ, սպանվում է երկու աղդամցի[14]:

Փետրվարի 20-ին հաջորդած առաջին մի քանի օրերի ընթացքում խորհրդային համամիութենական մամուլը լուռ էր: ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի որոշման, դրան հետևած իրադարձությունների, Ասկերանի դեպքերի, ինչպես նաև Ստեփանակերտում և Երևանում տեղի ունեցող համազգային զանգվածային հանրահավաքների ու ցույցերի մասին համամիութենական մամուլի օրգանները որևէ տեղեկություն չէին հաղորդում: Կարծես թե խնդիր կար միութենական լայն զանգվածների համար «աննկատ թողնել» ղարաբաղյան շարժումը:

Համամիութենական մամուլում ԼՂԻՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների մասին առաջին արձագանքները եղան մարզխորհրդի հայտնի որոշումի ընդունումից օրեր անց՝ փետրվարի 23-24-ին: Առաջին տեղեկությունը հաղորդեց ԽՍՀՄ ԳԽ պաշտոնաթերթ «Իզվեստիան» (Известия)՝ 1988-ի փետրվարի 23-ի համարում հրապարակելով մի թղթակցություն՝ «Պահպանել այն, ինչ ունենք» բավականին խոսուն վերնագրով: Հարկ է նշել, որ այդ թղթակցությունը տեղ էր գտել «Իզվեստիայի» ոչ թե համամիութենական, այլ մոսկովյան թողարկման մեջ, այն էլ երեկոյան թողարկման, ինչը, ամենայն հավանականությամբ, վկայում է այն մասին, որ խորհրդային իշխանությունները՝ ի դեմս համամիութենական մամուլի, չկարողանալով այլևս լռություն պահել, ցանկանում էին, այնուամենայնիվ, ԼՂԻՄ-ում ծավալվող իրադարձությունները հասու դարձնել ընթերցողների հնարավորինս նեղ շրջանակի:

Ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ հրապարակումը: Այն բաղկացած էր երկու հատվածից. մի հատվածը պատրաստված էր Բաքվում (սեփ. թղթակից Ռ. Թալիշինսկի), մյուսը, որն ի դեպ ծավալով կրկնակի ավելի փոքր էր, պատրաստված էր Երևանում (սեփ. թղ-

---

[14] Ասկերանի դեպքերի մասին առավել մանրամասն տես՝ **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը. 1917-2000, գիրք Գ, 1985-2000, Երևան, 2007, էջք 47-48, **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջք 20-21, **Арутюнян В.,** События в Нагорном Карабахе: хроника, ч. 1, Ереван, 1990, էջք 39-40, **Василевский А.,** Туча в горах, “Аврора”, 1988, N 10, **Товмасян В.,** Карабахская мозаика вопоминания, Москва, 2003, էջք 71-72:

թակից Ս. Բաբլումյան): Թղթակցության՝ Բաքվում պատրաստված հատվածի հենց սկզբում հեղինակը արձանագրում էր, որ ԼՂԻՄ-ում բնակվում են 49 ազգությունների ներկայացուցիչներ, որոնց մեջ ամենամեծ մասը կազմում են հայերը[15]: Ասվածը, ֆորմալ առումով լինելով ճշմարտություն, մանիպուլյատիվ-ապակողմնորոշող բնույթ ուներ. չէ՞ որ 49 ազգությունների մեջ «ամենամեծ մասը կազմելը» դեռ չէր նշանակում լինել մարզի ողջ բնակչության մեծամասնությունը: Մինչդեռ հայերը, ըստ 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալների, կազմում էին ԼՂԻՄ բնակչության (162181 մարդ) ճնշող մեծամասնությունը՝ 75.9%-ը, ադրբեջանցիները՝ 23%-ը, ռուսները՝ 0.8%-ը, իսկ մյուս 46 ազգությունները՝ ընդհանուր թվով 576 մարդ, կազմում էին մարզի բնակչության ընդամենը 0.36%-ը (ի դեպ, մարզում բնակվող 31 ազգությունները ներկայացված էին 1-5 բնակչով)[16]: Այս թվերը, բնականաբար, բերված չէին հրապարակման մեջ, իսկ առանց դրանց առկայության ընթերցողի մոտ մարզի բնակչության կազմի վերաբերյալ թյուր պատկերացում էր ստեղծվում, որի հետևանքով՝ միանգամայն անհասկանալի, տարօրինակ և անընդունելի պիտի թվար մարզը բնակեցնող 49 ազգությունների մեջ թեև թվով ամենամեծ, բայց ընդամենը մեկ ազգության՝ հայերի ցանկությամբ մարզի դուրս բերումը Ադրբեջանական ԽՍՀ կազմից և միացումը Հայկական ԽՍՀ-ին: Նման ճիշտ, բայց ոչ լիարժեք տեղեկությունը ամբողջովին փոխում էր հարցի էությունը, այն ներկայացնում որպես մարզի բնակչության ընդամենը մի մասի ցանկություն, այլ ոչ թե մարզի բնակչության ճնշող մեծամասնության կամարտահայտություն:

Այնուհետև Թալիշինսկին գրում էր, որ ստեղծման օրվանից ի վեր ԼՂԻՄ-ը զգալի հաջողություններ է հասել իր սոցիալ-տնտեսական զարգացման մեջ և հավելում, որ «այժմ այն հանրապետության առավել զարգացած երկրամասերից մեկն է»[17]: Եվ սա ասվում էր այն

---

[15] Տես **Талышинский Р., Баблумвн С.,** Что имеем – сохранить!, “*Известия*”, 23 февраля 1988 г. (московское издание).

[16] Տես Всесоюзная перепись населения 1979 года. Таблица 9 с. Распределение населения по национальности и родному языку. РГАЭ. Ф. 1562, Оп. 336, Д. 6209 -6237 http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_79.php?reg=77, հղվել է 18.10.2017 թ.:

[17] **Талышинский Р, Баблумян С.,** Что имеем – сохранить!, “*Известия*”, 23 февраля 1988 г. (московское издание).

մարզի մասին, որին դեռ մեկ տարի էլ չանցած պիտի անդրադառնար ԽՄԿԿ Կենտկոմի անդամ, ԽՍՀՄ 11-րդ գումարման ԳԽ պատգամավոր Արկադի Վոլսկին և խոստովաներ, որ. «Երկրում կատարած ուղղորությունների ժամանակ ոչ մի տեղ չեմ բախվել մարդկանց ճակատագրերի հանդեպ այնպիսի բարձիթողության ու արհամարհանքի, ինչպես Լեռնային Ղարաբաղում»[18]:

Թալիշինսկին անդրադառնում էր նաև ԼՂԻՄ մարզխորհրդի փետրվարի 20-ի նստաշրջանին: Հղում կատարելով անանուն իրավաբաններին՝ հեղինակը հավաստիացնում էր, որ «մի խումբ պատգամավորների» հավաքը Մարզխորհրդի նստաշրջան համարել չի կարելի, քանի որ այն ընթացել էր «ընթացակարգային մի շարք պահանջների խախտումներով»[19]՝ այդ կերպ փորձելով ցույց տալ, հիմնավորել մարզխորհրդի որոշման ոչ օրինական լինելը, ինչը, բնականաբար, իրականությանը չէր համապատասխանում:

Հաջորդիվ հեղինակը հորդորում էր թողնել ընթացակարգային նրբությունները և անդրադառնալ խնդրի էությանը. «Նման իրավիճակում ապահովել քվեարկություն կամ հերթական «բաց նամակի» տակ ստորագրություններ հավաքել դժվար չէ: Կարելի է անգամ հղում կատարել վերակառուցմանը և հրապարակայնությանը: Իսկ հետո՞: Ի վիճակի՞ է արդյոք այդ որոշման նախաձեռնողներից որևէ մեկը կանխատեսել, թե ինչպես կփոխվեն մարզի թեկուզ միայն տնտեսական փոխհարաբերությունները, որոնք այժմ ամբողջապես կողմնորոշված են դեպի Ադրբեջանը: Ի՞նչ կլինի պլանավորման, մատակարարումների հետ: Ի՞նչ մասշտաբներ կընդունի պարենային և վառելիքաէներգետիկ խնդիրը: Ինչպե՞ս կփոխվի բնակչության մատակարարումը: Ինչպե՞ս դա կանդրադառնա ոչ միայն մարզի, այլև երկու հանրապետությունների, ամբողջ երկրի ընդհանուր դրության վրա, ինչի մասին ևս վատ չէր լինի մտածել»[20]: Ինչ էր սա, եթե ոչ այն հետևանքների (գուցե և անուղղակի սպառնալիքների) պարզ մատնանշում, որոնք առաջ էին գալու ղարաբաղյան շարժումը չդադարեցնելու պարագայում:

Այնուհետև հեղինակը Թելման Չալյան անունով գրողի շուրթե-

---

[18] Мир земле Карабаха, “*Правда*”, 15 января 1989, N15.

[19] **Талышинскли Р, Баблумян С.,** Что имеем – сохранить!, “*Известия”*, 23 февраля 1988 г. (московское издание).

[20] Նույն տեղում:

ռով ընթերցողին էր փոխանցում այն միտքը, թե ամենը, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղում, ընդամենը «մթագնում» է, որը «շուտով կանցնի»: Այսինքն՝ մի ողջ ժողովրդի արդարացի և օրինական պահանջն ու կամարտահայտումը ներկայացվում էին որպես մթագնում, որպես զգացական և ոչ թե բանական իրողություն: Իսկ թղթակցության վերջում Թալիշինսկին մեջբերում էր ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գ. Ռազումովսկու՝ նախօրեին Ստեփանակերտում մարզի կուսակտիվի հետ կայացած հանդիպման ժամանակ ասված խոսքերը, որոնք ոչ այլ ինչ էին, քան փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշման հիմնական ուղերձները՝ գոյություն ունեցող ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողությունները և պահանջները հակասում են Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ների աշխատավորների շահերին, վնաս են հասցնում ազգամիջյան հարաբերություններին և պատասխանատու միջոցների չգործադրման պարագայում կարող են հանգեցնել լուրջ խնդիրների. «Իհարկե, ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում ոչ բոլոր խնդիրներն էլ լուծված, դեռևս բազմաթիվ թերություններ կան տնտեսական և մշակութային ոլորտներում: Սակայն սա կյանք է: Հասունացած խնդիրները պետք է լուծել աշխատանքով և կոնկրետ գործերով»[21]:

Ինչ վերաբերում է հրապարակման երևանյան հատվածին, ապա այն, ըստ էության, ընդամենը ողջախոհության և առկա խնդիրները խաղաղ, ընդհանուր ջանքերով լուծելու կոչ էր:

Անհրաժեշտությունն այսչափ մանրամասն անդրադառնալ «Իզվեստիայում» տեղ գտած այս հրապարակմանը միայն նրանում չէ, որ այն խորհրդային կենտրոնական մամուլում ԼՂԻՄ-ում ծավալվող իրադարձությունների առաջին անդրադարձն էր: Հրապարակման կարևորությունը հատկապես արտահայտվում է այն հանգամանքով, որ դրա մեջ տեղ գտած թեզերը, թե

- Ադրբեջանական ԽՍՀ կազմում ԼՂԻՄ-ը բարեկեցիկ է ապրում և հանրապետության ամենազարգացած երկրամասերից մեկն է,
- ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումն ընդամենը մի խումբ պատգամավորների դիմում է, հետևապես՝ օրինական չէ,
- մարզխորհրդի որոշումն արտահայտում է ոչ թե մարզի ողջ

[21] Նույն տեղում:

բնակչության կամ որևէ ժողովրդի կամքն ու ցանկությունը, այլ ընդամենը «ազգայնական տարրերի սադրանք է»,

- հայերն ու ադրբեջանցիները մշտապես դրսևորել են համերաշխ համակեցություն և միմյանց հետ խնդիրներ չեն ունեցել,
- ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված պահանջները հակասում են Ադրբեջանական և Հայկական ՍՍՀ-ների աշխատավորների շահերին և լենինյան ազգային քաղաքականությանը, վնասում ազգամիջյան հարաբերություններին,
- մարզում ստեղծված իրավիճակը զգացմունքների հետևանք է, այլ ոչ բանականության,
- մարզում առկա խնդիրները բացառապես սոցիալ-տնտեսական բնույթի են,

իրապես ուրվագծում էին ղարաբաղյան հարցում ինֆորմացիոն քաղաքականությունն ու ռազմավարությունը և այդուհետ խորհրդային քարոզչամեքենայի համար հիմք պիտի դառնային «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ» տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելիս՝ շրջանառության մեջ դրվելով համամիութենական գրեթե բոլոր լրատվամիջոցներում, հատկապես՝ մամուլում: Եվ եթե ղարաբաղյան խնդրի և մարզում տեղի ունեցող իրադարձությունների՝ իրականությանը չհամապատասխանող նման մեկնում-գնահատականը վրդովմունքի ալիք բարձրացրեց Ստեփանակերտում և Երևանում՝ իր հերթին նպաստելով ցուցարարների թվի ավելացմանը, ապա մյուս կողմից՝ այն յուրօրինակ ազդակ ծառայեց Ադրբեջանի պարբերական մամուլի համար՝ սանձարձակ արշավ ծավալելու հայ «ծայրահեղականների», «ազգայնականների» և «սադրիչների» դեմ, որոնք համարձակվել էին բարձրացնել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը: Այսպիսով՝ խորհրդային կենտրոնական մամուլում տեղ գտած «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների շուրջ» առաջին իսկ հրապարակումը ոչ այլ ինչ էր, քան ապատեղեկատվություն: Արցախյան շարժման խեղաթյուրման սկիզբը դրված էր:

«Իզվեստիայի» այս հրապարակմանը, սակայն, հեղինակային այլ նյութեր չհետևեցին: Ղարաբաղյան շարժման և նրա շուրջ ծավալվող դեպքերի վերաբերյալ միայն Խորհրդային Միության «ՏԱՍՍ» կենտրոնական հեռագրական գործակալության հաղորդագրությունները էին, որ ընդհուպ մինչև մարտի երկրորդ տասնօրյակն սկսեցին տեղ գտնել համամիութենական մամուլում: Եվ, բնականաբար, լինե-

լով խորհրդային քարոզչամեքենայի կարևորագույն օղակներից մեկը՝ ՏԱՍՍ-ը շարունակեց և դարձավ արտահայտիչն այն դիրքորոշման և քաղաքականության, որ ղարաբաղյան շարժման նկատմամբ որդեգրել էին կենտրոնական իշխանությունները:

ԼՂԻՄ-ում տեղի ունեցող անցքերի մասին հենց առաջին հաղորդագրության մեջ ՏԱՍՍ-ն իր ընթերցողին հայտնում էր, որ. «Վերջին օրերին Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում տեղի ունեցան հայ բնակչության մի մասի ելույթներ՝ Լեռնային Ղարաբաղը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտցնելու պահանջով: Ծայրահեղորեն տրամադրված (экстремистски настроенных) առանձին անձանց անպատասխանատու կոչերի հետևանքով հրահրվեցին հասարակական կարգի խախտումներ»[22]: Ոչ մի խոսք մարզխորհրդի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի և նրա ընդունած որոշման մասին (այդ մասին, ի դեպ, համամիութենական մամուլում չասվեց նաև հետագայում): Փոխարենը՝ մի ողջ ժողովրդի կամաարտահայտությունը հենց այնպես, գրչի մի թեթև հարվածով ներկայացվեց որպես «հայ բնակչության մի մասի ելույթներ», «ազգայնական տարրերի սադրանքներ», որ «դեմ էր լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներին և հակասում էր երկու հանրապետությունների աշխատավորների շահերին»: Հաղորդագրության մնացյալ հատվածը գրեթե բառացի կրկնում էր փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» ընդունած որոշման տեքստը և ուղերձները:

ՏԱՍՍ-ի՝ հետագա մի քանի օրերին հրապարակած հաղորդագրությունները գրեթե ոչնչով չէին տարբերվում առաջինից՝ բացառությամբ այն բանի, որ դրանցում ստեղծված իրավիճակի, «ազգայնական տարրերի սադրանքների», «ծայրահեղորեն տրամադրված» հայ բնակչության «մի մասի» կողմից հնչեցրած ելույթների և «հրահրված հասարակական կարգի խախտումների» համար հստակ մեղադրանքներ էին հնչում մարզային և հանրապետական կուսակցական և խորհրդային մարմինների հասցեին. «ԼՂԻՄ-ում ստեղծված իրավիճակը … հնարավոր է դարձել ինքնավար մարզի պասիվ և սպասողական դիրքորոշում դրսևորած կուսակցական և խորհրդային օրգանների պատճառով, որոնց ղեկավարությունը մակերեսորեն է մոտեցել ստեղծված իրադրության, տարածված տրա-

[22] К событиям в Нагорном Карабахе, ТАСС, “*Известия*”, 24 февраля 1988 г., N55.

մաղրությունների գնահատմանը: Այդ հարցում բարձունքում չեն գտնվել նաև հանրապետական օրգանները»[23]:

Միաժամանակ հիշյալ հրապարակումներում նշվում էր, որ մարզում տեղի ունեցող իրադարձությունները հնարավոր են դարձել խորհրդային, ինտերնացիոնալիստական դաստիարակության հարցում բացթողումների հետևանքով, և հստակ ընդգծվում էր իրավիճակի կարգավորման հարցում խորհրդային քաղաքացիների շրջանում գաղափարական, բացատրական աշխատանքների հույժ կարևորությունը. «Այսօր, մտորելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների և այն մասին, թե ինչպես կարող էր այդ բոլորը տեղի ունենալ, հասկանում եմ,- «Իզվեստիայի» փետրվարի 29-ի համարում կարդում ենք ՏԱՍՍ-ի թղթակցին ասված ԱդրԽՍՀ ժողովրդական արտիստ Ս. Ալասկյարովի խոսքերը,- որ թույլ էին տրված որոշակի կոպիտ և սխալ հաշվարկներ, այդ թվում՝ գաղափարական աշխատանքում, ինտերնացիոնալիստական դաստիարակության մեջ»[24], «պարզվեց, որ տնտեսական խնդիրների լուծման հետևից ընկած՝ մենք բաց ենք թողել դաստիարակության հարցը»[25], «ներկայումս ինքնավար մարզի բնակչության շրջանում կատարվում է բացատրական աշխատանք,- ՏԱՍՍ-ի թղթակցին է հաղորդում ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Կատուսևը,- որը նպատակամղված է իրադրության կարգավորմանը, գործարար մթնոլորտի հաստատմանը»[26], «ներկայումս,- ՏԱՍՍ-ի թղթակցին տված հարցազրույցում նշում է ԼՂ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը,- գաղափարախոսական, քարոզչական և բացատրական մեծ աշխատանք է տարվում բանվորական կոլեկտիվներում, սովխոզներում և կոլտնտեսություններում, ուսումնական հաստատություններում»[27], «...կուսակցական ակտիվի ժողովը

---

[23] Вокруг событий в Нагорном Карабахе, ТАСС, “*Известия*”, 26 февраля 1988 г., N57, Вокруг событий в Нагорном Карабахе, ТАСС, “*Правда*”, 26 февраля 1988 г., N57.

[24] Проявить гражданскую зрелость и выдержку, ТАСС, “*Известия*”, 29 февраля 1988 г., N60.

[25] Упущенное наверстаем – говорят трудящиеся, ТАСС, “*Известия”*, 1 марта 1988 г., N61.

[26] Принимаются необходимые меры, ТАСС, “*Известия*”, 27 февраля 1988 г., N58, Принимаются необходимые меры, ТАСС, “*Правда*”, 27 февраля 1988 г., N58.

[27] Час разума и трезвых решений, ТАСС, “*Известия*”, 6 марта 1988 г., N66, Час разума и трезвых решений, ТАСС, “*Правда*”, 6 марта 1988 г., N66.

սկզբունքորեն կարևոր է համարում, որպեսզի մարզկոմը, Ստեփանակերտի քաղկոմը, կուսակցության շրջկոմները, առաջնային կուսկազմակերպությունները քաղաքական և գաղափարական ազդեցության բոլոր միջոցներն ուղղեն լենինյան ազգային քաղաքականության, ներկա փուլում նրա էության բացատրմանը: … Խնդիրն այն է, որ մարզի կուսակցական կազմակերպությունները, գաղափարական հաստատությունների ակտիվը լայն աշխատանք ծավալեն զանգվածների, աշխատանքային կոլեկտիվների շրջանում ԽՄԿԿ ԿԿ որոշումից բխող հարցերի շուրջ, այդ փաստաթղթի դրույթները հասցնեն յուրաքանչյուր աշխատավորի խելքին և սրտին, հասնեն իրավիճակի սրընթաց նորմալացմանը»[28]:

Այստեղ հարկ է նշել, որ համամիութենական մամուլում «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ» (ինչպես ընդունված էր ասել այդ օրերին) կատարվող իրադարձությունների լուսաբանումը գրեթե միանման էր: Հատկապես սկզբնական շրջանում ՏԱՍՍ-ի հաղորդագրությունները, որպես կանոն, նույնությամբ տպագրվում էին և՛ «Իզվեստիա», և՛ ԽՄԿԿ պաշտոնաթերթ «Պրավդա» (Правда) օրաթերթերում: Ինչ վերաբերում է համամիութենական տպագիր մյուս օրգաններին, ապա նրանք Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող անցքերին սկսեցին անդրադառնալ միայն մարտի կեսերից՝ դրանք, բնականաբար, ներկայացնելով նույն լույսի ներքո, ինչ ՏԱՍՍ-ը, «Պրավդան» և «Իզվեստիան»:

Այդ օրերին համամիութենական տպագիր լրատվամիջոցները պարզապես լռության մատնեցին փետրվարի 22-ին Ասկերանում տեղի ունեցած դեպքերը, որոնք հետագայում պիտի բնորոշվեին որպես ԼՂԻՄ հայության նկատմամբ «պատժիչ գործողություններ». «Ղարաբաղցիների դեմ ուղղված այդ «պատժիչ գործողությունը» դարձավ Ադրբեջանի հայ բնակչության հանդեպ զանգվածային բռնության առաջին ակտը»[29]: Ոչ մի տող չգրվեց այն մասին, որ Աղդամից Ստեփանակերտ շարժվող, որսորդական հրացաններով, կացիններով, մետաղական ձողերով, քարերով և զանազան բութ գործիքներով զինված ադրբեջանցիների բազմահազարանոց ամբոխը,

[28] Вокруг событий в Нагорном Карабахе, ТАСС, “*Известия*”, 26 февраля 1988 г., N57, Вокруг событий в Нагорном Карабахе, ТАСС, “*Правда*”, 26 февраля 1988 г., N57.

[29] **Бабанов И., Воеводский К.**, Карабахский кризис. СПб.,1992, http://nashasreda.ru/i-babanov-k-voevodskij-karabaxskij-krizis/, հղվել է 25,07.2017 թ.:

թափացելով ԼՂԻՄ տարածք, ավերել էր նավթաբազան, ոտքի տակ տվել Խրամորթի ու Խնապատի այգիները, անասնապահական շինությունները, այրել Ն. Ստեփանյանի անվան կոլտնտեսության ջրաղացը, ավտոտեսչության պահակակետը, ներխուժել Ասկերանի գազի շահագործման գրասենյակի և կոմունալ ձեռնարկությունների կոմբինատի տարածք և ավերածություն իրականացրել, ճանապարհին կանգնեցրել հայերի ավտոմեքենաները, ջարդել դրանք և ծեծի ենթարկել վարորդներին և ուղևորներին ու այդպես շարունակ[30]: Ոչ մի տող չգրվեց այն մասին, որ նույն օրն Աղդամում հարձակման էր ենթարկվել շրջկենտրոն Մարտունուց Երևան ուղևորվող ավտոբուսը. ավտոբուսը ջարդել էին, ուղևորներին մարմնական վնասվածքներ հասցրել[31]: Չասվեց այն մասին, որ ադրբեջանցիները միաժամանակ Ֆիզուլու և Ջաբրայիլի կողմից շրջափակել էին Հադրութի շրջանը, ավազակային հարձակումներ գործել Մարտունի-Աղդամ, Մարտակերտ-Աղդամ ճանապարհներով երթևեկող հայ ուղևորների վրա[32]: Ոչինչ չասվեց ԼՂԻՄ մոտ 5 տասնյակ բնակիչների մասին, որոնք այդ վայրագությունների արդյունքում տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ էին ստացել և տեղափոխվել հիվանդանոց[33]:

Փոխարենը՝ փետրվարի 27-ին կենտրոնական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Կատուսևը, որը, չսպասելով ամսի 22-ին տեղի ունեցած իրադարձությունների քննության արդյունքներին, պարզապես հայտարարեց, որ «սպանվել է երկու երիտասարդ ադրբեջանցի»[34]: Թե ինչ հանգա-

---

[30] Տես՝ **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը. 1917-2000, գիրք Գ, 1985-2000, Երևան, 2007, էջք 47-48, **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջք 20-21, **Ուլուբաբյան Բ.,** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջք 281-282, **Арутюнян В.,** События в Нагорном Карабахе: хроника, ч. 1, Ереван, 1990, էջք 39-40, **Василевский А.,** Туча в горах, “Аврора”, 1988, N 10, **Товмасян В.,** Карабахская мозаика вопоминания, Москва, 2003, էջք 71-72:

[31] Տես **Мелик-Шахназаров А.,** Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, Москва, 2009, էջ 255:

[32] Տես՝ **Աբրահամյան Հ.,** Մարտնչող Արցախը. 1917-2000, գիրք Գ, 1985-2000, Երևան, 2007, էջ 48:

[33] Տես **Ուլուբաբյան Բ.,** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 20, **Мелик-Шахназаров А.,** Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, Москва, 2009, էջ 257:

[34] Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Ереван, 2015, с 191, **Бабанов И., Воеводский К.** Карабахский кризис. СПб.,1992, http://nashasreda.ru/i-babanov-k-

մանքներում և ում կողմից էին սպանվել այդ երկու ադրբեջանցիները, ոչինչ չասվեց (ի դեպ, այդ ամենը չպարզվեց նաև հետագայում՝ անցկացված պաշտոնական հետաքննությամբ), ինչն անուղղակիորեն ենթադրել տվեց, որ մարդասպանները պիտի որ հայերը լինեին՝ հայ «ծայրահեղականները»: Մինչդեռ այդ ժամանակ արդեն տվյալներ կային, որ ադրբեջանցիներից առնվազն մեկը սպանվել էր հենց ադրբեջանցի ոստիկանի կրակոցից. «Համենայն դեպս անկասկած է, որ դրանցից մեկի՝ Ադդամի հաստոցաշինական գործարանի ֆրեզագործ 22-ամյա Ալի Հաջիևի սպանության հետ Լեռնային Ղարաբաղի հայերը ոչ մի կապ չունեն: Ալիի զոհվելու հանգամանքների մասին ահա թե ինձ ինչ է պատմել նրա հարազատ եղբայրը՝ 29-ամյա ինժեներ-շինարար Արիֆ Հաջիևը. «Ալիի վրա կրակողը ադրբեջանցի միլիցիոներ է եղել: Եղբայրս մահացել է վայրկենապես, նրա վրա կրակել են դիմահար, գնդակը միջաթափանց ծակել, անցել է սիրտը: Նրա և սպայի միջև վեճ է տեղի ունեցել: Հետո Ալին բռնվել է իր ընկեր Ուլվի Վահրամովից ու ասել՝ «Բռնի՛ր ինձ, ինձ վրա կրակեցին»: Եվ ընկել է: Ուլվին տեսել է այն միլիցիոներին, ով կրակել է: Նրան ինքը չի ճանաչում, սակայն լավ գիտի ադդամցի մյուս սպային, որը կրակողին անմիջապես մեքենա է նստեցրել ու փախցրել»»[35]:

Ադդամի և Ասկերանի բնակիչների ընդհարման հետևանքով երկու ադրբեջանցիների սպանության լուրը շատ արագ շրջանառության մեջ դրեց ադրբեջանական Ազերինֆորմ հեռագրական գործակալությունը, նրան հետևեցին համամիութենական ռադիոն և կենտրոնական հեռուստատեսությունը: Եվ կրկին ոչ մի խոսք տասնյակ հայ վիրավորների մասին և ամենակարևորը՝ ոչ մի խոսք այն մա-

---

voevodskij-karabaxskij-krizis/, հղվել է 25,07.2017 թ.:

[35] **Васильевский А.,** Туча в горах, “Аврора”, 1988, N 10. Ի դեպ, կարծք կա, որ երկու ադդամցիների սպանությունը ԱդրԽՍՀ ՊԱԿ գործակալ(ներ)ի «ձեռքի աշխատանքն» է եղել. «Դժվար թե ադդամցի ֆրեզագործի վրա կրակած «միլիցիոներն» իրականում հանդիսանում էր այդպիսին. ամենայն հավանականությամբ դա միլիցիոներական համազգեստով զգեստափոխված ԱդրԽՍՀ ՊԱԿ-ի օպերատիվ աշխատակից էր: Միանգամայն հավանական է նաև, որ երկրորդ ադդամցուն ևս սպանել են Բաքվի հատուկ ծառայությունները: Հետագա բոլոր հետաքննությունների ապարդյունությունը, նրանց մասին որևէ տեղեկատվության ի սպառ բացակայությունը միայն վկայում են նման եզրահանգման արդարացի լինելը» (**Мелик-Шахназаров А.,** Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, Москва, 2009, с. 259):

սին, որ երկու ադրբեջանցիներից առնվազն մեկն սպանվել էր հենց ադրբեջանցի ոստիկանի կրակոցից: Մինչդեռ իրադարձությունների նման մատուցման և մեկնաբանման արդյունքում երկրի՝ դեպքերին անտեղյակ բնակիչների մոտ ակամայից ստեղծվում էր իրականության, խնդրի խեղաթյուրված պատկերացում, և նրանց համար մեղավորները, բախման հրահրիչները և մարդասպանները մեխանիկորեն դառնում էին հայերը:

Սպանված ադրբեջանցիների մասին լուրերն էլ ավելի սրեցին Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ առանց այն էլ լարված իրավիճակը և ինչ-որ տեղ հարմար շարժառիթ, ազդակ հանդիսացան ադրբեջանցիների համար՝ ի պատասխան ԼՂԻՄ հայերի և մարզխորհրդի վերոհիշյալ որոշման՝ Սումգայիթում հայերի ջարդեր իրականացնելու համար. «Իզուր չէ, որ անգամ ամիսներ անց Ա. Դ. Սախարովը հիշեց այդ ելույթն ու հրապարակավ այն անվանեց սադրիչ: Քանզի եթե լսարանի հիմնական մասը Կատուսևի խոսքերն ընկալեց որպես կարեկցանքի տուրք ծայրահեղականների մեղավորությամբ զոհված երիտասարդներին, ապա Ադրբեջանում որոշակի շրջանակներ դրանցում գործելու կոչ լսեցին»[36]: Սումգայիթի պատմության մեջ Կատուսևի այդ ելույթը մնաց որպես ջարդարարությունների մեկնարկի ազդանշան: Եվ պատահական չէ, որ այդ դեպքերից կարճ ժամանակ անց լրագրող-գիտնական Ալեքսանդր Վասիլևսկին գրեց, թե. «Շատերն են գտնում, որ հենց այդ հաղորդումն է վառոդի տակառին մոտեցված լուցկու դեր կատարել, վառոդի տակառ, որ պայթեց Սումգայիթում»[37]:

Ասկերանի դեպքերի հետ կապված՝ հարկ է նշել, որ համամիութենական մամուլի էջերում այդ օրերին պտտվում էր մի պատմություն աշխատանքի հերոս, ԱդրԽՍՀ Աղդամի շրջանի Լենինի անվան կոլտնտեսության նախագահ Խուրաման Աբբասովայի մասին, որը, «պարզվում է», Ասկերանի մատույցներում հրաշք էր գործել՝ միայնակ կանգնեցրել էր հետագա արյունահեղությունը[38]: Ըստ պատումի՝ տարեց այդ կինը բարձրացել էր ճանապարհին կանգնած ավ-

---

[36] **Бабанов И., Воеводский К.** Карабахский кризис. СПб.,1992, http://nashasreda.ru/i-babanov-k-voevodskij-karabaxskij-krizis/, հղվել է 25,07.2017 թ.:

[37] **Василевский А.,** Туча в горах, “Аврора”, 1988, N 10.

[38] Տես **Афанасьев А., Мурато Д., Мурсалиев А., Саркисян А.,** С тревогой и надеждой, “*Комсомольская правда*”, 227 марта 1988, N72..

տոմեքենաներից մեկի թափքին, հանել ոսկեթելով զարդարված իր գլխաշորը և պահել իր գլխավերևում: Հին ավանդույթի համաձայն՝ տղամարդկանց առաջ նետված կնոջ գլխաշորը՝ մայրական պատվի խորհրդանիշը, կարող էր կանխել արյունահեղությունը: ««Սպանեք ինձ,- գոռում էր Խուրաման խանումը:- Տրորեք գլխաշորը: Եվ միայն այդ ժամ գնացեք, կռվեք: Եթե կկարողանաք քայլ անել նրա վրայով, գնացեք»: Ամբոխը հետ շրջվեց: Ասում են տղամարդիկ լաց էին լինում: Ինչ-որ մի պատանյակ փորձեց շրջանցել նրան, բայց ապտակ ստացավ: Հետո կուսակցության շրջկոմի նիստերի դահլիճում Խուրաման խանումը կկորցնի գիտակցությունը…»[39]:

Խուրաման խանումի մասին այս պատմությունը, ըստ ամենայնի, այդ օրերին լայն թափ առած «ծայրահեղականության և ազգայնականության հանդեպ ժողովուրդների բարեկամության հաղթանակի» խորհրդային քարոզչության պատառիկներից մեկն էր: Քարոզչություն, որը մի կողմից՝ իրականությունը խեղաթյուրելու, խորհրդային երկու հանրապետություններում և ԼՂԻՄ-ում ստեղծված չափազանց լարված իրավիճակը քողարկելու միտում ուներ, մյուս կողմից՝ ստեղծված իրադրությունն առանց իրական քաղաքական քայլերի ինչ-որ տեղ մեղմելու, հանդարտեցնելու նպատակ:

Խորհրդային ժողովուրդների «եղբայրական բարեկամության» քարոզչությունը հատկապես մեծ ծավալներ ընդունեց փետրվարի 26-ին «Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին» հղած Մ. Գորբաչովի դիմումից հետո: «Այո,- ասվում էր դիմումի մեջ,- մեր կյանքում չլուծված պրոբլեմներ կան, բայց երկպառակությունների և միմյանց նկատմամբ ժողովուրդների անվստահության բորբոքումը միայն կխանգարի դրանց լուծմանը: Դա կհակասեր մեր սոցիալիստական սկզբունքներին և մեր բարոյականությանը, սովետական մարդկանց բարեկամության ու եղբայրության ավանդույթներին: … Հարկավոր է թանկ գնահատել և ըստ ամենայնի ամրապնդել ադրբեջանական ու հայ ժողովուրդների բարեկամության ավանդույթները, որոնք ձեռք են բերվել սովետական իշխանության տարիներին: Միայն այսպիսի մոտեցումն է համապատասխանում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների իսկական շահերին»[40]:

---

[39] Նույն տեղում:

[40] **Գորբաչով Մ.,** Դիմում Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին, «*Սովետական Հայաստան*», 1988 փետրվարի 27, N48:

Մ. Գորբաչովի դիմումը կենտրոնական մամուլում չհրապարակվեց (այն միայն հանրապետական մամուլում էր տեղ գտել), սակայն դրանից անմիջապես հետո մեկը մյուսի հետևից սկսեցին տպագրվել նյութեր[41], որոնցում երկու հանրապետությունների ամենատարբեր ներկայացուցիչների՝ շարքային աշխատավորների, պատերազմի վետերանների, գործարանների տնօրենների, ուսուցիչների, կուսակցական և մշակութային գործիչների և այլոց շուրթերով՝ երբեմն անգամ բառացիորեն, հնչում էին ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի դիմումում[42] տեղ գտած բոլոր ուղերձները, մասնավորապես՝

- ԼՂԻՄ-ն ԱդրԽՍՀ-ից ՀԽՍՀ կազմի մեջ անցնելու հարցին «հաղորդվել է սրություն ու դրամատիկություն, որոնք հանգեցրել են լարվածության և անգամ օրենքի շրջանակներից դուրս եկող գործողությունների»[43] (երբ չէին նշվում, թե որ գործողություններն են անօրինական, անուղղակիորեն այդպիսիք ընկալվում էին հայկական կողմի գործողությունները, որովհետև համամիութենական ԶԼՄ-ներում ավելի վաղ տեղ գտած հրապարակումներում հենց հայերն էին բնութագրվել որպես ծայրահեղականներ ու ազգայնականներ),
- «ՍՄԿԿ Կենտկոմն անհանգստացած է իրադարձությունների նման զարգացումից, այն հղի է ամենալուրջ հետևանքներով»[44] (ըստ էության, սա անուղղակի սպառնալիք էր),
- տարբեր գաղափարների և առաջարկների քննարկումը

---

[41] Տես Социалистический интернационализм – источник нашей силы, ТАСС, “*Известия*”, 28 февраля 1988, N59, Социалистический интернационализм – источник нашей силы, ТАСС, “*Правда*”, 28 февраля 1988, N59, Здесь наш дом, ТАСС, “*Труд*”, 28 февраля 1988, N48, Проявить гражданскую зрелость и выдержку, ТАСС, “*Известия*”, 29 февраля 1988, N60, Упущенное наверстаем – говорят трудящиеся, ТАСС, “*Известия*”, 1 марта 1988, N61, К событиям в Нагорном Карабахе, ТАСС, “*Правда*”, 1 марта 1988, N61, Грузы отправляются по адресам, ТАСС, “*Труд*”, 1 марта 1988, N49, Время трезвых решений, ТАСС, “*Известия*”, 2 марта 1988, N62, Нужны выдержка и спокойствие, ТАСС, “*Известия*”, 3 марта 1988, N63, Нужны выдержка и спокойствие, ТАСС, “*Правда*”, 3 марта 1988, N63, Час разума и трезвых решений, ТАСС, “*Правда*”, 6 марта 1988, N66, Час разума и трезвых решений, ТАСС, “*Известия*”, 6 марта 1988, N66, **Асланов З., Веранян Л., Левинская В.**, В семье единой, “*Сельская жизнь*”, 22 марта 1988, N67,

[42] Տես **Գորբաչով Մ.,** Դիմում Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, ժողովուրդներին, «*Սովետական Հայաստան*», 1988 փետրվարի 27, N48:

[43] Նույն տեղում:

[44] Նույն տեղում:

«հարկավոր է անել հանգիստ, դեմոկրատական պրոցեսի և օրինականության շրջանակներում»[45] (այս կերպ մարզն ԱՊՐԽՍՀ կազմից դուրս հանելու և ՀԽՍՀ կազմ ընդգրկելու Ղարաբաղի բնակչության կամարտահայտումը, դրան հաջորդած օրինական գործողությունները և ժողովրդավարությանը բնորոշ խաղաղ հանրահավաքներն առանց որևէ հիմնավորման և փաստարկման պարզապես դրվում էին օրենքից դուրս),

- «չի կարելի ժողովրդի ճակատագրի անչափ լուրջ հարցերը ենթարկել տարերքի և հույզերի կամքին»[46] (կրկին փորձ էր արվում առկա իրողություններում և տեղի ունեցող իրադարձություններում անտեսել, բացառել ռացիոնալը, փոխարենը՝ դրանք տեսնել և ներկայացնել որպես զգացմունքների և հույցերի արգասիք),
- «միմյանց նկատմամբ ժողովուրդների անվստահության բորբոքումը միայն կխանգարի դրանց [առկա չլուծված խնդիրների  Ա. Ա.] լուծմանը»[47] (նման անդեմ հայտարարության մեջ անուղղակի մեղադրանք կար հայկական կողմի նկատմամբ, մինչդեռ թե՛ ԼՂԻՄ-ում, թե՛ ՀԽՍՀ-ում ցույցերի ու հանրահավաքների ամբողջ ընթացքում ադրբեջանական ժողովրդի հանդեպ որևէ թշնամական ելույթ չի հնչել, չի եղել որևէ գործողություն, որը կարող էր վնաս հասցնել ժողովուրդների բարեկամությանը կամ անվստահություն բորբոքեր ադրբեջանցիների հանդեպ),
- պետք է հաշվի առնել երկրում ծավալված հեղափոխական նորացման գործընթացները[48] (իրականում հենց այդ գործընթացներն էին, որ հուսադրել էին հայ ժողովրդին կրկին բարձրացնելու Ղարաբաղի հարցը՝ վերջինիս արդար լուծման ակնկալիքով),
- «սոցիալիստական ինտերնացիոնալիզմը մեր հսկայական ուժի աղբյուրն է, … ժողովուրդների իսկական եղբայրություն ու միասնություն՝ ահա սա է մեր ուղին, … այս փորձության ժամին էլ պաշտպանենք մեր խորհրդային ինտերնացիոնալիզմը, այն բանի անսասան հավատը, որ միայն մեր բոլոր ժողովուրդների համերաշխ ընտանիքում մենք կարող ենք ապահովել մեր հասարակության

[45] Նույն տեղում:
[46] Նույն տեղում:
[47] Նույն տեղում:
[48] Տես նույն տեղում:

առաջադիմությունը, նրա բոլոր քաղաքացիների բարօրությունը»[49] (իրականում թե՛ ԼՂԻՄ-ում, թե՛ ՀԽՍՀ-ում ցույցերի ու հանրահավաքների ամբողջ ընթացքում դրանց մասնակիցները երբևէ հանդես չեն եկել ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության դեմ),

- «այժմ ամենագլխավորն է՝ կենտրոնանալ ստեղծված իրավիճակի հաղթահարման, Ադրբեջանում և Հայաստանում կուտակված կոնկրետ տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և այլ պրոբլեմների լուծման վրա»[50] (այս կերպ խորհրդային իշխանությունները փորձում էին անտեսել, քողարկել ղարաբաղյան հարցի քաղաքական բաղադրիչը և այն ներկայացնել որպես բացառապես սոցիալ-տնտեսական խնդիր),
- կոչ բոլորին, որով և եզրափակվում էր ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղարի դիմումը երկու ժողովուրդներին՝ «Հանդես բերել քաղաքացիական հասունություն ու համբերություն, վերադառնալ նորմալ կյանքի ու աշխատանքի, պահպանել հասարակական կարգը: Ժամն է ողջախոհության ու սթափ վճիռների»[51]:

Հարկ է նշել, որ, Հայկական ԽՍՀ-ում և ԼՂԻՄ-ում անսացին Մ. Գորբաչովի կոչին և պատասխանցին հանրահավաքների ու ցույցերի դադարեցմամբ և աշխատանքի վերադառնալով[52]: Միանգամայն այլ էր արձագանքը ԱդրԽՍՀ-ում. հանրապետական մամուլում ԽՄ առաջնորդի դիմումի հրապարակման օրն արդեն Սումգայիթում սկսվեցին հայերի ջարդերը: Համամիութենական մամուլն այդ օրերին և դրանից հետո, անհաղորդ մնալով սումգայիթյան դեպքերին, շարունակում էր խորհրդային ժողովուրդների «եղբայրական բարեկամության» պարզունակ քարոզչությունը՝ հրապարակելով տարբեր սեռի, տարիքի, մասնագիտության և պաշտոնի խորհրդային քաղաքացիների՝ գորբաչովյան ուղերձներով ակաղձուն, սակայն արդեն կեղծ հնչող խոսքը:

Այսպիսով, ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրվանից խորհրդային իշխանությունները հայտարարեցին, որ ազգային-տարածքային կառուցվածքի վերանայմանն ուղղված հայ ժողովրդի

---

[49] Նույն տեղում:

[50] Նույն տեղում:

[51] Նույն տեղում:

[52] Տես Нагорный Карабах, историческая справка, Ереван, 1988, էջ 63:

պահանջը հակասում է Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների աշխատավորների շահերին, չի բխում լենինյան ազգային քաղաքականությունից և վնասում է ազգամիջյան հարաբերություններին, ԼՂԻՄ մարզխորհրդի միանգամայն օրինական փերտրվարքսանյան որոշումը հայտարարվեց ոչ օրինական, հայ ժողովուրդը՝ ծայրահեղականներ և ազգայնականներ: Կենտրոնական իշխանությունների որդեգրած այս դիրքորոշման համաշարում էլ ուրվագծվեց ղարաբաղյան հարցում այն տեղեկատվական քաղաքականությունը, որն այդուհետ խորհրդային քարոզչամեքենայի համար հիմք պիտի դառնար «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ» տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելիս:

Ղարաբաղյան շարժման և մարզում կատարվող իրադարձությունների մասին համամիութենական պարբերական մամուլի էջերում տեղ գտած առաջին իսկ հրապարակումների ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ համամիութենական տպագիր լրատվամիջոցները, ի սկզբանե լծվելով ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության, «խոհեմության» և զսպվածության քարոզչությանը, իրենց այդ հրապարակումներում ոչ միայն շրջանցեցին և ամենևին չանդրադարձան շարժման ծագման իրական պատճառներին, այլև, ըստ էության, մեկնարկ տվեցին ղարաբաղյան շարժման, նրա էության, պատմության և բնույթի, ԼՂԻՄ-ում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների խեղաթյուրմանը, ինչն անփոփոխ կերպով պիտի շարունակվեր նաև հետագայում և իր հերթին ազդակ ծառայեր ադրբեջանական ՁԼՄ-ների համար՝ հակահայկական տեղեկատվական արշավ ծավալելու հայ «ծայրահեղականների», «ազգայնականների», «սադրիչների» և ղարաբաղյան շարժման դեմ:

**Բանալի բառեր** – *Ղարաբաղյան շարժում, ԼՂԻՄ, ԽՍՀՄ, ՀԽՍՀ, ԱդրԽՍՀ, համամիութենական մամուլ*

**АЛЬВИНА АГАБАБЯН -** ПЕРВЫЕ ОТКЛИКИ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ В СОВЕТСКОЙ ВСЕСОЮЗНОЙ ПРЕССЕ

20 февраля 1988 года внеочередная сессия Совета народных депутатов Нагорно-Карабахской автономной области XX созыва обратилась в

Верховные Советы АзССР, АрмССР и СССР с ходатайством о передаче НКАО из состава АзССР в состав АрмССР. Решение сессии стало своего рода юридическим оформленим желаний армян Нагорного Карабаха воссоединиться с Армянской ССР. В период перестройки и гластности была надежда, что в карабахском вопросе наконец-то будет принято справедливое решение. Однако центральные власти в карабахском вопросе сразу приняли антиармянсую позицию, а всесоюзные газеты в первых же своих публикациях, промолчав о реальных причинах карабахского движения, положили, по сути, начало искажению сущности, истории и характера карабахского движения и событий, происходящих в НКАО и вокруг него, что было продолжено и в будущем.

***Ключевые слова**: Карабахское движение, НКАО, СССР, АрмССР, АзССР, всесоюзная пресса*

**ALVINA AGHABABYAN** – THE FIRST RESPONSES ON KARABAKH MOVEMENT IN THE SOVIET ALL-UNION PRESS

On February 20, 1988, the extraordinary session of the Council of People's Deputies of the Nagorno-Karabakh Autonomous Oblast of the XX convocation appealed to the Supreme Soviets of the AzSSR, the ArmSSR and the USSR with a request to transfer the NKAO from the AzSSR to the ArmSSR. The decision of the session became a kind of legal registration of the desires of the Armenians of Nagorno-Karabakh to reunite with the Armenian SSR. During the period of perestroika and glasnost, there was a hope that eventually a fair decision will be made in the Karabakh issue. However, the central authorities immediately adopted an anti-Armenian position in the Karabakh issue, and the all-union newspapers in their first publications, keeping silent about the real causes of the Karabakh movement, de-facto distorted the essence, history and character of the Karabakh movement and the events taking place in and around NKAO, which was continued in the future as well.

***Key words:** Karabakh movement, USSR, ArmSSR, AzSSR, all-union press*

# ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՔԵՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՄԱՍԻՆ

*Սամվել Մարտիրոսյան*

Ադրբեջանական հաքերային խմբերը Հայաստանի դեմ գործում են արդեն տասնամյակներ: Առաջին լուրջ գործողությունը հայկական կիբերտարածքի դեմ իրականացվել է դեռ 2000 թվականի հունվարին: Այդ ժամանակ հայկական կայքերի վրա հարձակումն իրականացրին երկու ադրբեջանական հաքերային թիմեր՝ Green Revenge-ը և Hijack Team 187-ը: Տվյալ թիմերի կապը պետական կառույցների հետ ապացուցված չէ: Սակայն այն, որ Ադրբեջանի անվտանգության կառույցները կարողացան կիբերընդհարումների ժամանակ հաքերային խմբերի վրա լծակներ կիրառել և դադարեցնել հարձակումները, վկայում է այն մասին, որ հաքերային խմբերի ու պետական մարմինների միջև կապ գոյություն ուներ արդեն 2000 թվականին[1]: Տվյալ դեպքը փաստում է նաև այն, որ պետական մարմիններն առնվազն տեղյակ էին հարձակում իրականացնող անձանց մասին կամ հնարավորություն են ունեցել անմիջական կապ հաստատել նրանց հետ:

Մինչև 2012 թվականը բավարար հիմքեր չկային կասկածելու պետական մարմինների և բազմաթիվ հաքերային խմբերի միջև համագործակցության մասին: Սակայն 2011 թվականի նոյեմբերին ադրբեջանական հաքերային համայնքը կոնսոլիդացվեց, հիմնական գործող խմբավորումները և անհատները միավորվեցին մեկ միասնական Anti-Armenia թիմում[2]:

Արդեն 2012 թվականին՝ Ռամիլ Սաֆարովի՝ Հունգարիայից արտահանձնվելուն հետևած դիվանագիտական և քարոզչական հակա-

---

[1] Տես **Мартиросян С.**, История армянского хакерства, часть I. Как все начиналось, *Digital.Report,* https://digital.report/armyanskoe-hakerskoe-soobshhestvo-kak-vse-nachinalos/, հղվել է 04.11.2017 թ.:

[2] Տես **Мартиросян С.,** История армянского хакерства, часть IV. Герой или убийца: кибервойна вокруг одного преступления, Digital.Report, https://digital.report/istoriya-armyanskogo-hakerstva-chast-iv-geroy-ili-ubiytsa-kibervoyna-vokrug-odnogo-prestupleniya/, հղվել է 04.11.2017 թ.:

մարտության ժամանակ, հետևեց լայնամասշտաբ հաքերային գրոհ Հայաստանի դեմ: Գրոհի ընթացքում իրականացվեցին ոչ միայն ավանդական հարձակումներ կայքերի վրա, այլև կիրառվեցին DDoS տիպի հարձակումներ[3]: Այդ գրոհի, ինչպես նաև Հայաստանի դեմ դրան հաջորդած մի շարք այլ DDoS հարձակումների քանակական ուժգնությունը թույլ է տալիս ենթադրել, որ հարձակումները կատարվում էին պետական հովանավորությամբ, սակայն օգտագործվում էր կիբերվարձկանների հզորությունը[4]: Ադրբեջանն այդ պահին չուներ բավարար տեխնիկական հնարավորություններ, որ կարողանար նման հզորության հարձակումներ իրականացնել Հայաստանի կապի հանգույցների դեմ: Ադրբեջանական հաքերային խմբավորումները նույնպես նման միջոցներ չունեին: Մյուս կողմից՝ նմանատիպ հզորության հարձակումները կիբերկրիմինալի կողմից իրականացվում են բավական մեծ գումարների դիմաց: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ պետությունը հանդես էր գալիս որպես պատվիրատու և հովանավոր, իսկ կատարողները վարձկաններ էին:

Ենթադրաբար հենց 2012 թվականին՝ հայ-ադրբեջանական մեծ կիբերընդհարումից հետո, Բաքվում սկսեցին մտածել սեփական՝ զուտ պետական մակարդակով գործող կիբերմիավորումներ ստեղծելու մասին: 2015 թվականի հուլիսին Wikileaks կազմակերպությունը հրապարակեց իտալական The Hacking Team հաքերային կազմակերպության ներքին նամակագրությունը, որը կորզվել էր այլ հաքերի կողմից[5]: Տվյալ կազմակերպությունը ստեղծում և վաճառում է կիբերլրտեսական ծրագրային ապահովում, որը թույլ է տալիս գաղտնալսումներ և վերահսկում իրականացնել համակարգիչների և հեռախոսների վրա: Կազմակերպությունը վաճառում է իր արտադրանքը մի շարք երկների իրավապահ մարմիններին: Որպես հետևանք՝ տվյալ ծրագրերը օգտագործվում են ոչ միայն հանցագործություններ բացահայտելու, այլ նաև ընդդիմադիրներին վերահսկելու համար: The Hacking Team հիմնական լրտեսական ծրագրի՝ Remote Control System-ի կիրառումն Ադրբեջանի իշխանություններ-

[3] Տես նույն տեղում:

[4] Տես **Մարտիրոսյան Ս.,** DDoS հարձակումները Հայաստանի վրա դառնում են մտահոգիչ, «Նորավանք» հիմնադրամ, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=12704, հղվել է 04.11.2017 թ.:

[5] Տե՛ս Hacking Team, https://wikileaks.org/hackingteam/emails/, հղվել է 04.11.2017 թ.:

րի կողմից ֆիքսվել է Citizen Lab կազմակերպության կողմից 2013 թվականի հուլիս-նոյեմբեր ամիսների ընթացքում: Հաշվի առնելով, որ Ադրբեջանում հոկտեմբերին կայացել էին նախագահական ընտրություններ, կարելի է ենթադրել, որ համակարգի կիրառումն ունեցել է ներքաղաքական խնդիրներ լուծելու նպատակ[6]:

Wikileaks-ի կողմից բացահայտված նամակագրությունները ցույց են տալիս, որ այդ տեխնոլոգիայի հանդեպ հետաքրքրությունն Ադրբեջանում առաջացել է 2011 թվականին, սակայն միայն 2012 թվականին են կողմերը եկել համաձայնության[7]:




*The Hacking Team-ի կողմից արտադրվող լրտեսական ծրագրի՝ Remote Control System-ի կիրառումը երկրների կառավարությունների կողմից՝ ըստ Citizen Lab կազմակերպության[8]:*

---

[6] Տես **Marczak B., Guarnieri C., Marquis-Boire M., Scott-Railton J.,** Mapping Hacking Team's "Untraceable" Spyware, The Citizen Lab, 17.02.2014, https://citizenlab.ca/2014/02/mapping-hacking-teams-untraceable-spyware/, հղվել է 04.11.2017 թ.:

[7] Տե՛ս Hacking Team-ի նամակագրությունը Ադրբեջանի վերաբերյալ, *WikiLeaks*, https://wikileaks.org/hackingteam/emails/?q=Azerbaijan&mfrom=&mto=&title=&notitle=&date=&nofrom=&noto=&count=50&sort=1#searchresult, հղվել է 04.11.2017 թ.:

[8] Տես **Marczak B., Guarnieri C. Marquis-Boire M., Scott-Railton J.,** …, նույն տեղում:

Հետագա բացահայտումները կապված են արդեն 2015 թվականին տեղի ունեցած իրադարձությունների հետ: Amnesty International և մի շարք այլ կազմակերպությունների ուսումնասիրությունները թույլ են տվել գտնել ապացույցներ, որ 2015 թվականի նոյեմբերից աղրբեջանցի ընդդիմադիրների դեմ հատուկ ծառայությունները կիրառել են արդեն իսկ սեփական արտադրության վիրուսային ծրագրեր[9]: Ըստ մասնագետների՝ ընդդիմադիրներին ուղարկվող վիրուսային ծրագիրը թույլ է տալիս գողանալ գաղտնաբառերը, նկարել օգտվողի մոնիտորը, սակայն ծրագրային ապահովումը բարդ ու արհեստավարժ չէ[10]:




*Կեղծ նամակ, որ ուղարկվել է մի շարք աղրբեջանցի ակտիվիստների և որը պարունակում է վարակված ֆայլ:*
*Աղբյուրը՝ Amnesty International [11]:*

---

[9] Տես **Guarnieri C., Franco J., Anderson C.**, False Friends: How Fake Accounts and Crude Malware Targeted Dissidents in Azerbaijan, 10.03.2017, https://www.amnesty.org/en/latest/research/2017/03/False-Friends-Spearphishing-of-Dissidents-in-Azerbaijan/, հղվել է 04.11.2017 թ.:.

[10] Տես նույն տեղում:

[11] Տես նույն տեղում:

2017 թվականին արձանագրվել են DDoS հարձակումներ ընդդեմ ադրբեջանական ընդդիմադիր լրատվական կայքերի՝ abzas.net, cumhuriyyet.net, azadliq.info[12]: Տվյալ հարձակումների ժամանակ արդեն օգտագործվել են ադրբեջանական սերվերներ, որոնք կապակցված են կառավարության հետ, ինչը նշանակում է, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունները ձևավորում են սեփական համակարգ՝ DDoS տիպի հարձակումներ իրականացնելու համար:

Այս տվյալները վկայում են, որ Ադրբեջանի հատուկ ծառայություններն ակտիվ ձևավորում են կիբերմիավորումներ, որոնք արդեն կարողանում են իրականացնել բավականին բարդ գործողություններ: Հասկանալի է, որ նման կիբերհարձակումների թիրախ կարող են դառնալ ոչ միայն ադրբեջանցի ընդդիմադիր ակտիվիստները, այլ նաև Հայաստանի և հայկական Սփյուռքի կառույցները և անհատները:

**Բանալի բառեր** - *Ադրբեջան, տեղեկատվական անվտանգություն, կիբերհարձակում, հաքեր*

**САМВЕЛ МАРТИРОСЯН** - О ВОЗМОЖНОМ ХАКЕРСКОМ ПОТЕНЦИАЛЕ АЗЕРБАЙДЖАНА

В статье приводится обзор истории становления азербайджанских хакерских групп и методы их оперирования. На основе эмпирических данных выявляется прослеживаемая связь между данными группами и соответствующими госорганами Азербайджана. Предполагается, что механизмы подавления местных оппозиционных сайтов могут быть также применены против армянского киберпространства.

***Ключевые слова***: *Азербайджан, информационная безопасность, кибератак, хакер*

[12] Տե՛ս News media websites attacked from governmental infrastructure in Azerbaijan, https://www.qurium.org/news-media-websites-attacked-from-governmental-infrastructure-in-azerbaijan/, հղվել է 04.11.2017 թ.:

**SAMVEL MARTIROSYAN** - THE POSSIBLE HACKING POTENTIAL OF AZERBAIJAN

The article reflects on the brief history of Azerbaijani hacking teams and the operational methods thereof. Based on the empiric data the author indicates the visible connection between those groups and respective state bodies. It is supposed that the same methods of cyber-attacks being directed against the local oppositional websites can also be implied to attack the Armenian cyber-territory.

***Key words:*** *Azerbaijan, information security, cyber attack, hacker*

# ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ. ՃՇԳՐԻՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

*Դավիթ Ջամալյան, ԵՊԼՀ*

Հանրահայտ իրողություն է՝ եզրույթներն արտահայտում են հակամարտող կողմերի պատկերացումներն այդ հակամարտության ծագումնաբանության, ընթացքի ու կարգավորման հեռանկարի վերաբերյալ: Սակայն միջազգային ճանաչում են ստանում առավել նախաձեռնողական դիվանագիտական ակտիվություն հանդես բերող հակամարտող կողմի ստեղծած եզրույթները:

### *Ոչ թե «շփման գիծ», այլ «Արցախի պետական սահման»*

Առաջին հերթին տեղին է անդրադառնալ սահմանադրորեն Արցախի մասը կազմող, սակայն նախկին ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս գտնվող տարածքներին վերաբերող եզրույթներին:

Այսպես, մեզանում երբեմն օգտագործվում է «անվտանգության գոտի» եզրույթը, որով ընդգծվում է այդ տարածքների կարևոր լինելն Արցախի անվտանգության համար, առավել հաճախ՝ «ազատագրված տարածքներ» եզրույթը՝ նշելու համար այդ տարածքների պատմականորեն մեզ պատկանելու, ինչպես նաև ագրեսորին ճնշելու հանգամանքը:

Սակայն թե՛ ներկայում, թե՛ ապագայում *Արցախի փաստացի տարածքի անսակարկելիությունն ադեկվատ կերպով արտահայտվում* է «Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքներ» եզրույթի միջոցով: Այս տեսակետից՝ ***«Արցախի սահմանադրորեն ամրագրված տարածքներ»*** եզրի տրամաբանությունը նույնական է ***«Արցախի պետական սահման»*** եզրի տրամաբանությանը, այն է՝ Արցախի ներկայիս տարածքն անսակարկելի է:

Այս համատեքստում տեղին է անդրադառնալ նաև «շփման գիծ» եզրույթի վտանգավորության խնդրին՝ հաշվի առնելով այն, որ վերջինս մեզանում կիրառվում է գրեթե համատարած:

Ինչպես գիտենք, հակամարտության ընթացքում պաշտոնական

Բաքուն քարոզչական և դիվանագիտական շրջանառության մեջ է դրել խնդրի ծագման և ընթացքի պատկերը հօգուտ իրեն աղավաղող բազմաթիվ եզրույթներ: Այդպիսիներից է նաև «շփման գիծ» եզրույթը, որը, մեր համոզմամբ, նպատակահարմար չէ կիրառել: Հիշեցնենք, որ ադրբեջանական ծագմամբ այդ եզրույթը մեզանում կիրառվում է «ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գիծ» ձևակերպմամբ[1]:

Բանն այն է, որ «շփման գիծ» եզրույթն ածանցյալ է Բաքվի պաշտոնական տեսակետից առ այն, թե իբր Հայաստանի Հանրապետությունն օկուպացրել է Ադրբեջանի տարածքի 20%-ը: Բնավ պատահական չէ, որ Ադրբեջանի ՊՆ պաշտոնական հաղորդագրություններում «շփման գիծ» եզրույթը կիրառվում է «Հայաստանի Զինված ուժեր» արտահայտության հետ փոխկապակցված: Ի դեպ, այս առումով «շփման գիծ» և «գրավված տարածքներ» եզրույթներն իրենց բովանդակությամբ նույնական են: Մանրամասնենք:

«Շփման գիծ» ասվածը ենթադրում է սկզբունքորեն փոփոխելի, անկայուն, ժամանակավոր բաժանարար գիծ: Այսինքն՝ այդ եզրույթը կոչված է ընդգծելու ոչ միայն հակամարտության կարգավորված չլինելը, այլև Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի տարածքի օկուպացիայի հանգամանքը: Այդ եզրույթով է նաև պաշտոնական Բաքուն փորձում որպես հակամարտության կողմ ներկայացնել Հայաստանի Հանրապետությանը, և միևնույն ժամանակ՝ բացառել ինքնորոշված Արցախի՝ որպես բանակցությունների ինքնուրույն կողմ հանդիսանալու հնարավորությունը: Այսինքն՝ պաշտոնական Բաքուն, այս եզրույթը ստեղծելով ու հետևողականորեն տարածելով, ձգտում է նախ՝ ***միջազգային հանրության շրջանում կարծիք ձևավորել առ այն, թե իբր Հայաստանի Հանրապետությունն օկուպացրել է իր տարածքի մի մասը,*** ապա նաև՝ ***թույլ չտալ, որ Արցախի ներկա տարածքն աշխարհում ընկալվի որպես Արցախի բնակչության ինքնորոշման իրավունքի իրացման արդյունք:*** Ըստ այդմ՝ «շփման գիծ» եզրույթը կոչված է տրամաբանորեն հիմնավորելու պաշտոնական Բաքվի դիրքորոշումն առ այն, որ ստատուս քվոն անընդունելի է ու պետք է փոխվի, և որ «Ադրբեջանի տարած-

[1] «Շփման գիծ» եզրույթի վտանգավորության և «Արցախ - Ադրբեջան պետական սահման» եզրույթի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ տե՛ս նաև **Мелик-Шахназарян Л.,** О войне и победе, т. 2, Ереван, Айагитак, 2015:

քային ամբողջականությունը պետք է վերականգնվի»:

Այսպիսով՝ «շփման գիծ» եզրույթը հակամարտության կարգավորման վերաբերյալ պաշտոնական Բաքվի տեսակետը հանրայնացնելու նպատակ ունի և, ըստ էության, Արցախի բնակչության ինքնորոշման իրավունքը ժխտելու ադրբեջանական դրսևորումներից մեկն է: Ըստ այդմ՝ կարծում ենք, որ ***կիրառելով այն մենք, ըստ էության, ընդունում ենք պաշտոնական Բաքվի տեսակետն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունն օկուպացրել է Ադրբեջանի տարածքի մի մասը:***

Առավել վտանգավոր է սակայն այն, որ «ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գիծ» եզրույթը հաճախ մեզանում կիրառվում է «հայ-ադրբեջանական սահմանին» հավելումով՝ ի նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության սահմանն Ադրբեջանի հետ: Տվյալ դեպքում «հայ» արմատը մասնավորեցվում և նույնացվում է Հայաստանի Հանրապետության հետ: Որպես հետևանք՝ Արցախը ընկալվում է որպես հայկական տիրույթից դուրս գտնվող մի տարածք: Վերը նշվածը վտանգավոր է, քանզի կարող է խեղել հասարակության մոտ հայրենիքի կերպարի և ընդգրկման ընկալումը: Առհասարակ կարծում ենք՝ հարկավոր է հայոց երկու պետություններին անդրադառնալիս հստակորեն ընդգծել «Հայաստանի Հանրապետություն» անվանումը և ձեռնպահ մնալ «հայ» արմատն օգտագործելուց բոլոր այն դեպքերում, երբ հարկավոր է առանձնացնել «Արցախ» տեղանունը՝ որպես հայոց երկրորդ պետության անվանում: Այս ամենը բնավ մանրուքներ չեն, քանզի եզրույթները կարող են հանրային դիրքորոշումներ ձևավորել: Հասարակության ընկալումներում պետք է հստակ լինի՝ գոյություն ունի հայոց երկու պետություն, բայց մեկ ընդհանրական Հայաստան հայրենիք:

Այսպիսով, չկա որևէ փաստարկ, որ կիիմնավորեր մեզանում «հակամարտ զորքերի շփման գիծ» եզրույթի կիրառման նպատակահարմարությունը: Կարծում ենք՝ մեզ համար շահեկանը ***«Արցախ-Ադրբեջան պետական սահման»*** եզրույթն է, որը և՛ ճշգրիտ է, և՛ բառի բուն իմաստով հայանպաստ: Այստեղ արժե հատկապես ընդգծել, որ հակամարտության կարգավորված չլինելը խոչընդոտ չէ ***«Արցախ-Ադրբեջան պետական սահման»*** եզրույթն օգտագործելու համար: Չէ՞ որ հակամարտության կարգավորված չլինելը մեզ

չի խանգարում ընդունելու Արցախի բնակչության ինքնորոշման իրավունքն ու միջազգային ատյաններում պաշտպանելու այդ իրավունքի իրացման արդյունքը՝ հայոց երկրորդ պետության գոյությունը, մանավանդ որ հայկական կողմը պաշտոնապես սկզբունքորեն բացառում է հակամարտության կարգավորման այնպիսի սցենարի կենսագործումը, որի արդյունքում Արցախը կհայտնվի Ադրբեջանի կազմում:

Ինչպես գիտենք, Հայաստանի Հանրապետության բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությունը ընդգծում է, որ հակամարտության կարգավորման գործում վերջին խոսքը պատկանում է Արցախին, իսկ պաշտոնական Ստեփանակերտը՝ որպես ինքնորոշված սուբյեկտ, հայտարարում է, որ հետպատերազմյան իրողությունների փոփոխությունն ու տարածքային զիջումներն անընդունելի են, քանզի այդպիսին է Արցախի բնակչության հավաքական կամքը: Այսպիսով՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության դիրքորոշման տրամաբանությունը հետևյալն է՝ ***Ադրբեջանի հետ Արցախի սահմանները կարող են ճշգրտվել, բայց սահմանի ուրվագծի սկզբունքային փոփոխությունն անհնար է***[2]: Պաշտոնական Ստեփանակերտի այս սկզբունքային դիրքորոշումը[3] կոչված է ***ընդգծելու Արցախի՝ հակամարտության ինքնուրույն կողմ լինելը, շեշտելու Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի տարածքի օկուպացիայի թեզի անհիմն լինելը*** և ի վերջո՝ ***դիվանագիտական գրագրությամբ բացառելու տարածքային զիջումների հեռանկարը***:

Հետևաբար՝ Արցախը՝ որպես հայոց երկրորդ պետություն, ունի և ունենալու է սահմաններ: Իսկ եթե այդպես է, ապա միանգամայն տեղին է «Արցախ-Ադրբեջան պետական սահման» եզրույթի կիրառումը, քանզի այն միանգամայն համահունչ է հակամարտության կարգավորման վերաբերյալ թե՛ Հայաստանի Հանրապետության,

---

[2] Այլ հարց է, որ այդ ճշգրտում ասվածի հեռանկարն այնքան հեռու է և մշուշոտ, որ այժմ այդ մասին խոսելը պարզապես իրատեսական չէ:

[3] Տես՝ Հանդիպում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ, ԼՂՀ Նախագահի աշխատակազմ, 18.05.2014, http://www.president.nkr.am/am/news/meetingsWithForeignDelegations/2441/, հղվել է 04.11.2017 թ.: Տե՛ս նաև **Бунтман Е.,** Интервью с Кареном Мирзояном, Радио “Эхо Москвы”, 04.03.2013, https://echo.msk.ru/programs/beseda/1023174-echo/, հղվել է 04.11.2017 թ.:

թե՛ Արցախի պաշտոնական դիրքորոշումներին:

Այսպիսով, հայաստանյան հասարակության ընկալումներում Ադրբեջանի հետ հակամարտության պատկերը պետք է արտացոլված լինի ճշգրտորեն: Մասնավորապես՝ վտանգավոր և ըստ այդմ՝ անթույլատրելի է, որ հակամարտության կարգավորման թյուրքամետ սցենարը մեր հանրությունը ընկալի որպես ընդունելի: Իսկ թյուրքանպաստ եզրույթների ակամա կիրառումն անուղղակիորեն նպաստում է վերը նշվածին, քանզի հանրային ընկալումներում ամրապնդում է ադրբեջանական թեզերը՝ վերջիններիս հանդեպ հանրությանն առավել ընկալունակ դարձնելով և այդ կերպ նպաստելով դրանց տարածմանը:

***«Ղարաբաղյան հակամարտությո՞ւն», թե՞ «Ադրբեջանի հետ հակամարտություն». այս երկու եզրույթից ո՞րն է առավել ճշգրիտ բնորոշում հակամարտության էությունը:***

Արցախի տարածքի հանդեպ Ադրբեջանի հավակնություններով պայմանավորված՝ հակամարտությունը դիվանագիտական, քաղաքագիտական շրջանակներում հայտնի է «Ղարաբաղյան հակամարտություն» անվամբ: Ըստ այդմ՝ փաստ է, որ սույն եզրույթը ստացել է միջազգային ճանաչում: Սակայն, մեր համոզմամբ «Ղարաբաղյան հակամարտություն» եզրույթը սկզբունքորեն սխալ է արտահայտում հակամարտության ծագումնաբանությունն ու զարգացման հեռանկարները: Մեր կարծիքով՝ հակամարտության վերաբերյալ եզրույթներ ստեղծելիս հարկ է ելնել թուրք-ադրբեջանական տանդեմի հետ հակամարտության ցիկլային լինելու սկզբունքից[4]: Առավել քան ակնհայտ է, որ Բաքվի հավակնությունները չեն սահմանափակվում լոկ Արցախի տարածքով. թուրք-ադրբեջանական հավակնությունները շատ ավելին են: Այստեղ տեղին է հատկապես ընդգծել, որ պատմականորեն հայապատկան տարածքների հանդեպ նկրտումների առումով Թուրքիայի և Ադրբեջանի հեռահար շահերը նույնական են: Այսպիսով, Անկարայի և Բաքվի ծավալապաշտական նկրտումները հակամարտությունը դարձնում են տևական: Ահա այս համա-

[4] «Շփման գիծ» եզրույթի վտանգավորության և «Արցախ - Ադրբեջան պետական սահման» եզրույթի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ տե՛ս նաև **Мелик-Шахназарян Л.**, О войне и победе, т. 2, Ереван, Айагитак, 2015:

տեքստում Արցախի տարածքին տիրանալու Բաքվի ցանկությունը, մեր համոզմամբ, հարկավոր է դիտարկել որպես ***փվյալ պատմական ժամանակահատվածում արդիական դարձած թուրք-հայկական տնական հակամարտության մի դրվագ***: Հետևաբար՝ հակամարտության ներկա դրվագը տարածքային զիջումների սցենարով կարգավորել փորձելու դեպքում պարզապես վրա կհասնի հակամարտության հաջորդ փուլը, որը պայմանականորեն կարելի է անվանել ***նախիջևանյան***: Բանն այն է, որ նման սցենարի կենսագործման դեպքում Ադրբեջանը, ստանալով հնարավորը, վաղ թե ուշ կփորձի Նախիջևանի հետ տարածքային կապ հաստատել, ինչը ***մնում է թուրք-ադրբեջանական երկյակի հեռահար նպատակներից մեկը***: Այդ նպատակն այսօր անիրականանալի է ազատագրված Արցախի ներկա՝ սահմանադրորեն ամրագրված տարածքի պայմաններում: Արցախի սահմանների ներկա ուրվագիծը թուրք-ադրբեջանական ագրեսիվ նկրտումները զսպող, ըստ էության, անփոխարինելի գործոն է, որը կանխում է թյուրք-հայկական հակամարտության զարգացումը մեզ համար վտանգավոր ուղղությամբ և ստիպում հակառակորդին համակերպվել հայոց պետականության գոյության հետ:

Հետևաբար՝ ելնելով ողջ վերը նշվածից՝ տեղին է շրջանառել ***«Ադրբեջանի հետ հակամարտություն»*** եզրույթը: Այս կերպ ընդգծվում է հակամարտության շարունակական բնույթը, այդ շարունակականության պայմանավորված լինելը թուրք-ադրբեջանական ագրեսիվ նկրտումներով և, ինչն ամենակարևորն է, Արցախի ներկա տարածքի վճռորոշ նշանակությունն այդ ագրեսիվ նկրտումները զսպելու գործում:

Եվս մեկ նկատառում. սկզբունքորեն կարևոր է, որ մեր հանրային ընկալումներում Արցախը չընկալվի որպես խնդիր՝ պրոբլեմ: Մինչդեռ «Ղարաբաղյան հակամարտություն» եզրույթը պարունակում է նաև այդ վտանգը: ***Հակամարտության պատճառը ոչ թե Արցախն է, այլ թուրք-ադրբեջանական ագրեսիվ հավակնությունները***, հետևաբար՝ հարկավոր է հետևողական ջանքեր գործադրել՝ ահա այս հոգեբանորեն առողջ դիրքորոշումը հայաստանյան հանրային ընկալումներում ամրապնդելու համար: Կարծում ենք՝ ***«Ադրբեջանի հետ հակամարտություն»*** եզրույթը շրջանառելն էապես կնպաստի այդ նպատակին:

**Բանալի բառեր** - *Հայաստան, Արցախ, Ադրբեջան, եզրույթներ*

**ДАВИД ДЖАМАЛЯН** - О НЕОБХОДИМОСТИ УПОТРЕБЛЕНИЯ ТОЧНЫХ ТЕРМИНОВ, ХАРАКТЕРИЗИРУЮЩИХ КОНФЛИКТ С АЗЕРБАЙДЖАНОМ

В статье анализируется целесообразность употребления в публицистическом и политико-дипломатическом лексиконах некоторых терминов, касающихся Нагорно-Карабахского конфликта. “Линия соприкосновения войск” или “государственная граница Арцаха”, “Карабахский конфликт” или “конфликт с Азербайджаном”: автор предлагает собственные методологические подходы для выбора корректных и объективных терминов.

***Ключевые слова:*** *Армения, Арцах, Азербайджан, термины*

**DAVIT JAMALYAN** - ON THE OBJECTIVE TERMS DESCRIBING THE CONFLICT WITH AZERBAIJAN

The article discusses some terms, related to the Nagorno-Karabakh conflict. “Line of Contact” vs “Artsakh’s state border”, “Karabakh conflict” vs “Conflict with Azerbaijan”: which one is right or “more right”? The author proposes his considerations on the selection of terms in compliance with objectiveness and correctness.

***Key words:*** *Armenia, Artsakh, Azerbaijan, terms*

Բովանդակություն

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
**Աննա Բաբայան**
«ԽՈՋԱԼՈՒԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ»
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՖԻ ՇՈՒՐՋ.....3
**Անուշ Ամիրբեկյան**
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՄԻԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ 1991 Թ. ՀՈՒՆԻՍԻՑ
ՄԻՆՉԵՎ 1992 Թ. ՄԱՅԻՍ .....22
**Էրիկ Դավթյան**
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑԱՏՐԵԼՈՎ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ.....37

**ԲԱՆԱԿ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**
**Արծրուն Հովհաննիսյան**
ԱԹՍ-ՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ.....49
**Սերոբ Բազիկյան**
ՉԺՈՒԳԵ ԼՅԱՆԻ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԸ.....70
**Էդգար Էլբակյան**
ՊԲ 23524 ԶՈՐԱՄԱՍԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2016 Թ.
ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ.....84
**Վլադիմիր Պողոսյան**
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՉՈՐԲՈՐԴ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆ ԱՊՐԻԼՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԻՆ .....93

**ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՎ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ**
**Վարուժան Գեղամյան**
«ՆՈՐ ՌԵԻՍԻ ԺԱՄԱՆԱԿԸ». Ռ. Թ. ԷՐԴՈՂԱՆԻ ԱՆՁԻ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ.....101

**Վիկտոր Բոչարով**
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՆՈՐ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ ..... 112
**Էդգար Էլբակյան**
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՀԵՏ
«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՀԱՄԱՇԱՐՈՒՄ ..... 118

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

**Ալվինա Աղաբաբյան**
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ..... 141
**Սամվել Մարտիրոսյան**
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՔԵՐԱՅԻՆ
ՆԵՐՈՒԺԻ ՄԱՍԻՆ ..... 165
**Դավիթ Ջամալյան**
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ.
ՃՇԳՐԻՏ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ..... 171

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՍՏՐԱՏԵԳ

*Տարեկան ամփոփիչ հանրապետական գիտաժողովի հոդվածների ժողովածու*

1(1)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Աղաբաբյանի
Սրբագրումը՝ Ա. Աղաբաբյանի

Տպագրված է «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Հանրապետության 49, 7/1

Ստորագրված է տպագրության՝ 18.07.2018:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 11.25:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am